ԾԲ ՏԱՐԻ

ԽՈՐՀՈՒՐԴ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Օգոստոս - Սեպտեմբեր

1995

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵԻ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

107-95

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

18596-42

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

«Տեր Աստված մարդուն ստեղծեց երկրի հողից, նրա դեմքին կենդանության շունչ փչեց, և մարդն եղավ կենդանի էակ» (ԾՆՆԴՈՅ Բ 7):

— Ո՞վ է մարդը:

Այդ հարցը բոլոր ժամանակների կարևոր հարցերից մեկն է եղել և չի դադարել այն լինելուց: Այն հուզել է բոլոր սերունդներին և յուրաքանչյուր մարդու ի մասնավորի:

Հակառակ կենդանական աշխարհի այլ տեսակների, կյանքը մարդու մոտ սահմանափակված չէ, մեզանից յուրաքանչյուրի համար մարդ լինել՝ նշանակում է ձգտել ազատության և այդ ազատության մեջ ի հայտ բերել էության խորքը: Ամեն ոք պետք է ասի իր հերթին. «Ի՞նչ է նշանակում մարդ լինել»: Յուրաքանչյուր ոք իր կյանքում, անկախ նրանից, ուզում է, թե ոչ, պետք է պատասխանի «մարդ լինելու» խնդրին:

Ո՞վ է մարդը:

Սրբազան գրության արարչության պատումը փորձում է մեզ առաջնորդել, ճանապարհի ողջ երկայնքով, դեպի խորհրդավոր այն աշխարհը, որ կոչվում է մարդ, միևնույն ժամանակ ցույց տալ, թե ո՞րն է Աստուծո ծրագիրը մարդու համար, մեզ օգնելու հայթայթել այդ նույն հարցումի պատասխանը, որ Աստված սպասում է մեզանից յուրաքանչյուրից:

ա) Մարդը՝ հող յերկրէ

Այս պատումի մեջ նախ ասվում է, որ Աստված մարդուն ստեղծեց հողից: Այդ պատկերը միևնույն ժամանակ արտահայտում է խոնարհություն և միխթարություն:

Այդ խոնարհություն է, որովհետև Աստվածաշունչը հաստատում է.—դու Աստված չես, դու չես եղել ինքդ քեզ, դու իշխանություն չունես տիեզերքի վրա, դու սահմանափակ ես: Դու մի գոյություն ես մահվան համար, ինչպես բոլոր կենդանիները, դու ոչ այլ ինչ ես, եթե ոչ՝ փոշի:

Այդ միխթարություն է, որովհետև Աստվածաշունչը ավելացնում է.—մարդը չար ուժ չէ և՛ ոչ էլ չար հոգի: Մարդը չի ստեղծվել խավարային ուժերից, այլ ձևավորվել է Աստուծո բարի հողից:

Այդ ամենի եռևում թաքնված է մի մեծ խորհուրդ:

Ընդհանրապես ասվում է, որ բոլոր մարդիկ փոշի են: Ելնելով տարբեր մշակույթներից և քաղաքակրթություններից և ողջ պատմության ընդհանուր տրամաբանությունից, պարզ է, որ մենք բոլորս էլ հուսցվել ենք նույն շաղախից:

Մարդկության հոտին պատկանող բոլոր տեսակի գունավորումներն ու կարգերը կազմում են նույն և միևնույն մարդը՝ ծնունդ առած նույն փոշուց: Պատմության բոլոր շրջաններին մարդը (արարած) մնացել է նույն մարդը: Այն բնութագրվում է մարդկության նույն ընտանիքին պատկանելու գաղափարով (մենք բոլորս առաջացել ենք նույն հողից): Չկա արմատականորեն տարբեր մարդ, ուրեմն հողը չունի այլ արյուն: Չկա **կատուի** և **ցեղերի** ծննդական (արարչական) տարբերակում: Մենք, բոլորս միասին, կազմում ենք մեկ ընդհանուր մարդկություն՝ առաջացած Աստուծո կողմից, նույն Աստուծո բարի հողից: Այս միտքը գտնվում է Աստվածաշնչի արտի մեջ և այն բարախում է համաչափորեն: Ինչ որ ասվել է ի սկզբանե և կրկնվել ջրհեղեղից հետո, հանգում է հետևյալ մտքին, որ մարդիկ կազմում են մեկ մարդ: Այդ հաստատվում է Նոր Կտակարանով՝ Քրիստոսի մեկ մարմնի և նրանով մարդկությանը միանալու և սրբագործելու իմաստով:

բ) Աստուծո պատկերը

Բայց որպեսզի մարդը լիներ, հարկավոր էր մի երկրորդ պայման: Մարդը եղավ, որովհետև Աստված նրա մեջ Իր կենդանի **շնչից** փչեց: Երկնային իրականությունը մուտք է գործում երկրի մեջ՝ հողի միջոցով (մարդ՝ հող յերկրէ): Նրա մեջ հանդիպում են երկինքն ու երկիրը: Մարդը ընդմարիտ ճանապարհն է դեպի Աստված, նա կոչվել է նրա կողմից: Աստված ճանաչում և սիրում է յուրաքանչյուր մարդու: Յուրաքանչյուր ոք ցանկացվել է Աստուծո կողմից: Յուրաքանչյուր ոք պատկեր է Աստուծո: Ավելի մեկ ընդհանուր նմանություն, դա մարդկության ընդհանուր **սերմի** միասնականությունն է իր արարչագործ շարունակությամբ՝ արարչագործության լույսի ներքո, որով իրագործվում է Աստուծո գործի շարունակությունը՝ ծնունդ առած միևնույն Աստուծո արարչագործ բանականությունից: Դրա համար Աստվածաշնչում ասված է. նա, ով հարձակվում է մարդու վրա, հարձակվում է Աստուծո սեփականության վրա (համմտ. Ծննդոց Թ 5): Մարդկային կյանքը գտնվում է Աստուծո պահպանության ներքո (նախախնամության): Յուրաքանչյուր մարդ, հարուստ կամ թշվառ, գործունյա, կամ՝ տկար, հիվանդ, կամ՝ առողջ, ինչպիսին էլ որ նա լինի, կրում է Աստուծո պատկերը, որովհետև նա իր մեջ կրում է Աստուծո շունչը: Ահավասիկ մարդու անբռնաբարելի տիրույթը, որ գծվել է Աստուծո կողմից: Այնտեղ, որտեղ բացակայում է այդ գաղափարը, ի հայտ է գալիս բարբարոսությունը և ճնշում մարդու վեհությունն ու հոգեկանությունը: Մեր ճակատագիրը այսօրվա գիտական, կենսաբանական, ռազմական և քաղաքական վիճակներում ընկճվում է՝ որպես հոգևոր վեհություն՝ վտանգված չար խոհերից: Գիտամեքենայական այս դարը բազմապատկում է այսօրվա մարդու կասկածանքները: Մարդու մոտ ճնշում են բարոյական և հոգևոր արժեքները: Սրդի գիտությունները պատրաստ են իրենց արագ զարգացմամբ

քանդել մարդու հոգևոր պատկերը, ինչպես նաև մարդու բարոյական ազատությունը դնել ճնշման տակ:

Լինել Աստուծո պատկերի նմանությամբ, նշանակում է գտնվել Աստուծո ուժականության ներքո և առաջանալ նրա ուժայնությամբ: Այդ նշանակում է, որ մարդը իր հնարավորություններով կապի մեջ է մտնում գերագույն հնարավորությունների տեր Աստուծո հետ:

Ի՞նչ է տարբերությունը մարդու և կենդանիների, ի՞նչ կա մարդու մեջ միանգամայն նոր. մնում է պատասխանել. մարդը այն էությունն է, որ մտածում է Աստուծո մասին (իր Արարչի) և աղոթում նրան: Նա կապի մեջ է իր Արարչի հետ: Նա իր պատկերի միջոցով ցոլացնում է պատկերը Արարչի:

Այստեղ Հին Ուխտը ավելի է բացահայտվում, երբ այն կարդում ենք նորի միջոցով: Նոր Ուխտի մեջ Քրիստոս կոչվում է երկրորդ Ադամ, պատկեր Աստուծո (հմմտ. Ա Կորնթ. ԺԵ 44—8, Կող. Ա 15): Այդ նշանակում է, որ միայն նրանով կարելի է հասկանալ, թե ի՞նչ է մարդը: Այդ նշանակում է եզրափակող մարդը, որին ձգտում է և իր լրումը պիտի ունենա արարչագործությունը, որպես նախածրագիր Աստուծո բանականության:

Կարող ենք ասել, որ մարդը այն գոյությունն է, որ կարող է դառնալ (որպես Ադամ) Քրիստոսի (երկրորդ Ադամ) եղբայրը: Նա այն արարածն է, որ, միանալով Քրիստոսին, կազմելու է մեկ միություն: Դեպի Քրիստոս այդ մոտեցումը նշանակում է, որ մարդը դեռևս ճանապարհի շարժման մեջ է: Նա դեռ **«ինքը»** չէ, նա պետք է դառնա «ինքը»՝ Քրիստոսի հետ և Քրիստոսով. (հմմտ. Հովհ. ԺԷ 24): Ի վերջո նա պետք է դառնա Քրիստոսի մարմնի անդամ-մասնիկը:

Մարդու ծագման և զարգացման հարցերով զբաղվող գիտությունները մարդուն դասում են կենդանական աշխարհի շարքը, որպես մեկը նրանցից, բայց կատարելագույնը:

Զարգացման տեսությունը բացահայտում և նկարագրում է կենսաբանական ընթացքը: Կենսաբանության վերջին քսան տարիների անհնախընթաց զարգացումը ոչ թե բացառեց, այլ՝ ընդհակառակը, բացահայտեց արարչագործության հզորությունը:

Տիեզերքը նման չէ հսկայական մի արկղի, որի մեջ դրվել են բոլոր տեսակի առարկաները այնպիսին, ինչպիսին որ են, այլ՝ այն նմանվում է մի կենդանի ծառի, որի ծաղկման և զարգացման ընթացքում ճյուղեր են նետվում դեպի երկինք:

Ինչ վերաբերում է խորհրդավոր անձնավորությանը՝ մարդուն, ապա նա կարող էր գոյանալ առանց որևէ անհրաժեշտության, ուրեմն՝ նա պատահականության արդյունք է: Հավատքի (Եկեղեցու) տեսանկյունից բացատրում է գիտական այս մոտեցումը: Հավատքի աղոթքը ասում է. ես չպետք է լինեի, բայց ես կամ, իսկ դու, ո՛վ Տեր, դու ինձ ուզեցիր (որ լինեմ):

Քսաներորդ դարի միկրոկենսաբանությունը և կենսաքիմիան մեզ բերեցին ցնցող տեղեկություններ: Նրանք թափանցեցին կյանքի խորհրդի կենտրոն և տարադարձեցին այդ խորհրդի գաղտնիքը և ասացին, թե ինչ

է կյանքը: Բայց արդյո՞ք ասացին: Նրանց ուսմունքը հիմնված է կիրառական փորձառության վրա՝ տեսանելի և շոշափելի իմաստավորումով:

Կյանքի ծրագրերը հայտնի են Արարիչ Հոգուն:

Մարդը Աստուծո (Արարիչ Աստուծո) ծրագիրն է:

Միայն Արարիչ Հոգուն էր հաստուկ հղանալ այսպիսի մի ծրագիր: Մարդը արդյունք չէ պատահականության: Նա արդյունքն է Սիրո, երկնային Արարչի անսպառ սիրո:



ՄԱՅՐՈՒԹԵԱՆ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՒԱՆԴՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

(ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՕՍՈՒԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՕՆԻՆ)

Հաւատացեալ հայորդիք,

Այս օրը մեր Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու համար հոգեկան ապրումների բարձրակետ եղող օրերից մէկն է: Հինգ մեծագոյն տօներից մէկն է Ս. Կոյս Մարիամ Աստուածածնին յերկինս վերափոխման դրուագին այս մեծ եկեղեցական ծիսական արարողութեամբ, շարականերգութեամբ և քարոզախօսութեամբ վերակոչման տօնը: Հետևաբար ես կը ցանկանայի այսօրուան իմ խօսքին մէջ անդրադառնալ առաջին հերթին Ս. Աստուածածնի անձնաւորութեան, նրա արբութեան և նրա մայրութեան գերազանց արժանիքներին:

Ս. Կոյս Աստուածածինը Հայաստանեայց Եկեղեցու համար դարեր շարունակ եղել է գերագոյն յարգանքի առարկայ մի բացառիկ անձ, ոչ ոքի հետ բաղդատելի: Որովհետև առաջին հերթին նրա մէջ Աստուած տեսել է մաքրակենցաղ ապրումների մի խորան, այդ խորանի մէջ է որ ծնաւ Միածին Որդին Յիսուս Քրիստոս: Աշխարհի բոլոր կոյսերի միջից, բոլոր կիների միջից Մարիամն էր, որ ընտրուեց որպէս անօթ Աստուծոյ մարդեղութեան: Հետեւաբար, իր կուսական մաքուր կեանքը, իր առաքինի վարքը, աստուածահաճոյ ընթացքը եղան գրաւականը այդ ընտրութեան, որով նա դարձաւ **Աստուածամայր,** Աստուծոյ մարդեղութեան՝ մարդկային ծնունդին միջոցը եղող մարդկային էակը: Հետեւաբար, առաջին պատգամը, որ այսօր իրենից կը ճառագայթէ մեր բոլորի կեանքերի մէջ՝ մաքրակենցաղութեան, արբութեան, հոգեկան առաքինութիւնների, բարոյական առողջ սկզբունքների ներգործութեամբը մեր կեանքը ապրելու կոչն է, արժանի լինելու համար Աստուածորդուոյն եւ մեր Երկնաւոր Հօրը եւ Ս. Հոգուոյն ներգործութեան:

Երկրորդ՝ Մարիամ Աստուածածինը հայ ժողովուրդի ամբողջ հոգեկանութեան մէջ ըմբռնուած է իբրեւ **Տիպար Մայր:** Ան որ ոչ թէ զաւակը **կը ծնի,** այլ ան որ **կ'ապրի՛ զաւակին համար:** Նա որ իր կեանքը կուտայ իր զաւակի կեանքի բարձրացման համար: Եթէ Աւետարանին էջերը դուք բանաք եւ հետեւէք այն բոլոր դրուագներին, որոնցմով ներկայացուած են Սուրբ Կոյս Մարիամ Աստուածածնի կեանքը, հակառակ այն իրողութեանը, որ այդ դրուագները հազուագիւտ են, բայց կ'արտաբերեն, կը ցոլացնեն **Տիպար Մայրը:** Հարկ է յիշել նրան երբ նա իր զաւակը տասներկու տարեկանին յանկարծ կորցրեց բազմութեան մէջ, ամէն ինչ մոռնալով իր զաւակը փնտռելու ճանապարհն ընկաւ մինչեւ որ զայն գտաւ տաճարին մէջ եբրայեցի ժողովրդի իմաստուններուն հետ նստած՝ օրէնքի, իմաստութեան, ընշմարտութեան մասին խօսած պահին: Նա որ տառապեց ամեն անգամ երբ իր զաւակը հալածուեց: Նա որ իր զաւակի խաչուելու պահին նրա տառապանքը իր անձին մէջ կրեց: Նա որ իր ամբողջ սէրն էր սեւեռել իր որդու վրայ, այս վերջինը իր մտածումը խաչից սեւեռեց նրա՛ վրայ: Եւ ինչպէս Սիմէոն ծերունին, քառասնօրեայ մանուկ Յիսուսի տաճար ընծայման ատիթով ասել էր, «աուր անցաւ» Աստուածածնի սրտի միջից իր որդու երկրաւոր կեանքի ողջ ընթացքում: Սուրբ՝ իր որդուն չհասկցուիլն էր ժողովուրդի կողմից, հալածուիլն էր եբրայեցի ժողովուրդի իշխանութիւնների կողմից, մինչեւ նրա խաչուիլը, մինչեւ հոգին աւանդելը, մինչեւ թաղուիլը:

Տիպար մօր կերպարը այնպիսի գեղեցիկ պատկերացումով ընմբռնած է հայ ժողովուրդը, որ **մայր** բառը նկատած է իր բառարանի գեղեցկագոյն, ընտրելագոյն, ազնուագոյն բառերից մէկը, եւ զայն առընչած է իր գերագոյն արժէքներին: Այսպէս, իր եկեղեցին կոչած է **Մայր Եկեղեցի,** իր լեզուն կոչած է **Մայրենի Լեզու,** իր հայրենիքը կոչած է **Մայր Հայրենիք.** իր Սուրբ Աթոռը՝ Էջմիածինը կոչած է **Մայր Աթոռ:** Մօր գաղափարը կեանքի անուցման, կեանքի առողջ աճման եւ աստուածահաճոյ ընծայման խորհուրդը ունի իր մէջ: Մայրութիւնը գերագոյնն է բոլոր կոչումներուն, մայրութիւնը արուեստն է բոլոր արուեստներուն, մարդու կազմութեան, մարդու պատրաստութեան գերագոյն արժէքի իրագործման գերագոյն արուեստը:

Սիրելի հաւատացեալներ, այս օրերին, երբ կնոջ դերի մասին աշխարհում այնքան նոր շարժումներ են ծնած, երբ կին էակին կոչումը եւ առաքելութիւնը վերամտածման ընթացքի միջից կ'անցնի, երբ յաջորդ ամիս, Սեպտեմբերի սկիզբը, հեռաւոր Չինաստանի մէջ Միացեալ Ազգերի Կազմակերպութիւնը իր չորրորդ ընդհանուր համաժողովը կը գումարէ կնոջ դերի վրայ սեւեռելու համար մարդկութեան ուշադրութիւնը, ես այսօր կոչ եմ ուղղում հայ կին դասակարգին, որ ամէն բանից վեր՝ գերագա՛նց նկատի մայրութիւնը, կոչումներուն կոչումը եւ այն չփոխարինի որեէ ընկերային առաւելութիւն ցոյց տուող ասպարէզների հետ: Մայրութիւնը անփոխարինելի է եւ նա ով կը հրաժարի մայրութեան գաղափարից կը հրաժարի կին լինելու ճշմարիտ գաղափարից, բացի այն պարագային, երբ ինք իրեն ամբողջութեամբ կ'ընծայի Աստուծոյ:

Այս դարուն, երբ այնքան շփոթեցուցիչ գաղափարներ են տիրում չորս դին, վե՛ր բունենք, մեր կեանքի մէջ վերարժեւորենք մայրութեան ընտրելագոյն ապրումը եւ գեղեցկագոյն եւ օգտակարագոյն կոչումը մեր հայ ազգի մէջ: Ընտանի՛քն է մեր առողջութեան գաղտնի ոյժը, ընտանի՛քը, երեխաների հոգածութիւնը, նրանց առողջ մեծացումը իբրեւ մարդ եւ իբրեւ հայ, քրիստոնէական շնչով: Ապրի՛ք մայրեր որ Սուրբ Աստուածածնի պէս մաքուր

կեանք կ'ունենաք եւ ընտիր կոչում ձեր ընտանիքները սուրբ ընտանիքների վերածելու համար:

* * *

Եղբայրներ եւ քոյրեր, այսօր մեր եկեղեցին աքանչելի մէկ աւանդութիւն ունի, այն՝ որ Ս. Աստուածածնի տօնին առիթով կը կատարուի մեծաշուք հանդիսութեամբ **խաղողի օրհնութիւնը:** Խաղողօրհնէքը մեր եկեղեցու ծիսական կարգին մէջ անցած է այլեւս եւ այն մեր եկեղեցու աքանչելի յատկանիշներից մէկն է կազմում: Կրօնքը երկրի վրայ կ'ապրուի, ժողովուրդի մէջ կ'ապրուի, ժողովուրդին համար կ'ապրուի: Քրիստոնէութիւնը ժողովրդին հետ կապուած կրօնք է, զԱստուած ու ժողովուրդ, երկինք ու երկիր միացնող գերագոյն եւ անգերազանցելի կոչումով:

Այսօր խաղողին միջից Հայաստանի հողն է որ կ'օրհնենք: Եթէ բանաք մեր եկեղեցու Սաշտոց ծիսարան գիրքը, պիտի տեսնէք այնտեղ ջրհոր օրհնելու **արարողութիւն, աղ օրհնելու արարողութիւն, գիրք օրհնելու արարողութիւն:** Կրօնական ապրումը կապուած է կեանքին, երկրին ու, երկրի միջից երկընքին: Հետեւաբար, այսօր խաղողը՝ ընտրելագոյնը Հայաստանի բոլոր պտուղներին, ընտրելագոյնը հայոց հողի արտադրութեան, Աստուծո օրհնութեան կ'արժանանայ: Այն պտուղը որտեղից կուգայ գիտին, որ կը մատուցուի սուրբ խորանին վրայ ու կը վերածուի Քրիստոսի արեան կենսատու այն ներգործութեան, որ մեր կեանքը ամբողջ կը կերպարանափոխէ:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի այս արբազնասուրբ բեմից որպէս Կաթողիկոս Ամենայն Հայոց, սրտի պարտք եմ զգում օրհնել ողջ Հայաստանի հողը, մեր երկիրը հայոց եւ ամբողջ հայ ժողովուրդը ի Մայր Հայաստան, յԱրցախ աշխարհ, եւ ի սփիւռս աշխարհի: Թող ա՛սօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մայրութիւնը իր հայրենիքին հանդէպ արտայայտուի խաղողօրհնէքի այս արբազան արարողութեամբը:

Եւ իմ վերջին խօսքը այս օրուան՝ այն է, որ մենք իբրեւ ժողովուրդ գիտնանք կենդանի պահել **աւանդութիւնը:** Առանց աւանդութեան պահպանումին՝ ազգ մը կը նմանի մի ծառի, որ արմատներից վեր բերուող աւիշից կտրուած է: Կը չորնայ այդ ծառը: Աւանդութիւնը եթէ մոռնանք մենք՝ մեր անցեալը ժխտած կը լինենք եւ մեր արմատներից աւիշ ստանալու կարելիութիւնը մենք մեզի զրկած կը լինենք: Մեր եկեղեցու առաքելատիպ հայրերից մեծ աստուածաբան և բազմակողմանի մտաւորական Ս. Ներսէս Լամբրոնացին ասել է. **«Ամենայն ազգ գիւր հարց աւանդութիւն պինդ կալցի»:** Ահա թէ ինչու ես կոչ եմ ուղղում մեր ժողովրդի բոլոր զաւակներին, որպէսզի այսօր անդրադառնան, վերագիտակցեն, թէ ինչ որ եկեղեցական, ազգային աւանդութիւններ են՝ մեր աչքի բիբին պէս առողջ պահենք, մաքուր պահենք, կենդանի պահենք: Թող նրանք ներգործեն մեր կեանքի մէջ, որպէսզի դարաւոր շարունակականութեան եւ դէպի ապագայ յաւերժագնացութեան մեր կեանքը Աստուծոյ օրհնութեան ներքեւ կատարուի ի փառս Աստուծոյ, ի շինութիւն ազգիս Հայոց, ի պայծառութիւն Եկեղեցւոյս Հայաստանեայց, յաւիտեան յաւիտենից, ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
Կաթողիկոս Ամենայն Հայոց

ՏԱՐԵԼԻՑ ՎԱՋԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՎԱԽՃԱՆՄԱՆ ԵՎ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ ՊԱՏԱՐԱԳ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Օգոստոսի 20-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Մայր տաճարում, Վազգեն Ա երջանկահիշատակ Հայրապետի մահվան առաջին տարելիցի առթիվ, մատուցվեց ս. պատարագ՝ ձեռամբ Հոիփսիմե վանքի վանահայր Գերաշնորհ Տ. Անանիա եպս. Արաբաջյանի:

Հավարտ ս. պատարագի Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը ներկաներին իր պատգամը հղեց՝ որպես խոսք հիշատակի և երախտիքի:

Ավարտելով իր խոսքը, Վեհափառ Հայրապետը, շրջապատված միաբան Հայրերով և հավատացյալ ժողովրդով, երանաշնորհ Հայրապետի տապանաքարի առաջ կատարեց կարգ հոգեհանգստյան:

Ս. պատարագին և հոգեհանգստյան արարողությանը ներկա էին ՀՀ Ազգային Ժողովի նախագահ Բաբկեն Արարքցյանը, ՀՀ փոխնախագահ Գագիկ Հարությունյանը, ՀՀ վարչապետ Հրանտ Բագրատյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, Սիյուռքից ժամանած հյուրեր և բազմաթիվ հավատացյալներ:

Արարողություններից հետո Վեհարանում տեղի ունեցավ հոգեճաշ, որին մասնակցեցին պետական դեմքեր, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ և միաբան Հայրեր:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ
ՎԱՋԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ ՄԱՀՎԱՆ ՏԱՐԵԼԻՑԻ ՕՐԸ՝
ԱՐՏԱՍԱՆՎԱԾ ՇԻՐՄԻ ԱՌԱՋ
(18 օգոստոս 1995 թ.)

Մայր Աթոռի ընտանիքի սիրեցյալ անդամներ, հոգևոր եղբայրներ, հոգևոր ճեմարանի ուսուցչական կազմի անդամներ, ուսանողներ, պաշտոնեության անդամներ,

Այս պահը մեր բոլորիս համար հուզիչ պահ մըն է բնական բերումովը մարդկային մեր զգացումներուն: Մի տարի առաջ էր, ճիշտ այս օրը, առավոտյան ժամը յոթը տասնհինգ րոպե անց, երբ այլևս աչքերը փակվեցան այն լույսին, զոր ան ըմպեց իր կյանքի ամբողջ տևողության: Շրթները փակվեցան այն խոսքին, զոր ան արտասանեց իր կյանքի բոլոր ժամանակներու ընթացքին և կենդանի լեզվով, բարբառով և գիրով, երբ այլևս հրաժեշտ տվավ աշխարհին, երեսունհինը տարիներ շարունակ այս Մայրավանքի մեջ գլխավորապաղույն, բարձրագույն աստիճանի պատասխանատվության բեռը իր ուսերին վրա շալկելեն ետքը: Շատ քչերին է տրված այդքան երկար ժամանակաշրջանում այդքան ծանր բեռ տանելը: Ջուտ մարդկային ուժերը ու կարողությունները, ես կհավատամ, բավական չեն այդ ծանր լուծը քաղցրորեն կրելու համար: Այդ ընելու համար Աստուծո ուժն է հարկավոր և կենսական:

Ես կհավատամ, որ Ասված տվավ մեր սիրեցյալ, երջանկահիշատակ նախորդին, այդ աստվածային ուժը, Սուրբ Հոգվույն ներշնչումը, հավատքին դիմացկունությունը, սիրույն առատությունը, հույսին ճոխությունը, որպեսզի այդ երեք աստվածախոս առաքինություններով՝ հավատքով, հույսով և սիրով, ինքը տանի ազգի կողմից իրեն վստահված և Աստուծո կողմից իրեն հանձնված այդ բարձր աստիճանի պատասխանատվությունը:

Սիրելիներ, կիրակի օրը մենք հանդիսավորապես ս. պատարագով և հոգեհանգստյան պաշտոնական արարողությամբ պիտի ոգեկոչենք զինքը իր մահվան առաջին տարելիցի առիթով: Մենք ցանկանալով ցանկացանք, որ այս պահը՝ ուրբաթ առավոտ, իր վախճանումի ճիշտ տարելիցի պահը, մենք Միաբանությամբ, իր հոգևոր զավակներով, պաշտոնեության անդամներով, հոգևոր ճեմարանի ամբողջ դասախոսական և ուսանողական կազմով, իբրև ընտանիք, զինքը հիշենք: Շատ բնական և արդար կնկատեմ, որ մենք այս առավոտը իրմով վերստին այցելվինք, իր ապրումներովը վերստին ջրդեղվինք, որովհետև երբ ես ճանչցա զինք մոտեն՝ զգացի իր մեջ աստվածային ուժին ներկայությունը, աստվածային պատգամներուն պատգամախոսը ըլլալու մեծ առաքինությունը:

Միայն մեկ խոսք ունիմ այս առավոտ մտերմորեն ձեր բոլորին ըսելու: Եթե օր մը պատմաբան մը ուզե այս շիրիմին վրա տող մը գրել, այդ տողը պիտի առնե Ավետարանի բառերեն և պիտի ըսե **«զոր ինչ պարտ էր առնել, արարի»** (ինչ որ պարտքս էր ընել՝ կատարեցի): Ես կհավատամ և, վստահ եմ, դուք էլ ինձ հետ կհավատաք, որ անիկա գերագույն աստիճանի պարտականության գիտակցությամբ ապրեցավ իր ողջ կյանքը, աշխարհական վիճակով և հոգևորական կարգավիճակով, մինչև իր վերջին օրը. իր կյանքի ութսունին տարիները եղան վկայություն մը պարտականության գիտակցության տեր անձի մը: Մենք ինչ ունինք իբրև մարդ՝ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ: Աստված է, որ ունի իրավունք: Եվ եթե երբեք մեկը իր պարտականությունը կատարե, Աստուծո արժանի եղած ըլլալու հոգեկան գոհունակությունը կունենա: Բայց եթե մեկը իր պարտականությունը ամբողջականորեն, վավերականորեն, ճշմարտորեն, հարազատորեն չկատարե, թերի, անպատասխանատու ձևով կատարե, աշխարհի ամբողջ հարստությունը չի բավեր այն հոգեկան գոհացումը տալու այն մարդուն: Պարտականությունը լիապես կատարած մարդը այս աշխարհեն մեկնելու պահուն այն խոհի հանդարտությունը կունենա, որ ոչ ժամանակ խնայեց, որ ոչ կարողություն խնայեց և ոչ ալ մարդկային որևէ միջոց խնայեց պարտականությունը կատարելու ճամփուն վրա:

Այսօր այս գերեզմանեն, այս շիրիմեն, ինչպես անոր կողքը եղող մեր մյուս Հայրապետներուն շիրիմներեն մենք պետք է դաս մը քաղենք, կենդանի՛ դաս մը, ո՛չ գրքի, դասագրքի դաս մը, այլ կյանքեն բխող դաս մը, այն, որ ամեն մեկս ինչ աստիճանի վրա ալ որ գտնվինք, կաթողիկոսական աստիճանեն մինչև ամենապարզ աշխատավորը այս վանքին, ամենապարզ ուսանողը մեր հոգևոր ճեմարանի, ամեն մեկս կատարենք մեր պարտականությունը, գերագույն աստիճանի մակարդակով: Այն ատեն է, որ երկնքեն մեր սիրեցյալ Վազգեն Կաթողիկոսը ժպիտ կունենա իր հոգիեն աստղի լույսի պես արձակվող մեր կյանքերուն: Կատարենք այն, ինչ որ կոչված ենք կատարելու Աստուծմե, մեր ազգից և մեր պատմությունից:

Սիրելի անդամներ Մայր Աթոռիս ընտանիքին, այս Աթոռը, այս հաստատությունը, իր բոլոր բաժիններով չի նմանիր ո՛չ պետական հաստատության, ո՛չ առևտրական հաստատության, ո՛չ աշխարհիկ որևէ տեսակի հաստատության: Անիկա հոգևո՛ր հաստատություն է, այստեղ ծառայելը գործ չէ միայն, այլ՝ պատի՛վ: Եթե այդ գիտակցությունը ունինք՝ այս Աթոռի դեպարտատարության առաքելության բարվոք և ատոք արդյունավորումը մեր բոլորիս վիզին պարտքն է, մեր բոլորիս՝ առանց խտրության: Հետևաբար, մեր գործերուն մոտենանք այնպես, ինչպես մեր հոգու պարտականությունը և ոչ թե իբրև ձևական գործ. և այն ատեն ես ձեզ կվստահեցնեմ, որ մեր Հայրապետները երկնքից մեզ կօրհնեն: Թող իրենց հիշատակը անմահ մնա: Վազգեն Վեհափառը ոչ թե միայն մեկ տարվան ընթացքին, այլ բազում-բազում տարիներ պիտի հիշվի մեր բոլորիս և գալիք սերունդների կողմից: Թող այդ հիշատակը լինի քու վարձատրությունդ, Երկնաբնակ Հայրապետ Ամենայն Հայոց Տ. Տ. Վազգեն Առաջին Կաթողիկոս, Ամեն:

ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ, ՎԱՋԳԵՆ Ա-Ի ՄԱՀՎԱՆ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԹԻՎ
(20 օգոստոս 1995 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, Ամէն»:

«Որպէս հացն զգալի զմարմին զօրացուցանէ, այնպէս եւ նորա երախտեացն յիշատակն զհոգիս»:

«Ինչպես հացը նյութական մեր մարմինը կզորացնի, այնպես էլ նրա երախտարժան գործերի հիշատակը՝ մեր հոգիները»:

Ուժեղ, խորիմաստ բառեր են այս բառերը՝ քաղված մեր բանիբուն, ներհուն աստվածաբաններից, Կիլիկյան աշխարհի պայծառագույն դեմքերից՝ Ներսես Լամբրոնացու գրքից: Նա ասում է. «Ինչպես հացը, առանց որի մենք մեր ֆիզիկական գոյությունը չենք կարող պահել, առանց որի մեր մարմինը չի կարող տոկալ և զորավոր մնալ, այնպես էլ նրա երախտիքների, երախտարժան գործերի հիշատակը մեր հոգիները կջրդեղի, կզորացնի»:

Այս խոսքի մեջ երկու բառեր ցանկանում եմ, որ այսօր մեր մտածման ասպնջին տակ իյնան: **Հաց** և **երախտիք:** Հացը կենսական է: Մեր Տեր Հիսուս Ինքը ըսավ. **«Զհաց մեր հանապազորդ՝ տո՛ւր մեզ այսօր»** (Մատթ. Զ 11): Իր տերունական աղոթքի առաջին ուսուցումներից մեկն է դա: Փրկիչն ասեց. **«Ես եմ հացն կենդանի, որ յերկնից իջեալ է»** (Հովհ. Զ 51): **Հաց** բառը կզուգորդվի անխուսափելիորեն **անուցում, անունդ** բառի հետ. մարդ էակը երկու աղբյուրներ ունի անուցման: Դա **նյութեղեն** հացն է և ինչ որ հացեղենն է նրա ֆիզիկական գոյության համար, և մյուսը՝ կենդանի հացը, հոգեղեն հացը, իմացական հացը, հոգևոր հացը, բարոյական հացը, մի խոսքով՝ այն հացը, որ մարդու էության բուն իսկության անուցիչ աղբյուրն է: Դա՛ Աստուծո խոսքն է, ճշմարտությունն է, գրավականը երջանկության:

Նրանք, ովքեր իրենց կյանքով կուան ապացույցը այդ ճշմարտության իրենց ապրումների և իրենց գործերի միջից, նրանք թարգմաններն են դառնում այդ ճշմարտության: Եվ այդ ապացույցը կոչվում է **երախտիք:** Մի հնչուն բառ մեր մատենագրական, լեզվական ժառանգության մեջ: Նա, ով

բարիք կանի, նա, ով իր կյանքը բարիքի կվերածի՝ երախտագիտության առարկա կդառնա: Դրա համար է, որ ասվել է **«երախտապիծան գործ»**, դրա համար է, որ մենք Ս. Կրիգոր Լուսավորչի համար ասում ենք շարականի մեջ՝ **«բազմերախտ** Հայրապետ»: Մի անձ, որի կյանքը և գործը հավիտենական ճշմարտության ապացույցն են, և որոնք բարյաց աղբյուր են մեզ համար: Մենք կգտնվենք միշտ հարկավորությանը ներքև՝ հաղորդակից լինելու նրա գործերի կենսատու ուժին: Նրա համար է ասել Ներսես Լամբրոնացի մեծիմաստ մեր աստվածաբան վարդապետը, թե **«հիշատակը անոր երախտիքներուն մեր հոգիները կսնուցանե»:**

Հիշատակ: Ոչ թե պարզապես հուշ, ոչ թե անցյալի սուկ մտաբերում: Հիշատակը, հիշողությունը կենդանի ո՛ւժ է, երբ անցյալի դեմքը, գործը, արժեքը կդառնան ապրում, և հիշողությունը կվերածվի շարժումի և ոչ թե պարզ պատկերանկարության: Մենք անցյալի մեծագործությունները մեր հիշողության մեջ չենք պահում այնպես, ինչպես թանգարանի մեջ դրված արվեստի առարկաներ: Նրանք՝ հիշատակները, ա՛յդ բոլոր գործերի հոգին, կենսատու ուժը կմիախառնվի մեր հոգեխառնության հետ և կդառնա գործոն շարժիչ լծակ մեր գործունեության: Եթե մի ազգի մեջ այդ հիշողությունը մեռնի, այդ ազգը ապրելուց կդադարի, ինչպես մի անձ եթե անհիշողության մատնվի՝ կդատարկվի, գոյությունը անիմաստ է թե՛ իր համար, թե՛ ուրիշների:

* * *

Այսօր ես այս բառերը ընտրեցի որպես իմ խոսքի բնաբան, որովհետև այսօր վերակոչում ենք անմեռ հիշատակը անմահ անձնավորության, պատկերը հարյուրերեսունևերորդ Հայոց Հայրապետի, մեր երջանկահիշատակ, ամենասիրելի և անմոռանալի Վազգեն Առաջին Կաթողիկոսի, իր վախճանման առաջին տարելիցի առիթով: Ես հիշում եմ մեկ տարի առաջվա այն հուզախառն վիճակը մեր Հայաստան աշխարհի, և պիտի չտատամսեմ ասելու ամբողջ հայ աշխարհի և՛ ի Հայաստան և՛ հարտասահման, երբ հանկարծ գտնվեցինք բոլորս դեմ-հանդիման այն բացակայությանը, որ իր վախճանման առիթով իր անձի թողած պակասն էր մեր կյանքում: Այսօր ես պիտի չուզեի երկարորեն անդրադառնալ իր երեսունինհնամյա այն բեղուն, բազմառատ, հայրենաշեն ու եկեղեցանվեր գործունեությանը, որին անդրադարձել ենք անցնող տարվա ընթացքում բազում անգամներ:

Այսօր ես զգում եմ, անմավասիկ մեկ տարի անց իր վախճանումից, և շուրջ հինգ ամիսներ անց իմ կաթողիկոսական ընտրությունից, թե ինչքա՜ն մեծ է եղել նրա գործը այս երեսունհինը տարիների ընթացքում: Այսօր, ա՛յս հինգ ամիսների փորձառության լույսի տակ, ես ավելի պա՛ծառ տեսիլքով եմ մտաբերում այն բոլո՜ր հոգեկան ապրումները, որոնց միջից անցավ նա, և այն բոլոր գործերը, զորս նա կատարեց անշահախնդիր, անձնամոռաց նվիրումով և, որը իրրև երախտիք այսօր մեզ է կտակվում որպես ներշնչումի աղբյուր և ոչ թե մխիթարություն և սուկ դրվատանք ու գովասանք իր անունին: Նույնիսկ կարող եմ ասել, նա պետք չունի մեր ոչ ոքի գովերգության, պանծացումին: Ասվածը Ինքը նրան կընդունի, և կհավատամ, որ ընդունել է Ավետարանական բառերով. **«Ազնիւ ծառայ, բարի և հաւատարիմ, մուտ յուրախութիւն Տեառն քո»** (Մատթ. ԻԵ 23): Մենք է, որ նրան պետք ու-

ձեզնք, ինչպես պետք ունեիք մեր բոլոր սրբերին, հերոսներին, բոլոր նրանց, ովքեր իրենց կյանքը կենդանի «դասագրքի» վերածեցին մեր պատմության մեջ: Հայոց պատմության այդ «դասագրքի» մեկ էջի վրա գրված է. **«Դաս երանելի Հայրապետին Վազգենայ առաջնոյ Կաթողիկոսի»:** Այսօր, իր վախճանման առաջին տարելիցին, մենք եկել ենք նրա դասարանում այդ դասագրքից սովորելու այն, ինչ որ նա կտակել է մեզ իր բազմերախտ գործունեության միջից: Այսօր, երախտիքը իր բոլոր գործունեության, շինարարական, հոգևորական, եկեղեցական, վարչական, կազմակերպական, կրթական, դաստիարակչական բոլոր մարզերի մեջ նրա կատարած գործերի մեր հոգիների մեջ ներթափանցումը մեզ պետք է որ կերպարանափոխի, մտածել տա մեր ինքնության, մեր առաքելության, մեր պարտավորությունների մասին:

Ուրբաթ առավոտ, վախճանման ճիշտ մեկ տարվա լրումին, մենք՝ բոլոր վանաբնակ Մայր Աթոռո միաբաններս, եպիսկոպոս, վարդապետ, աբեղա, սարկավագ, հոգևոր ճեմարանի սաների և Մայր Աթոռի ամբողջ պաշտոնեության հետ միասին, առավոտյան ժամերգությունից հետո, գնացինք, իր շիրմի առաջ խոնարհվեցինք, և այնտեղ մի խոսք ասեցի, որի մայր գաղափարը մի բառով է միայն բնորոշվում՝ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ: Վազգեն Ա-ի այդ դասը մեր պատմության գրքում որպես ենթավերնագիր ունի «պարտականության ներհրականացումը»: Նա պարտականության վրա գիտակից մնաց, տատապելո՛վ մնաց աներեր և մնաց կանգո՛ւն, աննպաստ պայմանների տակ մնաց տոկուն և պահեց այս Աթոռը: Հույսի աղբյուր եղավ բոլոր հուսալքվողների համար, միության ողողանջ եղավ իր խոսքը իր ամբողջ կաթողիկոսության շրջանին, հրավեր եղավ իր խոսքը մեր ժողովրդի վերանորոգության:

* * *

Բարեկամներ, հավատացյալներ, այսօր մենք կգտնվենք մի նոր շրջանի մեջ: Նա ապրեց այն շրջանը Հայաստանի պատմության, որին դուք ավելի ծանոթ եք, քան ես, բայց այսօր մենք գտնվում ենք հարագնաց, հավերժագնաց Հայոց պատմության ընթացքի մեջ մի ազատ ու անկախ Հայկական Հանրապետության շրջանում: Ազատ է մեր կյանքը, մենք մեր Եկեղեցին զգում ենք, տեսնում ենք, ըմբռնում ենք իբրև ազատ գործունեություն, ազա՛տ և պարտավո՛ր հաստատություն: Հերթը մերն է այժմ: Բոլորիս, բոլոր հոգևորականներիս և աշխարհականներիս: Իր խոսքը այսօր երկնքից այնպես, ինչպես ես կարդում եմ, այդ խոսքը ա՛յն է, որ մենք լցվենք մի նոր գաղափարով, մեր Եկեղեցին կենսավորելու, ժողովրդի կյանքի մեջ ներկա, գործո՛ն, ազդեցիկ դարձնելու առաքելությամբ: Իր շրջանը եղավ պահպանելու, նորոգելու, պայծառացնելու շրջան: Այսօր հոգևոր հոսանքի պետք է վերածվի մեր Եկեղեցին, պետք է մենք՝ նախ հոգևորականներս զգանք, թե կոչված ենք նոր շրջանի մեջ, նոր գործ անելու հրավիրված անձինք, մենք ամենից առաջ պետք ունենք փոխվելու: Հին մարդը թաղենք՝ հին ռեժիմի հետ, նոր մարդը ծնվի նոր հայրենիքին համար. ա՛յս է Վազգեն Կաթողիկոսի երկնառաք, երկնուսույց առաջին դասը:

Այսօր ես գնահատում եմ այն հարգանքը, զոր այնքան արդարորեն և արժանապես մեր հայրենիքի Հանրապետության վերին պատասխանատու-

ները արտահայտում են հանդեպ նրա անմոռաց հիշատակին: Ողջունում եմ նրանց ներկայությունը մեր մեջ հանուն մեր Հանրապետության վսեմաշուք նախագահի, հանուն մեր Ազգային Ժողովի, հանուն մեր հայրենի կառավարության և բոլոր այն ծառայությունների, որ մեր պետությունը այսօր տենդագին աշխատանքով մատուցում է մեր ժողովրդին ամենադժվարին պայմանների ներքո: Ձեր ներդ, ձեր կապվածությունը Մայր Աթոռի հանդեպ, ձեր հարգանքը Վազգեն Ա-ի անթառամելի հիշատակի հանդեպ մեզ համար գրավական է այն խոր հավատքի և այն համոզումի, որ դուք ունեք հանդեպ Հայաստանյայց Առաքելական Ազգային մեր Եկեղեցին և նրա հոգևոր կենտրոնը եղող Մայր Աթոռ Ս. Էջմիածինը:

Վազգեն Ա Վեհափառի երկնագիր դասագրքի երկրորդ դասը ուղղված է մեր հայրենի պետությանը: Ապրեք այնպիսի նվիրումով, որ այս ժողովուրդը առաջնորդեք «ի վայրի դալարուջ» և «առ ջուրս հանգստեան» (Սաղմ. ԻԲ 2), ինչպես ասում է Աստվածաշունչը, որպեսզի դուք կարենաք ձեր անձերից, ձեր ժամանակից, ձեր կարողություններից ամենից բարձրը ընծայել մեր ժողովրդին, հայրենիքին և պետությանը ձեր անհատական նվիրումով այս պետությունը առաջնորդելով այնտեղ, ուր Աստված կցանկանա Իր հայկյան ցեղի համար, և պատմությունը կպահանջի մեզանից ապագայի սերունդների համար:

Երրորդ դասը այս դասագրքի ձե՛զ է ուղղված, հավատացյալ ժողովուրդ հայրենի և ի սփյուռս աշխարհի: Այսօր մենք գտնվում ենք մի այնպիսի դարաշրջանի առաջ, որ պետք է նոր ինքնագիտակցությամբ մեր հայրենիքի, հողի, ժողովրդի ճակատագրին նվիրվենք անվերապահ, անմնացորդ կերպով: Խաղաղ ժամանակներին դյուրին է ապրել և՛ հայրենիքում, և՛ ուրիշ երկրներում: Ժողովրդի արժեքը այն ժամանակ է դրսևորվում, երբ նա ներքին կեղծությունների, տագնապների հորձանուտի մեջ կմնա անսասան, կմրնա անխախտ իր հայրենի հողի վրա՝ իր արյան մեջ զգալով այդ հողի ուժը և իր քրտինքը արյունից բխած խառնելով այդ հողին: Մանրուքներից վեր բարձրանալ գիտենանք, իբրև ազգ մտածել սովորենք և ոչ թե իբրև անհատ, փոքրիկ-փոքրիկ, ճղճիմ-ճղճիմ հարցերով տարվենք և մոռանանք հայրենիք, մոռանանք պետություն, մոռանանք Եկեղեցի, մոռանանք մշակույթ, մոռանանք այնպիսի հանրային, հասարակական հաստատություններ, որոնց մեջ է մեր ամրության գաղտնի ուժը: Այո՛, այսօր Վազգեն Առաջինն է խոսում իմ շրթներով աննյութեղեն: Նա երկնքից է խոսում: Ես տղկար և մարմնեղեն շրթներով երկրի վրայից եմ փոխանցում իր խոսքը ձեզ: Նորոգվեցեք. **«Նորոգող հնութեանց, նորոգեա և զիս, նորոգ զարդարեա»** Շնորհալիի բառերը այսօր թող լինեն կենդանի հաց մեր բոլորի հոգիների մեջ:

Ահավասիկ, եղբայրներ և քույրեր, Վազգեն Ա երջանկահիշատակ Կաթողիկոսի երախտիքների հիշատակը. նրանց, ներթափանցումը մեր հիշողության մեջ պետք է խմո՛ր դառնա և մեր կյանքը խմորի այսօր և գալիք օրերին, Աստծու փառքի, Եկեղեցու պայծառության, Մայր Աթոռի ծաղկման և բարգավաճման և մեր հայրենի պետության ամրացման ու հայրենիքի ժողովրդի ու ամբողջ հայ ազգի շենության ու բարեկարգության համար հավիտյանս հավիտենից, Ամեն:

ԳԱՐԵԳԻՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԸ ԱՆԹԻԼԻԱՍ
ԵՎ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՕԾՈՒՄՐ

Ox-45

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱԶԳԱՅԻՆ





Սույն թվականի հունիս 27-ից հուլիս 4-ը Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Ա-ը, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության հրավերով, այցելեց Անթիլիաս՝ մասնակցելու Կիլիկյան Աթոռի նոր գահակալի ընտրությանն ու գլխավորելու օծման արարողությունը:

Հունիսի 27-ին Երևանի «Զվարթնոց» օդանավակայանից մեկնելիս Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավար Շահեն Կարամանուկյանը, Հայաստանի Հանրապետության կրոնի գործերի կառավարչի պաշտոնակատար Լազար Սուջյանը, Էջմիածին քաղաքի քաղաքապետ Երվանդ Աղվանյանը և պաշտոնական այլ անձինք, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից՝ Մայրավանքիս լուսարարապետ գերաշնորհ Հուսիկ արքեպիսկոպոս Սանթուրյանը, Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը, թեմական առաջնորդներ և միաբանության անդամներ:

Վեհափառ Հայրապետի շքախմբի մաս էին կազմում Արցախի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Պարգև եպիսկոպոս Մարտիրոսյանը, «Էջմիածին» ամսագրի գլխավոր խմբագիր գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Արիւտակեսյանը, հոգեշնորհ Տ. Վազգեն աբեղա Միրզախանյանը, Անթիլիասի միաբան հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Չիֆթչանը և պրոֆեսոր Պիոն Հակոբյանը:

ԺԱՄԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Բեյրութ ժամանեց Հայաստանի կառավարության կողմից տրամադրված պաշտոնական օդանավով: Նույն օրը, երեկոյան ժամը 17.00-ին, Վեհափառ Հայրապետին օդանավակայանում դիմավորեցին Լիբանանի Հանրապետության նախագահի ներկայացուցիչ նախարար տիար Շահե Պարսումյանը, վարչապետի ներկայացուցիչ տիար

Հակոբ Դեմիրճյանը, խորհրդարանի նախագահի ներկայացուցիչ տիար Խաչիկ Պապիկյանը, եռեսփոխաններ պարոնայք Սուրեն Խանամիրյանը, Հակոբ Չուխաատարյանը, դոկտ. Եղիկ Ճերեճյանը, Նուրիջան Դեմիրճյանը և ուրիշներ: Անթիլիասի Մայրավանքից՝ կաթողիկոսական տեղապահ գերաշնորհ Տ. Արտավազդ արքեպիսկոպոս Թրթռյանը, Լիբանանի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Արամ արքեպիսկոպոս Քեշիշյանը, Կիլիկյան Աթոռի թեմակալ առաջնորդներ և միաբանության անդամներ, Հայ Կաթողիկե համայնքի Պատրիարք Հովհաննես-Պետրոս ԺԸ Գասպարյանը, Հայաստանի Հանրապետության հավատարմատար տիար Երվանդ Մելքոնյանը, ազգային կուսակցությանց, մշակութային և բարեսիրական միությանց ներկայացուցիչներ:

Օրանավակայանի պատվո հյուրասրահի մեջ տեղի ունեցավ մամլո ասուլիս, որի ընթացքին Նորին Սուրբ Օծությունը գոհունակություն հայտնեց Լիբանան այցելության համար և հիշեցրեց, որ Լիբանանը և Սիրիան եղել են ցեղասպանությունից փրկված հայության ապաստարանները: Վեհափառ Հայրապետը անդրադարձավ նաև Հայաստանի հոգևոր-եկեղեցական դրությանը և նոր ժամանակներում Հայ Եկեղեցու առաքելությանը: Նորին Սրբությունը ողջույնի խոսք ուղղեց Լիբանանի Հանրապետության նախագահ Իլիաս Հըրաուին, խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրիին և վարչապետ Ռաֆիք Հարիրիին:

Խոսելով Կիլիկիո Կաթողիկոսության դերի մասին, Գարեգին Ա-ն ընդգծեց, որ Սուրբ Էջմիածնից հետո Կիլիկիո Կաթողիկոսությունը մեր Եկեղեցու ամենից ավիրական և կարևոր կենտրոնն է և նրա այդ հանգամանքը խնդրո առարկա չի կարող դառնալ: Նաև իր այս այցելությամբ պիտի ամրապրնդվեն այն սերտ կապերը, որոնք ստեղծված էին Վազգեն Ա-ի օրոք: Ամենայն Հայոց Վեհափառը հավատաց, որ եղբայրական այդ կապերը պիտի շարունակվեն նաև Կիլիկյան Աթոռի նոր գահակալի ընտրությունից հետո:

Ապա Նորին Սրբությունը մեծաշուք թափորով ուղևորվեց Պուրճ Համուի հայաբնակ թաղամաս, ուր հավաքվել էր խանդավառված խուռնբամ բազմություն: Պուրճ Համուի հրապարակում Վեհափառ Հայրապետին բարիգալստյան և ողջույնի խոսք ասաց Լիբանանի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Արամ արքեպիսկոպոս Քեշիշյանը և հրավիրեց Գարեգին Ա Հայոց Հայրապետին՝ բաշխելու իր օրհնությունը: Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհություն հայտնեց Աստծուն՝ ստեղծված պահի համար, քանզի առավոտյան, արթնանալով Սուրբ Էջմիածնում, այցելել էր Մեծամորի ատոմակայան և Հայաստանի Հանրապետության իշխանության ներկայացուցիչների հետ մասնակցել Ատոմակայանի վերագործարկմանը, ապա, Ս. Էջմիածնում աղոթելուց հետո, ուղևորվել էր Լիբանան և այժմ գտնվում է հայության բարախում այս սրտի մեջ:

Պուրճ Համուտի ընդունելությունից հետո, Վեհափառ Հայրապետն ուղևորվեց Անթիլիասի Մայրավանք: Նորին Սրբությունը Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճարում գոհաբանական աղոթք կատարեց և իր հայրական պատգամը հղեց հավատավոր հայորդիներին:

Հանդիսավոր ընդունելությունից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսը թափորով առաջնորդվեց Վեհարան, որտեղ հավաքված բազմությունը ուխտավորի պես գալիս էր աջհամբույրի:

Նույն երեկոյան Անթիլիասի միաբանական սեղանատունը տեղի ունեցավ ճաշկերույթ, ուր Նորին Սրբությունը խոսեց Էջմիածին—Անթիլիաս

հարաբերությունների մասին: Եղան հավուր պատշաճի ազնիվ խոսքեր ու պատասխան մաղթանքներ եղբայրական ջերմ մթնոլորտի մեջ:

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԲԱՑՈՒՄԸ

Հաջորդ օրը, հունիսի 28-ի առավոտյան ժամը 10.00-ին, Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճարում բացվեց Ազգային պատգամավորական ընդհանուր ժողովը: Բացման խոսքով և հաշվետվությամբ հանդես եկավ կաթողիկոսական տեղապահ գերաշնորհ Տ. Արտաթյամբ հանդես եկավ կաթողիկոսական տեղապահ գերաշնորհ Տ. Արտավազդ արքեպիսկոպոս Թրթռյանը: Նա ողջույնի խոսք ուղղեց Սմենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա.-ին, որ Ս. Էջմիածնի Աթոռի գահակալ ընտրվելուց հետո, առաջին անգամ լինելով, այցելում է Լիբանան՝ այս անգամ հովանավորելու կաթողիկոսական ընտրությունը և կատարելու օծումը նորընտիր Կաթողիկոսի: Սրբազան Հայրը դրվատանքով խոսեց Գարեգին Ա Վեհափառի կատարած հոգևոր-կրոնական և ազգային գործունեության մասին և հիշեցրեց, որ 50 տարի առաջ, պատմական այլ հանգամանքներում, Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Ա Կաթողիկոսը Ս. Էջմիածնում նախագահել էր Մայր Աթոռի նոր գահակալի՝ Գևորգ Ջ Կաթողիկոսի ընտրության և օծման արարողությունները:

Սրբազան Հայրը անդրադարձավ նաև Հայաստանի և Սփյուռքի հերկա կացությանը և, կարևորելով Հայ Եկեղեցու դերը, հատկապես շեշտեց գույգ Աթոռների միջև ածող գործակցությունը:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ Տ. ԱՐՏԱՎԱԶԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԹՐԹՌՅԱՆԻ ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔԸ

Ձերդ Ս. Օծություն

Տ. Տ. Գարեգին Ա Վեհափառ Կաթողիկոս Ամենայն Հայոց,

Ճիշտ երեք ամիս առաջ, նույն այս Ս. Տաճարին մեջ, իբրև Գարեգին Բ Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո, Ձեր ուղևորի երկյուղած աղոթքը մատուցիք, ինչպես Ձեր ամեն ճամփորդության, և Սբ. Էջմիածին մեկնեցաք՝ հրավերովը Կաթողիկոսական Տեղապահին, մասնակցելու համար կաթողիկոսական ընտրության և, ի հարկին, կատարելու օծումը Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Բայց, նախախնամությունը այնպես կամեցավ, որ ազգին ներկայացուցիչ պատգամավորները Ձե՛զ ընտրեցին ու փառքո՛վ բազմեցին Ամենայն Հայոց Հայրապետական գահին:

Երեկ Լիբանան ժամանեցիք՝ արժանանալով համահայկական ու ժողովրդային ջերմ ընդունելության, ու հասաք Կաթողիկոսարան՝ Ձեր տունը, ուր ա՛յնքան մեծ է դրոշմը Ձեր երախտիքին՝ թե՛ հոգիներում մեջ և թե՛ քարերում վրա՝ հովանավորելու ընտրությունը և կատարելու օծումը Մեծի Տանն Կիլիկիո նորընտիր Կաթողիկոսին: Ու այս՝ պատմական մե՛ծ նշանակությամբ դեպք մըն է, զի առաջին անգամն է մեր պատմության մեջ:

1945-ին Ձեր մեծ անվանակիցը՝ Գարեգին Հովսեփյանց Կաթողիկոսը Մեծի Տանն Կիլիկիո, իր օծման Ս. Մյուռոնը տակավին թարմ իր գագաթին ու ճակատին, գնաց Սբ. Էջմիածին և անձամբ նախագահեց ընտրության և կատարեց օծումը Չորեքչյան Գևորգ Ջ Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

Այսօր, չորեքշաբթի, 28 հունիս 1995, այդ թվականեն ճիշտ 50 տարիներ առաք, Դուք իբրև Ամենայն Հայոց Կաթողիկոս, փոխադարձության ու միության աքանչելի սկզբունքով և հոգիով, մեզի հետ եք, Ազգ. Կեդր. Վարչության հրավերով, և անձամբ կիսվանավորեք ընտրությունը Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին և 3 օր առաք ալ պիտի կատարեք անոր օծումը աղրալույս Մյուռոնովը Հայաստանյայց Ս. Եկեղեցիին:

Վեհափառ Տեր, բարի՛ ըլլա Ձեր գալուստը: Մ'ւր որ գացիք, ո՛ւր որ եղաք, ո՛ւր որ ծառայեցիք հայոց պատվական ժողովուրդին, եղաք բարիքի և օրհնության ճառագայթում Ձեր խոսքո՛վ և գործով: Պատգամավորական այս պատկառելի ժողովը ուրախությամբ կողջունե Ձերդ Վեհափառությունը և կմաղթե Ձեզի շա՛տ երկար կյանք՝ տոկուն առողջությամբ, որ ընդերկա՛ր բարիք և օրհնություն ճառագայթեք ու սերմանեք հայոց տառապակոծ ժողովուրդին՝ մասնավորապես Հայաստան աշխարհին մեջ:

Սիրելի՛ եկեղեցական և աշխարհական պատգամավորներ,

Մասնավոր ուրախությամբ կողջունենք ձեր ամենուն ներկայությունը այս Սուրբ Տաճարին սրբազան կամարներուն ներքև, Աստուծո անմիջական ճայվածքին տակ, և շնորհակալություն կհայտնենք ամենուդ, որ տուն ու ընտանիք, պարտավորություն ու պատասխանատվությունը ու երկիր թողլով, շատերդ նաև երկար և հոգնեցուցիչ ճամփորդություն հանձն առնելով, ազգային-կրոնական պարտականություն մը կատարելու փութացիք՝ ընդառաջելով կոչին ու հրավերին Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Կեդրոնական Վարչության:

Ամենքդ ընտրյալներ եք ձեր պատկան թեմերու պաշտոնական մարմիններուն կողմե, հետևաբար ներկայացուցիչներն եք ձեր թեմերուն հայության՝ մեծ պատասխանատվության մը գիտակից հանձնառությամբ:

Շատ լավ գիտեք, վստահաբար, և խոր ու հաստատ համոզում է ձեր մեջ, թե Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը ո՜րքան կարևոր ու մեծ կոչում և ո՜րքան կենսական դեր ու պարտականություն ունի ի սիրտս աշխարհի ցրված ու տարտղնված մեր ժողովուրդի զավակներուն ազգային, կրոնական և բարոյական դաստիարակության և հայեցի տոկուն ներկայության կերտումին և հարազատ ու անաղարտ պահպանության ներքին գիտին ու գործին մեջ:

Ըստ երևույթին՝ հայ Սիյոնքը տակավին երկա՜ր պիտի տևե, դժբախտաբար: Այս դառն հավաստիության դիմաց այսօրվան պատասխանատուներս չենք կրնար անտարբեր մնալ, իրավունք չունինք անտարբեր մնալու, այլ պարտավոր ենք գալիքը նախատեսելու և ապագան իմաստունորեն կանխապատրաստելու մեր իրերաճաչորդ նոր սերունդներուն համար: Մանավանդ երբ Հայաստանը՝ Ազատ-Անկախ Հայաստանը, պետք ունի ամբողջն կազմակերպյալ, առողջ ու զորեղ հայ Սիյոնքին, երբ Սուրբ Էջմիածինը պետք ունի, ինչպես ունեցավ, Մեծի Տանն Կիլիկիո կազմակերպյալ և ամրակառույց Սուրբ Աթոռին: Հետևաբար հրամայական է ու կենսական՝ հայ Սիյոնքը հայորեն արթուն ու կանգուն պահել, ազգայնորեն և կրոնականորեն առողջ պահել՝ խորապես ինքնագիտակից և միշտ պատրաստ առավելագույն օգնության և օժանդակության փութալու Հայաստանին ու Արցախին, հնարավոր բոլոր միջոցներով, նյութական, բարոյական, գիտական, բժշկական, ճարտարագիտական, մարդուժի, և այլն: Բազմադարյան թշնամիին՝ մարդկայնութենեն զուրկ թուրքին գործած ցեղասպանությամբ մեր ժողովուրդին Սիյոնք դարձած լլլալու անհավոր չարիքը վերա-

ձեզք բարիքի հորդաբուխ ու անապատ աղբյուրի՝ հանուր հայության, մանավանդ Հայաստանին ու Արցախին, գուցե վաղը նաև Նախիջևանին համար՝ մեր լրջորեն և խոհականորեն կազմակերպյալ ճիգով ու աշխատանքով:

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Սուրբ Աթոռը թափուր է երեք ամիսև ի վեր, բայց ամենուրախ ու պատմական իրողությամբը իր ազգընտիր Վեհափառ Կաթողիկոսին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ-ի Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրության և Սուրբ Էջմիածնի գահին արժանապես բարձրացումին, ինչ որ բացառիկ երևույթ է մեր ազգային-եկեղեցական պատմության մեջ և բացառիկ նշանակություն ունի Հայաստանյայց Եկեղեցվո Նվիրապետական երկու բարձրագույն Աթոռներուն եղբայրական փոխհարաբերությանց և եկեղեցանվեր ու ազգաշեն գործունեության մեջ: Այս իրողությունը ինքնին գերագույն փաստն է և ամենեն պերճախոս ապացույցը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցվո անբակտելի միության՝ հակառակ բոլոր տեսակի աղմկարարությանց, և պատվական հայ ժողովուրդին միասնականության:

Հարգելի պատգամավորներ, եկած եք կրոնական, քաղաքական, գաղափարախոսական ու մշակութային տարբեր դրույթի ու տարբեր ենթակառույցի երկիրներեն, բայց ամենքդ ալ միևնույն Հայաստանյայց Եկեղեցվո զավակներն եք՝ անոր լուսավոր ավազանեն վերածնած և անոր Սրբալույս Մյուռոնին օծումով աստվածային շնորհն զգեցած: Եկած եք մի ու անբաժանելի Հայաստանյայց Եկեղեցվո Կիլիկյան Սուրբ Աթոռին արժանավո՛ր գահակալ մը ընտրելու խղճմտությամբ և համոզումի անկեղծությամբ: Հանուր հայության ձայնվածքները ան պահու ին՛ս սևեռած են՝ ամենեն խաղաղ ու ազատ մթնոլորտի մեջ կատարված հարմարագույն ընտրության մը արդյունքին արդար ապաւումով: Ցույց տանք ամենո՛ւն մեր միասնական կամքին արտահայտությունը՝ մեր քվեները կենդրոնացնելով հավասարապես արժանավոր և հարմար ու սիրելի թեկնածուներու հարմարագույնին անունին շուրջ»:

Ապա խոսք առավ Ամենայն Հայոց Գարեգին Ա. Հայրապետը: Նորին Սրբությունը, հանուն Ս. Էջմիածնի և համայն հայության, ողջույնի խոսք ուղղեց ժողովին: Գոհունակություն հայտնեց, որ Աստված իրեն շնորհեց նոր Կաթողիկոսի ընտրությանը ներկա լինելու առիթը: Շեշտեց, որ այս ժողովը պատմական առիթ է: Այնուհետև Վեհափառ Հայրապետը հակիրճ կերպով անդրադարձավ Սիյուռքում Անթիլիասի կատարած դերին և հիշեցրեց այն զարգացումը, որ Կիլիկիո Աթոռն ապրել է հայության հետ՝ գաղթականության օրերից մինչև այսօրվա հանգրվանը:

Նորին Սրբությունը բարձր գնահատեց ազատ, անկախ Հայաստանի վերականգնման և պետականության կերտման հատակ քայլերը: Նա մի քանի անգամ շեշտեց մե՛կ հայության, մե՛կ հայրենիքի և մե՛կ Եկեղեցու գաղափարը՝ ընդգծելով, որ Եկեղեցին եղել է ու պիտի մնա իբրև խաղաղարար և միացնող ուժ ազգային կյանքում:

Ապա Ամենայն Հայոց Կաթողիկոսը օրհնելով ժողովականներին՝ անցավ Վեհարանի իր հարկաբաժինը:

Ստորև ներկայացնում ենք Վեհափառի խոսքը՝ արևելահայերենի վերածված:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԻՆ Ա-Ի ԽՈՍՔՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԲԱՑՄԱՆԸ ԱՆԹԻԼԻԱՍԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Սիրելի հոգևոր եղբայրներ, ազգային պատասխանատուներ, ժողովական անձինք և բարեկամներ,

Առաջին խոսքս առ Աստված ուղղված բառերն են. «Փառք Քեզ Աստուած, փառք Քեզ, յաղագս ամենայնի Տէր փառք Քեզ»:

Այս օրը Հայ Եկեղեցու և ողջ հայ ժողովրդի պատմության մեջ պիտի արձանագրվի որպես ոսկեղեն էջ: Հանուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսության, հանուն Մայր Աթոռի միաբանության, հանուն Հայաստանի, Արցախի և նախկին Խորհրդային Միությունից անկախացյալ պետություններում և երկրներում ապրող հայ ժողովրդի և հանուն արտասահմանում գտնվող այն բոլոր թեմերի, որոնք Ամենայն Հայոց Կաթողիկոսության իրավասության ներքո են գտնվում, ողջունում եմ ձեզ ամենաքաղցր սիրով և Հայրական օրհնությամբ և զգիվ զգացումներով:

Փառք եմ տալիս Աստծուն, որ ինձ դարձրեց բախտավոր էակներից մեկը Իր ստեղծած մարդկային արարածներից և Սուրբ Մյուռոնով օծված հոգևորականներից, և որ իմ կյանքում չորս կաթողիկոսական ընտրությունների մասնակցելու առիթը, բախտավորությունը և պարտավորությունը ունեցա: Նրանցից երեքը Անթիլիասի Մայրավանքում. նախ Զարեհ և Խորեն ամոռանալի մեր Կաթողիկոսների ընտրության ժամանակ և ապա երրորդին այնպես տնօրինվեց, որ ես որպես ընտրող մասնակցեցի, բայց ընտրվեցի որպես Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո: Չորրորդը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում էր, երբ գնացի որպես պատվո հյուրը Ամենայն Հայոց Կաթողիկոսության, և այնտեղ Աստծո կամքով և ժողովրդի ընտրությամբ դարձյալ այնպես տնօրինվեց, որ հանուն մեր Սուրբ Եկեղեցու, հանուն մեր Հայրենիքի և հանուն մեր ժողովրդի, թե՛ ի Հայաստան և թե՛ ի Արցախ ու ի սփյուռս աշխարհի, ընդունեցի այդ գերագույն աստիճանի զոհողության պարտքը:

Գիտեմ, թե ինչ ծանր պարտավորության տակ մտա: 70 տարիների լռոնական ու ազգային թմբիրից հետո, կրոնի, Եկեղեցու հանդեպ ցույց տրված ատելության, արհամարհանքի, հալածանքի, ժխտումի երևույթներից հետո, կամքովն այս ժողովրդի ընտրվելով Ամենայն Հայոց Կաթողիկոս և նրանց բոլորի սպասումներին պատասխան տալ մարդկային որևէ մեկ անձի ճիգերից և կարողություններից վեր է: Բայց ապավինում եմ Աստծուն, որ մեր բոլոր հոգևորական եղբայրներով, առանց խորության որևէ եպիրապետական Աթոռի, մեր Հայրենի պետության և մեր ամբողջ Սփյուռքի հայ ժողովրդի զավակների և հավատացյալ ազգայինների հետ միասին, ձեռք-ձեռքի տանենք այդ ծանր լուծը, որ եպիրական է և փրկարար մեր Հայրենիքի ժողովրդի և, ես կհավատամ՝ ողջ հայության համար:

Այս հիշգերող ժողովին, որ թեև այլևս ոչ ընտրելու և ոչ էլ ընտրվելու պարտավորություն ունեմ, սակայն ցանկանում եմ երկու, երեք մտածումներ ձեզ հետ բաժանել, մասնավորաբար այն պատճառով, որ իմ կյանքի վերջին երեք ամիսները ինձ համար բոլորովին հեղաշրջիչ, բայց ոչ փոփոխիչ ներգործություն ունեցան: Արդեն գրվել է նախորդ տարիներին կատարված դեպքերի մասին, պիտի գան ուրիշներ և պիտի գրեն այսօրվա մասին: Մենք նայում ենք պատմությանը, նայում ենք մեր ամբողջ ժողովրդին, նայում ենք

մեր գերագույն շահերին, իբրև Եկեղեցի և ազգ իրար շաղախված: Այսպե՛ս եմ ընկալում պատմության ընթացքը, որի միջով ենք անցնում, որի կերտմանը մեր ձեռամբ ենք գերում այսօր: Այս պատմությունը փոփոխությունների շղթա է, այլապես պատմություն չկա, այլապես մարդկային կյանք էլ չկա:

1956 թվականն էր, երբ այստեղ եկավ իմ երջանկահիշատակ ճախորդը: Պայմանները տարբեր էին, պատմական պահը տարբեր էր, աշխարհը տարբեր էր, երկաթե վարագույր կար, և այն ժամանակ այն չեղավ, ինչ որ փառք Աստծո եղավ այսօր: Դրանից 11 տարիներ առաջ, 1945—46 թթ., այստեղից՝ Կիլիկյան Սուրբ Աթոռից, Գարեգին Ա. վեհափառը գնաց Էջմիածին և մեր Աթոռի՝ Կիլիկյան Աթոռի մասնակցությունը, այնքան ներշնչողական դերակատարությամբ բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրության և օծման:

Այսօր աշխարհը փոխված է, աշխարհը փոփոխության ընթացքի մեջ է, ու մեր հայ կյանքն էլ այդ փոփոխության ընթացքից չի կարող անմասն մնալ: Այսօր մեր հայ իրականության մեջ հիմնական փոփոխություններ արձանագրվեցին, որոնց ես չպիտի անդրադառնամ մանրամասնորեն, այլ միայն պիտի խոսեմ մեկ-երկուսի մասին:

Առաջին. Սփյուռքի հայության վերակազմումն է ցեղասպանությունից հետո: Հաճախ մենք մոռանում ենք, թե ո՞ւր էր Անթիլիասը 1915 թվականից հետո և ուր է հիմա: Նույնը Սփյուռքի հայությունը: Փոխվեց ամեն ինչ Աստծու զորությամբ և մեր ժողովրդի կամքով: Ես գաղթական ժողովրդին տեսել եմ պատսպարանների տակ, ո՞ւր էր հայությունը այնտեղ, ո՞ւր էր որբանոցը այստեղ և ո՞ւր ենք այսօր, հարց տանք մեզ: Սա գեղեցկագույն երևույթներից մեկն է մեր արդի Հայոց պատմության: Ապա մենք արթնացանք իբրև ժողովուրդ և մեր արդար դատի իրավունքների հետապնդողը եղանք: Այսօր, Հայաստանի 70 տարիների ծանր լծից հետո, դարձյալ խոնարհվում ենք Աստծու առջև և ասում. Փառք Քեզ, Տեր, որ մեր Հայրենիքին այս ազատությունը շնորհեցիր, որ մեզնից շատերը իրենց մանուկ տարիքից կերազեին: Տակավին մի քանի օրեր առաջ էր, որ Հայաստանի մեջ մեր ժողովրդի առջև կանգնած ասում էի, թե ո՞վ չի հիշում այն օրը, գոնե մեր սերնդից, երբ մենք մեր լեզուները բացեցինք ու ասացինք.

Ազատ Աստված այն օրից երբ հաճեցավ շունչ փչել,
Իմ հողացյութ շինվածքին կենդանություն պարգևել,
Ես անթարթառ մի մանուկ երկու ձեռքս պարզեցի
Եվ իմ անզոր թևերով ազատություն գրկեցի:

Ես կարո՞ղ եմ մոռանալ, ինքս ինձ կարո՞ղ եմ ժխտել, եթե չանդրադառնամ, որ ես մեծացա՝ առաջին գիրք կարդալով Ավետիս Սեմսարգյանի «Ազատության ճանապարհին» գործը: Այսօր այս Հայաստանը հայի՛նն է տակավին, և Մայր Աթոռը չէ այն, ինչ որ էր ժամանակին: Այնտեղ անվախ երեք ամիսներն ի վեր, ինձ ընկերակցող պատվիրակության անդամներս են վկաները, Մենք ոչ մի օր կաշկանդումի ներքև չգտնվեցինք: Հետևաբար, այս պատմական հեղափոխության ընթացքին, եթե երբեք զննենք ժամանակի նշաններն, այսօր իմ հավատքը, իմ ներքին ընթռնումը, իմ էությունը, եթե Աստված ուզել է ևս որևէ իմաստություն, այդ ի-

մաստությունը ինձ ցույց է տալիս, որ հայության համար միասնականության հրամայական կա:

Այսօր այս Հայեցիքը, այս հողը, այս պայքարող, տառապող, տնտեսական ահավոր պայմանների տակ գտնվող ժողովուրդը կառչած է մնում իր հողին: Ճիշտ է, դուրս մեկնողներ կան, ո՞ր երկրից չկան. Լիբանանից չեղա՞ն, Պարսկաստանից չեղա՞ն, Սիրիայից չեղա՞ն, ուրիշ տեղերի՞ց չեղան, բայց երբ որ կտեսնեք այս բազմամիլիոն աշխարհի մեջ երեք ու կես միլիոն ժողովուրդ կառչած է մնում իր հողին, հույս ենք փայփայում, որ ապագան այնքան էլ մոայլ չէ, ինչպես երբեմն օտարներն էլ ուզում են ներկայացնել:

Բարեկամներ, Օրմանյան սրբազանն իր մեկ գրության մեջ մի խոսք ունի, որ ասում է. «Ես իբրև պատրիարք աշխարհի կացությունը չեմ կարող փոխել: Ես նավի նավավար եմ և չեմ կարող փոթորիկները կանգնեցնել, այլ միայն կարող եմ այնպես ղեկավարել, որ նավը ապահով նավահանգիստ հասնի»: Այսօր, երբ աշխարհը մոտենում է երկրորդ հազարամյակի ավարտին, երբ աշխարհի բոլոր ժողովուրդներն ու Եկեղեցիները ինքնաքննության, ինքնավերլուծումի ընթացքի միջով են անցնում, մենք՝ հայ ժողովրդի զավակներս, ուր էլ լինենք, Հայրենիքում թե Սփյուռքում, պետք ունենք ինքնագիտակցական, համայնապետական, ամբողջապետական մեկ հայություն, մեկ Հայրենիք և մեկ Եկեղեցի ներկայանալ աշխարհին:

Ես երկու օր առաջ կարդում էի Հռոմեական Եկեղեցու Սրբազան Քահանայապետի կոնդակը, որ բոլոր համալսարանների մեջ հիմա ամենաշատ ընթերցվողներից է և այն միտքն է հայտնվում, թե Եկեղեցիների համար միությունը պետք է լինի ոչ թե միատեսակությունը, ոչ թե միաձևությունը, ոչ թե միակերպությունը, այլ այդ միությունը մեր Փրկչի Ծննդյան երկու հազարամյակին գոնե առավել լիցք ստանա ամբողջ աշխարհում: Այնտեղ մի տող կա, որն ուզում եմ այսօր մեր կյանքի մեջ ամրանա. «Աշխարհը քաղաքական, ռազմական, ապահովական, տնտեսական, բնակերային, դասակարգային պայքարներով միշտ լեցուն է եղել և է ու պիտի մնա: Եկեղեցին այդ բոլորի միջից պետք է անցնի որպես խաղաղարար Աստծու և մարդկության միության», մեկ խոսքով, իրարամերժ և շատ հարցերով իրարից բաժանված ժողովուրդներին Եկեղեցին պետք է բերի այդ ամբողջությանը երկրի վրա:

Մեր՝ Հայաստանյայց Եկեղեցին այսօր այնպես եմ զգում, որ պետք է դառնա այդ միացուցիչ ուժը, և մեր ազգակիցների տարակարծությունները պակաս լինեն քաղաքական, բնակերային, դասակարգային կամ այլ մարզերում: Եկեղեցին Հայոց մեկ և նույնն է, երեկ և այսօր նույն և հավիտյան: Մնա համերաշխ, որպեսզի կարողանա միության և խաղաղության խմորումը բերել ազգին:

Երկու շաբաթ առաջ էր՝ «Տօն կաթողիկէ Սրբոյ Էջմիածնի», Էջմիածնի Կաթողիկեի՝ Մայր տաճարի հիմնադրության տոնի առիթով, իմ անդրանիկ կոնդակը հղեցի, որի մեջ պիտի տեսնեք գլխավոր ոսկի թելը այն մտածման, որը հյուսվածքն է երկու կետերի. միասնականության ամրապընդման և մեր Եկեղեցու վերածաղկումի, մեր Եկեղեցու իսկական ներքին բարեկարգության: Դրա համար ևվիրապետական բոլոր Աթոռների գործակցությունը կենսական նախապայման է, որովհետև եթե պիտի ներկայանանք աշխարհի որևէ երկրում, կամ մոտեցող 1700-ամյակը պիտի տոնենք, ո՞ր մեկ 1700-ամյակը պիտի տոնենք, մե՞կ, թե մի քանի Աթոռների: Եվ ահավա-

սիկ, այն ճամփան, որ Վազգեն Ա. երջանկահիշատակ Կաթողիկոսի օրոք բացվեց և Մեր աշխատանքով առավել ևս զորացավ: Այս ճամփան Մենք կտեսնենք, մեզ համար միակ ուղիղ ճամփան՝ դեպի Հայոց Եկեղեցու պայծառ ապագան:

Այս բառերով ես ողջունում եմ ձեզ և ի խորոց սրտի մաղթում, որ Կիլիկյան փառավոր Աթոռի դերակատարությունը առավել ևս ծաղկի ի մեջ և հանուն մեկ Եկեղեցու, և դուք կատարեք ձեր ընտրությունը, և ես եղբայրական սիրով պիտի ողջունեմ նորընտիր Կաթողիկոսին՝ ուխտելով, որ մենք պիտի գործենք իբրև մեկ Եկեղեցի:

ԱՐԱՄ ԱՐՔԵՊՍ. ՔԵՇԻՇՅԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Օրվա երկրորդ կեսին հայտնի դարձան քվեարկության արդյունքները, ըստ որի բացարձակ մեծամասնությամբ՝ 149 ձայն (ձայների երկու երրորդից ավելին), Լիբանանի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Արամ արքեպիսկոպոս Քեշիշյանն ընտրվեց Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո:

Իր անդրանիկ խոսքում Արամ Ա. Կաթողիկոսն ասաց, որ խոնարհությամբ է ընդունում իրեն վստահված այս արբազան առաքելությունը, որ իր առաքելությունը նկատում է Հայ Եկեղեցվո ամրապնդումը Ս. Էջմիածնի հետ գործակցաբար, ազատ և անկախ Հայաստանի ամրապնդումը և գրակցումը Արցախի դատին:

Այնուհետև ողջույնի խոսք ուղղեց Ամենայն Հայոց Հայրապետին, որ եղել է իր ուսուցիչը, իսկ այսօր նրա հոգևոր եղբայրն է և պետք է միասին ձեռք-ձեռքի ու սիրտ-սրտի գործեն մեկ ժողովուրդ, մեկ հայրենիք ամբողջության մեջ:

Արամ Առաջինը ողջույնի խոսք ուղղեց նաև Երուսաղեմի և Պոլսո պատրիարքություններին, միաբանությանը, թեմակալ առաջնորդներին և անկախ Հայաստանի իշխանությանց: Ապա ողջունեց Ս. Էջմիածնի միաբանության պատմական մասնակցությունը այս ժողովին՝ ընդգծելով, որ դա գործնական վկայություն է Եկեղեցու և ժողովրդի միության:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՆԴՐԱՆԻԿ ԽՈՍՔԸ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

Այս պահը իմ կյանքիս մեջ հատուկ նշանակություն ունեցող պահ մըն է: Լեցուն է սիրտս սիրո ու հուզումի ալիքներով: Ձեր հավաքական կամքի արտահայտությանը մեջ, ես կտեսնեմ Աստուծո կամքը: Ինձի ուղղված ծառայության նոր հրավերին մեջ, ես կլսեմ մեր ժողովուրդին ձայնը, մեր պատմության ձայնը: Ու սա պահուն Աստուծո ներկայության մեջ ու ձեր բոլորին դիմաց կանգնած, ինձի վստահված այս ծանրագույն պարտականությունը կընդունիմ խոնարհությամբ, պատասխանատվության խոր զգացումով ու գիտակից և ամբողջական հանձնառությամբ:

17 տարիներ առաջ, երբ Լիբանանի առաջնորդության կոչվեցա, Լիբանանի հայության ուղղած իմ առաջին խոսքիս մեջ ըսի՝ «չեմ ուզեր իմ ծառայության տարիները ըսելիքներով անցնել, այլ ընելիքներով լեցնել»: Ն՛ույնը կկրկնեմ այստեղ:

Իմ եկեղեցական թե աշխարհական գործակիցներուս հետ միասին, պիտի փորձեմ, կարելիության սահմաններուն մեջ, առավելագո՛յն չափով կենսագործել Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության համազգային առաքելությունը մեր ժողովուրդի կյանքին մեջ:

Այս Աթոռը պիտի շարունակե ինքզինք ծառայությամբ իրագործել ու արժևորել մեր Եկեղեցվո ու ժողովուրդի կ՚ապրումին մեջ: Այս Աթոռը պիտի շարունակե վերաևորոգ հավատքով ու տեսիլքով և ամբողջական գործակցությամբ, Ս. Էջմիածնի Մայր Աթոռին հետ, իր գործոն մասնակցությունը բերել՝

Հայց. Եկեղեցվո միության առավե՛լ ամրացման,

Ազատ ու անկախ Հայաստանի Հանրապետության առավել ամրացման,

Արցախյան ազատագրական պայքարի առավել հզորացման անհետաձգելի ու հրամայական գործին:

Այլ խոսքով, Ս. Էջմիածնի ևսիամեծար Մայր Աթոռին հետ մեր գործակցությունը պիտի ըլլա անմիջական ու ամբողջական: Հայաստանն ու Արցախը պիտի դառնան մնայուն ու առանցքային ներկա՚յություն Կիլիկիո Կաթողիկոսության առաքելության մեջ:

Սա պահուն ես կուզեմ առաջին հերթին փառք տալ Աստուծո, որ արժանի ըրավ զիս Հայց. Եկեղեցվո ծառայության այս բարձրագո՛ւյն պատիվին: Փառք ու գոհություն Աստուծո, որ իմ ձեռքես բռնեց և շուրջ 30 տարիներ առաջնորդեց զիս հայ ժողովուրդի ծառա՚յության ճամփուն վրա:

Ես կուզեմ իմ ջերմ շնորհակալությանս առաջին խոսքը ուղղել ձեզի, հարգելի պատգամավորներ, այն սիրույն ու վստահությա՚ն համար, զոր ցույց տվիք իմ անձիս նկատումամբ:

Եղբայրական սիրով կողջունեմ Սմենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Կաթողիկոսը և հանդիսավոր սա պահուն իրեն կըսեմ արտիս բովանդակ անկեղծությամբը.--մենք միասի՛ն պիտի գործենք, ձեռք-ձեռքի, սիրտ-սրտի՝ ի խնդիր մե՛կ Եկեղեցվո, մե՛կ հայության ու մե՛կ հայրենիքի համայնական կյանքին մեջ և ևո՛ւյն և մե՛կ առաքելության ճամփուն վրա:

Կողջունեմ Հայց. Եկեղեցվո Պատրիարքական գույգ Աթոռները, Երուսաղեմի և Կոստանդնուպոլսոյ և անոնց Սմենապատիվ Սրբազան եղբայրները: Մեր Պատրիարքական Աթոռներուն հետ ևս մեր գործակցությունը պիտի ըլլա աերտ ու ամբողջական:

Ջերմ սիրով կողջունեմ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության ուխտյալ Միաբանությունը, որ, վստահ եմ, վերաևորոգ կամքով ու հանձնառությամբ այս Աթոռին ծառայությունը պիտի տանի մեր ժողովուրդի զավակներուն՝ ի սփյուռս աշխարհի:

Ձեր բոլորին անունով ու անձնապես իմ հատուկ շնորհակալությունս կուզեմ հայտնել մեր Միաբանության եռիցագույն անդամներեն՝ Բարձրաշնորհ Տ. Արտավազդ արքեպս. Թրթռյանին, որ որպես Տեղապահ անցյալ երեք ամիսներու ընթացքին բարձրագույն աստիճանի նախանձախնդրությամբ ու պատասխանատվությամբ վարեց Կաթողիկոսության գործերը:

Կողջունեմ մեր թեմակալ առաջնորդներն ու մեր ազգային իշխանությունները: Մեր թեմերուն հետ մեր հարաբերությունը պիտի ըլլա անմիջական, հետևողական ու կազմակերպ:

Կողջունեմ Մայր Աթոռի մասնակցությունը այս ընտրության, որ ինքնին պերճախոս վկայություն մըն է այն անհերքելի իրողության, թե Հայց. Եկեղեցին մե՛կ է իր Կաթողիկոսական ու Պատրիարքական Աթոռներով:

Սա պահում կողջունեմ Հայաստանի մեր պետական իշխանությունը, Լիբանանի ու Սուրիո, ինչպես նաև մեր Աթոռին ենթակա բոլոր թեմերում պետական իշխանությունները:

Վերջապես, անհուն սիրով իմ ողջույնի խոսքս կուղղեմ մեր սիրելի ժողովուրդին, որուն ծառայելը հվիրական պարտք է ու բարձրագույն պատիվ:

Թող Աստված օրհնե՛ ձեր բոլորը: Թող Աստված մեր ժողովուրդը առաջնորդե սիրո ու միության ճշմարիտ ճանապարհեն:

Եկե՛ք, այժմ երգենք՝ «Մեր Հայրենիք»-ն ու ապա «Երբ որ բացվին դռներն հուսո»...

Ու այսպե՛ս, թող Հայաստանն ու Կիլիկիան, Էջմիածինն ու Անթիլիասը զիրար ողջագուրեն ու զիրար ամբողջացնեն՝ ի սեր մե՛կ Եկեղեցվո և մե՛կ ու ամբողջակա՛ն հայության:

Այս է մեր կյանքին ճամփան: Ուրիշ ճամփա չկա՛ ու չի՛ կրնար ըլլալ:

Ժողովի փակումից հետո ներկաներն ուղղվեցին Վեհարան, ուր տեղի ունեցավ արտառուչ արարողություն: Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսը շնորհավորեց նորընտիր գահակալին և 18 տարիների իր կաթողիկոսության արծիվը հանձնեց նրան: Երկու Վեհափառները փոխանակեցին եղբայրակցության խոսքեր և վերահաստատեցին գործակցության հանձնառությունը.

ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌԻ ԽՈՍՔԸ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ես շնորհավորում եմ ընտրությունը մեր սիրելի Տ.Տամ Սրբազանի, որպես նոր Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո: Ի խորոց սրտի մաղթում և աղոթում եմ առ Աստված, որ առավել ևս ծաղկի Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը, և ամբողջ Հայ Եկեղեցին հրճվի ու մեր Եկեղեցու առաջընթաց կյանքի ու առաջադիմության մեջ մի քայլ առավել առաջ գնանք բոլորի միասնական գործակցությամբ՝ հանուն Սուրբ Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսության: Անձնապես նաև որպես Գահակալը այդ Աթոռի, այսօր ես ուզում եմ իմ ձեռքերով իր պարանոցին անցկացնել այն արծիվը, որ ես կրեցի իբրև Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո:

Թող սա դառնա Հայրենիքի և Սփյուռքի հայության հվաճումի մի նոր հանգրվան, և մեր ժողովուրդը թող տեսնի այս գեղեցիկ պահը, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի նորընտիր Ամենայն Հայոց Կաթողիկոսը անձամբ ողջունում է ընտրությունը Մեծի Տանն Կիլիկիո նոր Կաթողիկոսի, թող եղբայրության և միության և գործակցության հշանաբանը դառնա մեր բոլորի ճակատի վրա գրված անջնջելի ոսկեղեն գիրը: Հետևաբար, ես սրտանց շնորհավորում եմ ձեզ և մեր Կիլիկյան Սուրբ Աթոռի պատգամավորական ժողովին, Ազգային ընդհանուր ժողովին, միաբանությանը, կենտրոնական վարչությանը և բոլոր թեմերին մաղթում, որ այս ընտրությունը դառնա բարեբաստիկ և նոր իրագործումների մի շրջան և արծվի թևերով միշտ թռչի Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը և Մասիսն ու Սիսը ծիածանի երեք գույների հետ միացյալ:

ԱՐԱՄ ՎԵՀԱՓԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆ ԽՈՍՔԸ

Վեհափառ, քիչ առաջ Մայր տաճարի մեջ սիրո և եղբայրության իմ առաջին ողջույնը ուղղեցի Ձեզ՝ ասելով, թե Դուք ինձ եղաք ուսուցիչ, ինձ եղաք միաբանակից, ինձ եղաք Վեհափառ Հայրապետ, և այսօր Աստուծո կամքով և մեր ժողովրդի հավանությամբ մենք դարձանք հոգևոր եղբայրներ, մենք պիտի մնանք հոգևոր եղբայրներ, մենք պիտի գործենք որպես եղբայրներ, որովհետև ինչպես Դուք լսիք մեկ է Հայաստանյայց Եկեղեցին ու Հայաստանյայց Եկեղեցու առաքելությունը մեկ է: Այդ մեկ առաքելության ճամփուն վրա մենք միասնաբար պիտի գործենք:

Թույլ տվեք այս առիթով, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության կենտրոնական վարչության, միաբանության, թեմակալ առաջնորդների և այս Աթոռին ենթակա մեր սիրելի ժողովրդի անունով և անձնապես մեր խոր շնորհակալությունը և երախտագիտությունը հայտնելու Ձեզ, որ 18 տարիներ շարունակ եղաք այս Աթոռի Գահակալը, հատկապես Լիբանանի պատմության ամենադժվար շրջանին: Եղաք այս Աթոռի հավատավոր ծառան, այս Աթոռի առաքելությունը տարիք մեր ժողովրդին, այս Աթոռը երախտապարտ է Ձեզ: Եվ Դուք, Ձեր կոչումի թելադրությամբ, երբ Աստուծո ձայնը այս անգամ կանչեց Ձեզ Մայր Հայաստանեաց՝ Սուրբ Էջմիածնեն, գացիք հոն և Սուրբ Էջմիածնի ճամփով այսօր կշարունակեք ծառայել նույն Հայրենիքին, նույն հայության և նույն Եկեղեցուն:

Ինչպես կըսեի, այս երկու Աթոռները իրենց Գահակալներով, իրենց միաբանությամբ և իրենց ժողովրդով միասնական պիտի ըլլան, միասնաբար պիտի գործեն, համայնական մեկ ամբողջության շրջագծեն ներս, որ է մեզ համար Եկեղեցի, ազգ և հայրենիք:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ԿՈՂՄԻՑ

Նույն օրը, երեկոյան, Բելգրութի «Սանթ Սոֆիլ» հյուրանոցի գեղեցիկ այգում Հայաստանի Հանրապետության դեսպանատունը, հավատարմատար տիար Երվանդ Մելքոնյանի նախագահությամբ, կազմակերպել էր շքեղ ընդունելություն՝ ի պատիվ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և նորընտիր Հայրապետի: Ընդունելությանը ներկա էին վարչապետ Ռաֆիկ Հարիրին, Արտաքին գործոց նախարարը, այլ նախարարներ, մեծ թվով երեսփոխաններ, օտարերկրյա դիվանագետներ և ազգային-հասարակական գործիչներ: Երկու Վեհափառներին և ներկաներին ջերմ խոսքերով ողջունեց Հայաստանի Հանրապետության հավատարմատար տիար Երվանդ Մելքոնյանը:

Ընդունելության ավարտին երկու Հայրապետներն իրենց գնահատանքը հայտնեցին և օրհնությունը բաշխեցին ներկաներին:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ «ԹՌՉՆՈՑ ԲՈՒՅՆ»

Հաջորդ օրը, հունիսի 29-ի կեսօրվա ժամը 14.00-ին, Ազգային եկեղեցական ժողովի պատգամավորները, Ամենա՛յն Հայոց Հայրապետի առաջնորդությամբ, այցելեցին «Թռչնոց Բույն» մանկատուն, որտեղ գեղեցիկ ընդունելություն էր կազմակերպված ի պատիվ Գարեգին Ա Վեհափառի: Այցե-

լուները հիացան կատարված շինարարական աշխատանքներով, որոնք իրականացրել էր Գարեգին Ա Կաթողիկոսը՝ Կիլիկյան կաթողիկոսության շրջանին: «Թոչնոց Բույն» մանկատան տեսուչ Արտավազդ արքազանը ողջույնի ջերմ խոսքեր ուղեց Հայոց Հայրապետին՝ իր խոսքում վեր հանելով այն ծավալուն աշխատանքը, որ կատարել էր Նորին Սրբությունը: Գնահատանքի և երախտագիտության խոսքեր ասացին Պարոն և Ասողիկ արքազանները, ազգային պատգամավորները:

Հավարտ ճաշկերույթի Վեհափառ Հայրապետը գնահատանքի խոսք ասաց Արտավազդ արքազանին՝ իր կատարած նվիրական աշխատանքի համար: Նորին Սուրբ Օծությունը բարձր գնահատեց նաև «Գայանյանց» միաբանության մայրապետների ծառայությունը և ողջ պաշտոնեության կատարած գործը: Վեհափառ Հայրապետը անդրադարձավ Եկեղեցու բարեսիրական առաքելությանը և պատմական մի անդրադարձ կատարեց՝ հիշեցնելով «Թոչնոց Բույնի» ստեղծման ու ծավալած ազգանպաստ աշխատանքները, հատկապես բարձր գնահատելով «Թոչնոց Բույնի» դերը լիբանանահայության կյանքում Մեծ եղեռնից հետո:

ԱՆԹԻԼԻԱՍԻ ԴՊՐԵՎԱՆՔԻ ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ

Նույն օրը, երեկոյան ժամը 19.00-ին, Անթիլիասի Դպրեվանքում տեղի ունեցավ ամավերջի հանդիսություն և վկայականների բաշխում:

Հանդիսությանը ներկա էին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ն, Մեծի Տանն Կիլիկիո նորընտիր Կաթողիկոս Արամ Ա-ն, միաբանության անդամներ, պատգամավորներ և ծնողներ: Այդ առթիվ Դպրեվանքի սաների կողմից կազմակերպվել էր գրական-երաժշտական երեկո: Դպրեվանքի տեսուչ Շահան վրդ. Սարգսյանի տեղեկությունից և բովանդակալից խոսքից հետո, զույգ Հայրապետները հրավիրվեցին բեմ՝ սաներին տալու իրենց հայրական օրհնությունները: Վեհափառները խոսեցին Դպրեվանքի կարևորության և լավ հունձքի մասին.

ԱՐԱՄ ՎԵՀԱՓԱՌԻ ԽՈՍՔԸ ԴՊՐԵՎԱՆՔԻ ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆԸ

Վեհափառ Տեր, Պատրիարք Սրբազան, միաբանակից եղբայրներ, հարգելի պատգամավորներ, կենտրոնական վարչության անդամներ, սիրելի ծնողներ և Դպրեվանքի սիրելի սաներ,

Այս պահը գեթ ինձ համար հատուկ կարևորություն ունեցող պահ մըն է, մասնավորաբար երկու իմաստով:

Առաջին. որպես ընտրյալ Կաթողիկոս առաջին անգամ կգտնվիմ Դպրեվանքի մեջ, այն սրբավայրին մեջ, ուր տեղի ունեցավ իմ երկրորդ ծընունդը, ուր կազմավորվեցա որպես մարդ, որպես հայ ու, մանավանդ, որպես Հայաստանյայց Եկեղեցվո սպասավոր, ուրկե ստացա Աստուծո և մեր ժողովրդին ամբողջական հանձնառությամբ ծառայելու դիրքը և գիտակցությունը:

Երկրորդ. ես անհուն ուրախությամբ կողջունեմ այս Դպրեվանքի սան, այս Դպրեվանքի ուսուցիչ, տեսուչ, այս Դպրեվանքի հայր և այժմ Ամենայն

Հայոց Կաթողիկոս Նորին Սուրբ Օծութիւն Տ. Տ. Գարեգին Ա-ին: Եվ թույլ տվեք ասելու, որ դարձյալ վեհափառ Հայրապետի առաջին այցելությունն է այստեղ՝ Գպրեվանք, որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս: Երբ մեկը հետաքրքրված է վեհափառ Հայրապետի կյանքին ու ծառայությանը, վստահաբար անդրադարձած է այն անհերքելի իրողության, որ վեհափառի կյանքի մեջ առանցքային տեղ ունեցած է Գպրեվանքը, որպես ոգի և որպես առաքելություն: Իր արժանիքներուն, իր ժամանակի, իր ծառայության լավագույն ու առավելագույն բաժինը ան ճանկացրած է Գպրեվանքին՝ որպես ուսուցիչ ու որպես տեսուչ:

Վեհափառը հավատացած է ոչ միայն մարդու պատրաստության կենսական կարևորության, այլև իր ամբողջ կյանքը ընծայաբերած է մարդու պատրաստության հետևողական գործին: Ու մարդ պատրաստած է, ամբողջ սերունդ մը պատրաստած է և այսօր անոնք որպես գրող և մտավորական, քահանա թե սարկավագ, վարդապետ թե եպիսկոպոս ու նույնիսկ Կաթողիկոս, Հայաստանյայց Եկեղեցվո ու հայ ժողովրդի ծառայության մեջ կուտան, ինչ որ առին Գպրեվանքեն, ինչ որ առին վեհափառեն՝ որպես ոգի, որպես ծառայություն: Վեհափառը Ամենայն Հայոց Կաթողիկոս ըլլալե առաջ ամենայն հայոց ուսուցիչ էր: Ու կհավատամ, որ վեհափառը ինչ որ առավ այս Գպրեվանքեն, ավելիով պիտի տանի Սուրբ Էջմիածնի ճեմարանին, վեհափառը ինչ որ տվավ այս Գպրեվանքին իր անձեն, ավելիով պիտի տա Սուրբ Էջմիածնի ճեմարանին:

Սիրելի շրջանավարտներ, քիչ առաջ Գպրեվանքի մասին խոսելով այն բնորոշեցի որպես սրբավայր: Այն տեղը, ուր մարդիկ կան Աստուծո անունով՝ սուրբ է, այնտեղ, ուր մարդիկ կգործեն Աստուծո ծառայության համար, սրբազան իդեալներուն համար՝ սրբավայր է: Եվ Գպրեվանքը սրբավայր է, Գպրեվանքը աշխարհ մըն է, ուր մարդիկ կպատրաստվին իրենցմե վեհ ու վեր արժեքներուն՝ Աստուծո, ազգին ու Եկեղեցվո ծառայելու համար: Ես կուզեմ, որ դուք այս գիտակցությամբ մոտենաք Գպրեվանքին:

Քիչ առաջ այստեղ ճառած հիշեցի հետևյալը: 1961 թվականին ես նոր ընդունված էի Գպրեվանք, մեր բացման հանդիսության անմոռանալու երջանկահիշտակ Ջարեհ Կաթողիկոս, իր կողքին ունենալով Գարեգին վարդապետ տեսուչ Գպրեվանուց և այժմ Ամենայն Հայոց Կաթողիկոս, իր խոսքը մեզի ուղղելով ըսավ՝ գործածելով Ավետարանի բառերը. «Սիրելի սաներ, դուք ընտրյալներ եք բազում կոչեցյալներու մեջեն»:

Այսօր այս բառերը Գպրեվանքի սաներուն համար պետք է ըլլան ամենօրյա ապրում, իրենց ուսանողական կյանքին մեջ, պետք է իրենք գիտակցին, թե իրենք ընտրյալներ են, իրենք տարբեր ու տարբեր պիտի ըլլան իրենց կենցաղակերպով, իրենց աշխարհահայացքով, իրենց կյանքի ճանապարհով: Այս է Գպրեվանքը և այլապես չի կրնար ըլլալ: Այս Աթոռին բոլոր հանգուցյալ Հայրապետները հատուկ կարևորությամբ շեշտած են Գպրեվանքի առաքելությունը՝ Գպրեվանքը բնորոշելով որպես բաբախող սիրտը Կիլիկիո Կաթողիկոսության: Կիլիկիո Կաթողիկոսության առաքելությունը կցամքի, երբ այս բաբախող սիրտը ճոր արյուն չներարկե Կիլիկյան Աթոռին առաքելության: Մեր Աթոռին միաբանությունը իր ընդհանուր ժողովի ընթացքին հատուկ ուշադրությամբ անդրադարձավ Գպրեվանքի առաքելության կարևորությանը: Եվ բոլորս ըսինք հետևյալը, թե մենք պիտի շարունակենք բարձրագույն աստիճանի բծախնդրությամբ, և թույլ

ովեք ըսելու, բարձրագույն աստիճանի խստապահանջությամբ հետևիլ Դպրեվանքի կյանքին ու գործին:

Սիրելի ներկաներ, այսօր, երբ մենք նայինք մեր չորս դին, ամեն տեղ մարդու պակաս կա, կտեսնենք բազում ու բազմապիսի կարիքներ ու մտահոգություններ, որոնց դիմաց՝ մարդու սով: Դպրեվանքը այն հաստատությունն է, որ մարդ կպատրաստե, մշակ կպատրաստե, առաքյալ կպատրաստե մեր ժողովուրդին ու մեր Եկեղեցվո համար: Եվ կհավատամ, որ այսօր, երբ նոր էջ կբացվի հայ ժողովուրդի ու Հայ Եկեղեցվո կյանքի մեջ, Ամենայն Հայոց Կաթողիկոսության շրջագծեն ներս, Դպրեվանքը կարևոր բնագավառ մըն է ամբողջական ու հետևողական գործակցության:

Եթե կուզենք, որ Հայաստանյայց Եկեղեցին զորանա իր առաքելությամբ, պետք է զորացնենք Դպրեվանքը, եթե կուզենք, որ Հայաստանյայց Եկեղեցին պայծառանա, պետք է ավելիով հարստացնենք Դպրեվանքը, որպես որակ, որպես ոգի, առաքելություն ու մթնոլորտ, եթե կուզենք ամրապնդել Հայաստանյայց Եկեղեցվո միությունը, պետք է ամբողջական խոսակցություն հաստատենք Ամենայն Հայոց Կաթողիկոսության Դպրեվանքի և Էջմիածնի Մայր Աթոռի միջև: Կհավատամ, որ այս պետք է ըլլա մեր ճամփան, այս պետք է ըլլա մեր ուղղությունը Ամենայն Հայոց Կաթողիկոսեն մինչև Էջմիածին ու մինչև Երուսաղեմ:

Ապա Ամենայն Հայոց Հայրապետն իր Հայրական խոսքն ու օրհնությունը բաշխեց ներկաներին և Դպրեվանքի սաներին.

ԳԱՐԵԳԻՆ ՎԵՀԱՓԱՌԻ ԽՈՍՔԸ ԴՊՐԵՎԱՆՔՈՒՄ

Այսքան խոր հավատքով արտասանված խոսքի վրա, որևէ մտածում կամ նոր հեռանկարային գաղափար արտահայտելու հարկը այլևս չկա, որովհետև այս կարճ խոսքի մեջ ամեն ինչ ասվեց Դպրեվանքների կենսական կարևորության մասին: Այսօր ձեր դիմաց կանգնած, ես փառք և գոհություն եմ միայն ընծայում Աստուծո, որ հոգևորական կյանքիս 44 տարիներից 38-ը Դպրեվանքի մեջ ու Դպրեվանքի հետ է անցել: Եվ եթե երբեք որևէ արժանիք ունեմ, ես այդ պարտական եմ Դպրեվանքին: Նախ իբրև աշակերտ, իմ հանգուցյալ և ապրող ուսուցիչներին: Այնուհետև ոչ միայն իբրև աշակերտ, այլ նաև իբրև ուսուցիչ, որովհետև ուսուցանելով ուսանելը ամենահարուստ ձևն է զարգանալու:

Դպրեվանքը ինձ համար ուսուցման կենտրոն չեղավ միայն, այլ ուսուցման միջից ինքնազարգացման, ինքնաթարմացման, ինքնահարստացման մշտահոս աղբյուր եղավ: Այդ պատճառով եթե երբեք ուզեին գիս վրդողնդել անգամ Դպրեվանքի ուսուցչական կազմից, ես պատուհանից ետ ներս կմտնեի, որովհետև այնպիսի հարազատ տուն է, ինչպես ասում է Ռեթեոս Պերպերյանը.

Տաճար հրաշագործ, վսեմ ձուլարան,
Ուր կապարն ոսկի, ճյութն հոգի կդառնան:

Մեր միաբան բոլոր եղբայրների՝ Կիլիկյան Սուրբ Աթոռի ճվիրյալ անդամների, նաև Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռից այստեղ գտնվող միաբանության անդամների համար հոգեկան միխթարության և առ Աստված

փառաբանության առիթ է մոաձել Գպրեվանքի և Սուրբ Էջմիածնի Հոգեվոր Ճեմարանի մասին: Ես վերջին երկու ամիսներին մոտից շփվեցի Հոգեվոր Ճեմարանին: Այնտեղ կատարված աշխատանքը գնահատելով կկարծեմ, որ առաջիկայում ձեր գործակցությամբ առավել ուժ պետք է տալ, որպեսզի նախկին Գևորգյան Ճեմարանի իմացական, հոգեկան հոսքը, աղբերացումը առատանա մեր նոր հոգևորական սերունդի կազմավորման մեջ:

«Մարդ է, որ գործէ զերկիր»:

Մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, Աստված լինելով, մարդու պետքը զգաց, մարդու անհրաժեշտությունը զգաց մարդուն ծառայելու համար: Եվ այդ տասներկու առաքյալների առաջին խումբը եղավ աշխարհը քրիստոնեությամբ խմորող և կայսրությունների զորությանց դիմաց հավատքի և առաքելության գիտակցությամբ պայքարող անհաղթելի ուժը: Հոգու դիմաց ոչ մեկ ուժ կարող է արգելք հանդիսանալ, թումբ կապել և կամ խեղդումի առաջ նորդել հոգեկան կյանքը: 70 տարի մեր վանքերի լռած ձայնը այսօր քարերից կլսեմ ես, և այդ քարերը պետք է վերածվեն մարդու: Մարդիկ վերածվեցին քարի, բայց ժամանակն է, որ Աստծու զորությամբ և մեր հայ ժողովրդի զավակների գիտակցական առողջ վերաումուծությամբ այլևս դառնանք դեպի գործ, դառնանք դեպի առաքելություն:

Հունիսի 16-ին, Սուրբ Էջմիածնի Կաթողիկեի տոնին, ես Մայր տաճարի մեջ քարոզեցի և այդ առիթով իմ անդրանիկ Կոնդակը հրապարակեցի, որի մեջ մի խոսք եմ ասել և կրկնում եմ այստեղ, որ Սուրբ Էջմիածինը սրբավայր, անցյալի հուշարար, երկնքի և երկրի համբույրը չէ միայն, այլ Էջմիածինը առաքելություն է: Եթե երբեք մենք այս գիտակցությամբ մոտենանք Մայր Աթոռին, այն ժամանակ է, որ մեզ համար Սրբություն Սրբոց ճանաչված սկզբնավայր հավատքի աղբյուրը վերստին կառատանա իր աղբերացումի մեջ մեր ողջ ժողովրդի համար, հատկապես ի Հայաստան այս օրերին, երբ ծարավը խորն է և ջաղցը՝ սուր:

Եղբայրներ, ժողովականներ, ծնողներ, բարեկամներ, ուսուցիչներ, ես այսօր անհունորեն ուրախացա, երբ տեսա այստեղ նախկին աշակերտներ, որոնք այլևս մեզ կարող են արդար կերպով ասել, որ իրենք պատրաստ են շալակելու այն բեռը, զոր մենք շալակեցինք մեր նախորդներից: Ապրե՛ս, Շահան Հայր Սուրբ, զգացի խոսքիդ մեջ հոգեկան և իմացական ազնվության և ծառայության կամքի ուժը: Ապրե՛ք դուք, նորընծաներ, մինչև մարտ ամիսը ձեզ հետ այդ դասարանի մեջն էի, այժմ վեղարավորված կտեսնեմ ձեզ և փառք կտամ Աստծուն, որ այսպիսի ընծայումներն Իրեն և Իր միջոցով՝ ժողովրդին, մեր ժողովրդի մեջ պիտի ամրացնեն Ավետարանից բղխող քրիստոնեական հավատքը՝ հայրենական, ազգային մեր կամքը, մահվան մահ ու կյանքին կյանք ասելու վճռականությամբ: Դուք եք այդ խոսքը ասողները, ոչ թե ձեր շրթունքներով, այլ ձեր կյանքով ու գործով: Բոլոր գալիք սերունդների և բոլոր դպրեվանքների աշակերտների միակ ճամփան այս է, որ կտանի ինքնաարժևորման, առ Աստված ձեր գոհության շոշափելի արտահայտության և ի բարին մեր ժողովրդի, ի պայծառություն մեր Եկեղեցու:

Աստված շնորհքով մեծացնի և շնորհքը արծարծի մեր նոր սերունդի մեջ Ամեն:

Ճաշկերույթ Լիբանանի Հանրապետության վարչապետ Ռաֆիք Հարիրի կողմից
ի պատիվ Վեհափառ Հայրապետի

Վեհափառ Հայրապետը Լիբանանի Հանրապետության նախագահի հետ
պարգեւատրում է «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով

ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԻՆԵՐԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿԱՐԳԻ ՇՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՈՒՄ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԻՆ Ա-ԻՆ

Հաջորդ առավոտյան, հունիսի 30-ին, Լիբանանի նախագահական պալատում հանրապետության նախագահ Իլիաս Հրոսուին Մայրիների Բարձրագույն կարգի շքանշանով պարգևատրեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ին՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի հանգամանքով իր 18 տարիների ծառայության և Լիբանանին ի նպաստ կատարած աշխատանքների համար: Փոխադարձաբար, Գարեգին Ա Վեհափառը նախագահին պարգևատրեց Սուրբ Էջմիածնի «Սուրբ Գրիգոր Լուսավորչի» շքանշանով: Շքանշանների հանձնման հանդիսավոր արարողությունը տեղի ունեցավ Պառպտայի նախագահական պալատում:

Հանդիպմանը ներկա էին Կիլիկիո Աթոռի ընդհանուր Կաթողիկոս Ա-րամ Ա-ն, Ազգային Կենտրոնական վարչության անդամներ, Կ. Պոլսո Հայոց Պատրիարք Ամենապատիվ Գարեգին արքեպիսկոպոս Գազանճյանը, Լիբանանում Հայաստանի Հանրապետության հավատարմատար տիար Երվանդ Մելքոնյանը, միաբան հայրեր, Լիբանանի խորհրդարանի հայ երեսփոխաններ և նախարարներ:

Ողջունելով Վեհափառ Հայրապետին, նախագահ Իլիաս Հրոսուին խոսք ուղղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ ընդգծելով, որ նա մեկ զավակն է հայ ժողովրդի, որը ողբերգություններից և տագնապներից բարձրացած է ընդդիմության և ներհարաբերման մակարդակին, Լիբանանում գտնելով ազատություն, ժողովրդավարություն և բարիք, որոնք համապատասխանում են հայի ազնիվ նկարագրին. «Լիբանանը ձեր հոգևոր ընտանիքին ընծայեց հավատացյալների միջև ազատ հանդիպման առիթ, իսկ Դուք ապացուցեցիք Լիբանանի հանդեպ ձեր հավատարմությունը», ասաց նախագահը: Նա նաև շնորհավորեց Հայոց Հայրապետին, որ, ընդառաջելով ազգի հրավերին, գնացել է ծառայելու Հայաստան Հայրենիքին:

Հանրապետության նախագահը շնորհավորեց նաև Արամ Ա ընդհանուր Կաթողիկոսին և համոզում հայտնեց, որ Նորին Սրբությունը ևս անշեղորեն պիտի շարունակի Լիբանանի հանդեպ հավատքով ծառայությունը:

Ապա նախագահը հանձնեց շքանշանը՝ հայտարարելով, որ այն Լիբանանի Հանրապետության կողմից երախտագիտության արտահայտություն է:

Պատասխան խոսքում Գարեգին Ա Հայրապետը նշեց, որ խորապես զգացված է վերստին Լիբանան գտնվելով, մանավանդ սիրո զգացումների և Անթիլիասի Կաթողիկոսության նկատմամբ հոգածության: Նորին Սրբությունը նշեց, որ Լիբանան ժամանելով՝ բերում է Հայաստանի և Արցախի հայության սիրո զգացումները և Հայաստանի Հանրապետության նախագահի ողջույնները: Նա հիշեցրեց, որ 44 տարիներ ապրել է Լիբանանում, և այն մասն է կազմում իր էության, և ուր էլ որ գտնվի, կլինի վկան Լիբանանում համայնքների ազնիվ համակեցության և մարդասիրության հայրենիքը լինելու Լիբանանի հանգամանքի:

Ապա Նորին Սրբությունը, իբրև հայության զգացումների ու հարգանքի արտահայտություն, նախագահին հանձնեց Հայաստանյայց Եկեղեցու «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բարձրագույն շքանշանը:

Նույն օրը, երեկոյան ժամը 21.00-ին, Համազգային Հայ Կրթական և Մշակութային ընկերակցությունը, ի պատիվ երկու Հովվապետների, «Հա-

կոչ Տեր-Մելքոնյան» թատերաարարիում կազմակերպել էր գեղարվեստական երեկո: Գեղեցիկ հայտագրին իրենց մասնակցություն էին բերել «Գուսան» երգչախումբը, «Գորանի», «Գայանե» և «Քնար» պարախմբերը:

ՋԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՕԾՈՒՄ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԱՐԱՄ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Հաջորդ օրը, հուլիսի 1-ի երեկոյան, Անթիլիասի Մայրավանքի բակն ընդարձակ տաճարի էր վերածվել: Դեպի Սուրբ Աթոռ չէր դադարում հոսքը հավատավոր հայորդիների: Բոլորը փափագում էին ականատեսը լինել Կաթողիկոսական օծման և ձեռնադրության, որին ավելի մեծ շուք էր հաղորդում ներկայությունը Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Երուսաղեմի և Կ. Պոլսո Պատրիարքների:

Սրբազան արարողությանը ներկա գտնվեցին նաև Լիբանանի Հանրապետության նախագահ Իլիաս Հրբրաուին, վարչապետ Ռաֆիք Հարիրին, խորհրդարանի նախագահի ներկայացուցիչ Աբդել Լաֆիթ Զեյնը, հայ և օտարազգի նախարարներ, խորհրդարանի անդամներ և բարձրաստիճան այլ պաշտոնյաներ, Հայաստանի Հանրապետության հավատարմատարը, Իրանի դեսպանը, բանակային և դիվանագիտական ներկայացուցիչներ և բազմաթիվ հյուրեր:

Ուշագրավ էր նաև քույր Եկեղեցիների գահակալների և նրանց ներկայացուցիչների մասնակցությունը պատմական այդ արարողությանը, որոնց թվում էին Ղպտի Եկեղեցու Պատրիարք Շենուդա Գ-ն, Պոլսո Տիեզերական Պատրիարքի ներկայացուցիչ Դամասկինոս արքեպիսկոպոսը և ուրիշներ:

Սկսվում է խորհրդավոր արարողությունը: Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ն և Մեծի Տանն Կիլիկիո նորընտիր Կաթողիկոս Արամ Ա-ն, շրջապատված 14 գլխավորյալ եպիսկոպոսներով, քահանա և վարդապետ հայրերով, թափոր կազմած վեհարանից առաջնորդվում են Մայր տաճար:

Նորընտիր Կաթողիկոսի ձեռնադրության և օծման հոգեհույզ ու սրբազան արարողությունը կատարվեց Սուրբ Պատարագի ընթացքին՝ ձեռամբ Ամենայն Հայոց Հայրապետ Գարեգին Ա-ի և մասնակցությամբ Երուսաղեմի և Կ. Պոլսո Սրբազան Պատրիարքների, Ս. Էջմիածնի և Կիլիկյան ուխտի սրբազան հայրերի:

Հուզիչ և պատմական էր պահը: Առաջին անգամ լինելով, Ամենայն Հայոց Հայրապետն իր ձեռքով օծում էր Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին:

Արարողության ավարտին բարձրաստիճան հյուրերը, Լիբանանի նախագահի գլխավորությամբ, բեմ բարձրացան և շնորհավորեցին նորաօծ Կաթողիկոսին: Նրանց հաջորդեցին նաև քույր Եկեղեցիների շնորհավորանքները:

Հավարտ օծման, շնորհավորանքի խոսքով հանդես եկավ Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ ի մասնավորի ասելով. «Այսօր Հայաստանյայց Եկեղեցին այստեղ է և կներկայանա մեկ սրտով, մեկ հոգով, մեկ կամքով և մեկ տեսիլքով: Բոլորի անունով կատարագրեմ, որ այս օրը մեր պատմության երջանկագույն պահերից մեկն է»:

Նորին Սրբությունը շեշտեց հատկապես այն իրողությունը, որ մեր ևվիրապետական Աթոռների Գահակալները ներկա են սրբազան և պատմական այս արարողությանը. «Այսօր Հայոց Եկեղեցու միության ու ամբողջության կամարով պատվեց հայոց երկնակամարը: Կաղոթեմ, որ այն մնա ընդմիշտ ի սպաս Աստուծո և հայ ժողովրդի»:

Գարեգին Ա Վեհափառն իր խոսքը եզրափակեց՝ շեշտելով Հայ Եկեղեցու միասնական գործունեության միակ ուղու կարևորությունը.

ԳԱՐԵԳԻՆ ՎԵՀԱՓԱՌԻ ԽՈՍՔՆ ԱՐԱՄ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Հավատացյալ և հավատարիմ ժողովուրդ Աստուծո և զավակունք ազգիս հայոց,

Այս օրը պայծառագույն և գեղեցկագույն օրերից մեկն է Հայաստանյայց Առաքելական դարավոր Եկեղեցու շարունակվող պատմության: Այսօր ամբողջ Հայ Եկեղեցին այստեղ է մեկ հոգի, մեկ կամք և մեկ սիրտ: Ես ծնկի եմ գալիս ամենախոնարհ զգացումներով՝ աչքերս վեր հառելով և փառք տալով Աստծուն, որ խոնարհ ծառայիս ընծայեց այս գերերջանիկ ուրախության մասնակիցը լինելու պատիվը: Երջանիկ եմ, որ Էջմիածնում, ես Կաթողիկոսական օծում առացա և այսօր այստեղ կատարեցի Կաթողիկոսական օծում, սրանից երեք ամիսներ առաջ մեր Հայոց սրբասուն Եկեղեցու Սրբություն Սրբոց եղող Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում արժանանալուց հետո Գահակալության այն հանդիսության, որով, հետ ընտրության, կոչվեցի Ամենայն Հայոց Կաթողիկոսության ծանրագույն և ծայրագույն պարտավորության:

Փառք Քեզ, Աստված, որ այս տաճարում ընթացավ օծումս կաթողիկոսական և այսօր այդ նույն կոչումը իմ տկար ձեռքերով անցավ իմ սիրելի եղբոր՝ Արամ Կաթողիկոսին, ինձ հետ ունենալով մեր Սուրբ Երուսաղեմի և Կ. Պոլսո Պատրիարքները և մեր ևվիրապետական Աթոռներին պատկանող եպիսկոպոսական դասից անդամներ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության եպիսկոպոսներ և արքեպիսկոպոսներ, Երուսաղեմի և Կ. Պոլսո Պատրիարքություններից եկող անձնավորություններ:

Բարեկամներ, այսօր Հայաստանյայց Եկեղեցին միության և ամբողջականության ոսկե կամար է նետում իր պատմության երկնքի վրա: Եվ կհավատամ ու կաղոթեմ, որ այս ամբողջականությունը մնա տոկուն, առողջ և առաջընթաց Աստուծո ծառայության և մեր ժողովրդի ու Եկեղեցու ապագայության համար:

Ուրախության երկրորդ աղբյուրն այն է, որ ինձ վիճակվեց այն մեծ բախտավորությունը՝ լինելու Ամենայն Հայոց առաջին Կաթողիկոսը, որ ընտրվեց և Գահակալեց մեր Հայրենիքում, Հայաստան աշխարհում, վերանկախացյալ պետության օրոք և Մայր հողի վրա, Սուրբ Էջմիածնի մեջ:

Այսօր, սիրեցյալ եղբայր, գալիս եմ ուխտի այս վերանկախացյալ մեր Հայրենիքից և մեր Սփյուռքի հայության վերանորոգության կյանքի շրջանից, որը մեզ դնում է ծանր պարտավորության առջև՝ բարձր պահելու համար մեր ազգության այս հիմքը մեկ Եկեղեցվո կերպագծի մեջ:

Երջանկութեանս երրորդ աղբյուրն այն է, որ մեր սիրելյաւ Հիւրանոցս ճայրեցիների ճոդի վրա է կառուցված այս օծումը՝ ի ճերկայութեան վեհաշուք մեր ճախագահի՝ Նորին Վսեմութեան Իլիաս Հրրտաւի, Նորին Երջանկութեան ճախագահի ճերկայացուցչի, ճարգարժան վարչապետի և պետական, խորհրդարանական, դիվանագիտական ճերկայացուցիչների:

Հիւրանոցը վերածնութեան շրջանի մեջ է, և Նոյնը է, իրրև Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո, Ձեր կայքն ունենալով հիւրանոցիս այս ճոդի վրա, որ են ապրնդի, գործերի 44 սարիներ, Նոյնը էլ հիւրանոցիս ճայրենիքի ծաղկումին բերեր մեր ժողովրդի ամրողջական և անկախական աջակցութեանը:

Վերջապես իմ որսխութեան չորրորդ աղբյուրն այն է, որ մեզ ճետ են ճերկայացուցիչներ բոլոր քրիստոնեական Եկեղեցիներից՝ արևելքից, արևմուտքից՝ ուղղափառ Եկեղեցիներից և Կաթողիկե Եկեղեցուց և նաև Ազգային Բողոքական, Անգլիկան Եկեղեցիներից և մյուս եկեղեցական կազմակերպություններից, ողջունելու Ձեզ, որպեսզի Հայ Եկեղեցու միության առակել ևս ամրացնեն քրիստոնեական միության ոգու այս գեղեցիկ արտաճայտության մեջ:

Ծող Սասված օրճճի այս Կաթողիկոսական օծումը և այն վերածի մեր ժողովրդի մեջ ալիքավորումի մի աղբյուրի ոչ միայն Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության իրավասության սահմաններրի մեջ, այլ նրա միջից ամրողջ և մեկ Հայ Եկեղեցու ճամար: Այնես իմչպես ճորրորդ Հայրապետը իր ընտրությունից ճետո ասաց, և իմչպես Մենք էլ բազմիցս ճայտարարել ենք Մայր Աթոռի բեմից՝ Սուրբ Էջմիածնից, այնես Հայ Եկեղեցին որիշ ճանգապարհ չունի, միասնական գործունեության ճանգապարհից բացի: Այդ պատճառով է, որ ես այսօր զերբեջանցիների եմ զգում ինձ, որ այդ միության ամրացման և գործնական արտաճայտության ապաստվորներից մեկն եմ և Սասված արժանի է դարձում այդ պայծառ օրերը տոնական ես տեսնելու:

Սրճա թե ինչ ճաղթանրով եմ ես ասդրում, որ մեր Եկեղեցին՝ ճոյակ ճայության, լույսը ճայության, աղբյուրը մեր միության, մեզ սեղանում՝ ի փառս Սասուծո, ի պատիվ մեր ժողովրդի, ի ծաղկումն մեր Մայր Հայրենիքի և ի բարգավաճումն Հիւրանոցային Հայրենիքի ճավիտյանս ճավիտենից: Ամեն:

Այնուճետև շարունակվեց տոյր պատարագի արարողությունը, և «Հայր մեր»-ից տոտո ի սկզբանե քարոզը խոսեց ծորած Կաթողիկոսը:

Սրամ Ա Կաթողիկոսը ողջույնի խոսք ուղղեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից և նրա Գաճանապետի՝ Նորին Սրբություն Գարեգին Ա-ին, որ ներկա էր իր տոտոջից քայլերի տոտոջնորդը և այնուճետև պիտի գործեր իրրև ճոգևոր եղբայրներ՝ ի ծառայություն միացյալ ժողովրդի, մեկ Հայրենիքի և մեկ Եկեղեցու:

Խոսքի երկրորդ մասն ուղղվեց Հայաստանյաց Համբարձեցության կառավարությանը ու ճայ ժողովրդին, որին ամբակունեցիների միացած է Սիլիցիայի Սրամ Վեճապետը ողջույնի խոսք ուղղեց ճատ Արցախի ժողովրդին ու բաջարի ազատամարտիկներին և ճայտարարեց, որ Սիլիկիո Աթոռը պիտի գործի ի ճպատոն Հայկական պետականության ամրացման ու Արցախի արդար պայքարի ճզորացման:

Առաջին օծուհատիրամիքը Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ճշմարտության Աթոռների գահակալները

ԱՐԱՄ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՔԱՐՈԶԸ ՕՇՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

«ՏԷ՛Ր, ՅՈ՛ՅՑ ԻՆՁ ՃԱՆԱՊԱՐՀ...»

Սա խորացորճուրդ պաճուճ, այս սուրբ խորանիճ, իմ առաջին խոսքս կուղեմ Աստուծո Սաղմոսերգուին աղոթասաց բառերով.

«Տէ՛ր, ցո՛յց ինձ ճանապարհ յոր ես գնացից» (**Սաղմ. ԻՌ**):

Այսպէ՛ս աղոթեցի, երբ տակաւին պատանի, 1965-ին, Հայկական Ցեղասպանութեան Հիսնամեակին, իմ բայերս ուղղեցի այս Սուրբ Տաճարը՝ տեսնելու համար ապրիլափոխական ձեռնադրութիւն:

Այսպէ՛ս աղոթեցի, երբ 1968-ին, Հայաստանի Սկսխտութեան Հիսնամեակին, Աստուծո ու ժողովուրդիս ծառայելու կոչումով խանդավառ ծնկաչոր մոտեցա նոյն այս Տաճարի խորանին՝ տեսնելու համար կուսակրոն քահանայութեան օծում:

Դարձեալ այսպէ՛ս աղոթեցի, երբ 1980-ին, Աստուծո կամքով ու Հիրաճանի Հայութեան հրավէրով, բարձրացա սուրբ խորան՝ տեսնելու համար եպիսկոպոսական կարգ ու օծում:

Եվ սեմս այսօր, երբ դարձեալ Աստուծո կամքով ու Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսութեան հոգևոր խնամքին հանձնված ժողովուրդին բաղձանքով, չորրորդ անգամ ըլլալով ծունկի կու գամ այս սուրբ խորանին վրա՝ տեսնելու համար Հայց. Եկեղեցւո ապաստավորութեան բարձրագոյն պատիվը, նոյն աղոթքը սաղմոսերգուին կվերադարձնեմ ու Աստված՝ այս անգամ առավե՛լ հավատքով ու պատասխանատվութեան բարձրագոյն տագնաճանի գիտակցութեամբ, ըսելով՝

«Տէ՛ր, ցո՛յց ինձ ճանապարհ յոր եւ գնացից»:

* * *

Երեսուն տարիներու իմ հոգևոր ապրումներուն մեջ, Տէ՛ր, ո՛ւմ եղար ինձի ուղեցույց ու առաջնորդ: Իմ կյանքիս առջև բացված այլազան ու բազմազան ճամբաներու մեջեն ես ընտրեցի միայն բո՛ւ ճամբադ՝ սիրո ու ծառայության ճամբան: Ու բալեցի այս դժվար ճամբեն՝ քու «բաղցր լուծդ» իմ ոկար ուսերուս: Ունեցա թերացումներ, բայց Հայց. Եկեղեցւո ապաստավորության ճամբով հայ ժողովուրդին ծառայելը դարձուցի իմ գոյության իմաստը, կյանքիս գերազույն կոչումն ու բարձրագույն պատիվը:

Քրիստոնեական հավատքը կյանքի վերածելու ու կյանքս ծառայության արժևորելու ձգտումը ինձի համար դարձավ մեծագոյն ճիգ ու ճիշդ կանչ իրեալ:

Ազգն ու Եկեղեցին իրենց սերտաճելի միության մեջ, ինչպես գերագույն ճեմարանն իմ ծառայության մեջ: Իմ ժողովուրդիս բռնագրավված իրավունքներուն ձեռքերումը և ազատ ու անկախ Հայաստանի երազը սերտակոծիորեն շաղկեցան իմ հոգևոր կոչումիս ու ճակատագիր առաքելության մեջ:

Իմ երեսուն տարիներու եկեղեցական կյանքիս մեջ, Տե՛ր, ո՛ւմ իմ առջև բացիր ծառայության այլ ճանապարհ մը, որ գիս առաջնորդեր դեպի ուրիշ Եկեղեցիներ ու ժողովուրդներ: Միշեկեղեցական շարժումը իմ մոս-

ծողության, փորձառության ու աշխարհայացքիս մեջ ունեցավ կազմավորիչ դեր: Ան գիս մղեց Հայց. Եկեղեցին տեսնելու քրիստոնեական Եկեղեցիներու մեծ ընտանիքին մեջ: Ան իմ աղքեցուց եկեղեցական միության կենսական կարևորությունն ու Եկեղեցիներու միջև գործակցության անհրաժեշտությունը՝ միա՛ւնաբար դիմագրավելու համար մարդկային ընկերության ապառնացող վտանգները:

Իմ հոգևոր ապաստավորության այս վճռական ու անկյունադարձային հանգրվանին կզգամ, ո՞վ Տե՛ր, թե կյանքիս մնացյալ ճանապարհորդությունը որքա՞ն դժվար է: Իմ ժողովուրդս ի Հայաստան, ի Արցախ և ի սիյոնս աշխարհի կդիմագրավե սեռավոր դժվարություններ: Սա ճիիրսկան պահում, մեր կյանքի ներկա պայմաններու հրամայականին դիմաց, և ակնջալուր մեր պատմության ձայնին, արտիս բովանդակ զորությամբը կըսեմ.

Ամբողջական ու հանձնառու ծառայություն՝
ճո՛ւյն և մե՛կ եկեղեցվո,
ճո՛ւյն և մե՛կ ազգին,
ճո՛ւյն և մե՛կ հայրենիքին:

Կհավատամ, ո՞վ Տեր, թե ա՛յս է քու պատգամդ իմ՛ձի, ճրագած խոնարհ ծառայիդ, որ այսօր կվերապահորոգե իր ուխտը՝ ամբողջանվեր ու անսակարկ ծառայության: Առանձին մի՛ ձգեր զիս, Տե՛ր, իմ կյանքիս առջև բացվող ծառայության այս նոր ճանապարհին մեջ: Դուն եղիր, Տե՛ր, իմ կյանքիս գերագույն առաջնորդը ու միա՛կ ապավենը և «ցո՛ւց ինձ ճանապարհ յոր եւ գնացից»:

* * *

Այս նոր ճանապարհորդությանս սեմին, Անթիլիասի այս սրբավայրեն, անկեղծագույն սիրո ու երախտության իմ առաջին ողջույնս կուղեմ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՆԱԽՍԱՄԵԾՄԱՐ ՄԱՅՐ Ա֊ԹՈՌԻՆ և անոր արժանքնորհ Գահակալին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

Առաջին հերթին, և այս հանդիսավոր պահուն, արտի պարտք կզգամ հանուն Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության, անոր միաբանության, Ազգային Իշխանությանց ու ժողովուրդին Զեզի հայտնել, Վեհափառ Տեր, մեր խոր երախտագիտությունը՝ ավելի քան քառասուն տարիներու վրա տարածվող այն ամբողջանվեր ծառայության համար, զոր բարձրագույն առաքինանի նախանձախնդրությամբ ու հիվրվածությամբ կատարեցիր ի խնդիր Հայց. Եկեղեցվո պայծառության ու հայ ժողովուրդի վերելքին՝ Մեծի Տանն Կիլիկիո Աթոռին ճամփով: Եղաք հավատարիմ այս Աթոռին առաքելության, և անոր ծառայության գանձանակին մեջ դրիք Զեր առատձեռնությունը: Ու երբ հույն Եկեղեցվո ու ժողովուրդին ձայնը Զեզ կանչեց այս անգամ Ս. Էջմիածնեն, ծառայական կոչումին հանի գիտակցությամբ ու հավատարմությամբ գացիք Մայր Հայրենիք՝ Զեր բոլորանվեր ապառը բերելու վերանխաղցյալ Հայաստանաց հոգևոր ու ազգային կյանքի վերաշինության ու վերազարթոնքին:

Վեհափառ, իմ առաջին բայերս դո՛ւք առաջնորդելիք Հայց. Եկեղեցվո ծառայության դաշտեն ներս: Եվ անոնք հույն Եկեղեցին Աստուծո կամքով

մեզ ընտրեց ըլլալու ճոգևոր եղբայրներ ու մեզի տվավ պարտքն ու պատիվը իրեն աճձդիր ու բաջ ճովիվ՝ ճովվելու ու առաջնորդելու մեր ժողովուրդը: Ու մենք պիտի գործենք որպես եղբայրնե՛ր: Մեր ժողովուրդին պատմության ընթացքը ու պայմաններր այնպիսի՛ն են եղած, որ Հայց. Եկեղեցին ունեցած է և ունի Կաթողիկոսական երկու Աթոռներ: Հայց մենք միա՛ձայնաբար պիտի գործենք ու պե՛տք է գործենք ճո՛ւյն և մե՛կ Եկեղեցվո, ազգին ու ճայրենիքին մեկ ամբողջության շրջագծեն ներս և ճո՛ւյն և մեկ առաքելության ճամփուն վրա՛ ճետ ամե՛ն տեսակ վճռաբեր երկվութենեն ու չլսուիչ մրցակցութենեն:

Այսօր մեր ժողովուրդը կպահանջե, որ Կաթողիկոսական երկու Աթոռները իրարու ճետ գործակցին անվերապահորե՛ն ու ամբողջականորե՛ն մեր Եկեղեցվո ու ժողովուրդի կյանքի բոլոր բնագավառներեն ներս ու բոլոր մակարդակներու վրա՝ ի խնդիր Հայց. Եկեղեցվո առավե՛լ պայծառացման, աճոր միության առավե՛լ զորացման ու առաքելության առավե՛լ կենսագործման:

* * *

Իմ երկրորդ ողջույնս կուղղեմ մեր բոլորին ճա՛յրենի գոյության աղբյուր ու զորության կռվան մեր սիրելի ճայրենիքին՝ ՀԱՎԵՐԺՅԱԼՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ: Կողջունեմ մեր ճայրենի պաշտելի ժողովուրդը, որուն ճո՛ւյն արյունով, ճո՛ւյն պատմությամբ, ճո՛ւյն ներկայով ու ապագայով անբաժանելիորեն միացած ենք սիյուռքի չորս տարածքին ապրող ճայերս: Կողջունեմ ազատ ու անկախ Հայաստանի Հանրապետությունը իր բոլո՛ր կառույցներով ու բոլո՛ր պատասխանատուներով: Կողջունեմ Արցախի մեր արի ժողովուրդը և ազատության ու արդարության պայքարի դաշտ ճետված մեր քաջարի տղաքը: Ու ան պահուն կվերաճիշատակեմ, վերանորոգ շեշտով ու ճաստատությամբ, Մեծի Տաճն Պիլիկիո Կաթողիկոսության ամբողջական գործակցությունը ու մասնակցությունը Հայաստանի անկախության ամրացման, Հայաստանի պետության գործառման, ճայրենաբնակ մեր ժողովուրդի տնտեսական վերաճաստատման ու Արցախյան ազատագրական պայքարին ճզոր աջակցություններ ցուցաբերող բոլո՛ր ճաստատություններուն ու մարդոց: Հայաստան ու Արցախ պիտի մնան մնայուն ու առաջնահերթ ներկայություն այս Աթոռին առաքելության մեջ:

Իմ երրորդ ողջույնս կուղղեմ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՄԵՐ ՍԻՐԵԼԻ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ, մասնավո՛րաբար ճո՛ւյն պատմությամբ ու ճո՛ւյն ճակատագրով եղբայրացած Լիբանանին ու Սուրիո: Պատմական ամենքրնի իրողություն է, որ երբ Մեծի Տաճն Կիլիկիո Կաթողիկոսական այս Աթոռը իր ժողովուրդին ճետ ու ժողովուրդին ճետ աբսորվեցավ իր պատմական դարավոր կեդրոնեն, արժանացավ արար ժողովուրդին անվերապահ սիրույն ու ջերմ ճյուրընկալության: Համատիրության առաքելության ընդմեջ այս Աթոռը Արարատյան աշխարհին մեջ ճետեց իր խոր արմատները: Իր անվերապահ ու գործոն մասնակցությունը բերավ Արարատյան Հայրենիքի վերելքին: Ի՛րը դարձուց ան արար ժողովուրդին ապրումները, ճզոռմունքն ու պայքարը: Եղավ իր իրավունքներուն ճամար պայքարող Ղարաբաղցի ժողովուրդին կողքին: Եղավ զորավիզ Միջին Արևելքեն ներս ամբողջական, մնայուն ու արդար խաղաղության պահանջող արար ժողովուրդի արդար դատին: Ու

սա պահուն, որպես այս Հոգևոր Տան Առաջին Ծառան, կվերահաստատեմ մեր ամբողջական սերն ու հարգանքը մեր արաբ եղբայր ժողովուրդին, իսլամ թե քրիստոնյա, ինչպես նաև մեր ամուր կապվածությունը՝ արաբական արդար դատին:

* * *

Սիրելի՛ ժողովուրդ Հայոց,

Կգտնվիս քու պատմությանդ ամենեն ճակատագրական մեկ հանգրվանին: Վերանկախացյալ Հայաստանը պետք ունի մեր բոլորին անվերապահ աջակցության: Իր ինքնորոշման վերահաստատման պայքարի դաշտ նետված Արցախը պետք ունի մեր բոլորին ամուր զորակցության: Անհավոր փոթորիկներուն մեջ իր հայապահպանման ու ազգային պահանջատիրության պայքարը մղող Սիյոնքը պետք ունի հայրենիքի ոգեշնչող ուժին ու ջերմացնող կրակին: Մենք պետք ունինք իրարու՝ իրարմով ավելի՛ զորանալու համար: Հետևաբար, մեկդի թողունք ամեն տեսակ տարակարծություն ու հակադրություն: Գոյություն ունեցող հարցերը լուծենք փոխադարձ հարգանքով ու ներողամտության ոգիով: Մեր ժողովուրդին միասնականության ամրացումը Հայց. Եկեղեցվո, հայրենի մեր պետության, մեր կյանքին մեջ գործող բոլոր կազմակերպություններուն և յուրաքանչյուր հայուն համար պետք է դառնա առաջնահերթ մտահոգություն, ամենօրյա տագնապ ու մնայուն ճիգ:

Այս հոգևոր Տունը տունն է բոլորի'ն: Ան իր դռները լայնորեն բացած է բոլորի'ն առջև: Ան պիտի ծառայե բոլորի'ն ու պիտի գործե «մե'կ Եկեղեցի, մե'կ ժողովուրդ ու մե'կ հայրենիք» հրամայականով ու տեսիլքով:

Ես այսպե'ս կազմավորվեցա այս Աթոռեն ներս՝ Զարեհ Ա, Խորեն Ա և Գարեգին Բ Կաթողիկոսներու շունչով ու ոգիով: Նույն կազմավորումը ունեցան ու պիտի շարունակեն ունենալ այս Աթոռին հոգեմտավոր քուրայեն դուրս եկած Հայց. Եկեղեցվո ու հայ ժողովուրդի բոլո'ր սպասավորները:

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության դարավոր այս Աթոռը Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսության Մայր Աթոռին հետ ամբողջական գործակցությամբ պիտի շարունակե իր հոգևոր, ազգային, մշակութային ու կրթական առաքելությունը՝ վերանորոգ հավատքով ու կամքով:

* * *

Այս հանդիսավոր պահուն պարտք կզգամ իմ ջերմ շնորհակալությունները հայտնել բոլոր Եկեղեցիներու և միջ-եկեղեցական մարմիններու ու կազմակերպություններու պետերուն և ներկայացուցիչներուն, որոնք այսօր իրենց մասնակցությամբ վկայեցին քրիստոնեական Եկեղեցվո անխախտելի միությունը՝ իր մշակութային, ցեղական ու դավանական զանազանության մեջ իսկ: Այստեղ թույլ տվեք հատուկ կերպով հիշելու ներկայությունը Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին իր Ընդհանուր Քարտուղարին ճամփով: Ինձի համար պատիվ է Հայց. Եկեղեցվո սպասավորության առընթեր նաև բարձրագույն աստիճանի վրա ծառայել միջազգային վարկ վայելող եկեղեցական այս մեծ կազմակերպության:

Իմ խոր շնորհակալությունը ու գնահատանքը պետության ներկայացուցիչներուն, որոնք իրենց ներկայությամբ անգամ մը ևս արտահայտեցին իրենց հարգանքը հայ ժողովուրդին ու այս Աթոռին նկատմամբ:

Եղբայրական սիրո իմ հատուկ խոսքս կուղղեմ Երուսաղեմի Հայոց Պատրիարք Նորին Ամենապատվություն Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանին և Կոստանդնուպոլսո Հայոց Պատրիարք Նորին Ամենապատվություն Տ. Գարեգին արքեպս. Գազանճյանին, որոնք օծման այս արարողության իրենց մասնակցությամբ պերճախոս կերպով արտահայտեցին Հայց. Եկեղեցվո աճախախտելի միությունը:

Ջերմ սիրով կողջունեմ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության թեմական առաջնորդները, ուխտյալ միաբանությունը, քահանայից դասը, թեմական իշխանություններն ու համայն հավատացյալ ժողովուրդը ի մայր հայրենիք և ի սփյուռս աշխարհի:

* * *

Իմ խոսքիս ավարտին, իմ աղոթքս դարձյալ Քեզի՛ կուղղեմ, Տե՛ր,

«Տէ՛ր, ցո՛յց ինձ ճանապարհ յոր եւ գնացից»:

Բռնե ձեռքես ու առաջնորդե զիս սիրո ու միության, արդարության ու խաղաղության ճանապարհեն. Ամեն:

Սուրբ պատարագի վերջավորությանն ներկա հավատացյալների հոծ բազմությունը Վեհարանի շքամուտքի առջև աջահամբույրով շնորհավորեց նորաօծ Կաթողիկոսին:

ՈՒԽՏԻ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՊԱՏԱՐԱԳ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Հաջորդ օրը, հուլիսի 2-ին, Անթիլիասի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճարում սուրբ պատարագ մատուցեց Արցախի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Պարգև եպիսկոպոս Մարտիրոսյանը: Սրբազան արարողությանը ներկա էին Ամենայն Հայոց Հայրապետը և նորաօծ Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը, թեմական առաջնորդներ, միաբանության անդամներ և հավատավոր ժողովրդի հոծ բազմություն:

Հրնթացս սուրբ պատարագի Ամենայն Հայոց Հայրապետը քարոզ խոսեց և իր օրհնությունը բաշխեց կարոտյալ հայորդիներին:

Նորին Սրբություն իր խոսքում անդրադարձավ Հովվապետական ա֊ցելություններին Շիրակի, Արցախի և Ռուսաստանի թեմեր, ուր տեսել է հավատքի ծարավ Եկեղեցու գործունեության պարարտ հող, և կոչ արեց միասնական կերպով հոգալու այն բոլոր դժվարությունները, որ կան Մայր Հայրենիքում ու Եկեղեցում:

Վեհափառ Հայրապետը հորդորեց քրիստոնեության ընդունման 1700-ամյակը տոնել մեկ Եկեղեցու և մեկ ժողովրդի գաղափարականներով:

Հայոց Հայրապետը հանգամանալից ներկայացրեց Հայաստանի ներկա տնտեսական և ընկերային կացությունը և հրավեր կարդաց համայն հաւատացեալ ժողովրդեան՝ կարելիս բերելու Մայր Հայրենիքի վերաշինության գործին.

ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ՅԱՆՈՒՆ ՀՕՐ ԵՒ ՈՐԴԻՈՅ ԵՒ ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՅ: ԱՄԷՆ:

«Ես եմ հովիւն քաջ, հովիւ քաջ
զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց»:
(ՀՈՎՀ. Ժ 11)

Այս բառերը Հովհաննու Ավետարանից են քաղված, բառեր, որոնք առհասնված էին կարդացվելու երեկ, շաբաթ օրը, մեր բոլորի հավատո հոր՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի Նշխարաց գյուտի տոնի առիթով:

Երեկվա Կաթողիկոսական ձեռնադրության և օծման հանդիսության ոգելից մթնոլորտից հետո, այսօր, առաջին կիրակին, ես որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս գտնվում եմ նույն այն բեմի վրա, որտեղից բազում տարիներ և բազմաթիվ անգամներ Ավետարանը մեկնաբանելու առիթները ունեցա:

Այսօր ես ուզեցի, որ այս բառերը իմ առաջին քարոզի բնաբանը դառնան, որովհետև այդ բառերի մեջ ես խտացված եմ տեսնում Եկեղեցու ճշմարիտ ըմբռնման պատկերը: Աստվածորդին երբ մարմին առավ ու մարդ դարձավ, մեզ պես ապրեց՝ մեզ Իր նման դարձնելու համար, Ինքն Իրեն ընկալաբանելու ընթացքի մեջ, այլ ընտիր պատկերների հետ միասին և տիրական ձևով ընտրեց հովվի պատկերը, այն պատկերը, որ հոգածության, Տիրոջ ինքնաբտահայտության, խնամատարության գաղափարն է խտացնում և խորհրդանշում իր մեջ: Հովիվը ինչ աստիճանի վրա էլ գտնվի, քահանայական աստիճանից մինչև կաթողիկոսական աստիճանը, Աստծու սիրո պատվերը պիտի կատարի: Մեկ խոսքով՝ Եկեղեցու էությունը որպես Աստծու ներկայությունն է տիեզերքի մեջ, որպես Քրիստոսի մարմնի ներգործությունը աշխարհի մեջ: Եկեղեցին այնպիսի առաքելություն ունի, որ Ավետարանը և Եկեղեցու հայրերը բնորոշում են հովվություն անվամբ:

Սիրելի հավատացյալներ, այսօր մեր Եկեղեցին գլխավորապես իր հոգևորական դասով կոչված է ընդհանուր զորացմանը մեր ժողովրդի այսօրվա կացության հարափոփոխ կյանքի ընթացքի մեջ, որպեսզի կարողանա Աստուծո ներկայությունը դարձնել ապրում, կյանք և գործ և ոչ թե միայն որպես անցյալի հուշ և կամ որպես տեսական ճշմարտություն:

Եղբայրներ, մենք այսօր կոչված ենք հովվի պատկերը մեր մեջ այնպես վերարժեցնելու, որ ժողովուրդը երբ նայի մեզ, զՔրիստոս տեսնի: Հետևաբար, 20-րդ դարի այս վերջին տասնամյակին, երբ ամբողջ աշխարհը պատրաստվում է փակելու երկրորդ հազարամյակը և մոտ ժամանակից բացելու քրիստոնեական մեր պատմության երրորդ հազարամյակը, մենք հայելու հատուկ պատճառ ունենք այդ երկու հազարամյակը ուրիշների պես, ուրիշների չափ, բայց ուրիշներից ավելի իմաստով արժեքավորելու և վե-

բաճճության, հոգեկան վերաւորոգման, մի տեսակ պայծառության նոր Թաբոր լեռան վերածելու մեր արդի կյանքում այս ավցման շրջանին՝ երկրորդ հազարամյակից երրորդ հազարամյակ: Այդ մեր Եկեղեցու 1700-ամյակի նշումն է, որ տարիների վրա տարածվելիք մի գործունեություն պիտի լինի, որի առաջին և գերագույն աստիճանի իմաստը, Եկեղեցու՝ Քրիստոսի մարմնի հաղորդության մեր կյանքի մեջ ներգործության առողջ ընթացքին և առողջացուցիչ դերակատարության վերաւորոգումը պիտի լինի:

Սհա թե ինչու մենք, առաջին հերթին հոգևորականներս, որպես առաջին ապաւավորները Քրիստոսի, կոչված ենք հովվի նման անձնամոռաց լինելու, որպեսզի կարողանանք ուրիշին մեր հոգու, մեր սիրո մեջ բարձրացնել: Մեր սրտերը պետք է որ խոնարհության մեջ դնենք, որպեսզի տեղ պատրաստենք ուրիշների համար: Եթե երբեք մենք մեզնով տիրապետված լինենք, ուրիշը տեղ չի ունենա մեր հոգու մեջ, իսկ դա վատ է եկեղեցականի համար: Եկեղեցականը նա է, ով իր մեջ ողջունում է իր ամբողջ ժողովրդին և «զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց», ոչ թե իր միտքը, ոչ թե իր կարողությունը, ոչ թե իր ժամանակը, ոչ թե իր հանգամանքն է նվիրաբերում, այլ ինքը իր ամբողջ լինելության մեջ, ինչ է-ի և ինչ ունե-ի ամբողջական տարողությամբ: Առաջին հերթին մենք պետք ունենք տեր կանգնելու, պատվար դառնալու մարդկային այն փորձությանց, որոնք հաճախ մեզ դարձնում են անձնահաճ և ինքնաբավ. մենք պետք է, որ ամեն ինչից վեր նկատենք մեր հոգեկան կերպարանափոխությունը: Ներշնչալից հոգևորական, հոգով լցված մարդ լինելու կերպարը պետք է պայծառացնենք մեր մեջ, որպեսզի կարողանանք ապաւավորել մեր Եկեղեցուն: Հովվի պատկերը բոլորիս համար ա՛յս է այսօր:

Մենք այս տարի ունեցանք երկու կաթողիկոսական ընտրություններ՝ երեք ամիսներ առաջ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրություն և երեկ՝ այսինքն 28 հունիսին Անթիլիասում ընտրություն, ձեռնադրություն և օծում Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի: Եթե Աստուծո շնորհը մեկ անգամ ևս իջավ և մերձեցավ մեր հոգիներին, թող դա տարածվի մեր հոգիների մեջ՝ նախ հոգևորականներիս, և զգանք, որ այս տարի բախտավոր տարի եղավ, որովհետև եղբայրության, սիրո, միության, միասնականության հոգեբանության մեջ կատարվեցին այս բոլորը:

Հիշում եմ այն օրը, երբ տեղի ունեցավ Մեր Գահակալությունը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Այնտեղ էր ամբողջ Եկեղեցին Հայոց և նաև վկայությունը կար անձնակա՞ն ներկայությամբ քրիստոնեական մյուս Եկեղեցիների: Նույն պատկերը անհավասիկ վերադտնվեց այստեղ՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Մայրավանքում: Պետք է ըմբռնենք այս դեպքերը այնպես, որ դառնան լծակներ, մղիչ ուժեր մեր հոգիների մեջ վերահոգության շարժում ստեղծելու, որպեսզի արժևորվեն այս դրվագները ոչ թե միայն մեր անձերով, այլ մեր ողջ հոգևորականության վերանորոգության ուղղությամբ:

* * *

Երկրորդը, ժողովուրդ, դո՛ւք եք՝ հավատացյալներ, որ Աստուծո համար բոլորդ էլ արժեք ունեք և հավասար արժեք ունեք առանց խտրության: Կարևորն այն է, որ դուք ձեր հովվի հետ կարողանաք ներդաշնակվել:

Ի՞նչ գեղեցիկ է ասվում Ավետարանում. «Ճանաչեմ զիմս և ճանաչիմ յիմոցն» (Հովհ. Ժ 14): Ճանաչել բառը այստեղ ծանոթություն ունենալ չէ, իմանալ չէ, այլ ճանաչելը հաղորդվելն է, հարազատ զգալն է: Այս Եկեղեցու հետ ընդելուզված այնպիսի սերտությամբ, որ հովիվը վարձկան չէ ձեզ համար, այլ տեր, Աստծուց կոչված: Պետք է այսպես մոտենաք ձեր հոգևորականներին, որպեսզի դուք նրանց չնայեք վարձկանի պես, իբրև օտարականի, այլ նայեք իբրև ձեզ համար եղած, Աստծուց նշանակված և ձեզ համար «զանձն իւր դնող» անձինք:

Ժողովուրդ Աստուծո, մեր պատմությունը հարափոփոխ շարժման մեջ է: Տարիներ առաջ չէինք այն, ինչ որ ենք այսօր և վաղը: Տարիներ հետո պիտի չլինենք այն, ինչ որ ենք այսօր մեր կյանքի երևույթների պարուրակի մեջ: Բայց մենք մնանք միշտ նույնը իբրև հոգու ապաստավորներ, հոգեկան մեր Հայրենիքի՝ մեր Եկեղեցու իբրև մնայուն և անփոփոխելի և անբեկանելի քաղաքացիներ, որպես անդամներ այն Եկեղեցու, որ ազգը միավորող և ազգի գոյության աղբյուր հանդիսացող մեր հայրենիքն է: Հետևաբար, այս իմաստով, վերանորոգության ալիքը թող հոգևորականներիս միջով անցնի, հոգևորականներիս մեջ չմնա բանտված, փակված, այլ տարածվի, տարրանա մեր ժողովրդի զավակների հոգիների մեջ:

* * *

Վերջապես, իմ երրորդ խոսքն այս է. գալով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, ես ուզում եմ այսօր ձեզ բերել վկայությունը հավատքի վերարծարծման, վերաշխուժացման մեր Մայր Հայրենիքի հողի վրա: Շատ բաներ կլսեք, շատ բաներ կկարդաք Հայրենիքի մեջ մեր Եկեղեցու և մեր ժողովրդի մասին: Անհավասիկ երեք ամիսներ միակտուր ապրեցի այդ ժողովրդի հետ, հայրենի հողի վրա մեր վերանկախացած Հայրենի պետության հովանու ներքո: Ես այսօր ձեզ փոխանցում եմ այն, ինչ որ փորձառությունս, անմիջական տեսողությունս և, մանավանդ, ժողովրդի հետ հանդիպումներս ինձ թելադրեցին: Մեր ժողովուրդը դժվարին, շատ դժվարին պայմանների միջով է անցնում, որը առողջ դատողություն, զգաստ մտածողություն և անաչառ դատաստան կատարելու կարողություն ունեցող անձերի համար շատ հասկանալի է:

Երևակայեցեք դուք Հալեպը, Բեյրութը կամ Դամասկոսը սրանից տասնյակ տարիներ առաջ...: Ի՞նչ էր Անթիլիասը, ո՞ւր էր Մայր տաճարը: Բայց եղավ, փոխվեց մեր կյանքը միշտ դեպի լավը, միշտ դեպի լույսը: Ա՛յս է այսօր մեր Հայրենիքի կյանքի ընթացքը: Ա՛յս հավատքով աղոթեցեք, ա՛յս հավատքով մտածեցեք, ա՛յս հավատքով գործեցեք: Եռդարձն ու նահանջը հայության համար անհեռվի է:

Անհավասիկ անկախացավ մեր երկիրը: Ամեն անգամ, երբ անցնում եմ Երևանի փողոցներով կամ գնում եմ Հայաստանի շրջանները, քաղաքները և գյուղերը, ամեն կողմ, որ դիտում եմ, մարդկանց մեջ այս տեսակը կամ այն տեսակը զանազանելու կարիքի առջև չեմ գտնվում: Ի՞նչ կրոնի են դասվանում, ի՞նչ Եկեղեցու են պատկանում, ի՞նչ ազգի են պատկանում հարուցենք, բոլորն էլ նույն արյունը, նույն անունները: Եկեղեցականորեն հինգ թեմերի մեջ է տարածված Հայաստանը՝ Ա-

բարաւոյան թեմ, Շիրակա թեմ, Սյունյաց թեմ, Գուգարաց թեմ, Արցախի թեմ: Հայաստանից դուրս Հյուսիսային՝ Ռուսիո ավելի քան երկու միլիոն հաշվվող հայության թեմը կենտրոնական և նրա մեջ ներառնված բաժինները՝ Ուկրաինա, Հյուսիսային Կովկաս:

Երկու շաբաթից Սամարղանդի մեջ Հայոց եկեղեցի պիտի օծվի: Չորս նոր եկեղեցիներ բացվեցին միայն Ուկրաինո մեջ: Օդեսայում եթե առիթ ունենայիք հետաքրքրությունը դիտելու, կտեսնեիք, թե ինչպես այս տասքին հազարներով ժողովուրդ էր մասնակցում հայոց պատարագին ի հիմանե կանգնեցված նոր եկեղեցու մեջ Ս. Զատիկի տոնին:

Սիրելիներ, բաց աչքերով դիտեցեք մեր հայության կյանքը Հայաստանում: Հավատքը մեռած չէ, հավատքի արտահայտության ավանդական, գործնական եղանակներն են, որ վնասված են, խարխլված են տարիների ընթացքին այն յոթ տասնամյակների, որոնք ճնշիչ և մեր սեփական, հայկական դիմագծի վրա այլասերիչ ազդեցություն ունեցան: Մեր տնտեսական և ընդհանուր ընկերային կյանքը փոփոխության այնպիսի ալեկոծության միջով է անցնում, որ պետք է բոլորս լայնախոհ ձևով դիտենք և ժամանակ տանք այդ ժողովրդին ևս՛ր ցույց տալով նրա հանդեպ, որպեսզի նրանք զգան, թե իրենք առանձին չեն: Հազար ու մեկ տեսակ թերությունների մասին կլսեք, և ես ոչ մեկի մասին արտահայտվելու կարիքը և միջոցը չունեմ, բայց մեկ բան գիտեմ՝ ա՛յս է մեր ժողովուրդը, ա՛յս է մեր Հայրենիքը: Եթե պիտի փոխենք՝ մե՛նք պիտի փոխենք, եթե պիտի շենանա մեր Հայրենիքը՝ պիտի շենանա մեր ձեռքերով:

Այսօր մեր ժողովրդի կողմից կերտված պետականություն ունենք, որ շատ դժվարին օրերից է անցնում: Լենինականի վերքը տակավին բուժված չէ: Այցելեցի և աչքերովս տեսա. մեկ ճեղքված պատերով սենյակի մեջ յոթ հոգի են ապրում...: Դյուրին չէ այսպիսի մեծ ցավերը դարմանել սուղ միջոցներով, դյուրին չէ Արցախի պայքարը պատվով տանել, բանակ պահել: Սակայն, դյուրին է ամեն ինչ մակերեսայնաբար տեսնել, բայց երբ երթանք և ժողովրդի հետ լինենք, ժողովրդի մեջ լինենք և զգանք իրենց ցավը, այն ժամանակ է, որ կհասկանանք, որ եթե նույնիսկ մեր հայեցողությամբ կան այս տեսակ կամ այն տեսակ թերություններ, դրանք եթե երբեք շյուղ են, գետնի չվերածենք և այնպիսի վերաբերմունք ցույց չտանք, որ թարգմանվում է որպես անտարբերություն կամ անհամակրություն: Դա մեզ համա՞ր մեր Հայրենիքի և ժողովրդի հանդեպ կեցվածք չէ վայել հային, վայել հայ քրիստոնյային, վայել Հայ Եկեղեցուն:

Սիրելիներ, ես մեր ժողովրդի մեջ այնպիսի վերանորոգման կամք տեսա, որ անուցման պետք ունի: Սիրելի հոգևորական եղբայրներս, երբ մենք այդ ժողովրդի դիմաց ենք կանգնում, այլ տեսակի բոլոր նկատումները ընտեմանում են: Առաջնահերթությունը ժողովրդի վերաքրիստոնեացումն է: Կարևորը հոգիների մեջ խլրտումն է հավատքի և արծարծումն է քրիստոնեական ազգային գիտակցության: Ա՛յս է կարևորը և դա մեր ժողովրդի հոգևորական ծառայությունն է այսօր, որպեսզի այդ ժողովուրդը մնա այն, ինչ որ Գրիգոր Լուսավորչի կնիքով եղավ Աստվածային կնիքի իբրև հայկական թարգմանություն:

Անհավասիկ, թե ինչ մտածումներով եմ ես այսօր ողջունում մեր ամբողջ ժողովրդին Աթթիլիասի Մայրավանքի այս սրբազան բեմից և մաղթում եմ ի խորոց սրտի, որ իբրև մեկ Եկեղեցի, մեկ ժառանգության տեր և մեկ ապագայի կոչված ժողովուրդ կարողանանք առաջնահերթությունները վեր

դասել և միասնական ջանքերով մեր Եկեղեցու վերածաղկման համար աշխատել վասն միասնության Առաքելական Հայոց Եկեղեցուս Հայրենիքին և վասն շինության ազգիս և վերականգնման Հայրենիքիս մեր, հավիտյանս հավիտենից: Ամեն:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՒԹՅԱՆ

Նույն օրը, երեկոյան ժամը 20.00-ին, Բեյրութի «Պրիստոլ» հյուրանոցի սրահում, ի պատիվ նորաօծ Կաթողիկոսի, հանդիսավոր ճաշկերույթ տրվեց:

Երեկոյին ներկա էին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ն, Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Հայրապետը, քույր Եկեղեցիների պետեր, հայ և օտար բարձրաստիճան պաշտոնյաներ և հյուրեր: Ներկա օտար Եկեղեցիների պետերն ու նրանց ներկայացուցիչները շնորհավորանքի ջերմ խոսքեր ասացին նորաօծ Կաթողիկոսին:

Շնորհավորանքի խոսք ասաց նաև Ամենայն Հայոց Հայրապետը:

Պաշտոնական ընդունելության ավարտին շնորհակալական և երախտագիտության խոսք ասաց Մեծի Տանն Կիլիկիո Հայրապետը.

ԱՐԱՄ Ա ՎԵՀԱՓԱՌԻ ԽՈՍՔԸ ՕԾՄԱՆ ԱՌԹԻՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՃԱՇԿԵՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ «ՊՐԻՍՏՈԼ» ՀՅՈՒՐԱՆՈՑՈՒՄ

Այսքան խոսքերից հետո տակավին երկու Կաթողիկոսների խոսքը լսել, դյուրին չէ: Կգգամ ձեր վիճակը, ես պիտի լինեմ շատ կարճ իմ արտահայտությանցս մեջ: Երեկ, եթե զգացիք, իմ խոսքի մեջ շնորհակալության բաժին չկար: Այդ բաժինը, սակայն, կար գրված, բայց խնայելու համար ձեզ և ինձ, այդ բաժինը չկարդացի: Այսօր պարտք կզգամ իմ շնորհակալություններս հայտնել առաջին հերթին մեր բոլոր հարգելի պատգամավորներին, որոնք եկան այստեղ իրենց սերը, հավատարմություն ու վըստահությունը արտահայտելու Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության կըկատմամբ:

Իմ հատուկ շնորհակալությունս Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության ուխտյալ միաբանությանը, որի խոսքը, ինչպես ասաց սրբազանը, իր գործն է, որի մեծությունը իր ծառայությունն է մեր ազնիվ ժողովրդին:

Իմ հատուկ շնորհակալությունս մեր թեմակալ առաջնորդներին և ազգային իշխանությանց, որոնք սիրա-սրտի, ձեռք-ձեռքի այս Աթոռի ծառայությունը կարժևորեն մեր հավաքական կյանքի մեջ:

Իմ հատուկ շնորհակալությունս մեր երկու սիրելի Պատրիարք Սրբազաններուն, որոնք, հակառակ իրենց բազմազբաղ վիճակին, սիրով ընդառաջեցին մեր հրավերին, եկան այստեղ՝ իրենց ներկայությամբ պերճախոս վկայությունը տալու Հայաստանյայց Եկեղեցու անքակտելի միության:

Իմ հատուկ շնորհակալությունս Հայաստանի պետության, որ շոշափելի ներկայություն դարձավ իր ներկայացուցչի ճամփով, իր սերն ու հարգանքը արտահայտեց մեր Աթոռի նկատմամբ թե՛ Մեր ընտրութենեն անմիջապես հետո և թե՛ երեկ օծման արարողության ընթացքին:

Մեր հատուկ շնորհակալությունը նաև այն բոլոր պետություններուն, որոնք իրենց ներկայացուցիչներու ճամփով իրենց հարգանքը արտահայտեցին մեր ժողովրդի նկատմամբ ընդհանրապես և Մեծի Տաճն Կիլիկիո Կաթողիկոսության նկատմամբ՝ մասնավորաբար:

Եվ կուզեմ իմ ջերմ շնորհակալությունս հայտնել այստեղ պաշտոնապես Լիբանանի Հանրապետության նախագահին՝ Նորին Վսեմություն Իլիաս Հրրաուին, որ անձամբ ներկա եղավ Մեր արարողության, որ ինքնին դարձավ արտահայտությունը այն հատուկ սիրույն ու հարգանքին, որ ունի Նորին Վսեմությունը մեր Աթոռին նկատմամբ:

Դարձյալ իմ շնորհակալություններս մեր երկրի վարչապետին, ինչպես նաև Խորհրդարանի նախագահին, որ դարձյալ մասնակից դարձան երեկ մեր ուրախությանը:

Վերջապես՝ մեր ժողովրդի բոլոր զավակներուն, որոնք կապված են այս Աթոռին, որոնք հավատարմությունը ունեն այս Աթոռի նկատմամբ և կըսպասեն ավելիով ու ավելիով, որ այս Աթոռը վերակազմակերպե, վերակենդանացնե իր ծառայությունը մեր ժողովրդի կյանքի մեջ՝ ի սիրուս աշխարհի:

Սիրելի պատգամավորներ, վերջին օրերու ընթացքին ականատես եղած այնպիսի իրադարձություններու, երևույթներու և դեպքերու, որոնք կոչված են վճռական հանգրվան մը բանալ մեր ժողովրդի պատմության մեջ ի հայաստան և սփյուռս աշխարհի: Լսեցիք գովեստի խոսքեր, լսեցիք սիրո ու միության հրամայականի մասին: Այս բոլորը ի՞նչ կարժեն, եթե չթարմանվին մեր կյանքի մեջ: Այս բոլորը ի՞նչ կարժեն, երբ մենք, բաղձանքի սահմաններեն անդին տանելով, մեր անձնական և հավաքական կյանքի մեջ կյանքի չվերածենք: Իրականը գործն է, ինչպես ժողովուրդը կըսե. «Խոսքը կթռչի, գործը կմնա»: Կառչինք գործին, հավատանք գործին, որ մեր խոսքը, մեր կեցվածքը գործով արտահայտվի:

Այո՛, Կաթողիկոսական այս ընտրությունը ոչ միայն Մեծի Տաճն Կիլիկիո Կաթողիկոսության պատմության մեջ, այլ ընդհանրապես մեր ժողովրդի կյանքի մեջ դարձակետային նշանակություն ունեցող դեպք մըն է, ուր հավատք է պետք: Ինչ որ տեսաք, ինչ որ լսեցիք, պիտի վկայեք անոնց մասին: Ու երբ երթաք ձեր երկիրները, պետք է վկայեք կենդանիորեն, թե Մեծի Տաճն Կիլիկիո Կաթողիկոսությունը ինքնագործ, ինքնակենտրոն, ինքնանպատակ հաստատություն մը չէ ու չի կրնար ըլլալ: Մեծի Տաճն Կիլիկիո Կաթողիկոսությունը կա հայ ժողովրդի ու Հայ Եկեղեցու համար: Մեծի Տաճն Կիլիկիո Կաթողիկոսությունը Էջմիածնի հետ գործակցաբար ձեռք-ձեռքի ու սիրտ-սրտի կա ու կգործե նույն առաքելության ճամփուն վրա, նույն և մեկ Եկեղեցու համայնական կյանքին մեջ: Պիտի երթաք ու վկայեք, որ Կիլիկիո Կաթողիկոսությունը իր առաքելությունը տարածքային իմաստով միայն չընմբռներ, այլ այն կընմբռնե որպես ծառայություն նախանձախնդրության, բծախնդրության բարձրագույն աստիճանի հասկացողությամբ: Մեծի Տաճն Կիլիկիո Կաթողիկոսության գոյության իմաստը ծառայություն է միայն Հայ Եկեղեցուն ու հայ ժողովրդին:

Ընտրութենեն անմիջապես հետո, երեկ, օծումն ընթացքին, ըսի այս, ինչ որ դարձյալ այստեղ կըսեմ սրտիս բովանդակ անկեղծությամբ և գորությամբ. ամբողջական ու անվերապահ գործակցություն Էջմիածնի հետ մեր կյանքի բոլոր բնագավառներեն ներս, բոլոր մակարդակներու վրա: Հզորացում ազատ ու անկախ Հայաստանի պետականության, ամբողջական մասնակցություն Արցախի ազատագրական պայքարին: Այս բոլորը մեզ հա-

մար միայն գեղեցիկ մտածումներ չեն և չեն կարող լլլալ: Մեր Աթոռի համար անոնք պիտի մնան կենսական առաջնահերթություններ, առանցքային նշանակություն ունեցող: Մենք այսպես կըմբռնենք մեր առաքելությունը և պիտի շարունակենք այսպես կենսագործել զայն մեր ժողովուրդի հավաքական կյանքի մեջ: Ա՛յս է մեր ուխտը, ա՛յս է մեր հավատամքը: Գացեք-վկայեցեք այս մասին ուր որ ալ ըլլաք:

Նորաօծ Կիլիկիո Կաթողիկոսի ոգեշունչ խոսքից հետո հրավիրյալներին իր Հայրական օրհնությունը բաշխեց Ամենայն Հայոց Գարեգին Ա Վեհափառը:

ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ «ՊՐԻՍՏՈԼՈՒՄ»

Սիրելի Վեհափառ եղբայր, սիրելի հոգևոր եղբայրներ ի Քրիստոս, թանկագին հայրենակիցներ և հավատարիմ ժողովուրդ Աստուծո, որ այժմ հավաքված եք այս վերջին շաբաթվա ուրախությանց մի տեսակ պսակումը ունենալու սիրո սեղանի շուրջ:

Ես Հիրանան ժամանելուց այս կողմ հինգ անգամներ հրապարակային խոսքով իմ զգացումները, մտածումները, հեռանկարները բացեցի ձեր առջև: Այստեղ նոր բան ասելու կարիքը չեմ զգում, որովհետև դժվար է գերազույն բան լսելուց հետո նոր բան ավելացնել: Այդ գերազույնը այն սքանչելի երևույթն է, որ Աստված տվել է մեզ. մենք երբեմն այդ տվածի հանդեպ այնքան էլ հավատարիմ չենք գտնվում: Մարդ ենք և մարդկային է սխալվելը, մարդկային է հեռանալը: Բայց Աստուծո տվածը նույն և մեկ արյունն է, Աստուծո տվածը նույն և մեկ հավատքն է, Աստուծո տվածը նույն և մեկ Հայրենիքն է, Աստուծո տվածը նույն և մեկ լինելությունն է, հայոց դատի արբազնագույն հետապնդման կամքը: Այդ գերագույն հրամայականների ներքո մեր սպրթաքումները թող Աստված ների:

Այսօր խոնարհաբար իրար հետ կարող ենք ծունկի գալ, ինչպես ծունկի եկանք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի խորանի առջև մեր բոլոր եղբայրակիցների և քրիստոնյա բոլոր Եկեղեցիների ներկայացուցիչների հետ և մի անգամ ևս ասացինք Աստուծո, թե, Տեր, մեղա Քեզ մեր սպրթաքումների համար և Փառք Քեզ՝ Քո տված միության վերապրումի, խորացման, ամրացման և ծաղկման համար: Այս նույն մտածումը այսօր Մենք ունեցանք Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Մայրավանքում՝ իմ հոգևոր տուն Անթիլիասում: Ես պիտի ամբողջ սրտով մեջբերեմ բանաստեղծի մեկ տողը. «Եղբայր եմք մեք, որ մրրկավ էինք զատված»: Մրրիկը դրսից է գալիս, մրրիկը կարող է մեզ տանել, բայց մրրիկի դիմաց մենք պետք է կանգնենք մեր ներքին դիմացկունությամբ, ուժ զգանք, որ մրրիկի ուժը կոտրենք: Մրրիկներ եկան արևելքից և արևմուտքից, հարավից և հյուսիսից, ի չորս ծագաց երկրիս: Եղան պահեր, որ մրրիկը ազդեց մեզ, եղան պահեր, որ տոկացինք ու հաղթեցինք մրրիկին. և արդեն պիտի կանգնենք այս աշխարհի մրրիկների դեմ:

Եթե երբեք որևէ բան եմ սովորել ողջ աշխարհի պատմությունից ու իմ հայ ազգի ու Եկեղեցու պատմությունից, այդ այն դասն է, որ մենք այլևս չըննկնենք ուրիշների խաղին: Ուրիշներն իրենց խաղը մեր անունով ու մեր սեղանի վրա չխաղան: Այլևս մենք իբրև ինքնագիտակից ազգ, վերանկախացյալ ազգ, իբրև մեկ Եկեղեցի կարողանանք մեր խաղը խաղալ ուրիշ-

ների դիմաց: Եվ այս է, որ ուզում եմ այսօր ճվիրականագույն բառով ասել, որ դրսի վտանգներից ես չեմ վախենում, բայց վա՜յ այն օրվան, եթե դրժվարությունները ներսից գան: Այդ ժամանակ է, որ մեր վճասը անդարմանելի կդառնա: Դրսից եկած հարվածը ծառի ճյուղը կարող է կտրել, բևկանել, ծառը նոր ճյուղ կարձակի, բայց եթե որդը մտնի ներսը՝ ծառը կթառամի, կչորանա, պտուղը կորդնուտի և անպետք դարձած՝ կրակի ճարակ կլինի:

Այսօր գերագույն գիտակցության պահն է, այսօր ուրիշ է մեր երկիրը, ուրիշ է մեր Հայրենիքը, ուրիշ է մեր պատմությունը: Անհավասիկ մեր Եկեղեցին միացյալ ձևով է արտահայտվում: Պահե՛նք, թույլ չտանք, որ մասնակի երևույթներ այս գեղեցկությունն ավերեն: Մեղք է մեզ համար, մեղք են մեր զավակները. մենք մեր հայրերի սխալները երբեմն տեսնում ենք, բայց սխալներ չկտակենք մեր գալիք սերունդներին: Անհավասիկ այս հոգով 1995 թվականն ինչ գեղեցիկ երևույթ պարգեց մեր հայության եկեղեցական կյանքի այս միության ամրացման մեջ: Տարածենք, ամրացնենք այդ միությունը և կարողանանք ժամանակավորից գերծ ժամանակի հետ քայլել ու հավիտենականի հետ ապրել հավիտենորեն:

Բարեկամներ, խոսվեց ձեզ այնքան Եկեղեցիների կողմից: Այդ բոլոր Եկեղեցիները ես մոտիկից ճանաչում եմ: Մի օր պատմությունը պիտի գրի, թե ինչպես եղավ, որ մեր Եկեղեցին այսպես սերտ հարաբերության մեջ մտավ օտար Եկեղեցիների հետ: Արդ՝ բոլորը լսեցին մեզ, մենք մեր այսօրվա և Սուրբ Էջմիածնի մեջ երեք ամիս առաջ տեղի ունեցած ընտրության ընթացքում ներքին հպարտություն ապրեցինք մեր սիրելի բույր Եկեղեցիների բերած մասնակցությամբ: Բոլորն էլ միասնական վերաբերմունք ցույց տվեցին և հարգանք մեր Եկեղեցու նկատմամբ՝ նրա ամբողջությունը միացյալ տեսնելով: Այսպես է աշխարհը: Ես շատ հարաբերություններ եմ ունեցել օտար ազգերի և օտար Եկեղեցիների հետ: Մենք այլևս կղզիացած չենք կարող ապրել, ուզենք անգամ՝ չենք կարող: Եվ, հետևաբար, այս հանգույցի մեջ այս դիմագիծը պայծառ պահենք իբրև ազգ, իբրև Եկեղեցի և իբրև պետություն Հայոց:

Բարեկամներ, իմ խոսքը պիտի չերկարեմ, բայց ուզում եմ այստեղ այսքան գեղեցիկ խոսքերից հետո կոչ ուղղել ձեզ, որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս.

Գալիս եմ Մայր Հողից, կյանքս մինչև մահ այլևս այդ հողին պիտի ճվիրեմ, Մայր Աթոռի համար. Աստված ինչքան կյանք է տվել, պիտի տամ Իրեն միայն իմ Եկեղեցու և Հայրենիքի ճամփով: Կոչ եմ ուղղում ձեզ. վերածնող, վերակազմակերպվող, ինքն իրեն վերակառուցող ազգի գործը դժվար է: Մեզնից ավելի լավ գիտեք դժվարությունները, բայց պետք է ջանանք այնպիսի իրատեսական, ամբողջական, բոլոր կողմերի համար ընդունելի մոտեցում ունենալ, որ հաղթահարվեն այս մասնավորությունները՝ ընդհանրության մեջ դրանք ներդաշնակելով: Այս է հաջողության միակ գաղտնիքը, որ ինձ թելադրում է իմ խիղճը 44 տարիների հոգևոր ծառայությունից հետո, որ մեր Աթթիլիասի ճվիրական Աթոռից ստացա և եղա Մայր Աթոռի մեջ, ուր կյանքս ամբողջ ընծայում եմ Քրիստոսի Իջման սեղանին իբրև 131-րդ օղակը մեր Հայրապետների ոսկե շղթայի:

Այստեղ, սակայն, բեմից իջնելուց առաջ, ես ուզում եմ հիշել մի անձի, որ մեզ հետ է հիմա և ինձ հետ եղել է Դպրեվանքի օրերից այս կողմ, որ ինձ հետ եղավ միասին: Կարծես լինեինք սրտի երկու մասնիկներ. իմ սի-

րեցյալ եղբորը Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության անցնող երեք ամիսների տեղապահին՝ հանձին Արտավազդ արքեպիսկոպոս Թրթռյանի: Հուռ ու մնջիկ, անձայն ու մեղմիկ Արտավազդ արքազանը մեր Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության ամենաընտիր հոգևորականներից մեկն է, որ կարծեք նախ հոգևորական է և հետո՝ մարդ, այն աստիճան, որ ինքը հոգու մարդ է և գիտե այս Աթոռին ճվիրվել Հայաստանյայց Եկեղեցու ամբողջության մեջ: Այդ պատճառով ես այսօր արտի պարտք եմ զգում իմ եղբայրական սիրո ամենաքաղցր արտահայտությունը ուղեկցել իր անձի հանդեպ:

Բարեկամներ, Մեծի Տանն Կիլիկիո մեր ընդունիր Կաթողիկոսին ես ճանաչում եմ, երբ ինքը գրասեղանի առջև նստած էր, իսկ ես էլ՝ ուսուցչի ամբիոնի առջև: Գիտեմ իր շնորհները, գիտեմ իր մտածման հատակությունը և այսօր անհունորեն ուրախ եմ, որ իր երիտասարդ տարիքում առանձնեց այս ծանր պարտավորությունը, որը ես իմ ուսերին կրեցի 18 տարիներ շարունակ Անթիլիասի Աթոռի վրա: Իմ տարիները եղան Հիբանանյան տագնապի ծանր տարիները և ի խորոց արտի մաղթում եմ, որ այդ ծանրությունը բոլորովին, իսպառ վերանա իր ուսերից, և ինքը կարողանա ամբողջությամբ ճվիրվել այս Աթոռի ծառայությանը՝ ի փառս Աստուծո և ի պատիվ մեր ժողովրդին ու ազգին, ի պայծառություն Մեծի Տանն Կիլիկիո և ի շինություն և ի փառավորումն Հայաստանյայց Առաքելական Մայր Եկեղեցու:

Սիրելինե՛ր, այս պահին ուզում եմ Մայր Հայրենիքից բերված, տուֆ քարի վրա գեղարվեստորեն փորագրված այս խաչքարը ճվիրել Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությանը: Եվ երբ որ բարձրանա մեր Մայրավանքի մեջ, Անթիլիասում, հիշեք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, մեր Հայրենիքը, որպեսզի մնանք միշտ միացյալ և միացյալ քայլերով առաջ երթանք դեպի Հայոց պայծառ ապագան:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՒԹՅԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ՊԱԼԱՏՈՒՄ ԵՎ ԱՅԼ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Երկուշաբթի օրը, հուլիսի 3-ին, Լիբանանի Հանրապետության նախագահ Իլիաս Հրբաուին, ի պատիվ Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցելության և Մեծի Տանն Կիլիկիո նորաօծ Արամ Ա. Կաթողիկոսի, նախագահական պալատում ճաշկերույթ տվեց:

Պաշտոնական ընդունելությանը ներկա էին ինչպես քրիստոնյա, նույնպես և Իսլամ կրոնապետեր, հայ և օտար նախարարներ ու դեսպանություններ, ինչպես նաև եկեղեցական բարձրաստիճան հյուրեր, որոնց շարքում Պատրիարքներ՝ Ըղնուդա Գ (Ղպտի Եկեղեցի), Նասրալահ Սֆեյր (Մարոնիտ կաթոլիկների պատրիարքություն):

Ճաշկերույթի ընթացքում Լիբանանի նախագահը ողջույնի խոսք ուղղեց Հայոց Հովվապետներին և բոլոր ներկաներին՝ առանձնապես շեշտելով եկեղեցական համայնքների դերը Լիբանանի կյանքում:

* * *

Նույն օրը, երեկոյան ժամը 19.00-ին, Բեյրութի Եղիշե Մանուկյան սրահում Անթիլիասի Մայր տաճարի «Շնորհալի» երգչախումբը, ի պատիվ Ա-

մեծայն Հայոց Հայրապետի այցելության և նորաօծ Կաթողիկոսի, կազմակերպել էր ազգային-կրոնական երգացանկ՝ գեղարվեստական ղեկավար Մեղրիկ վարդապետի ղեկավարությամբ, ներկաներին պարգևելով բազում գեղեցիկ ապրումներ և զգացումներ:

* * *

Գեղարվեստական երեկոյից հետո երկու Հայրապետները հրավիրվեցին Խորհրդարանի պալատ՝ մասնակցելու Խորհրդարանի նախագահ Նաբիհ Բըրրիի կողմից կազմակերպված ընթրիքին: Այս պաշտոնական ընդունելությանը ներկա էին քրիստոնյա Եկեղեցիների և իսլամ համայնքների պետեր և ներկայացուցիչներ, ինչպես նաև մեծ թվով նախարարներ և հայտնի երեսփոխաններ:

Ամենայն Հայոց Հայրապետը, ի նշան ջերմ ընդունելության և հայության նկատմամբ ունեցած ազնիվ վերաբերմունքի, Խորհրդարանի նախագահին արծաթյա սկուտեղ նվիրեց:

ՎԵՐԱԴԱՐՁ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔ

Այցելության վերջին օրը, հուլիսի 4-ին, Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ընկերակցությամբ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի, հոգևորականաց թափորով մուտք գործեց Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճար՝ վերջին աղոթքը կատարելու Սուրբ Էջմիածին վերադառնալուց առաջ:

Անթիլիասի Մայր տաճարում Մեծի Տանն Կիլիկիո Հայրապետ Արամ Ա-ն բարի երթի ջերմ ու սրտառուչ խոսքերով դիմեց Գարեգին Ա Վեհափառին՝ ասելով, որ Անթիլիասը կա և մնում է Նորին Սրբության Հոգևոր Տունը, և Սուրբ Աթոռի դռները բաց են Ամենայն Հայոց Հայրապետի առջև, «ուստի ոչ թե ասում ենք բարի ճանապարհ, այլ ցտեսություն» հուզախառն արտասանեց Արամ Վեհափառը.

ԱՐԱՄ ՎԵՀԱՓԱՌԻ ՈՂՋԵՐԹԻ ԽՈՍՔԸ

Վեհափառ Տեր, հոգևոր եղբայրներ և սիրելի ներկաներ, առաջին հերթին փառք կուտամ Աստուծո, որ այս վերջին շաբաթը մեզի ընծայեց մեր կյանքին մեջ ուրախությամբ, հույսերով, տեսիլներով և հավաքական հավատքի ու կամքի արտահայտությամբ լցվել մեր սիրելի Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին ներկայությամբ ու հովանավորությամբ:

Ես կուզեմ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության ժողովուրդին, միաբանության և ժողովականության արտին թարգմանը ըլլալ աս պահուն՝ հայտնելու Ձերդ Վեհափառության մեր խորին շնորհակալությունը, որ, հակառակ Ձեր բազմազբաղ վիճակին, սիրով ընդառաջեցիք մեր փափագին՝ անձամբ ներկա ըլլալու, մասնակից դառնալու, նախագահելու Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության ընտրության և ապա օծման արարողություններին: Ձեր ներկայությունը, Վեհափառ Հայրապետ, զույգ Պատրիարքներուն հետ միասնաբար, ինքնին պերճախոս վկայություն մըն է այն աներեր-

քելի իրողության, որ Հայաստանյայց Եկեղեցին մեկ եղած է, կշարունակե մեկ ըլլալ ու ավելիով իր միությունը պիտի արտահայտե մեր գործակցությամբ՝ Հայաստանյայց Եկեղեցու չորս նվիրապետական Աթոռներու գործակցությամբ: Այս մեկը մենք վերջին օրերու ընթացքին վերահաստատեցինք:

Սիրելի Վեհափառ, այս տունը Ձեր տունն է, այս տան յուրաքանչյուր քարին մեջ Ձեր ներկայությունը կա, Ձեր անունը կա: Հետևաբար, մենք Ձեզի մնաք բարով չենք ըսեր, այլ կըսենք ցտեսություն: Դուք դարձյալ պիտի գաք այստեղ, ես պիտի գամ Էջմիածին, և միասնաբար պիտի գործենք և մեր ժողովրդին ու աշխարհին ցույց տանք, թե Հայաստանյայց Եկեղեցին մեկ է, միասին է որևէ ժամանակե ավելի: Հետևաբար, մենք Ձեզի այստեղ հիմա երթաք բարով չենք ըսեր, այլ պարզապես կըսենք ցտեսություն, միշտ միասին ըլլալու հեռանկարով և վառ հույսով: .

Ապա երախտագիտության ջերմ խոսքերով ներուած Կաթողիկոսին, միաբանությանը և ներկաներին դիմեց Ամենայն Հայոց Հայրապետը.

ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՎԱՆՔՈՒՄ

Սիրելի Վեհափառ եղբայր, Պատրիարք եղբայրներ, հոգևորական եղբայրներ, հարգարժան ժողովականներ, սիրեցյալ միաբանության անդամներ և հավատացյալ ժողովուրդ մեր,

Ես փառք եմ տալիս Աստծուն, որ մենք հանուր Հայաստանյայց Եկեղեցվո պատմության մեջ այս տարին բացառիկ կարող ենք անվանել՝ թե՛ Էջմիածնի Մայր տաճարում կատարված ընտրությամբ, ուր Հայ Եկեղեցու միասնականությունը արտահայտվեց, և թե՛ այստեղ՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Մայրավանքում, իմ սիրելի հոգևոր ծննդյան տան մեջ, ուր դարձյալ անշեղորեն արտահայտվեց Հայ Եկեղեցու միասնականությունը: Ես ուզում եմ խոր շնորհակալություն հայտնել Վեհափառին՝ Տ. Տ. Արամ Ա Կաթողիկոսին՝ մեր ամբողջ միաբանությանը, ազգային կենտրոնական վարչությանը, կրոնական և քաղաքական ժողովներին միասնաբար և բոլոր նրանց, որոնք այս այցելությունը վերածեցին մեր ժողովրդի համար երջանկության աղբյուրի:

Թող այս աղբյուրը առատորեն հոսի և ոռոգի անդաստանը հայ ժողովրդի կյանքի ի Մայր Հայրենիք և ի չորս ծագս աշխարհի: Աչքեր կան աշխարհի չորս կողմերից, որոնք մեզ են նայում և նայում են սպասելով, նայում են հուսալով, նայում են հավատքով: Հետևաբար, մենք այդ բոլոր նայվածքների առջև կանգնենք պատասխանատվության բարձրագույն և նվիրականագույն զգացումով:

Շնորհակալություններ եմ հայտնում այն ընդունելության համար, որ ցույց տվեցիք Ամենայն Հայոց Կաթողիկոսի նկատմամբ և անձնապես, հանուն մեր Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռի պատվիրակության սրբազան հայրերի և Գերագույն Հոգևոր Խորհրդի, գնահատում եմ ձեր այդ կեցվածքը և որի մեջ տեսնում եմ ապագայի առավել ներտացումի նախաբայլը: Ես վի ինձնից:

Ես մաղթում եմ, որ Աստված անսասան պահի Կիլիկիո Աթոռը՝ Հայ Եկեղեցու միասնության և հայ ժողովրդի պայծառության համար: Ամեն:

Ապա Վեհափառ Հայրապետը, շրջելով մայրավանքում, խոնարհվեց Կիլիկյան Աթոռի Գահակալների շիրիմներին, Ապրիլյան եղեռնի նահատակաց հուշարձանին և իր շքախմբով ուղևորվեց վարչապետ Ռաֆիք Հարիրի պալատ, ուր, ի պատիվ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, շքեղ ընդունելություն էր կազմակերպված: Ընդունելությանը ներկա էին ավելի քան 400 անձինք, այդ թվում՝ Լիբանանի բարձրաստիճան պաշտոնյաներ, բազմաթիվ երկրների դիվանագետներ, գործարար մարդիկ, մշակույթի և գիտության ներկայացուցիչներ, քրիստոնյա և մահմեդական հոգևոր պետեր և ուրիշներ:

Վարչապետ Հարիրին ողջույնի ջերմ խոսքեր հղեց Նորին Սրբությանը՝ շնորհակալություն հայտնելով այն ազնիվ գործունեության համար, որ ցուցաբերել է Վեհափառ Հայրապետը Լիբանանի հանդեպ երկրի ամենաճաշանր և դժնդակ օրերին:

Վեհափառ Հայրապետը իր հերթին շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության համար՝ որպես այդ խոսքերի առհավատչյա Սուրբ Էջմիածնում պատրաստված արծաթյա նրբագեղ սկուտեղ հանձնելով Վարչապետին: Նորին Սրբությունն ասաց.

«Սիրելի պարոն Ռաֆիք Հարիրի, ես ուզում եմ միայն իմ շնորհակալությունը հայտնել այն սիրո համար, որ ցույց տվեցիք մեր հայ ժողովրդի, Հայաստանի, Էջմիածնի, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության և Լիբանանահայության հանդեպ:

Ես Լիբանանի զավակ եմ, Լիբանանի մեջ եմ կազմավորվել իբրև մարդ և հոգևորական և իբրև Լիբանանցի: Այսօր ծանր պարտականության կոչված եմ Հայաստանում, բայց երբեք չեմ կարող Լիբանանը ինձնից հեռու զգալ կամ բաժանված: Ես պիտի լինեմ թարգմանը Լիբանանի միության և համակեցության ոգու: Հայաստանում մենք ապրում ենք մեր իսլամ եղբայրների շրջանակում, Իրանի Իսլամական Հանրապետությունը, Ադրբեջանը՝ հույս ունենալով, որ Լեռնային Ղարաբաղի խնդիրը կվերջանա խաղաղությամբ և մեր եղբայրական հարաբերությունը կշարունակվի ինչպես անցյալում: Մենք երեք շաբաթներ առաջ, Ռուս Եկեղեցու Պատրիարք Ալեքսի Ա-ի հետ միասին, հանդիպում ունեցանք մեր սիրեցյալ եղբոր՝ Շեյխ Ոլ Իսլամ Փաշազադեի հետ այս խնդիրների լուծման շուրջ խորհրդակցությամբ:

Վերջացնելով իմ խոսքը ես այս առիթով ուզում եմ մի հիշատակ թողնել այստեղ պարոն Ռաֆիք Հարիրիին որպես նվերը մեր կաթողիկոսության, Երևանում հայ վարպետի ձեռքով պատրաստված արծաթյա սկուտեղը»:

Հավարտ ճաշկերույթի Հայոց Հովվապետը, ընկերակցությամբ Սրամ Ա Վեհափառի, Երուսաղեմի և Կ. Պոլսո Պատրիարքների, մեծաթիվ հոգևորականների, ազգային ու պետական գործիչների, ուղևորվեց օդանավակայան, ուր, կարճատև հյուրընկալվելով պաշտոնական սրահում, վերադարձավ Սուրբ Էջմիածին:

Երևանի «Զվարթնոց» օդանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորեցին Հայաստանի Հանրապետության պետական պաշտոնատար անձինք, Մայրավանքի միաբանության անդամներ և հոգևոր հայրեր:

Օդանավակայանից մեքենաների շարասյունը ուղղվեց Սուրբ Էջմիածին՝ Մայր տաճար, ուր և Նորին Սրբությունը, գոհաբանական մաղթանքից հետո, իր Հայրական օրհնությունները բաշխեց ներկաներին:

ՎԱՉԳԵՆ ԱՐԵՂԱ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

Լիբանանի Հանրապետության նախագահ Իլիաս Հրաուին Մայրիների բարձրագույն կարգի շքանշանով պարգեւատրում է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Առամ Ա.
Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԱՐԱՄ Ա ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄՓՈՓ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Արամ Ա Կաթողիկոսը (աշխարհական անվամբ՝ Պետրոս Քեշիշյան) ծնվել է 1947 թվականին Բեյրութում (Լիբանան): Նախնական կրթությունը ստացել է ազգային Մեսրոպյան վարժարանում, որից հետո ուսումնառությունը շարունակել է Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Դպրեվանքում (1961 թ. հոկտեմբեր—1965 թ. մայիս): Այստեղ էլ 1965 թ. մայիսին ձեռնադրվում է սարկավագ՝ ձեռամբ Գարեգին Սարգսյանի (այժմ՝ Կաթողիկոս Ամենայն Հայոց), իսկ 1968 թ. ձեռնադրվում է աբեղա՝ ձեռամբ Տաճատ արքեպս. Հովհաննիսյանի:

1970 թ. ստանում է վարդապետական աստիճան՝ ձեռամբ Խորեն Ա Կաթողիկոսի՝ պաշտպանելով «Մամբրե Վերծանող՝ Ե դարի աստվածաբանը» վարդապետական թեզը: 1978 թ., երբ տակավին ուսանում էր Միացյալ Նահանգներում, Արամ վարդապետը ընտրվում է Լիբանանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ, իսկ մեկ տարի անց միաձայն ընտրվում է Լիբանանի հայոց թեմի առաջնորդ: 1980 թ. մայիսին ստանում է ծայրագույն վարդապետության աստիճան և հաջորդ օրն իսկ ձեռնադրվում եպիսկոպոս՝ ձեռամբ Գարեգին Բ Աթոռակից Կաթողիկոսի: Արքության տիտղոս և պատիվ է ստանում 1985 թ. հունվարին:

Արամ Ա Կաթողիկոսը 1968—1978 թթ. անընդմեջաբար իր բարձրագույն ուսումն է շարունակում Մերձավոր Արևելքի Աստվածաբանական ճեմարանի, Ամերիկյան համալսարանի, Շվեյցարիայի Բոսե Էքյումենիկ հաստատության, Օքսֆորդի համալսարանի արևելագիտության բաժնի և Նյու Յորքի Ֆորտհամ համալսարանում՝ ստանալով ակադեմիական հետևյալ վկայականները. Գևակավոր արվեստից, Մագիստրոս աստվածաբանության, Մագիստրոս Մերձավոր Արևելքի եկեղեցական պատմության և փիլիսոփայության դոկտոր:

Արամ Ա Կաթողիկոսը աբեղայական ձեռնադրությունից անմիջապես հետո իր հետևողական և գործուն մասնակցություն է բերել միջեկեղեցական՝ էկումենիկ շարժմանը թե՛ Մերձավոր արևելյան և թե՛ միջազգային համագումարներում՝ ներկայացնելով Կիլիկյան Աթոռը:

1974 թ. ընտրվում է Միջին Արևելքի Եկեղեցիների Խորհրդի Գործադիր Վարչության անդամ, իսկ 1977 թ. նշանակվում է Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության ներկայացուցիչ «Պրո Օրիենտե» կաթոլիկ էկումենիկ կազմակերպության մոտ և ապա ընտրվում նույն կազմակերպության պատվավոր անդամ: Արամ Ա Վեհափառը անդամ է նաև միջազգային մի շարք աստվածաբանական և էկումենիկ հանձնախմբերի և կազմակերպությունների, իսկ 1970 թվականից գործուն մասնակցություն է ունենում Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի զանազան բաժանմունքների աշխատանքներին: Մնայուն անդամն է դառնում այդ Խորհրդի երիտասարդական բաժանմունքի, ապա՝ «Հավատ և կարգ» հանձնաժողովի և նրա գործադիր վարչության: 1983 թ. ընտրվում է Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Կենտրոնական Վարչության անդամ՝ որպես ներկայացուցիչը Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության, իսկ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի 1991 թ. Քեմպրայի (Ավստրալիա) հանժողովին ընտրվում է Կենտրոնական ու Գործադիր Վարչությունների ատենապետ՝ յոթ տարի ժամանակով:

Արամ Ա Կաթողիկոսը իր այս գործունեության բերումով դասախոսել աշխարհի տարբեր համալսարաններում և միջեկեղեցական ժողովների ելույթներում ու պաշտոնական հանդիպումներում միշտ արծարծել է հայ ժողովրդի արդար պահանջատիրության և Արցախի հարցերը:

Արամ Ա Կաթողիկոսը նաև մի շարք գրական-աստվածաբանական հոդվածների և գրքերի հեղինակ է, որոնք հրատարակվել են նաև այլ լեզուներով:

ԱՐԱՄ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԳՐՔԵՐԸ

Հայաստանյայց Եկեղեցվո ճշմարիտ դիմագիծը, Բեյրութ, 1970 թ.:
Ներսես Շնորհալին աստվածաբան և էկյումենիստ, Բեյրութ, 1974 թ.
Վերականգնումի կամքով, Բեյրութ, 1983 թ.
Ժողովուրդին հետ, Բեյրութ, 1989 թ.
The Witness of the Armenian church in a Diaspora Situation, New York, 1978.
The Christian Witness at the Crossroads in the Middle East, Nicosia, 1980.
Conciliar Fellowship: a Common Goal, Geneva, 1990.
Orthodox Prespectives on Mission, Oxford, 1992.
Towards an Ecumenical Ethic for a Responsibile Society in a Sustainable Creation, Geneva, 1994.
Nerses the Gracious and Church Unity, New York (in process of publication).

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ
Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՌԱՋԻՆԻ
ԱՅՑԸ ՍԵՎԱՆԻ ԱՎԱԶԱՆ

Հոգևոր վա՛ելքի, քրիստոնեական հավատքի ամրացման, Հայ Եկեղեցու պայծառության և նորանկախ Հայրենիքի շինության գործում մի աղբյուր հանդիսացավ օգոստոսի 22-ին Վեհափառ Հայրապետի հովվապետական այցելությունը Սևանի տարածաշրջան՝ ուղեկցությամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանի, Տ. Միքայել ծայրագույն վարդապետ Աջապահյանի և Սարգիս սարկավագ Բոյաջյանի:

ՉԱՐԵՆՑԱՎԱՆՈՒՄ

«Վերածնված Հայաստանի» խորհրդանիշը եղող հուշարձան-կոթողի մոտ Վեհափառ Հայրապետն ու իր շքախումբը դիմավորվեցին քաղաքային իշխանությունների կողմից, որից հետո ուղևորվեցին քաղաքի հրապարակ, ուր բազմահազար հավատացյալների ներկայությամբ կատարվեց նոր կառուցվելիք եկեղեցու հիմնարկեքի արքազան արարողությունը: Չարենցավան քաղաքը, հիմնադրված լինելով 1947 թվականին և մինչև այսօր չունենալով ոչ մի եկեղեցի, հոգևոր արթնության այս նոր շրջանում հավատացյալների, քաղաքային իշխանությունների և բարերարների օժանդակությամբ կառուցելու է իր եկեղեցին՝ ի հոգևոր շինություն հավատացյալ ժողովրդի:

Յուրաքանչյուր եկեղեցու հիմնարկություն և կառուցում հոգևոր թոիչքի նոր արտահայտություն և մղում է, որովհետև այն պիտի դառնա Մայր բոլոր հավատացյալների համար և աղբյուր՝ երկրից երկինք վերելության: Այստեղ, 70-ամյա «եգիպտական գերությունից» հետո, Աստուծո ազատության տենչով փոթորկվող մարդը՝ հայ մարդը, պիտի գտնի իր հոգու «ավետաց երկիրը»: Եվ, վերջապես, նորահիմն տաճարն Աստուծո ներկայության կենդանի վկայությունն է, որ Իր խորհուրդներից օրհնություն է տարածում ոչ միայն նեղ սահմաններում, այլև տիեզերական և երկնային Եկեղեցու անսահմանափակ ընդգրկումի մեջ:

Սրբազան արարողությանը հաջորդեց Նորին Սրբության օրհնության խոսքը՝ ուղղված բազմահազար հավատացյալներին.

«Սիրելի արքազան, հոգևոր եղբայրներ, հարգարժան քաղաքապետ Չարենցավանի և բանկագին զավակներ Հայաստանյայց Եկեղեցու,

Վստահ եմ, մեր բոլորի համար անխափան այս պահը իբրև մի անմոռանալի պահ պիտի արձանագրվի մեր կենսագրության մեջ: Սրբազանն ասաց, թե առաջին անգամն է, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը այցելում է Չարենցավան: Ես խոնարհաբար փառք եմ տալիս Աստծուն, որ այդ պատիվը ինձ շնորհեց և ինձ կարող դարձրեց, որ ես ձեզ հետ լինեմ և հաղորդակից ու աղոթակից դառնամ և ձեզանով՝ ձեր հավատքով, առավել ևս ուժեղանամ, զորանամ այն ծառայության համար, որին Աստված կանչել և ժողովուրդը հրավիրել է, որ այդ ծառայությունը մատուցենք մեր ողջ ժողովրդին թե՛ Հայաստանում և թե՛ աշխարհի չորս ծագերում, որտեղ հայություն է ապրում:

Այսօր պատմական օր է: Այս օրը հայոց պատմության մեջ պիտի արձանագրվի Չարենցավանի օր: Ոչ թե որովհետև ես եմ եկել, այլ որովհետև դուք եք որոշել այստեղ կանգնեցնել մի վկայություն, որպես կենդանախոս վկայարան ձեր կենդանի հավատքի առ Աստված և առ ժողովուրդն Հայոց և առ նրա ապագան: Այսօր Մենք հողը օրհնեցինք: Այդ հողի օրհնության միջոցով վավերացրեցինք այն կամքը՝ որոշումը համայնական, որ մենք այստեղ պիտի կանգնեցնենք մի այնպիսի նյութեղեն կառուցվածք՝ գմբեթազարդ երկնասլաց եկեղեցի, որին նայողը քար չտեսնի, այլ մեր հավատքն ու կապվածությունը և քրիստոնեության հանդեպ մեր հավատարմությունը տեսնի՝ քարի միջից այս ժողովրդի հավատավոր հոգին կարդա:

Ես իմացա, որ Չարենցավանը նորագույն քաղաքներից մեկն է մեր Հայրենիքի՝ կառուցված 1947 թվականին: Այլ տարիներ էին դրանք: Այդ ժամանակ տուն շինեցիք, պետական շենքեր կառուցեցիք, գործարաններ և գործատեղիներ հաստատեցիք, բայց չէիք կարող, եթե ուզենայիք անգամ, եկեղեցի կանգնեցնել: Այդ ժամանակը՝ պարտադրության ժամանակն անցավ, ու բռնատիրության ժամանակը վերացավ: Հիմա մեր՝ հայի՛ ժամն է: Հայը իր ազատ կամքով իր եկեղեցին է կանգնեցնում՝ փառք Քեզ, Աստված:

Այս եկեղեցին խորհրդանշական իմաստ ունի: Այս եկեղեցին ինձ համար նշանակում է և գալիք տարիներին պիտի խորհրդանշի, թե մեր Հայրենիքը մի նոր շրջանի մեջ է մտել: Այն բնորոշվում է կենդանի քրիստոնեական հավատքով և հայի հարազատ ապրումով, ինքնակամ արտահայտությամբ և վճռականությամբ իր սեփական հողը ծաղկեցնելու, զարգացնելու և առաջադիմության ճանապարհի մեջ առաջ մղելու շրջան: Հետևաբար, երբ գալիք տարիների ընթացքում այս եկեղեցին սկսի կամաց-կամաց մարմին առնել, ձեր հոգիների մեջ է, որ այն պիտի կառուցված լինի:

Ահավասիկ, շուրջ հինգ ամիսներ են, որ կոչվել եմ այս ծանրագույն և ծայրագույն պատասխանատվության, որպես 131-րդ Ամենայն Հայոց Կաթողիկոս: Իմ առաջին պարտականություններից մեկը համարեցի գնալ ոչ-կան հուշարձանների Կաթողիկոս չեմ, այլ ծնվել ու ձևավորվել եմ մեր ժողովրդի համար և չեմ կարող իմ հոգևոր եղբայրների հետ միասին ծառայել այդ ժողովրդին՝ առանց ճանաչելու նրան: Հիսուս՝ մեր Երկնավոր Վարդապետը, ասել է. «Ճանաչեմ յիմսն և ճանաչիմ յիմոցն»: Առանց այս փոխադարձ ճանաչման և առանց այս հաղորդության կապակցության ծառայությունը տեսական երևույթ է և ոչ թե գործնական արտահայտություն: Այսօր եկել եմ որպես առաջին արտահայտություն իմ ծառայությանը ձեր հան-

Վեհափառը օրհնում է Չարենցավանի երեխաներին.

Վեհափառը Կամոյում

դեպ: Եվ այս անցնող հինգ ամիսների ընթացքում ես պարտականություն համարեցի այցելել Հայաստանի գրեթե բոլոր թեմերը: Եվ այսօր սկսա եկել եմ այցի Սևանի ընդհանուր շրջանին և առաջին անգամ այցելում եմ Չարենցավան:

Այս բոլոր շրջագայությունների ընթացքում ես մի երևույթ նկատեցի և ուզում եմ արտաբաց կերպով, արտից սիրտ խոսելով, իմ մտածումը ձեզ փոխանցել: Տեսա հրաշակերտ, գեղազմայլ Գանձասարը, Հառիճը, Սանահինն ու Հաղբատը և բազմաթիվ այլ եկեղեցիներ, եկեղեցիներ և եկեղեցիներ հուշարձաններով խոսուն, խաչքարերով կենդանի հավատքն արտահայտող: Ես հարց տվեցի և այժմ էլ տալիս եմ. եթե մեր հայրերը չորրորդ-հինգերորդ դարերից այս կողմ այսքան եկեղեցիներ են կառուցել, այսքան շքեղ վկայություններ են տվել, թե իրենք առաջին ազգն են ողջ աշխարհում որպես քրիստոնյա պետություն և ազգ, եթե նրանք վկայել են աշխարհին իրենց փառապանծ և արարատանման եկեղեցիներով, անսասան հավատքով, ինչո՞ւ մենք այսօր մեր անկախացյալ Հայրենիքում չվերաշինորոգենք այդ տաճարները և չկառուցենք նորերը: Նրանք ի՞նչ ունեին ավելի, որ մենք չունենք: Նրանք ինչ որ արեցին, իրենց ձեռքերով արեցին, բայց դրանք շարժվեցին հավատքի ուժով: Հավա՛տք ունեին: Եվ Աստված ասում է. «Եթե հավատք ունենաս՝ լեռներն անգամ կարող ես տեղից շարժել»:

Նույն մեր Երկնավոր Վարդապետը՝ Հիսուս Քրիստոս, իր նշանավոր մի խոսքում ասաց. «Մի՛ երկնչիր, հաւատք քո կեցուցեն զքեզ» և «Մի երկնչիր, բայց միայն հաւատա՛յ»: Հավատքը մտքից, սրտից ուժեղ մի ներքին մղում է, որ մեզ հավիտենական արժեքներին է կապում: Եվ այդ հավատքն է, որ այսօր պետք է վերարծարծվի, վերակենդանանա, վերաշնչավորվի մեր ժողովրդի նոր Հայրենիքի նորոգվելիք ժողովրդի հոգում: Այսօր ես կոչ եմ անում ձեզ, որ դուք ոչ միայն հողի օրհնությունը տեսնեք և մխիթարվեք, այլ ամեն մեկը իր բաժինը բերի այս եկեղեցու կառուցման մեջ: Դա՛ է ճշմարիտ եկեղեցին: Եվ մենք մեզանից այնտեղ կդնենք մեր հավատքից բխած, մեր կարողությունից դուրս եկած, մեր շահից բաժին հանված մասը:

Սիրելի հայ եղբայրներ և քույրեր, ես, որ հիմա Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում եմ ապրում և ամեն օր այդ քարերին եմ նայում, Գրիգոր Լուսավորչի անցած ճանապարհով եմ քայլում, Տրդատ թագավորի արքունիքի կամարակապ դռան միջից եմ անցնում, մտաբերում եմ 301 թ.-ի այն պահը, երբ Գրիգոր Լուսավորիչը պարանը վերցրեց և չափագրեց եկեղեցին, երբ Տրդատ արքան Մասիս լեռը բարձրացավ և յոթը ժայռ իր ուսերին դրած բերեց Էջմիածին՝ ամրացնելով հայ եկեղեցու հիմքերը, իսկ Հայոց Աշխեն թագուհին իր բեհեզյա շրջազգեստը գոգնոցի վերածած հող էր լցնում եկեղեցու հիմքերում, Խոսրովիդուխտ արքայադուստրը նույնպես իր ձեռքերով էր խառնում շաղախը: Այսպես է կառուցվում եկեղեցին՝ ժողովրդի՛ մասնակցությամբ:

Ես ամբողջ կյանքս Հայրենիքից դուրս եմ ապրել և տեսել եմ, թե օտար աշխարհներում նույն անունը կրող և նույն անունը իրենց ճակատին արձանագրած, նույն հավատքը ունեցող հայ եղբայրներ և քույրեր ցեղասպանությունից հետո նոր եկեղեցիներ կառուցեցին իրենց գաղթած երկրներում: Ինչպե՞ս իրականացրեցին. հողը իրենցը չէր, այլ օտար երկիր էր, բայց այնտեղ իրենք իրենց Հայրենիքը ստեղծեցին՝ իրենց եկեղեցին կառուցելով և

դպրոցը շինելով: Դպրոցն ու եկեղեցին Հայրենիք եղան արտասահմանի հայության համար:

Հետևաբար, ես ուզում եմ, որ այս օրը խոր օրվա վերածեք՝ ձեր գալիք օրերի մեջ ներգործող ուժի վերածեք: Հիշե՛ք այս օրը և երբ այս հրապարակով անցնեք, մոածեք՝ ի՞նչ կարող եք դուք բերել այս եկեղեցու շինության համար: Ձեր հոգևոր հովվին, ձեր առաջնորդ սրբազանին, քաղաքային իշխանությունների բոլոր պատասխանատուներին գնացեք-ասացեք՝ անհավասիկ իմ քրտինքիցս բաժին եմ բերում իմ եկեղեցին կառուցելու համար: Դա՛ է, որ ձեզ պիտի անմահացնի:

Ես ողջունում եմ այս գեղեցիկ պահը Չարենցավանի կյանքում և արձանագրում եմ որպես Չարենցավանի առավոտ մեր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պատմության գրքի մեջ:

Սիրելի սրբազան, իմ խոր շնորհակալությունն եմ հայտնում, որ ինձ հրավիրեցիք մեր սիրեցյալ, հավատավոր, ապագայատեսիլ և ոչ միայն անցելապաշտ ժողովրդին հանդիպելու: Իմ գնահատանքն եմ հայտնում մեր քաղաքային իշխանությանց և նրանց գլուխը կանգնած մեր սիրելի քաղաքապետին և հանրային սպասարկության բոլոր անձերին, որ գերագույն ջանվիրումով իրենց պարտքը կատարեն, և երբ մի օր հայեր անցնեն այստեղից, ասեն, թե Չարենցավանը չէ այն այժմ, ինչ որ էր Վեհափառի այցելությունից առաջ: Այսինքն, երբ անցնեն այստեղից, տեսնե՛ն եկեղեցին և ասեն. ապրե՛ք, չարենցավանցիներ, որ դուք ձեր հավատքի խոսնակն ու անլռելի զանգակատունը եղող եկեղեցին կանգնեցրեցիք:

Աստված օրհնի ձեզ այդ հավատքը զորացնելով ձեր մեջ և շենություն պարգևի մեր Հայրենիքին, Չարենցավանի ամբողջ ժողովրդին, հավիտյանս հավիտենից. ամեն»:

Այնուհետև Վեհափառը շրջեց քաղաքի փողոցներով՝ ամենուրեք օրհնելով օրհնություն հայցող չարենցավանցիներին, և այցելեց քաղաքապետարանի նվիրատվությամբ հիմնադրված եկեղեցական արվեստի և Ս. Գլոր կենտրոն, որը բացվել էր Հայրապետի այցելության առթիվ: Ապա քաղաքի բարձունքում հանգչող զոհված ազատամարտիկների շիրիմների առջև կատարվեց հոգեհանգստյան պաշտոն.

«Հայրենակից եղբայրներ և քույրեր, մեր անդրանիկ Հովվապետական այցելության առիթով Չարենցավան, բացի հրապարակի վրա կատարած մեր հողի օրհնությունից և այնտեղ ժողովրդին ուղղված հրապարակային մեր խոսքից, այս պահը մեր ամբողջ հայեցողության, խորհրդածության և ներքին ինքնազորացման պահի ուժը պետք է ունենա: Պարույր Սևակի նման ասում եմ. «ողբամ մեռելոց, կոչեմ ապրողաց»: Քիչ առաջ «կոչեմ ապրողաց» ասեցի հրապարակի վրա և, այսօր չեմ ասում բանաստեղծի պես՝ ողբամ մեռելոց, այլ՝ ՊԱՏԻՎ ՄԵՌԵԼՈՑ, որովհետև նրանք չմեռան, իրենք իրենց կյանքը տվին, ոչ թե ուրիշները իրենց կյանքը առին, և սա մեծ նշանակություն ունի: Նահատակը ուրիշ է, մեռյալը՝ ուրիշ: Մեկը բնական մահն է, մյուսը կամավոր հանձառումն է մահվան: Եվ մեր ժողովուրդը այսպիսի հերոսների հիշատակը չի կարող մոռանալ:

Այսօր ես նրանց հարգանք եմ ընծայում: Քիչ առաջ նրանց անուններն էի կարդում, իրենց վառ աչքերով, իրենց ժպիտով, երիտասարդական իրենց ավյունը արտահայտող կենսայնությամբ դեմքերն էի դիտում նկար-

ների միջից: Ասում էի ինքս ինձ. նրանք ձեզ և ինձ պես ապրում էին սրանից մի քանի տարիներ առաջ, բայց երբ հարկը պահանջեց, ազգի գերագույն շահը պահանջեց, նրանք իրենց կյանքը տալու քաջությունը ունեցան և դրա համար անմահ անվամբ պիտի արձանագրվեն մեր պատմության մեջ:

Այսօր ես ցանկանում եմ մի բան: Գերեզմանատան այս հողի տարածքը չտարածվի...: Նոր երիտասարդների կյանքը ծլարձակվի, արյան տեղ՝ քրտինքը մատուցվի մեր հողին, և վերջ գտնի պատերազմը, արդարությունը իր տեղը գտնի, մեր ժողովրդի իրավունքները բարձր մնան և հարգվեն բոլորից:

Այսօր ես իմ հարգանքը նրանց հիշատակին մատուցելուց հետո, ուզում եմ նրանց ծնողներին, ընտանիքի բոլոր անդամներին հայտնել իմ խոր հոգեկան աջակցությունը: Աղոթքով ձեզ հետ եմ, հայրեր, մայրեր, եղբայրներ, քույրեր, ազգականներ և բոլոր չարենցավանցիներ, որ ձեր զավակները այսօր դուք տվել եք ազգի պատվի, կյանքի և ապագայի համար:

Երիտասարդներ, ձեզ եմ ուղղում իմ խոսքը, այնքան ժամանակ, որքան ողջ եք, կենդանի եք, առողջ եք այս երկրի վրա, ձեր քրտինքը խառնեցեք մեր հողին, որպեսզի կառչած մնաք այս հայրենիքին, և կարենաք, բոլոր միասին պատվով դուրս գալ Աստուծո առաջ և ամբողջ մարդկության առաջ, որ ասեն՝ հայերը արժանի են այն ազատության և անկախության, որին հասան. այդ ազատության և անկախության համար մենք երկու տեսակ հեղուկ ունենք, որ կտանք՝ արյուն և քրտինք: Երրորդ տեսակ հեղուկը չեմ ուզում, որ որևէ մեկից դուրս գա՝ դրա անունն է արցունք: Արցունք թող չլինի: Քրտի՛նք և, եթե պետք ըլլա՝ արյուն մեր հայրենիքի հավերժության և հաղթանակի համար:

Հարգանք ձեզ և պատիվ ձեզ բոլորիդ»:

Հրաժեշտից առաջ Վեհափառ Հայրապետը, քաջալերելով չարենցավանցիներին, նրանց կոչեց իրենց հավատալից մասնակցությունը բերելու նոր կառուցվելիք եկեղեցու շինարարական աշխատանքներին, որպես ընծա կարան բարեխոս իրենց կյանքը Աստուծո և Հայրենիքի համար ընծայաբերած երիտասարդ հոգիների և կրկին հանդիպելու ցանկությամբ մեկնեց Հրազդան:

Հ Ր Ա Զ Դ Ա Ն Ո Ւ Մ

Հրազդանի ժողովուրդը և տեղական իշխանության ղեկավարները մեծ խանդավառությամբ ողջունեցին Հայոց հոգևոր Հորը: Այստեղ Վեհափառը հետևյալ խոսքն ուղղեց հավատացյալների հոծ բազմությանը.

«Սիրելի հոգևոր եղբայրներ, հարգարժան ներկայացուցիչներ պետական և քաղաքային իշխանությանց և սիրելի հավատացյալ եղբայրներ ու քույրեր:

Ես, կյանքիս մեջ առաջին անգամ լինելով այստեղ, աղոթակից եմ դառնում ձեզ հետ այս հանգստարանի մեջ, և Հրազդանի շրջանի զավակներից նրանք, ովքեր իրենց կյանքը վերջացրել են և այստեղ են թաղվել, ես նրանց հիշատակին հարգանք եմ ընծայում այսօր և այս գերեզմանատան մեջ: Առհասարակ այստեղ մահն է, որ տեսնվում է. ես մահից անդին՝

կյա՛նքն եմ տեսնում: Ես ամեն անգամ, երբ գտնվել եմ մի դագաղի առաջ, մի մահվան դիմաց կամ մի գերեզմանատնում, երբեք չեմ մոռացել մահվան մասին: Մահը մեզ բոլորիս պիտի գա, ինչ էլ ուզում ենք լինել, ուր էլ լինենք և որքան էլ տարիք ունենանք: Դա մեզնից կախված չէ: Ինչը, որ մեզ հետ կապված է, դա կյա՛նքն է: Մենք ինչպես կկարողանանք արժևորել կյանքը, որ երբ մահը գա, չտանի այն, ինչ որ տարվելիք չի՝ հոգեկան, ազգային, հայրենասիրական այն բոլոր իրագործումները, արժեքները, գաղափարները, որոնք մի ազգ ապրեցնում են: Ես գերեզմանատան մեջ մեռնողի մասին չեմ մոռացում: Նա գնացել է, Աստված է նրան ընդունողը: Ես մոռացում եմ իմ ու ձեր մասին: Ի՞նչ պետք է անենք մե՛նք, որ երբ մի օր մեզ հանդիպի, չտանի մեզ, տանի այն, ինչ որ տարվելիք է, այն, ինչ որ հող է, հողեղեն. դա պիտի գնա. բայց այնպիսի գործեր անենք, այնպիսի ապրումներով մեր կյանքը արժևորենք, որ երբ մահը նրանց կողքից անցնի, չկարողանա մեզ տանել իրեն հետ:

Այսօր դուք հարգանք եք ընծայում ձեր ննջեցյալներին: Մեր հովվապետական անդրանիկ այցելության ընթացքում եթե այս հանգստարանի կամ այս գերեզմանատան մեջ այս աղոթքը չլիներ, ես մի բան պակաս պիտի զգայի իմ մեջ: Մահացյալներին հարգանք ընծայելը՝ մահվան հարգանք ընծայել չէ, այլ նրանց այն պատգամին, որով նրանք ասում են. «մենք գընացինք, դուք ապրեք, և կյանքը թող շարունակվի ձեր մեջ»: Մենք հարգանք ենք մատուցում շարունակվող, հավիտենական, չսպառվող կյանքին, որ այժմ անցնում է մե՛ր միջից, ապրողների միջից և վաղը անցնելու է մեր զավակների միջից, նրանց զավակների միջից: Ոսկի թելն է կյանքը, օղակներն ենք մենք, օղակները կկոտրվեն-կգնան, վայ այն օրվան, որ շղթան կոտրվի, ոսկի թելը կտրվի, և այն ժամանակ է, որ մարդկությունը կանգ կառնի, և մենք այլևս թանգարանված մի ազգ կդառնանք:

Ես ողջունում եմ ձեզ և գնահատում եմ ձեր հոգևոր հովվին, ձեր առաջնորդ Սրբազանին, բոլոր հոգևորական ծառայողներին և մեր քաղաքային իշխանության ներկայացուցիչներին, որպեսզի այս մեր նորանկախ Հայաստանի մեջ գիտենանք գտնվել մեր պարտավորության բարձրագույն աստիճանի վրա: Մենք ենք հիմա տնօրինողը մեր կյանքի: Այնպես անենք, որ գալիք սերունդը մեզ օրհնի և ոչ թե մեզ անիծի: Այս լինի ձեր նշանաբանը, որ դուք կարենաք կյանքը մշակել այնպես, որ ձեր զավակները կարենան հպարտ զգալ իրենք իրենց հայ ծնված լինելու համար և նաև կարենան իրենց ներդրումները կատարել առաջատվական, զարգացողական իմաստով, այսինքն անել մի բան, որ ավելի լինի, ներդրում լինի, նոր իրագործում լինի մեր հայրերի կտակածի վրա: Այս պետք է լինի մեր նշանաբանը. ի՛նչ անենք, որ նրանց արածը ճոխանա, հարստանա, ամրանա և հավերժանա: Այս նշանաբանով ողջունում եմ ձեզ առաջին իմ այս խոսքի ընթացքին և ցանկանում լավագույնը ձեզ և ձեր երիտասարդ սերնդին՝ երեխաներին, որ այս պատգամով, այս գաղափարաբանությամբ ապրեք ձեր ամբողջ կյանքի ընթացքում»:

Այցելության հաջորդ հանգրվանը Հրազդանի շրջանի Ծաղկաձոր ավանի Կեչառիս վանքն էր, ուր, հակառակ հորդառատ անձրևին, հարյուրավոր հավատացյալներ կարոտով սպասում էին իրենց Հայրապետին՝ տեսնելու, լսելու և իրենց սրտերում զգալու նրա Քրիստոսաշունչ պատգամները ու հայրական խրատները, քանզի Ամենայն Հայոց Հայրապետի ներկայու-

Ծաղկաձորի Կեչառիս եկեղեցում

«Հայրապետական» տօրեն Էջմիածնի Տեր-Մեսրոպեան ճեմարանում է գործարկեց

թյամբ Կեչառիսի Հոգենկար վանքում դարձյալ կենդանություն էին ստացել բոլոր այն վարդապետներն ու վանականները, ովքեր իրենց շնչով պարուրել են այս տաճարը և դարձել նրա կենդանացնող գոյության հավերժ անուցող երակները:

Վեհափառը ոգևորված հետևյալ պատգամը տվեց իր հոգևոր զավակներին.

«Սիրեցյալ ժողովուրդ Աստուծո և զավակունք հայրենյաց մերոց Հայաստան աշխարհիս, որ ի Ծաղկաձոր ի վանս Կեչառիս:

Այսօր, հատկապես երեկոյացյալ այս պահին, ես ապրում եմ իմ կյանքի ամենախորասույզ և հուզիչ րոպեներից մեկը: Այս դարակերտ եկեղեցու կամարների ներքո այսօր մենք երգեցինք «Սուրբ Աստված» հոգևոր երգը, կատարեցինք երեկոյան ժամերգության մի մասը, և ես երևակայում եմ, թե դարե՛ր-դարե՛ր շարունակ այս քարեղեն կամարների ներքո մեր հայրերը՝ ձեր հայրերը, ամեն առավոտ և ամեն երեկո այս աղոթքները վերառաքեցին դեպի Աստված:

Այսօր մենք գտնվում ենք մեր պատմության՝ մեր հայ կյանքի մի նոր ժամանակաշրջանի սեմին: Անցան այն 70 տարիները, որոնց մասին շատ ենք խոսում և որոնց ընթացքում շատ տառապեցինք օտար բռնակալական լծի ներքո: Մեր աղոթքի բառերը արգելվեցին, մեր տաճարները փակվեցին, մեր հոգևորականները աքսորվեցին, մեր աղոթքի գրքերը լռեցվեցին, բայց հիմա ազատ ենք: Մոռացեք անցյալը, և ձեր հոգին թող ծաղկի քրիստոնեական հավատքի նոր շնչով և նորոգող շնչով: Մի նայեք անցյալին, այլ նայեք ներկային: Այսօր մենք ունենք բոլոր պայմաններն ու ազատությունները՝ մեր եկեղեցիներում մեր աղոթքը վերառաքելու դեպի Աստված, իրար երես նայելու, իրար աչքերի մեջ միմյանց դրախտը տեսնելու:

Այսօր մենք վերստին անկախացյալ Հայրենիք ու պետականություն և ազատ ժողովուրդ ենք: Մենք կոչվել ենք նոր պատասխանատվության, նոր Հայրենիք կերտելու պատասխանատվության՝ դարավոր քրիստոնեական հավատքի վերակենդանացումով և քրիստոնեական բարոյական սկզբունքների վերակենսավորումով մեր ժողովրդի կյանքում: Երբ քիչ առաջ այստեղ շարական էինք երգում, ես անդրադառնում էի, որ տարիներ շարունակ այդ շարականը երգել եմ օտար երկրներում այնպիսի պայմանների ներքո, որոնք իմ Հայրենիքի հետ ուղղակիորեն կապ չեն ունեցել: Ես այդ շարականներով եմ հայ դարձել ու հայ մնացել: Եկե՛ք, եղբայրներ և քույրեր, ապրենք վերստին քրիստոնյա լինել, Քրիստոսի հետքերով քայլել, Ավետարանը իբրև մեր լույսը ընդունել, ինչպես մեր հայրերը արեցին: Դարե՞րն են կարևոր՝ 17 դարե՞րն են կարևոր, որ հավատքով ապրեցինք, թե՞ 70 տարիները: Դարերով ապրել ենք և պիտի ապրենք. այս է մեր վճռակամությունը: Ես դրա համար եմ Կաթողիկոս եղել, որ հիշեցնեմ ձեզ, թե մենք պետք է վերաքրիստոնեանանք և այս վերաքրիստոնեացման մեջ տեսնենք մեր ազգային մեծությունը: Ո՞ր ազգը աշխարհում ունի 17 դարեր շարունակ քրիստոնյա ապրած լինելու պատիվը. մենք ունենք, բայց պատիվը պարտքով վճարենք: Ուրիշները տկարացրին մեզ, բայց մենք չենք կարող ինքներս մեզ տկարացնել: Հետևաբար, այս երեկո, Կեչառիսի վանքի այս ընքանչելի կառուցվածքի մեջ, ուր քարերը հավատք են խոսում, ուր քարերից հավատքն է մեր հոգիների մեջ ծորում, եկեք, եղբայրներ և քույրեր, վերահաստատվենք, վերապայծառանանք, վերահայանանք, մեր իրական դիմագծի

մեջ վերահարազատանանք և դառնանք մի այնպիսի ժողովուրդ, որ արժանի լինի Աստծու օրհնության և մեր պատմության հավերժագնաց ապագային, որ մեր աչքերի առջևն է՝ մեր հայրերից կտակված:

Եվ այժմ ես իմ սիրտը աղոթքի պատգի եմ ջանում վերածել՝ ասելու համար. «Ո՜վ Տեր երկնի և երկրի, Դու, որ մեր հայրերին հավատք ներշնչեցիր, Դու, որ այդ հավատքից քարեղեն այս տաճարը կառուցել տվեցիր, Ո՜վ Տեր երկնավոր, լցո ի հոգիս ապրողաց Հայոց զհայրաբար Քո կենդանի և կենդանարար: Թող Աստծու շունչն ու գիտակցությունը այս երեխաների մեջ լինի, որոնք այսօր ուրախացրեցին ինձ: Սպրե՛ք, ձեր հավատքի և Եկեղեցու կապվածության նշանն եմ տեսնում ձեր այս արարքների մեջ: Մնանք այսպես հավատարիմ մեր դարավոր Եկեղեցուն և թույլ չտանք, որ օտարները գան՝ մեզ քրիստոնեություն սովորեցնելու համար: Այս օրը մեզ համար թող դառնա մի տեսակ վերամկրտության օր, վերաճորոգման նոր ալիք, և Աստված օրհնի ձեզ ու այս երեխաներին»:

Հրազդան քաղաքում Նորին Սուրբ Օծությունը այցելեց Հանրապետության խոշորագույն գործարաններից «Հրազդանմեքենաս», որտեղ տնօրեն Թելման Տեր-Պետրոսյանի ուղեկցությամբ շրջեց արտադրամասերը, ծանոթացավ տեղում արտադրվող սարքավորումներին, հանդիպում ունեցավ աշխատավորների հետ և իր գոհունակությունը հայտնեց ողջ աշխատակազմին՝ ստեղծագործ և հայրենանվեր աշխատանքների համար:

Օրվա երկրորդ կեսին Աթարբեկյան գյուղի Ս. Աստվածածին եկեղեցում Վեհափառ Հայրապետը մասնակցեց երեկոյան ժամերգությանը և այցելեց Անիի Հովվի եկեղեցու նմանությամբ կառուցվող և համանուն ամուսնը կրող փոքրիկ մատուռ-եկեղեցին, ծանոթացավ գրեթե ավարտին հասցված աշխատանքներին, որից հետո, ուշ երեկոյան, մեկնեց Սևան:

ՍԵՎԱՆ. ԿՂԶՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔՈՒՄ

Հաջորդ օրը, առավոտյան, Սևանի կղզու Ս. Առաքելոց վանքում կատարվեց հանդիսավոր ժամերգություն՝ նախագահությամբ Վեհափառ Հայրապետի, մասնակցությամբ Գարեգին սրբազանի, Միքայել ծ. վարդապետի, Առաքել վարդապետի, Սևանի դպրանոցի սանների և ներկայությամբ հավատացյալների, որոնք արժանացան Հայրապետի օրհնության ու հայրական խրատներին:

«Սիրելի հոգևոր զավակներ, դպրանոցի սաներ, հարգարժան պարոն քաղաքապետ և սիրեցյալ հավատացյալ ժողովրդի զավակներ,

Բազում անգամներ ես առավոտյան ժամերգություններ եմ կատարել ու ժամերգությունների եմ մասնակցել. զգացել եմ, որ ամեն մի աղոթք՝ հասարակաց աղոթք, միասնական աղոթք, ավելի խոր ազդեցություն է թողել ինձ վրա և ներգործություն է ունեցել հոգուս մեջ, քան առանձնական, անհատական աղոթքը: Չգիտեմ ինչո՞ւ: Հոգեբանները կարող են բացատրել, որ երբ միասնական աղոթք ենք կատարում, հավաքական հոգեբանությամբ ենք բռնվում, այնպես, ինչպես մագնիսը: Հասարակաց աղոթքը ինձ համար եղել է կյանքի ամենահոգելից պահերից:

Վեհափառը Սեւան հաղարում



Սեւան խաղաքում: Հոգեհանգիստ զոհված ազատամարտիկների
հիշատակին կառուցված կոթողի մոտ

Սեւանա կղզում

Սեւանա կղզում. հավատացյալների հետ

Վեհափառը Սեւանի «Վազգենյան» դպրանոցի սաների հետ

Վեհափառ Հայրապետը նավով շրջում է Սեւանա լճի վրա

Ես երբեք չեմ կարող մոռանալ այն խոսքերը, որ ինձ ասաց մի հայ երեսփոխան Լիբանանից և նրան ընկերակցող մի այլ և օտար պետական անձնավորություն, ովքեր մի օր, երեկոյան, Սևանում էին եղել և այս եկեղեցում լսել էին ձեր երգած շարականները. նրանք ինձ ասացին. «Այդ պահը մեր ամբողջ այցելության բարձրակետը եղավ Հայաստանում»: Ինքնամփոփ, ինքնահայաց, ինքնաւոես այդ մթնոլորտում օտարն անգամ ազդվեց:

Հոգին կրոնական արտահայտության արտաքին ձևերին չի նայում: Օտարն անգամ Աստծու ներկայություն է զգացել ձեր երգած շարականների և կարդացած աղոթքների միջից՝ առանց մի բառ հասկանալու: Ինչո՞ւ, որովհետև Աստուծո ապրումը ավելին է, քան մենք բառերով կարող ենք արտահայտել: Մի ներաշնչական թափանցողություն է այնպիսի աստվածային գերաբնաշ ամենակարող զորության, որ մենք մեզ ճանաչում ենք այդ լույսով: Սրա համար այս առավոտ ես, որ իմ կյանքում առաջին անգամ գոնվեցի Սևանա այս կղզու վրա, դեպի երկինք բարձրացող Սուրբ Առաքելոց եկեղեցու այս կամարների ներքո, և ձեր շարականները ունկնդրեցի, մի անգամ ևս Աստծու ներկայությունը զգացի և փառք եմ տալիս, որ ձեր շրթերից հնչած շարականներով ու հոգուց բխած աղոթքներով մեր բոլոր հավատացյալներին էլ տրվեց Աստծու այդ ներկայության այդ անփոխարինելի զգացումը:

Այսօր երգեցիք հինգերորդ դարից եկող շարականներ: Մեսրոպ Մաշտոցի գրած «Ծով կենցաղոյս հանապազ գիս ալեկոծէ», «Մրրկեալ ալիք թշնամին ինձ յարուցանէ, Նաւապետ բարի, լեր անձին իմոյ ապաւէն», կամ «Մեղք իմ բազում են քան զաւազ ծովու»: Այս խորունկ բառերը հինգերորդ դարից այս կողմ, աշխարհի չորս կողմերը տարածված հայ եկեղեցիներում վերաբխում են մեր հոգու աշխարհում: Դուք նրանց նոր շունչ տվեցիք: Այդ շարականների մեջ, «Թագաւոր Յաւիտեան» բաժնում, մի տող կա, որ միշտ, երբ երգում ենք, ես դրանով եմ մտածում և դրանով եմ ներշնչվում: «Չի պատկեր եմք բարերարութեան Քո»: Մենք՝ մարդիկս, պատկերն ենք Քո բարերարության, ոչ թե բարության միայն, այլ՝ բարերարության: Աստծու ստեղծածը բարերարություն է. մեր բարիքի համար է այն: Աստված ստեղծեց ջուրը, հողը, բույսը, կենդանիներին, ստեղծել է այս աշխարհը բարությամբ և եղել է Բարերար, ամբողջ մարդկության համար բարյաց աղբյուր: Մենք ինչ էլ լինենք՝ Նրա բարերարության արդյունքն ենք:

Եթե մենք բարերար չլինենք, մենք ճշմարտորեն մարդ չենք լինի, որովհետև Աստծուն չենք նմանվի: Մենք մեր մեջ ունենք Աստծու ճառագայթը: Դրա համար է, որ հաղորդակցվում ենք Նրա հետ: Հետևաբար, բարիքը ինքն իր մեջ ամբողջական արժեք չունի, բայց երբ բարիքը վերածվում է ուրիշի համար վայելքի, ուրիշի համար օգուտի ու երջանկության, այն ժամանակ է, որ բարիքը բարերարությամբ արժևորված կլինի, ինչպես արևի ճառագայթը ճառագայթումով է, որ արժեք է ստանում: Մարդը եթե բարիք չանի, մարդ լինելուց կդադարի: Բարիքը տարբեր ձևերով է արտահայտվում: Շարականը երբ երգում ենք, բարիք է, որ մատուցում ենք մեր հավատացյալներին, Սվետարանի քարոզությամբ բարիք է, որ գործում ենք, մի հոդված ու գիրք գրելով բարերարություն է, որ թողնում ենք. ուրիշ մեկը գալիս և եկեղեցու գեղին ճշ է ավլում, բարիք է անում և այլն, և այլն: Ոչ թե ուրիշին փոքրացնելու և ինքդ քեզ բարձրացնելու ճանապարհով: Բարիքը մի վերածեք չարիքի: Ոչ մեկ չարագործ ու ոճրագործ չի արդարացվում, որովհետև դա խղճին դեմ է, որովհետև մեր խիղճը Աստծու ձայնն է և այն

կասի. «Ես բարիք գործեցի, աշխարհն ու ձեզ ստեղծեցի կյանք տալով ձեզ: Հիմա ձեզ մնում է, որ իմ արածը դուք էլ անեք»:

Սևանա կղզու որպես նրկնատաք երկու վառվող, բայց երբեք չսպառվող մոմեր այս օրերը ավելի ևս հրաբորբոք դարձան մաքրելու այն ժանտասիրմը, որով տարիների ընթացքում փորձել էին թաղել հայի թևածող հոգին: Ժամերգությունից հետո Հայոց Հովվապետը ուղևորվեց Սևան քաղաք: Ճանապարհին Վեհափառ Հայրապետը ծաղկեպսակ դրեց գոհված ազատամարտիկների շիրիմներին, խոնարհվելով իր հարգանքի տուրքը մատուցեց նրանց անմահ հիշատակին և միխթարանքի խոսք ասաց իրենց որդիների շիրիմներին այցի եկած ծնողներին և հարազատներին:

Սևան քաղաքում Վեհափառի ա՛յցելության կապակցությամբ ժողովուրդը հոգեբուխ իրական ցնծություն և բերկրանք էր ապրում: Այս քաղաքը իր արթուն հսկող և վեհաշուք վանքերով մի քանի Հայրապետների հոգևոր ծննդյան օրրան է եղել, սակայն այսօր ինքն էր վերածվում Ամենայն Հայոց Հայրապետ Գարեգին Ա-ի օրհնությամբ: Վեհափառը հերկա եղավ քաղաքի գրոսայգում կազմակերպված համերգ-հավաքին: Քաղաքային իշխանությունները Հայրապետի այցի կապակցությամբ կղզու Ս. Առաքելոց վանքին և Վազգենյան դպրանոցին հատկացրեցին հինգ հեկտար հողատարածություն՝ որպես արտահայտություն իրենց որդիական սիրո ու երկիրումի: Վեհափառ Հայրապետը Սևան քաղաքում եղավ նաև մանկապատանեկան գեղագիտական կենտրոնում, որ ծանոթացավ երեխաների ստեղծագործական ունակություններին և աշխատանքներին, այցելեց նաև քանդակագործ Հրաչիկ Կարապետյանի արվեստանոց, ապա հրաժեշտ տվեց սևանցիներին և մեկնեց Կամո:

ԿԱՄՈ ՔԱՂԱՔՈՒՄ

Կամո քաղաքի հրապարակում և Ս. Աստվածածին եկեղեցում, որտեղ կատարվեց երեկոյան ժամերգություն, Վեհափառ Հայրապետն իր հոգեշունչ քարոզներով հաղորդակից դարձրեց հարյուրավոր հավատացյալներին Հայ Եկեղեցու՝ դեպի փրկություն տանող քրիստոսավանդ ուղեքելությանն, ու ոգեշնչեց արժևորել և ծառայելով տերը լինել Խորեն Ա հանճարեղ Կաթողիկոսի մ՛տորնաօծ աջով օրհնված Աստվածապարգև իրենց եկեղեցու:

Կամո քաղաքում ավարտվեց Նորին Սրբության Սևանի տարածաշրջան կատարած հովվապետական այցելությունը: Վեհափառ Հայրապետը հաջորդ առավոտյան վերադարձավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԿԱՎԱԳ ԲՈՅԱՋՅԱՆ

Կաթոլիկ մուտքը

Վեհափառը Կամոյի հավատացյալների հետ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ
Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա-Ի ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ
ՎՐԱՑ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒՆ
ԵՎ
ՎԻՐԱՀԱՑՈՑ ԹԵՄԻՆ

Դիմավորում

Պատրաստված ըստ ռուսական բնագրի

ԺԱՄԱՆՈՒՄ

Սույն թվականի սեպտեմբերի 8-ին, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Բ-ի և Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գևորգ արքեպիսկոպոս Սերայդարյանի հրավերով, պաշտոնական և հովվապետական այցով Ս. Էջմիածնից Թբիլիսի մեկնեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ ուղեկցությամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանի, «Էջմիածին» ամսագրի գլխավոր խմբագիր Տ. Ասողիկ եպիսկոպոս Արիստակեսյանի, Մայր Աթոռիս միաբաններ Միքայել ծայրագույն վարդապետ Աջապահյանի, Սեպուհ վարդապետ Չուլջյանի, Բագրատ արեղա Գալստյանի և Կրոնից Գործոց Պետական Խորհրդի Նախագահ պարոն Լազար Սուջյանի:

Վեհափառ Հայրապետին Թբիլիսիի օդանավակայանում դիմավորեցին Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Բ-ն և Վրաց Եկեղեցու բարձրաստիճան հոգևորականները, փոխվարչապետ Թամազ Նադարաշվիլին, Վրաստանում ՀՀ դեսպան Լևոն Խաչատրյանը, Վրաստանի պետության ղեկավարի աշխատակազմի ղեկավար Պետրե Մամրաձեն, Թբիլիսիի քաղաքապետ Նիկո Լեկիշվիլին, Վրաստանի կառավարության, մտավորականության ներկայացուցիչներ, Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Գևորգ արքեպիսկոպոս Սերայդարյանը թեմի հոգևոր դասի և հայ համայնքի ներկայացուցիչների հետ, պետական-պաշտոնական այլ անձինք:

Օդանավակայանից վեհափառ Հայրապետը Իլիա Բ Պատրիարքի ընկերակցությամբ ուղևորվեց դեպի Վրաց Եկեղեցու **Սուրբ Սիոն** Մայր տաճար, որտեղ հանդիսավորապես դիմավորվեց և ընդունվեց տեղի միաբանության կողմից: Հայ և վրաց հոգևոր վեհապետերը միասնաբար աղոթեցին քույր Եկեղեցիների և հանրապետությունների խաղաղության համար:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ

Նույն օրը, ժամը 18.00-ին, Վեհափառ Հայրապետը Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան հայկական պետական դրամատիկական թատրոնում հանդիպեց մայրաքաղաքի **Սուրբ Գևորգ** և **Սուրբ Էջմիածին** եկեղեցիների կից կիրակնօրյա դպրոցների սաների և թբիլիսահայ հասարակայնության հետ: Այս հանդիպման ընթացքում արտասուչ հայտագրով հանդես եկան վարժարանների սաները: Հուզիչ էր հատկապես հանդեսի վերջին մասը, երբ Հայրապետական մաղթանքի հնչյունների ներքո փոքրիկները ծնրադիր խմբվեցին Վեհափառ Հայրապետի շուրջբոլորը և թարմ ծաղիկներ սփռեցին Հայոց Հայրիկի ոտքերի առջև: Այնուհետև, Վեհափառ Հայրապետը խոսքն ուղղելով հավաքվածներին, մասնավորապես շեշտեց քրիստոնեական հավաքսի ամրության անհրաժեշտությունը, հայոց լեզվի և մշակույթի անաղարտ պահպանման կարևորությունը և Հայ ու Վրաց Եկեղեցիների ու պետությունների բարեկամական ու եղբայրական հարաբերությունների առաջնայնությունը:

Ստորև հատվածաբար ներկայացնում ենք Վեհափառ Հայրապետի խոսքը.

«Սիրելի հոգևորական՝ արքազան, հոգեշնորհ, արժանաշնորհ եղբայրներ, հարգարժան ներկայացուցիչներ պետական իշխանությանց, սիրեցյալ և հավատացյալ զավակունք ազգիս հայոց, որք ի Վրաստան՝ ի Թիֆլիս մայրաքաղաք, և սիրասուն ու թանկագին, արտահատոր փոքրիկներ,

Այսօր իմ կյանքը լցվեց: Լցվեց Աստուծո Հոգով և մեր ազգի հոգով: Սա իմ կյանքի մեջ առաջին անգամն է, որ ես ոտք եմ դնում Վրաստանի օրհնյալ և Հայաստանից անբաժան երկրի հողի վրա: Ոտք դնելով նվիրական այս հողին, ես եղբայրական քաղցր սիրով ողջագուրվեցի Համայն Վրաստանի Պատրիարք և իմ հոգևոր եղբայր Իլիա Բ-ի հետ: Եղբայրական այդ ողջագուրումից հետո սա իմ առաջին հանդիպումն է մեր հայ ժողովրդի թիֆլիսաբնակ զավակներին: Ես շատ այցելություններ եմ տվել ոչ միայն մեր Մայր Հայրենիքում՝ Հայաստան աշխարհում, այլև աշխարհում սփռված մեր ժողովրդի զավակներին: Ամեն տեղ գնացել եմ և արևի լույսի ներքո ուրիշ արև եմ տեսել: Այդ արևը մեր ժողովրդի աչքերն են եղել և, մանավանդ, այս փոքրիկների աչքերը: Լսել եմ ձայները մեր լեզվի, արձագանքները երկնաբնակ Սուրբ Մեսրոպ Մաշտոցի պատգամի՝ այսպիսի երեխաների թարմաշունչ արտահայտությունների միջից: Այս օրը իմ կյանքում բացվեց մեր երեխաների աչքերի լույսով: Առհասարակ, երբ գնում եմ հովվապետական այցելության, նախ հանդիպում եմ պաշտոնական անձանց, բայց այսօր, ձեզ հանդիպելուց առաջ, ձեր երեխաներին հանդիպեցի: Սա ինձ համար հատուկ նշանակություն ունի: Նրանց երգերը, նրանց արտասանությունները, նրանց ձայնի թարմությունը և քաղցրությունը ինձ վերածորոգեցին, երիտասարդացրեցին և մի քիչ էլ «նախանձ» շարժեցին: Երբ նրանք երգում, արտասանում, ճովողում էին թռչնիկների նման, ես հարց էի տալիս ինձ և Աստծուն. ո՞վ Տեր, ինչո՞ւ այսքան շուտ ծերացրեցիր ինձ, որ ես էլ այստեղ նրանց հետ այս բեմի վրա չեմ Հիսուսի սիրած փոքրիկների նման: Երբ կարդում ենք Ավետարանը, տեսնում ենք, որ Հիսուսի համար ամենասիրելի էակները եղան փոքրիկները: Մի օր, երբ նրանք ցանկանում էին մոտենալ Տիրոջը, առաքյալները արգելեցին: Հիսուս սաստեց

նրանց՝ ասելով. «Թույլ տուք մանկտույդ գալ առ իս», որովհետև նրանցն է երկնքի արքայությունը (Մարկ. ժ 14): Հիսուս ասաց, թե ով որ մի փոքրիկ երեխայի կգայթակղեցնի, թող իր պարանոցից մի երկանաքար կապի և իրեն ծովը նետի: Այդքան նվիրական են այս երեխաները և կյանքին են բացվում ծիլի ու ծաղկի նման: Եթե ուզում եք ծառ և պտուղ դառնան, հոգ տարեք, խնամք տարեք այս երեխաներին, որոնք ծիլերն են կյանքի:

Ես հիմա ձեզ եմ ուղղում իմ խոսքը, սիրելի երեխաներ. մենք իրար հետ խոսենք: Այսօր դուք այնպիսի գեղեցիկ գործ կատարեցիք, որ ես ձեզ երբեք չեմ կարող մոռանալ, և սեպտեմբերի 8-ը իմ կյանքի մեջ կգրվի «թիֆլիսահայության օր»: Եվ ոչ միայն թիֆլիսահայության օր, այդպես չոր ու ցամաք, այլ մեր հայ կյանքում երեխաների կարկաչումի օր: Այնպես, ինչպես առվակն է կարկաչում, այնպես էլ ձեր ձայնը այսօր լցվեց հայության կյանքի համերգի մեջ: Փառք Քեզ, Տեր, հազար անգամ փառք Քեզ, որ այս օրը տվեցիր մեզ:

Ես ձեզ մի պատմություն պիտի պատմեմ, որը երբեք չմոռանաք: Եթե լսել եք այն, մի անգամ ևս ականջալուր եղեք, իսկ եթե չեք իմացել, այսօր լսեցեք: Մենք էլ դրսում արտասահմանում ծնված լինելով, գիտեք ինչու սովորեցինք հայերենը, որովհետև մեր ծնողները իրենց ժպիտի, իրենց տըված կաթի և հացի հետ մեր լեզուն տվեցին մեզ: Ահավասիկ այդ սիրուն և ներշնչող պատմությունը. Աշխարհում մի անապատ կա Տեր-Զոր անունով: Սրանից 80 տարիներ առաջ ավելի քան 600.000 հայ զոհվեց այդ անապատում: Այնտեղ մի մայր կմախացած վիճակում, օրերով իր բերանը մի կտոր հաց չդրած և մի ումպ ջուր չխմած, գրկում ունենալով իր երեխային, մահանում էր: Մահանալուց առաջ նա ավազի վրա իր չորացած ձեռքով գրեց Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Է, որպեսզի երեխան իր աչքերի միջից չկորցնի այբբենգիմի տեսիլքը: Այդպես մահացավ նա ու այդպես ապրեցրեց իր երեխային: Այդպես ապրեց և մեր ազգը: Ամենամեծ ուժը մեր ինքնության, մեր ով լինելու, աշխարհում ուրիշ ազգերի մեջ ինչպես լինելու դիմագիծը մեր լեզուն է:

Երեխանե՛ր, դուք Վրաստանի եղբայրական երկրում եք ապրում և վրացերենը մայրենի լեզվի պես պիտի սովորեք: Բայց այդ լեզվի կողքին պիտի ճիգ թափեք, պատիվ զգաք, մեծություն ու երջանկություն զգաք ձեր մայրենի լեզուն սովորելու: Եվ եթե ձեր նման մեր ազգի երեխաները հայոց լեզուն սովորեն, այն ժամանակ մեր ժողովրդի կյանքը հավերժագնաց կձգվի դեպի անմահություն՝ մահը չի այցելի մեզ: Անհատներս կմահանանք, բայց ո՛չ՝ ազգը: Այդ պատճառով, երբ տեսա ձեր այս վկայությունը, իսկապես հրճվեցի և զորացա: Ես տեսնում եմ, որ ձեր ծնողները և այս հոգևորականները ևս նախանձում են ձեզ, որովհետև հիմա եթե հարկ լինի, այբբենգիմը ձեզ նման չեն կարող ասել: Բայց նրանք այբբենգիմը սովորելով մեծացան և ձեզ սովորեցնելով պատիվ են գտնում»:

Խոսքն ուղղելով հավաքված բազմահայերին, Վեհափառը շարունակեց.

«Այսօր՝ այս առաջին հանդիպմանը, ես ուզում եմ հայրապետական գըլխահայտանք հայտնել ձեզ, որ այսպես համախումբ կերպով այս երեկո հավաքվեցիք ողջունելու ձեր Սուրբ Եկեղեցու հոգևոր պետին, որ իմ տկար վաքվեցիք ողջունելու ձեր Սուրբ Եկեղեցու հոգևոր պետին, որ իմ տկար անձն է այս ժամանակահատվածում: Աստված լուսավորի և երջանկացնի

վազգեն Ա երջանկահիշատակ Կաթողիկոսի հոգին: 39 տարիներ ևս այս ցուպը կրեց. այսօր այդ լուծը փոխանցվել է ինձ և իմ հոգևոր եղբայրների հետ տանելու եմ այն: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից եկել եմ ձեզ հայտնելու, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ով որ էլ լինի, պետք է Ամենայն Հայոց Կաթողիկոս լինի բոլո՛ր հայերին և ոչ թե Էջմիածնի և Երևանի հայությանը:

Եղբայրներ և քույրեր, այսօր մենք անցնում ենք մի վճռական, դարձակետային, հեղաշրջող պատմական գործընթացի միջից: Այս օրը երբեք չի ճամանվելու ուրիշ օրերի. այս օրը անկախ Հայրենիք, ազատ ու անկախ պետականություն կառուցելու օր է և՛ Հայաստանի, և՛ Վրաստանի համար: Սրանից 10 տարիներ առաջ դուք կարող էիք ասել, թե ինչ որ անում էինք, մեր կամքով չէինք անում, բայց այսօր դուք եք տերը ձեր ճակատագրի և այլևս ոչ ոքի չեք կարող մեղադրել: Մենք ենք որոշողը, մենք ենք գործադրողը, տերը լինենք մեր անկախության և նրա արժեքը լիովին ըմբռնենք. ևս մեզանից զոհողություն է պահանջում: Ես չեմ եկել ձեզ համար վարդեր ցանելու: Ո՛ր մեկ երկրի անկախությունը դժվարությամբ չի կայացել: Հեշտագնաց, հեզասահ ճամփա չէ անկախ ապրել ուզող ազգի կյանքը:

Այս օրերին յուրաքանչյուրը թող իմանա պատասխանատվության բարձրագույն աստիճանով, թե ինչ է իր պարտքն ու բաժինը, որովհետև ազգակերտումը բոլորիս հավաքական և միասնական գործն է: Մենք պետք է սովորենք գերագույն դասը, այն է՝ ներդաշնակ, խաղաղ, լծակցական ոգով և ճիվիրումի, զոհողության գիտակցությամբ ձեռք-ձեռքի տանք մեր ազգի առողջությունն ու մեր Հայրենիքի տոկունությունը, մեր նորաստեղծ անկախ պետականությունը ամրացնելու համար: Աստված է տվել մեզ այս առիթը: Բայց մենք պարտավոր ենք արժանի լինել նրա շնորհին: Հայի գործն է կառուցելը: Մի մեծ պատմաբան՝ բյուզանդագետ, ասել է. «Հայ ազգի անունն է կառուցողների ազգ»: Կառուցել ոչ միայն քարի մեջ, այլ կառուցել մարդկային կյանքի մեջ: Կյանքը կերուխում չէ: Կյանքը ա՛յս է, միասին մեր այստեղ լինելը, մեր մշակույթը, տաճարները, մանրանկարները, երաժշտությունը, մի խոսքով՝ մեր ինքնաբուխ հայության բարձրությունը: Պատրա՞ստ եք այդ բարձրությանը, որպեսզի ազգ կլինեք:

Ազատության այս շրջանին եկեք բոլորս էլ կերպարանափոխվենք: Թողնենք այն, ինչ որ էինք երեկ, և լինենք այն, ինչ որ Աստված կցանկանա Իր Սուրբ Ավետարանի և Իր Եկեղեցու՝ մեզ ուսուցանած ճշմարտություններով: Մեր կյանքը կաղապարենք Քրիստոսի հավատքի պատգամներով՝ հայոց լեզվով, հոգով ու մշակույթով արտահայտված:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԻԼԻԱ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀԵՏ

Երեկոյան ժամը 19.00-ին Վեհափառ Հայրապետը և Իր գլխավորած պատվիրակությունը Համայն Վրաստանի Պատրիարքի Աթոռանիստում հանդիպեցին Նորին Սրբություն Իլիա Բ-ի հետ: Հանդիպմանը ներկա էին նաև Խորհրդարանի խոսնակ Վախթանգ Գոգուաձեն, հոգևոր դասի և կառավարության ներկայացուցիչները: Այստեղ երկու Հայրապետներն էլ կարևորեցին քույր Եկեղեցիների միջև փոխադարձ հասկացողությամբ և աջակցությամբ Եկեղեցու առաքելության և ավելի ևս ներտացման հրամայականը: Քննարկվեցին նաև հիմնախնդիրներ՝ կապված համագործակցության և միջ-

Կիրակոս Խոլոպովի վաղգիհ

Երկու հովվապետներն Մծխեթիի վանքում

եկեղեցական փոխհարաբերությունների հետագա ամրապնդման և զարգացման հետ: Այս առիթով Վեհափառ Հայրապետին ողջույնի խոսքեր հղեց նաև Խորհրդարանի խոսնակ Վ. Գոգուաձեն: Նա ևս իր հերթին արժևորեց Եկեղեցու դերը Հայաստանի և Վրաստանի Հանրապետությունների փոխհամագործակցության մեջ, նոր պայմանների՝ անկախության և տնտեսական բարեկարգության այս դժվարին ժամանակամիջոցում:

Հանդիպման ավարտին Համայն Վրաց Պատրիարք Իլիա Բ-ն, որպես երբայրության առհավատչյա, հուշանվերներով պատվեց Վեհափառ Հայրապետին և Նորին Սուրբ Օծության ընկերակցող շքախմբի բոլոր անդամներին:

Ժամը 20.30-ին շուրջ մեկ ժամ երեսուն րոպե տևած ջերմ հանդիպմանը հաջորդեց Վեհափառ Հայրապետի այցելությունը Մետեխի տաճարը, որտեղ ամփոփված են Սուրբ Շուշանիկ վկայուհու հիշխարները: Այստեղ բարեխոսական աղոթքով և արբուհու գերեզմանի առջև հարգանքի խոնարհումով էլ ավարտվեց Նորին Սուրբ Օծության այցելության առաջին օրը:

ԱՅԼ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաջորդ օրը, սեպտեմբերի 9-ին, Վեհափառ Հայրապետը Իլիա Բ-ի ընկերակցությամբ մեկնեց Թբիլիսիից քիչ հեռու գտնվող **Մցխեթի** քաղաք, որտեղ այցելեց հնագույն և պատմական Սվետիցխովելի Պատրիարքական տաճար, Սամթավրո կուսանաց վանք և Ջվարի (Խաչ) մենաստան: Այս երեք տաճարներում էլ աղոթք մատուցվեց և՛ հայարեն, և՛ վրացերեն լեզուներով ու հոգևոր երգերով՝ որպես խորհրդանիշ և վկայություն ի Քրիստոս մի լինելու եղբայրության ճշմարտության:

Այնուհետև պատվիրակությունը ուղևորվեց **Գորի**, և քաղաքի մուտ գրանցվող Սամթավիսի գյուղում երկու Հայրապետները աղոթք մատուցեցին տեղի հրաշագեղ եկեղեցում, ապա այցելեցին քաղաքային թանգարան, իսկ կեսօրին, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, քաղաքային իշխանությունները կազմակերպեցին շքեղ ընդունելություն և հյուրասիրություն: Այնուհետև պատվիրակությունը վերադարձավ Թբիլիսի:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՆ

Երեկոյան ժամը 19.00-ին Վեհափառ Հայրապետն ուղևորվեց Հավլաբարի Սուրբ Էջմիածին եկեղեցի, որտեղ խոնված հավատացյալ հայորդիների բազմությունը մեծ հուզմունքով, արտասուքի անհամբերությամբ իր մեջ ներփակեց Հայոց Հովվապետին:

Այստեղ «Հայրապետական մաղթանքից» հետո, թեմի բարեխնամ առաջնորդ Տ. Գևորգ եպիսկոպոս Սերայդարյանը ողջույնի և բարիգալըստյան խոսքով հրավիրեց Վեհափառ Հայրապետին իր հայրական պատգամն ու օրհնությունը բաշխելու Վիրահայոց հավատավոր ժողովրդին: Իր խոսքում Վեհափառ Հայրապետը հատուկ կերպով անդրադարձավ երկու եղբայր՝ հայ և վրաց ժողովուրդների բարեկամությանը, որը պատմանն ու հիմնաքարն է երկու Եկեղեցիների և պետությունների ամրության և միասնական բարգավաճման: Այնուհետև Նորին Սուրբ Օծությունը պարզեց Վրաստան այցելության նպատակը, որ է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը և նրա

միջից Աստուծո խոսքը թարգմանել և Հայոց առաքելահիմն ու լուսավորչահաստատ հավատքը վերարծարծել և կենդանացնել Հայրենիքից և Սուրբ Էջմիածնից միակ աշխարհագրականորեն հեռու գտնվող հայ գավակների հոգիներում.

«Սիրելի հոգևոր եղբայրներ և թանկագին հավատացյալ գավակներ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու, որ ապրում եք այստեղ՝ Վրաստանի օրհնյալ հողի վրա, հատկապես Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսում,

Ահավասիկ անցան 24 ժամեր այն պահից, որ ես ոտք դրեցի Վրաստանի հողի վրա: Այսօր առաջին անգամն է, որ գտնվում եմ մեր Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կամարների ներքո և աղոթակից եմ դառնում ձեզ հետ: Իմ հոգում ծնկի եմ գալիս փառք տալով Աստծուն, որ ինձ շնորհեց այս հոգևոր պահի առիթը մեր ներքին աշխարհում Աստված զգալու, Քրիստոսի ներգործությունը ունենալու և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ներկայությունը ապրելու գեղեցկագույն պահը: Մարդ արանից ավելի ինչ գեղեցկություն կարող է երևակայել, երբ իր ժողովրդի հետ միասին հանդիպում է Աստծուն Սուրբ Էջմիածնի ճանապարհով: Ապրեք, հազար ապրեք, գավակներ հայոց ազգի, այսպիսի հավատարմությամբ՝ հանդեպ մեր Առաքելական Մայր Եկեղեցու և հանդեպ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի:

Սիրելինե՛ր, ես Վրաստան եկա հատկապես Մեր սիրեցյալ եղբոր՝ Համայն Վրաց Եկեղեցու հոգևոր այեռի՝ Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարքի հրավերով և նաև ձեր առաջնորդ Սրբազանի և թեմական խորհրդի հաճախակիորեն կրկնված հրավերներով, որպեսզի կարողանամ առաջի պատմության և առաջի գալոց տարիներին և սերունդներին ասել՝ գործնական կյանքով ասել և ոչ թե սոսկ խոսքով, որ մենք միասին ենք տանելու Քրիստոսի սուրբ առաքելությունը այս ողջ տարածաշրջանում՝ Հայաստանում և Վրաստանում՝ միմյանց հետ եղբայրական սերտ գործակցությամբ: Եվ դուք այստեղ՝ Վրաստանում ապրելու եք այն նույն քրիստոնեական հավատքը, ինչպես ձեր եղբայրները ապրում են Մայր Հայրենիքում՝ Հայաստանում, և ամբողջ աշխարհի չորս ծագերում:

Առաջին անգամ եմ հանդիպում ձեզ, բայց չգիտեմ ինչու, կարծեք թե ճանաչել եմ միշտ: Ոչ մեկիդ դեմքը չէի տեսել, բայց ձեր բոլորի միջից երևացող մեր ընդհանրական դեմքը՝ հայի դեմքը, այսօր տեսնում եմ, կարդում եմ ձեր անհատական, անձնական դեմքերի միջից: Մենք ունենք մեկ պատկանելություն, որն է՝ պատկանելությունը Հայաստանյայց Եկեղեցուն և մեր Հայրենիքին: Ամեն մեկը մեզնից իր անձնական պատմությունը, կյանքը ունի, բայց բոլորս միասին մեկ պատմություն ունենք, որը պատկանում է ոչ ինձ և ոչ էլ ձեզ, այլ բոլորիս: Եվ դրա մեջ է մեր ինքնությունը, մեր արժանապատվությունը և մեր ուժը: Եթե ընդհանուրիս պատկանող ուժերը պակասեն մեր մեջ, ինչ էլ լինենք, անհատապես ոչինչ ենք: Ընդհանրությամբ ենք այն, ինչ որ ենք: Համայնությամբ ենք միայն զորավոր. և մեր Եկեղեցին այն մագնիսն է, որ իրար է կապում ողջ հայությանը՝ որտեղ էլ որ ծնված լինենք:

Աշխարհագրությունը չափվում է նյութական չափերով, սահմաններ են գծվում, որոնք մարդկային պատմությանն են պատկանում, բայց մեկ այլ «աշխարհագրություն» կա, որ սահման չունի՝ հավատքն է այդ, լեզուն և

գրականությունը: Սուրբ Մեսրոպ Մաշտոցը Հացեկաց գյուղի՞ն է պատկանում՝ նա ծնվել է այնտեղ, բայց իր գիրը այսօր ինձ, ձեզ և աշխարհի չորս ծագերում ապրող հայության է պատկանում: Կամ վարդանը Ավարայրի դաշտի՞ն է պատկանում՝ նա մեռավ այնտեղ, բայց իր հավատքի ուժը և Հայրենիքի ու հավատքի համար մեռնելու կամքը հավերժորեն բոլորիս է պատկանում՝ և ոչ միայն այսօր, և ոչ միայն վաղը: Այսպիսի ուժերն են ազգերին մեծ դարձնում: Մեր այս ուժը Սուրբ Էջմիածինն է, մեր Սրբության Սրբոցը, որտեղ Աստված այցելեց մեր Հայոց Երկիր, որ երկրորդ Բեթղեհեմ է մեզ համար: Աստված Ինքը ցույց տվեց Հայոց եկեղեցու տեղը, ինչպես և Սուրբ Մեսրոպ Մաշտոցի աչքերի մեջ ցույց տվեց Այբ, Բեն, Գիմը: Եվ ի՜նչ խորհուրդ է սա, որ հայ ժողովուրդը իր եկեղեցին ու գիրը երկընքից է ստացել ու այդ գիտակցությամբ ապրել, և հետևաբար, այն չպետք է եղծվի երկրի վրա, որովհետև երկնայինն, հավերժականն է: Մարդիկ երբ նրանցով ապրեն՝ մահ չեն ունենա: Մենք պետք է լինենք նորոգված, կերպարանափոխված ժողովուրդ:

Եղբայրներ և քույրեր, եթե եկեղեցու սա ջահը միշտ առանց սրբելու մնա՝ կփոշոտվի: Ես եկել եմ Սուրբ Էջմիածնի ավելով՝ ձեր հոգիների միջի փոշին սրբելու: Մարդ ենք, սայթաքումներ ու թերացումներ կունենանք և մեղքեր կգործենք. սխալվելը մարդկային է, բայց սխալով ապրելը անմարդկային է: Պետք է մաքրվենք, բյուրեղանանք ու նորոգվենք բնության օրինակով. աշնանը ամեն ինչ խամրում է, բայց գարնանը վերստին կենդանանում: Եվ գարուն է այսօր մեր աշխարհում ազատ-անկախ պետականությամբ. այդ մեծ օրվա գավակներն եք դուք:

Ես ցանկանում եմ, որ Աստված ձեր մեջ իջեցնի Սուրբ Հոգու ներգործությունը, և ձեզանից ամեն մեկը աղոթք դառնա իր հոգու մեջ և ասի. ո՜վ Տեր, ինձ արժանի արա Քո հավատքին, Քո անմահությանը, որ արտահայտվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնով և մեր ողջ հոգևոր ժառանգությամբ: Մենք եթե այսօր ունեցանք մեր ազատ ու անկախ Հայրենիքը, պետք է նորոգված ժողովուրդ լինենք և ըստ այնմ ապրենք:

Արտաքին փոփոխությունը ոչ մի նշանակություն չունի, այլ կարևորն այն է, թե մենք ինչպես ենք վերաբերվում. եկեղեցին այս արտաքին զարդարանքն ու հարդարանքը չէ, այլ՝ մեր հոգին է: Երբ նրա մեջ հավատքն ու աղոթքը կենդանի են՝ մենք Աստծու տաճար կլինենք, և եթե ունենք այդ հավատքը՝ քարին էլ եկեղեցու կերպարանք կտանք, բայց եթե չունենանք՝ ինչո՞վ պիտի շինենք մեր եկեղեցին: Հավատքն ու հոգեկան ապրումն են եկեղեցին: Մեր ժողովուրդը մնացել է այդ հավատքի արտահայտությունը եղող այն ժողովուրդը, որի համար Ավետարանն ասում է՝ «ժողովուրդ ընտիր»՝ Աստուծո ընտիրն: Ի՞նչ է նշանակում ընտիրն, այսինքն՝ պատկանում ենք Աստծուն: Եթե Աստծուն ենք պատկանում, ուրեմն դրա համաձայն պետք է ապրենք: Այս գավազանը կարող է լինել մի սովորական գավազան, բայց եթե երբեք այս գավազանը բռնել է Խրիմյան Հայրիկը, այդ գավազանը ուրիշ է՝ նրա անհատական դրոշմը կա մեջը: Այսպես էլ Աստուծո դրոշմը կա մեր մեջ՝ Սուրբ Էջմիածինն է այդ կնիքն ու դրոշմը, և մենք Սուրբ Էջմիածնի կնիքով պետք է մնանք ընտիրն Աստծուն ու Մայր Առաքելական Սուրբ Եկեղեցուն:

Այսօր ես եկել եմ Սուրբ Էջմիածնից՝ ասելու համար ձեզ, որ դուք ճիշտ թափեք, ջանք չխնայեք, եկեղեցու մեջ ձեր ներկայությունը շարունակական դարձնեք և ոչ թե պարագայական և պատահական: Այսօր եկել եք, հազար

բարի, բայց եթե հաջորդ կիրակի դասարկ պիտի լինի եկեղեցին՝ որեմն մենք թերացել ենք: Եկեղեցին պետք է որ ձեր շարունակական այցելությամբ կենդանի դառնա. դրա համար է, որ հաճախ ասել եմ մեր Եկեղեցին ուժեղ է ոչ թե միայն իր պատմական ժառանգությամբ, ոչ թե հինուց, անցյալ դարերից եկած եկեղեցիներով, այլ իր կենդանի՛ հավատքով: Մենք ի՞նչ արժանիք ունենք, եթե մեր հայրերը չորրորդ դարում Էջմիածին են հիմնել, մենք ի՞նչ արժանիք ունենք, եթե յոթերորդ դարին Սուրբ Հռիփսիմե եկեղեցին են շինել, մենք ի՞նչ արժանիք ունենք, եթե սրանից ոչ հեռու՝ Ալավերդու շրջանում Սուրբ Սանահինի ու Հաղբատի վանքերն են շինել մեր հայրերը. մեր արժանիքը ի՞նչ է դրա մեջ. նրանց արյածով հպարտանա՞լ, բայց այդ բավական չէ, այլ մե՞նք ինչ ենք անում այսօր: Նրանք արել են, Աստված կընդունի նրանց արյածը, նրանք մեր գովասանքի կարիքը չունեն՝ Աստված նրանց կվարձատրի, բայց մենք պետք է որ նորոգվենք ու զորացանք հոգով, զոհողության կամք ունենանք մեր մեջ: Հեշտ կյանքը, դյուրին կյանքը, հաճոյական կյանքը պատկանում է նաև ուրիշ էակների. բույսերն էլ հաճոյանում են, երբ ջուր ես տալիս իրենց, կենդանիներն էլ հաճոյանում են, երբ խոտ են ուտում: Ճիշտ է, որ մենք էլ ենք անուրդ առնում, բայց «կե՛ր, ա՛րբ և ուրախ լեր»-ով կյանք կլինի՞: Այդպիսի կյանքը ո՛չ մարդկային է, ո՛չ կրոնական և ո՛չ էլ քրիստոնեական, այլ մշակույթով, հավատքով, եկեղեցիով, գրով ու գրականությամբ պիտի իրագործվի ու ճոխանա մեր կյանքը: Այդ բոլորը դո՛ւք պիտի անեք: Վրաստանի այս օրհնյալ հողի վրա պիտի ապրեք այդ քրիստոնեական հավատքը, և ձեր վրացի քույրերն ու եղբայրները պիտի տեսնեն, որ ձեր հավատքը անցյալի հավատք չէ, այլ այսօրվանն է, դեպի վաղը գնացող, որով օրհնյալ եք և օրհնյալ լինեք հավիտյանս հավիտենից. ամեն»:

ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ

Սեպտեմբերի 10-ին, կիրակի, Վիրահայոց թեմի **Սուրբ Գևորգ** Մայր Եկեղեցում Վեհափառ Հայրապետը մասնակցեց սուրբ և անմահ պատարագի: Պատարագիչն էր Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանը:

Հընթացս սուրբ պատարագի քարոզեց և Հայրապետական օրհնություններն բաշխեց Վեհափառ Հայրապետը՝ շեշտելով, թե որքան ժամանակ մարդու մեջ կենդանի են աստվածային հավատքը, հույսը և սերը, պիտի անապարտ մնա Աստծու պատկերը նրա հոգում և ավելիով պիտի փայլի և պայծառանա հաստարակության ներքին կյանքը՝ լուսավորված Աստուծո անմար ջահով, որի ցոլքերը հարատև, առանց խցանումի ափոում են այդ երեք առաքինությունները՝ հավատքը, հույսը և սերը:

«Սիրելի հոգևոր եղբայրներ, հարգարժան ներկայացուցիչներ Վրաստանի պետության հայ համայնքի և Համայն Վրաստանի հոգևոր պետի՝ Նորին Սրբություն Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարքի՝ հանձին Աբրահամ Սրբազանի, և թանկագին հավատացյալներ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու,

Այս օրը իմ կյանքում անջնջելիորեն հիշատակելի օր պիտի մնա: Այս օրը ինձ համար երջանկագույն օրերից մեկն է, երբ ես գտնվում եմ պատմա-

Երիտասարդ Ս. Գևորգ եկեղեցուն պատարագի ընթացքում

Վիրախոյզ բեմի աջակողմյան Տ. Գեւորգ եկեղեցուն շինարարական աշխատանքները տեղւոյն

կանորեն այնքան հարուստ և այնքան պերճախոս Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսում՝ Սուրբ Գևորգ պատմական եկեղեցու կամարների ներքո, քանզի այն, ինչ որ իմ պատանի օրերից, դպրոցական տարիքիս արտասանում էի Թիֆլիսում գրված բանաստեղծություններ, կարդացել էի Թիֆլիսի «վերնատան» մասին, հանդիպել էի ու խոնարհաբար աշակերտել նաև այստեղ գործած Գարեգին Ա. Հովսեփյան Կաթողիկոսին, և ամբողջ Թիֆլիսը իբրև այդ ժամանակաշրջանի հայ մշակույթի հուշարար ու ստեղծագործության վկա, որպես հայ մշակույթի կենտրոններից մեկը, այսօր իմ աչքերով եմ տեսնում և փառք տալիս Աստծուն, որ ինձ արժանի դարձրեց տեսնելու այս քաղաքը և այստեղի հայ գաղութը, որը կենսունակ է և ոչ թե միայն «դարո՜ւց-դարո՜ւց հիշատակ»:

Դուք անցյալի ժառանգ չեք միայն, այլ ներկայում ապրող և դեպի ապագա նայող ժողովուրդ եք: Պատմությանը մոտեցեք որպես ներշնչման աղբյուրի և ոչ թե միայն մխիթարության առիթի: Այնպես մի ասեք, թե մեր հայրերը այսպես են արել, և մենք այսպիսի մեծ մարդիկ ենք ունեցել: Այդ անցյալ եղանակը փոխեք: Ի՞նչ ենք այսօր և ի՞նչ ենք լինելու վաղը: Դա է այսօր էականը:

Ես գալիս եմ մեր սրտերում հավերժորեն ներկա Սուրբ Էջմիածնից՝ հիշեցնելու համար, թե Սուրբ Էջմիածինը պատմական եզակի կենտրոնն է Հայաստանյայց Եկեղեցու և հույսի աղբյուր է ձեզ համար և ոչ թե պատմության սոսկ հուշարար: Մենք այսօր այս եկեղեցում փառք ենք տալիս Աստծուն, որ թե՛ Վրաստանին և թե՛ Հայաստանին ազատություն և անկախություն շնորհեց, այսինքն մեր ժողովուրդներին տվեց այն, ինչ մենք ցանկանում էինք: Փառք Քեզ, Աստված, որ այդ առավոտը վերստին ծագեցրիր մեր Հայոց աշխարհի վրա:

Այսօր, սիրելի հավատացյալներ, որպես ճորընտիր Ամենայն Հայոց Կաթողիկոս, այս Սուրբ Խորանի վրա, ձեր առջև, հարգանք եմ ընծայում իմ երջանկահիշատակ նախորդին՝ Նորին Սուրբ Օծություն Տեր Տեր Վազգեն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսին և բոլոր նրանց, ովքեր ինձնից առաջ այս լուծը կրել են իրենց ուսերին. նաև հարգանք բոլոր այն առաջնորդներին Վիրահայոց թեմի, ովքեր գործել ու Աստծու խոսքն են քարոզել ձեզ՝ զԱստված թարգմանելով ու մեր հայրերին վերապրեցնելով ձեր կյանքերի մեջ:

Սիրելի հավատացյալներ, այսօր իմ կրոնական խոսքի համար ես ընտրել եմ երեք բառեր, որ վերցված են մեր Եկեղեցու երեկոյան ժամերգության աղոթքից, որը այս օրերին գրեթե մոռացվել է մեր ժողովրդի հիշողությունից. «Յաւել ի մեզ, Տէր Ամենակալ, զհաւատս, զյոյս, զսէր եւ զամենայն գործս առաքինութեան»:

Երեք բառեր՝ հավատք, հույս և սեր: Սրանք ճանաչվել են ամբողջ քրիստոնեական աշխարհի մոտածողության մեջ որպես գերագույն երեք առաքինությունները մարդկային կյանքի: Սրանց վրա է հիմնված մարդկային կյանքը. հանեցեք հավատքը, դուրս թողեք հույսը և վանեցեք սերը՝ մահ կդառնա կյանքը: Սերը, հույսը և հավատքն են իմաստ ու ստեղծագործություն տալիս մեր կյանքին: Հավատքը այն գիտակցությունն է, թե մեզնից վեր մեզ ստեղծող մի ուժ կա՝ Աստված, թե մենք մեր գոյությունը և այս ամբողջ տիեզերքը մեր ձեռքով չենք շինել, այլ Աստված է տվել մեզ, որպեսզի մենք ապրենք և շահեցնենք միայն երջանկության և բարիքի հասնելու համար: Հավատքը այն գերագույն ուժն է, որ մարդուն սեփական անձից այն

կողմ ու վեր՝ Աստծուն, ընդհանուր մարդկության և մեր պարագային՝ հայ ժողովրդի ու Եկեղեցու հետ է կապում: Հավատքը այն ուժն է, որ երբ մարդկային բոլոր ուժերը սկարանում են, այն մեզ կենսունակություն է տալիս: Այն խոսքը, որ վարդանանք արտասանեցին Ավարայրի ճակատամարտից առաջ, երբեք չպետք է բացակայի մեր երիտասարդների ու երիտասարդուհիների շրթներից. «Յայսմ հաւատոց մեզ ոչ ոք կարէ խախտել՝ ո՛չ հրեշտակք երկնից եւ ո՛չ մարդիկ, ո՛չ սուր, ո՛չ հուր, ո՛չ ջուր եւ ո՛չ գինչ եւ են դառն հարուածք»:

Երբ հավատքը կենդանի է մարդու հոգում, նրա կյանքը այդ հավատքի ուղղությամբ, ուղղվածությամբ ու թելադրությամբ է ապրվում: Ձեր ամենօրյա կյանքը Աստծու հանդեպ ձեր ունեցած հավատքի ցոլքը պիտի լինի: Եթե դուք իբրև մարդիկ և իբրև քրիստոնյա հայեր չեք կարող իրար սիրել, մի ասեք, որ սիրում եք Աստծուն: Դա կեղծ է: Ավետարանն ասում է. Եթե մեկն ասի, թե սիրում է Աստծուն և ատի եղբորը՝ սուտ է խոսում: Ով չի սիրում եղբորը, որին տեսնում է, ինչպե՞ս կարող է սիրել Աստծուն, որին չի տեսնում:

Աստծու սերը փոխանցվում է մարդկանց՝ սիրո միջոցով: Մենք երբ այդ սերը ցույց տանք իրար հանդեպ՝ մեր կյանքը դրախտ կլինի, բայց եթե սերը պակասի, այն ժամանակ քաոս ու անապատ կլինի, և մեր կյանքը դեպի մահ կգնա: Դուք ասեք ինձ, թե որ մեկ անձն է ստեղծագործել ատելությամբ: Ատելությունը քանդում է, բամբասանքը՝ խորտակում. ինչ որ կառուցում է՝ դա սե՛րն է: Այս եկեղեցին, Ս. Գևորգը, կառուցողները սիրել են եկեղեցին և այդ պատճառով են այն կանգնեցրել: Հետևաբար, եթե հավատքը մեր կյանքի մեջ ներգործող ուժ է, ապա հավատքի անուցումը, աղբյուրը սերն է, իսկ նրա ծաղկումը՝ հույսը: Երևակայեցեք մի մարդու, որ հուսահատ լինի, նա կյանքում արդեն իսկ մահացած է: Հույսն է, որ մեզ միշտ տալիս է օրվա ներության, դժվարության հաղթելու կամքը: Եվ Սուրբ Գիրքն ասում է, և մենք էլ լսենք միայն Աստուծո խոսքը. «Յոյս ոչ երբէք ամաչեցուցանէ»: Այս անցնող բոնության տարիներին մեր հույսը երբեք չմարեց: Բնականորեն եղան տկարության և թուլության պահեր, բայց հույսներս երբեք չկորցրեցինք, որը գեղեցիկ կերպով պատկերում է հետևյալ բանաստեղծությունը.

Երբ ալեկոծ ծովու վրա իմ մակույկը խորտակվի,
Ես փրփրադեզ ալյաց մեջը իմ հույսը չեմ կորցնի:

Առանց հույսի կյանքը անկույս է և վախճանը՝ մահ:

Եղբայրներ և քույրեր, սա իմ անդրանիկ այցելությունն է ձեզ՝ Վիրահայոց թեմ: Ուզեցի, որ իմ անդրանիկ պատգամը ձեր սրտերի, մտքերի, կամքերի և կյանքերի մեջ արձանագրվի այս երեք բառերով: Եթե ինձ էլ հիշելը կամ մոռանալը չէ կարևորը, այլ նրանք գործադրելը: Եվ այս եմ հատկապես պատգամում ձեզ, քանզի նույն հավատքով, նույն հույսով ու նույն սիրով եմ եկել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից՝ այս երեք պատգամները բերելու ձեզ և տեսնելու, որ նրանք գործնականապես թարգմանվեն ձեր կյանքում: Ես գիտեմ, որ դժվար ժամանակներում եք ապրում: Մենք էլ Հայկան է այդ.

**Ձախորդ օրերը ձմռան ցուրտ կուգան ու կերթան,
Վհատելու չէ, վերջ կունենայ...:**

Հույս է պետք և աշխատանք, հույսի հետ՝ աշխատանք: Ուրիշ միջոց չունենք: Ես չեմ կարող ձեզ փոխադրել մի այնպիսի երկիր, ուր մեղր ու կարագ են հոսում. այդպիսի երկիր էլ չկա, քանզի ամեն երկրում դժվարություն կա: Բայց ճեղությունն ու ուրախությունը հավասարապես մեր բաժինն են: Մենք չենք ծնվել միայն ուրախանալու համար: Մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, խաչվեց, տառապեց և նրա միջոցով հաղթեց: Հետևաբար, ճեղությունից մի ընկճվեք, բոլորս էլ պիտի անցնենք այս պահը և պիտի պայծառ կերպով հասնենք ապագային:

Այսօր ես մի սիրելի պարտականություն ունեմ կատարելու, որովհետև գիտեմ, որ երկար տարիներ իր կյանքը ձեր կյանքերին է խառնել մեր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններից Գերաշնորհ Տ. Գևորգ եպիսկոպոս Սերայդարյանը: Նա Էջմիածնում ձեռնադրվել և ավելի քան քսան տարիներ եղել է այս թեմի առաջնորդը: Ես ուզում եմ այս հանդիսավոր պահին ձեր առջև գնահատել նրա առավել քան քսանամյա ծառայությունը որպես առաջնորդ **Վրաստանի թեմի և այսօր նրան շնորհել ԱՐՔՈՒԹՅԱՆ տիտղոս և պատիվ»:**

Սուրբ պատարագին ներկա էին նաև Վրաստանի Հանրապետության Խորհրդարանի խոսնակ Վ. Գոգուաձեն, պետական պաշտոնական այլ անձինք և Վրաց Եկեղեցու ներկայացուցիչները՝ Արրահամ եպիսկոպոսի գլխավորությամբ:

Այստեղ Միքայել ծ. վրդ. Աջապահյանը ընթերցեց Հայրապետական կոնդակը, որով արքության տիտղոս է շնորհվում Վիրահայոց թեմի բարեխնամ առաջնորդ Գևորգ եպիսկոպոս Սերայդարյանին՝ իր բազմամյա ծառայության համար:

Սուրբ Գևորգ եկեղեցու բակում խոնված հայրենաբաղձ ժողովուրդը արցունքախառն համբույրներ էր դրոշմում Վեհափառ Հայրապետի Աջին, զգեստներին, գավազանին, որ առակ համբույր չէր, այլ գոյաբանական միաձուլում Սուրբ Էջմիածնի և Հայրենյաց հողի հետ, որոնց հոգենորոգող ծալքերի մեջ տեսնում էին իրենց հայրերի պահապան և հովանավոր Աստծուն՝ հայի՛ Աստծուն: Վեհափառ Հայրապետի ներկայությունը այդ սրբազան տեսիլքով ապրող հավատացյալներին կցում և օղակում էր այն ոսկե շղթային, որը Սուրբ Գրիգոր Լուսավորչից ձգվում է մինչև Գարեգին Ա Հայրապետ, որով նրանց հոգեկան աչքերի առջև պայծառատիպ լորեն հայտնվում էր ամբողջական Հայաստանյայց Եկեղեցին, որ «մեզ մի քարի տակ գետնի, դեպի երկինք բարձրացող գաղտնի ճամփա մը ունի» և ընդխառնված վերածվում ու դառնում էին Հավերժի ճամփորդը Հայ Եկեղեցու անմահության, որի «խաչերն են դաշույն և գանգակներն են բոմբյուն և երգն է միշտ հաղթություն»:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՆԱԽՍԱԳԱՀ ԷԴՈՒԱՐԴ ՇԵՎԱՐԴՆԱՁԵԻ ՀԵՏ

Օրվա երկրորդ կեսին, ժամը 16.00-ին, Թբիլիսիի Նախագահական պալատում Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա.-ին, ընկերակցությամբ

Իլիա Բ Պատրիարքի, ընդունեց պետության ղեկավար **Էդուարդ Շևարդնաձեն:** Հանդիպման ընթացքում Նախագահը շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին այս այցելության առթիվ և Նորին Սուրբ Օծության միջոցով իր եղբայրական ողջույնները փոխանցեց նաև ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին՝ ավելացնելով, որ Վրաստանի Հանրապետությունը մշտապես կանգնած է և պիտի լինի եղբայրական Հայաստանի կողքին: Իր հերթին Վեհափառ Հայրապետը շնորհակալություն հայտնեց այսքան ջերմ ընդունելության և հյուրընկալության համար՝ միաժամանակ կարևորելով երկու քույր Եկեղեցիների և եղբայրական հանրապետությունների սերտ համագործակցության դերը կովկասյան ընտանիքում:

Այս հանդիպումից հետո Նորին Սուրբ Օծությունն այցելեց նաև ՀՀ դեսպանատուն՝ հանդիպելով Վրաստանում ՀՀ դեսպան Լևոն Խաչատրյանի և ամբողջ աշխատակազմի հետ: Նա իր հայրական խոսքով գնահատեց դեսպանի և նրա օգնականների գործունեությունը:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ Ի ՊԱՏԻՎ ՎԵՀԱՓԱՌԻ

Երեկոյան Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Բ-ն Վրաց Պատրիարքարանում կազմակերպել էր մեծ ընդունելություն՝ ի նշանավորումն Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Ա-ի անդրանիկ այցելության, որին ներկա էին պետության ղեկավար Է. Շևարդնաձեն իր տիկնոջ հետ միասին, Խորհրդարանի խոսնակ Վ. Գոգուաձեն, Դաշնակցային Ռուսաստանի դեսպանը, Պետական համալսարանի տնօրեն Ռ. Մեսրևելին, ՀՀ դեսպան Լևոն Խաչատրյանը, Վրաց Եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներ, հայ համայնքի ներկայացուցիչներ, մտավորականներ, քաղաքական գործիչներ և պաշտոնական անձինք: Այս առթիվ Վեհափառ Հայրապետը պետության ղեկավար Է. Շևարդնաձեին պարգևատրեց Հայ Եկեղեցու բարձրագույն՝ **«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ»** շքանշանով, իսկ Իլիա Բ Պատրիարքին ներկա եղած Եկեղեցիների եղբայրությունը խորհրդանշող մի զարդաքանդակ՝ հայերեն և վրացերեն լեզուներով, սաղմոսից քաղված **«Զի բարի կամ զի վայելուչ, զի բնակեն եղբարք ի միասին»** վերտառությամբ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսին ուղղված ջերմ խոսքերից հետո, հանվաքվածներին իր ողջույնի և օրհնության խոսքը հղեց նաև Վեհափառ Հայրապետը.

«Սիրեցյալ եղբայր ի Քրիստոս,

Անձկարագրելի ուրախության և անպատմելի հրճվանքի պահ եմ ապրում ես այսօր՝ այս պահին, քանզի ինձ՝ օտար աչքերում ծնված ու հասակ առած հայորդու համար Վրաստանը, Վրաց ժողովուրդը և Վրաց Ուղղափառ Եկեղեցին այժմ դուրս են գալիս կարդացված գրքերի էջերից և կյանք ու երանգ են ստանում իմ աչքերի առջև ի տես Ձերդ Սրբության, ձեր ազնիվ ու պատվախնդիր ժողովրդի և ձեր գեղեցիկ ու չքնաղ հայրենիքի՝ Վրաստանի:

Այո՛, ես հայաստանաբնակ իմ հայրենակիցների նման պատեհություն ու բարեբախտությունը չեմ ունեցել իմ կյանքի ուղեգիծը ուղեկցված տեսնելու վրաց դրացի ու բարեկամ ժողովրդի ներկայությամբ, սակայն մեր պատ-

Հանդիպում Վրաստանի պետության ղեկավար Է. Շեվարդնաձեի հետ

Վրաստանի ղեկավար Է. Շեվարդնաձեի հետ

Շաշիկյոլր ի ոլսխի Վեհափառ Հայրապետ

Վեհափառ Հայրապետը Է. Շեվարդնաձեին պարգեւատրում է
«Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով

Ճաշկերույթ ի պատիվ Վեհափառ Հայրապետի

Խմբանկար Գ-որի հաղաքում

մության անուրանալի վկայություններով միշտ գիտակցել ու բարձրորեն գնահատել եմ Քարթվելիի ժողովրդի շինարար ոգին ու եղբայրական զգացումը հանդեպ իմ հայրենիքը, իմ ժողովուրդն ու իմ Եկեղեցին:

Այսօր գերազանցապես երջանիկ եմ, որ որպես առաջին սպասավորը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու, որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս, ոտք եմ դնում վրացական սուրբ հողի վրա և ողջունում Ձերդ Սրբությանը եղբայրական քաղցրագույն զգացումներով և քրիստոնեական սիրո արտահայտությամբ:

Հիրավի, ինչպես հայ-վրացական դարավոր բարեկամությունը, այնպես էլ Հայ և Վրաց քույր Եկեղեցիների մտերմությունը դարերի հենք ունի: Այդ մտերմություն ավելի ամրացավ ու ավելի սերտացավ հանդիսավանդ մեր երջանկահիշատակ նախորդի՝ Վազգեն Ա. Կաթողիկոսի օրոք, որը բազմից հյուրը եղավ Վրաց Եկեղեցու և նաև անձամբ Ձերդ Սրբության՝ Ձեր գահակալության հանդիսությունից սկսած: Այդ եղբայրական ջերմ զգացումների արտահայտություն էր նաև Ձերդ Սրբության այցելությունը Ս. Էջմիածին՝ Վազգեն Կաթողիկոսի գահակալության 30-ամյակի ուրախ առիթով, և նաև Ձեր եղբայրական հարգանքի տուրքը վերջինիս շիրիմի առջև՝ հուղարկավորության տխուր օրերին: Երիցս իրավացի էր երանելի Հայրապետը, երբ 1984 թվականին հյուր լինելով այստեղ, ասում էր. «Մենք և Իլիա Կաթողիկոսը երկու հազար տարվա եղբայրներ ենք»՝ Իր և Ձերդ Սրբության անձերի մեջ խտացնելով մեր ժողովուրդներին:

Երջանկություն ունենք նաև Մեր եղբայրական խորին շնորհակալությունը հայտնելու Ձեզ՝ Մեր գահակալության առթիվ արված բարեմաղթությունների համար, որոնք անձնապես Մեզ փոխանցեց Ձեր ներկայացուցիչ Աբրահամ արքեպիսկոպոսը:

Ընդամենը հինգ ամիս է անցել Մեր գահակալության այդ օրվանից, և Մենք Մեր եղբայրական պարտքն ու պարտականությունն զգացինք այցելելու Վրաստան և Ձեզ, ձեր ժողովրդին ու Եկեղեցուն փոխանցելու Մեր և մեր ողջ ժողովրդի ու Եկեղեցու հարգանքն ու սերը:

Գաղտնիք չէ, որ հայ և վրացի ժողովուրդներն ունեցել են պատմական նույն ճակատագիրն ու անցյալը: Այսօր, հեղաշրջումների ու փոփոխությունների այս հարափոփոխ մթնոլորտում, երանք ունեն նաև միևնույն ներկան, երբ յուրաքանչյուրը փորձում է կերտել իր սեփական ազգային պետությունը: Կասկած չկա նաև, որ երանք ունենալու են նույն ապագան, քանզի չեն կարող պատմության բառուղիներում քայլել իրարից անջատ, իրարից մեկուսի: Ոստի այժմ, ինչպես երբեք, առաջնահերթ խնդիրն է մեր բարեկամության ընդհանուր առողջ մթնոլորտում թույլ չտալ որևէ ճեղքվածքի դույզն իսկ հնարավորություն, ինչը որոշ չար ուժեր կցանկանան իրականացած տեսնել: Իմ խորին համոզումն է, որ չի կարող լինել հզոր Հայաստան՝ առանց հզոր Վրաստանի, և չի կարող լինել զորավոր Վրաց Եկեղեցի՝ առանց զորավոր Հայ Եկեղեցու:

Դարեր շարունակ վրացական ասպնջական հողում և մասնավորապես չքնաղ քաղաքամայր Թբիլիսիում կողք-կողքի իրենց գմբեթներն են խոյացրել վրաց և հայոց եկեղեցիները, իրենց զանգերի ձայներն են միախառնել միմյանց, Քրիստոսի Սուրբ Հարության վրացերեն ու հայերեն ավետիսներով ողողել քաղաքի փողոցները: Մենք հավատում ենք, որ այլ կերպ լինել չէր էլ կարող, քանզի վրաց ժողովուրդը մշտապես ականջալուր է եղել իր մեծագույն զավակներից մեկի՝ Ծոթա Ռուսթավելու Քրիստոսաշունչ

պատգամին՝ «Ինչը տվեցիր, ևա է հենց քոնը, ինչը պահեցիր, կորած է առհավետ»:

Անգամ միջնադարյան շրջանում մեր նախնիները իմաստություն ու յայնախոհություն են ունեցել չտարվելու անիմաստ դավանական վեճերով ու մտային մարզանքներով, այլ տվել են վառ օրինակը քրիստոնեական տարբեր դավանաբանական խորք ունեցող Եկեղեցիների խաղաղ ու շինարար գոյակցության հնարավորության:

Մենք դույզն իսկ կասկած չենք կարող ունենալ, որ վրաստանաբնակ մեր հայրենակիցները շարունակելու են Վրաստանի աստվածօրհնյալ հողում իրենց կյանքն ու աշխատանքը՝ մնալով միշտ նախանձախնդիր ու հավատարիմ քաղաքացիները վրացական պետության: Եվ այս գործում Հայ Եկեղեցին կանգնած է նրանց կողքին՝ աչքի բիբի պես պահելով մեր Եկեղեցիների ու ժողովուրդների դարավոր բարեկամության անխախտելի սկզբունքը:

Սիրեցյալ եղբայր,

Մենք, որպես Կաթողիկոս Ամենայն Հայոց, հավերժ մնալու ենք աղոթող ձեր Եկեղեցու և հայրենիքի հարատևուն պայծառության համար: Մեր երջանկահիշատակ նախորդների թողած ժառանգությունը անհետ և անիմաստ կորչել չի կարող: Բախտորոշ շրջանում ենք ապրում մենք, և հաճախ մեր ժողովուրդների զավակները նայում են մեզ՝ մեզանից սպասելով այն լավագույնը, որ կարող է պատիվ բերել Քրիստոսի դրոշմը կրող յուրաքանչյուր անձի: Մեզ մնում է ձեռք-ձեռքի տված լծվել Ավետարանի քարոզության սրբազան ծառայության և այդ ծառայության մեջ տեսնել մեր ժողովուրդների լավագույն իղձերի ու ցանկությունների լրումը:

Աստված թող Իր Ամենախնամ Աջը միշտ պահի մեր երկու ժողովուրդների վրա:

Թող պայծառ մնան ձեր եկեղեցիները, և Ձեր ձեռքում թող Ձեր հովվական գավազանը ծաղկի ու դալարի:

Թող օրհնյալ լինեն խաղաղարարներն ու եղբայրասերները, որոնք մընում են աչալուրջ պահապանները մեր հիանալի աստվածապարգև ժառանգության:

Բյուր օրհնություն վրաց ազնիվ ժողովրդին և չքնաղ Վրաստանին:

Աստուծո օգնականությունը մեզ բոլորիս. Ամեն»:

Այցելության վերջին օրը, սեպտեմբերի 11-ին, Վեհափառ Հայրապետը Ի. Ջավախաշվիլու անվան Թբիլիսիի պետական համալսարանում հանդիպեց հայ և վրաց մտավորականության ներկայացուցիչների հետ: Համալսարանի տնօրեն Ռ. Մեսրևելիի բարիգալստյան ջերմ խոսքերից հետո, Նորին Սուրբ Օծությունը տվեց իր պատգամը՝ բնորոշելով ակադեմիական գիտական աշխատանքի հանրային կարևորությունը:

Ժամը 12.00-ին Խորհրդարանի շենքում հանդիպում տեղի ունեցավ Խորհրդարանի խոսնակ Վախթանգ Գոգուաձեի և մյուս ներկայացուցիչների հետ, որտեղ Վեհափառ Հայրապետը նրան հանձնեց արծաթյա ձեռագործ մի սկուտեղ՝ Ս. Էջմիածնի քանդակով, և բարձր գնահատեց նրա գործունեությունը հատկապես Վրաստանի և Հայաստանի փոխհարաբերության մարզում:

Վեհափառ Հայրապետը Թբիլիսիի պետական համալսարանում ռեկտորի հետ

Վեհափառ Հայրապետը Վրաստանի Սիոնի մայր տաճարի առջև՝ Գոգոռաձեի հետ

Թբիլիսիի հայ մտավորականների պանթեոնում

Վեհափառը մանուկների հետ

ՎԵՀԱՓԱՌԸ ՀԱՎԱՏԱՐՈՒՄ

Ապա Վեհափառ Հայրապետը ուղևորվեց Հավլաբարի հայկական **Խոջիվանք** պանթեոն՝ հարգանքի տուրք մատուցելու հայ երախտավորների հիշատակին: Սուրբ Էջմիածին՝ հայրենական տուն վերադառնալուց առաջ, նա մի խորհրդանշական հանդիպում էր ունենալու հոգու և մտքի երախտավորների ու դրշակակիրների հետ, ովքեր բոլոր ժամանակներում կրել են հայության «սուրբ շալակը»՝ այն փոխանցելով մեզ՝ այսօր ապրողներիս: Հինա նրանք հանգչում են վրաց հողի հայկական գերեզմանատունը և իրենց բացառիկ ներկայությամբ պատռգամում են ապրել նոր արշալույս կերտելու տեսիլքով:

Հրաժեշտի այս հոգեվիր պահին ներկա հավատավոր ժողովրդին իր պատգամը հղեց Վեհափառ Հայրապետը՝ ասելով, որ անմահության ճանապարհը այս արբազան շիրիմների և գերեզմանների միջով է անցնում, և եթե ուզում ենք լինել այդ ճանապարհի ուղևորը, պարտավոր ենք փայփայել Մայր Եկեղեցին ու Մայր Հայրենիքը և այս երկու արքայությունների հոգեզավակ ամբողջական հայ մշակույթը:

Նույն օրը, երեկոյան, Վեհափառ Հայրապետը Հայաստանից ժամանած հատուկ ինքնաթիռով վերադարձավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

ԲԱԳՐԱՏ ԱՐԵՂԱ ԳԱԼՍՏՅԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ԳԵՎՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵՐԱՅԴԱՐՅԱՆԻՆ ԱՐՔՈՒԹՅԱՆ ՏԻՏՂՈՍ ԵՎ ՊԱՏԻՎ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՅ ԵՒ ՀԱՐԱՋԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ Տ. ԳԷՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԷՐԱՅՏԱՐԵԱՆԻՆ
ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ

ԹԲԻԼԻՍԻ

Բազում տարիներէ ի վեր իր ուզեկ ենք եղած Ձեր եկեղեցական ապաստաորութեան թէ՛ Մայր Աթոռի՝ Ս. Էջմիածնի մայրավանքին մէջ և թէ՛ Վրաստանի թեմի հայ ժողովուրդի հոգևոր առաջնորդութեան ծառայութեան մէջ:

Ձեր ողջ հոգևորական կեանքի և գործի ընթացքին Դուք յայտնաբերեցիք ամբողջական և անվերապահ սէր և հաւատարմութիւն հանդէպ Մայր Աթոռիս և մեր հաւատացեալ հայ ժողովրդեան:

Ի գնահատութիւն Ձեր բազմամեայ և անշահախնդիր ու օգտաշատ ծառայութեանց և որպէս բարոյական վարձատրութիւն զոհաբերական ոգիով Ձեր տարած աշխատանքներուն, այսու Հայրապետական կոնդակս Ձեզի կը շնորհենք

ԱՐՔՈՒԹԵԱՆ տիտղոս և պատիւ

Վստահ ենք, որ այս պարգևատրումը Ձեզի համար պիտի դառնայ նոր խթան և մղում՝ առաւել նուիրումածութեամբ շարունակելու և առաւել պատասխանատուութեամբ իմաստաւորելու և արժէքաւորելու Ձեր հոգևորական ասպարէզը մեր Սուրբ Եկեղեցւոյ, պաշտելի հայ հաւատացեալ ժողովուրդին և մեր նուիրակալացագոյն Սրբութեան Սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի:

Այս բարեբաստիկ առիթով, անգամ մը ևս կը յայտնենք Մեր հայրական աէրն ու Հայրապետական գնահատանքը հանդէպ Վրաստանի թեմի Մեր սիրեցեալ և հաստատացեալ, հաւատաւոր և հաստատիմ հայ ժողովուրդին, մաղթելով որ օրէ օր առաւել ևս ծաղկի ու բարգաւաճի հայ ազգային-եկեղեցական կեանքը Վրաստանի օրհնեալ հողին վրա:

Կ'աղօթենք առ Ամենակալն Աստուած, որ Ջեզի պարգևէ քաջառողջութիւն, հոգեզաւ կորով և յարատևութեան անապատ ոգի:

Ողջ լեռնք, զօրացեալք շնորհօք Ս. Հոգւոյն և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 4 Սեպտեմբերի
Տաճկ Տեառն 1995
և ի թուին Հայոց ՈՒՆԽԴ
ի Մայրավանս Սիբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/7

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԾՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՀԱՄԱՅՆ ՎՐԱՍՏԱՆԻ
ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ԻԼԻԱ Բ-ԻՆ

...

ՁԵՐԴ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ
ԻԼԻԱ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔ
ՀԱՄԱՅՆ ՎՐԱՍՏԱՆԻ

Թ Բ Ի Լ Ի Ս Ի

Ս. Էջմիածին Մեր վերադարձին արտի տուրք ենք զգում Ձեզ հայտնելու Մեր խորագգաց շնորհակալությունները այն եղբայրական ջերմ ընդունելության և հյուրասիրության համար, որ ցույց տվեցիք Մեզ և Մեզ ընկերակցող պատվիրակությանը ի Վրաստան Մեր այցելության ընթացքին ամսույս 8-ից 11 օրերին:

Անջնջելի և քաղցրագույն տպավորություններով վերադարձանք: Մեր արտաբաց և մտերմական խոսակցությունները վստահաբար մոտիկ ապագային պիտի ունենան գործնական արդյունք մեր երկու Եկեղեցիների և երկու Կաթողիկոսների սերտ գործակցության համար:

Կաղոթենք առ բարձրյալն Աստված, որ Ձեզ, Ձեր Սինոդի անդամներին, հոգևորական դասին և համայն հավատացյալ ժողովրդին պարգևի բարօրության օրեր խաղաղ, ապահով և արդյունաբեր կյանքով:

Եղբայրական ջերմ սիրով
Աղոթակից՝

ԳԱՐԵԳԻՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
12 սեպտեմբերի 1995 թ.



ՎԵՀԱՓԱՌ ՀՈՐ ՄԱՆՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԲԱՑՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆԸ

Սեպտեմբերի 16-ին Վեհափառ Հայրապետը Երևանի պետական համալսարանում մասնակցեց Աստվածաբանական ֆակուլտետի բացման հանդիսավոր արարողությանը: Վեհափառին դիմավորեցին համալսարանի ռեկտոր Ռադիկ Համբարձումյանը և նորաբաց ֆակուլտետի դեկան Գերաշնորհ Տ. Շահե արքեպիսկոպոս Աճեմյանը, դասախոսական կազմը, ֆակուլտետի անդրանիկ տարվա թվով քսանհինգ ուսանողները:

Ներկա էին նաև Հայաստանի Հանրապետության փոխնախագահ Գագիկ Հարությունյանը, Խորհրդարանի նախագահ Բաբկեն Արարքցյանը, պաշտոնական այլ անձինք, հյուրեր:

Հնչեցին ողջույնի և շնորհավորանքի խոսքեր: Ելույթներ ունեցան համալսարանի ռեկտոր Ռադիկ Համբարձումյանը, փոխնախագահ Գագիկ Հարությունյանը և ուրիշներ:

Բոլորն էլ իրենց խոսքում պատմական փոքրիկ ակնարկով մոտաբերում էին պատմության նախորդ՝ յոթանասուն տարիների ճերմակ էջերը, հավատի, նեղ ու անձուկ, սակայն քաղցր ու ցանկալի ճանապարհին ունեցած խարխափումները, ի վերջո՝ անդրադառնում գալիք ապրելիքին, այսինքն՝ մեր վերընձյուղմանն ու վերահաստատմանը, մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի անձից ճառագող սիրույն ու ճշմարտությանը, անմեկնելի ու խորին խորհրդով առնչվում մեր գոյությանը:

Աստվածաբանության ֆակուլտետի դեկան, փիլիսոփայության և բանասիրության դոկտոր, ԵՊՀ պատվավոր դոկտոր, պրոֆ. Շահե արքեպս. Աճեմյանը, դիմելով ներկաներին, ասաց.

«Վեհափառ Տեր,
Վսեմաշուք Տիար Բաբկեն Արարքցյան՝ Նախագահ Ազգային ժողովի,
Վսեմաշուք Տիար Գագիկ Հարությունյան՝ փոխնախագահ Հայաստանի Հանրապետության,

Պատվարժան ռեկտոր Երևանի պետական համալսարանի,

Հարգելի հանդիսականներ,

Այս օրը մեծ օր է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցիին տարեգրության մեջ, Պանդխտութենե մը վերադարձողի ցնծությամբ, շալկած իր մեծ վարդապետներու և Եկեղեցվո հայրերու գիտության իմաստության և իմացականության անկողոպտելի գանձերը, ան ներս կմտնե բարձրագույն գիտության այս կաճառի դուռեն:

Վեհափառ Տեր, սրտի մեծ հպարտությամբ, հանդիսավոր այս պահուն պաշտոնապես կհայտարարեմ, որ Ձերդ Սրբության կձոնեմ մեծ այս օրը: Առանց որևէ ակնկալության, անիսաոև զգացումով, Ձերդ Վեհափառության կձոնեմ Աստվածաբանության նորահաստատ ֆակուլտետը: Օրհնեցե՛ք զայն, սիրեցե՛ք զայն, արժանացուցեք զայն հայրական Ձեր խնամքին, իբրև հարազատը Ձեր սրտին և հարազատը Հայ Եկեղեցիին»:

Այնուհետև, ցույց տալով առաջին կուրսի ուսանողներին, ևս շարունակեց. «Ահա ես և մանկունք իմ, զոր ետո ինձ Աստուած»: Լևցուցեք անոնց հոգին պատգամաբեր Ձեր խոսքով»:

Ի պատասխան որի Վեհափառ Հայրապետն ասաց.

«Հարգարժան ներկայացուցիչներ հայոց պետության ավագանիի, հարգարժան ռեկտոր պետական համալսարանի և իմ հոգևոր եղբայրներ, սիրելի դեկան Աստվածաբանության այս ֆակուլտետի և մտքի ու հոգու եղբայրներ ու քույրեր.

Ձեր բոլորի հետ մասնակից կդառնամ այն մեկ պահին մեր համալսարանի պատմության մեջ այնքան պերճախոս, որ հավելյալ բացատրության, ջատագովման, դրվատումի կարիքը չունի: Կար ժամանակ, երբ համալսարանը եղավ աստվածժխտումի կենտրոն, եկավ ժամանակ՝ հիմա, երբ այդ նույն համալսարանը հայ հոգիին հաղորդակից և հավատարիմ անոր կյանքին ու հավատքին՝ այդ նույն համալսարանը դարձավ աստվածգիտության մի նոր օջախ. «Յանգիտութենէ ի գիտութիւն, ի խաւարէ ի լոյս, ի մահուանէ ի կեանս»: Կողջունեմ այսօր, որպես Կաթողիկոս Ամենայն Հայոց, այս նոր օջախը մտքի և հոգիի այն աշխարհին, որ մեր հայության կյանքին պիտի բերե մի նոր նպաստ, դեպի այն ուղիով գնացող ապագան, որ Աստուծո կամքն է, և ես կհավատամ՝ նաև մեր ժողովրդի պատմության պահանջն է:

Այսօր, երբ այստեղ հավաքված ենք, կուզեմ նաև իմ խոր գնահատանքը հայտնել մեր պետական իշխանությանց, որ համալսարանի իշխանությանց տեսակետներին, ջանքերին այնքան ուկնդիր եղան և քաջալերեցին մեր Հայաստան աշխարհի պետության մտավորական կյանքի բարձրացմանը նպաստող այս հաստատությունը:

Սիրելի Ռեկտոր, կուզեմ, որ Ձեր համալսարանի բոլոր վարիչ մարմինների անդամներին փոխանցեք Մայր Աթոռի և անոր միաբանության զորակցության զգացումները ձեր այդ կենսական և ճվիրական առաքելության մեջ: Կմաղթեմ, որ Շահե Սրբազան, որու աբեղայության ես դեռ ուսանող էի և որուն հետ միաբանական կյանքը ապրած ենք ուրիշ տեղ, այսօր, երբ ինքը կգտնվի այս պատասխանատվության առջև, մենք ամբողջական սիրով կգնահատենք իր բոլոր ջանքերը, որպեսզի կարենանք միասնաբար

այս հաստատությունը վերածել մի պատվաբեր ճոր իրագործումի, ճոր ճխտճումի մեր մտավորական առաջընթացքին մեջ:

Իմ խոսքը կերթա ճաև ուսուցչական, դասախոսական կազմին և ուսուճողությանը: Սիրելի երիտասարդներ և երիտասարդուհիներ, համալսարանը ո՛չ պատով, ո՛չ շենքով, ո՛չ ալ հովանավորությամբ կլինի այն, ինչ պետք է լինի, մարդո՛վ և դուք եք այդ մարդիկը՝ ուսուցիչ և սան: Ասոր համար, առաջին վայրկյաններ իմ խնդրանքս է, որ ամենալուրջ կերպով վերաբերվիք այս սկզբնական քայլին:

Ես կուզեմ այսօր բոլոր ներկաների հետ, որոնք ակադեմիական աշխարհեն կուգան, կիսել մեկ մտահոգություն, որ մեր ուշադրության առարկան է: Կապրինք երկրորդ հազարամյակի վերջալույսին: Եթե հետևինք միջազգային գրականությանը վերջին մի քանի տարիների ընթացքին, կտեսնենք, որ մեծ խորհողներ, իմաստասերներ, պատմաբաններ, գիտնականներ կհետազոտեն այս դարի իրագործումները և կկատարեն գնահատում, թե ինչ է եղած անցած դարի ընթացքում, որպեսզի ճոր մտքով կարողանան դիտել, դիմագրավել ճոր բացվող քսաներեկերորդ դարը: Մենք ալ այդ մարդկության մասն ենք, մենք ալ ժամանակագրության մասն ենք: Եվ այսօր մենք հասարակաց կյանքի մեջ իբրև հայրենիք, իբրև ժողովուրդ ու իբրև Եկեղեցի՝ մենք կգտնվինք բարձրակետի վրա: Ուրիշ տեղ ալ ըսի, բայց կուզեմ ճորից կրկնել. այս դարը բացվեցավ արցունքով ու արյունով հայոց պատմության մեջ, բայց կփակվի խինդով և կյանքով դեպի հառաջ: Ցեղասպանությամբ սկսանք այս դարը և այն կավարտենք անկախությամբ: Փառք քեզ, Տեր, կըսեմ սրտիս բոլոր երակներովը, որովհետև այդ մեծ մեկ շնորհն մըն է, որին արժանացանք մենք, որը կգնահատենք:

Դարը կանցնի փորձության մեջեն, նյութական միջոցներու առաջացումը, գիտական նվաճումներու, տեխնիկական միջոցներու առաջացումը մարդուս մեջ սկսած է մեռցնել մարդը, մարդկայինը: Հետզհետե սկսած ենք մեքենայի գերին դառնալ, սկսած ենք դեպի սպառողականը երթալ, դեպի աշխարհապաշտական ընկերություն երթալ: Այսօր համալսարանն ինձ համար, ինչպես Եկեղեցին, իր ճեմարանովը և հոգևոր հրատարակություններովը, այս փորձությանը դեմ պիտի կանգնի: Կրնան տնտեսագետները, ճարտարվեստի մեծ գիտնականները գնալ դեպի այդ փորձությունը, բայց ո՛չ մտավորականը, ո՛չ հոգևորականը: Մենք հոգիի թարգմաններն ենք՝ վեր բոլոր տեսակի մյուս այն աշխարհայինն, ժամանակավոր, առտվան հետ ծագող և իրիկվան հետ մեռնող արժեքներին:

Ամբողջ աշխարհի մեջ այսօր նոր անդրադարձում կա պատմության հոգևոր արժեքների վերագնահատման մեջ և, Իսահակյանն էր, որ ոգու սոված մասին խոսեցավ, Մ. Գալշոյանն էր, որ ոգու սովի մասին խոսեցավ, կտեսնեմ ոգու սովը, և մեր մտավորականությունը պիտի գտնվի այն բարձրության վրա, որ դառնա մտքի փարոս, և մենք պիտի դառնանք գիտակից զոհերը, որպեսզի մեր կյանքը զոհ չերթա: Կյանքին նայելու երկու եղանակներ կա՞ մասնավոր և ընդհանրական: Ո՛չ մեկը առանձին բավարար է և ո՛չ ալ մյուսը: Մեկը մյուսով սերտ է:

Կողջունեմ ձեզ մեկ անգամ ևս և կավելցնեմ, «Գիտություն հպարտացուցանէ. այլեւ սէր շինէ», գիտությամբ մի՛ հպարտանանք, գիտության ազնաբելությա՛մբը հպարտացեք, գիտություն ունենալը ոչինչ կարժե, եթե գիտություն ջամբելը չըլլա մեր առաքելությունը: Ասոր համար ես չեմ ըսեր

բարի երթ, ինչպես ըսին իմ սիրելի բարեկամները՝ պրն. ռեկտորը, պրն. փոխնախագահը, ես կըսեմ՝ բարի գալուստ»:

Վեհափառ Հոր օրհնանքի և բարի երթի խոսքերից հետո, հենց Նորին Սրբության ձեռքով էլ կտրվում է կարմիր ժապավենը, մեր արյան գույնն ունեցող և պատմության քառուղիներում մաքառած ու ապրելու իրավունք վաստակած ժողովրդիս հոգու, հավատքի գույնն ունեցող բարակ երիզը, որ հենց այդ պահից կրկին անգամ, ի լուր հանյալ աշխարհի և ողջ մարդկության, պետք է ապացուցի, որ դարերի հնքով, Մեսրոպակերտ ու ազգիս արտից փորագրված տառերի շուքով, մեր արարատացած հավատով և անապատներ ողողած մեր արյամբ ենք վաստակել ապրելու, հարատևելու և ծաղկելու իրավունքը:

Ասենք նաև, որ աստվածաբանական ֆակուլտետը բաղկացած է երկու ամբիոններից՝ կրոնագիտական և աստվածաբանության: Առաջինն իր մեջ ներառնում է դասավանդության ընդհանուր հյութեր՝ կրոնի պատմություն, հայ մշակույթի պատմություն, Հայ Եկեղեցու ճարտարապետություն, ընդհանուր պատմություն, փիլիսոփայություն, կրոնական մանրանկարչություն կամ պատկերագրություն, հոգևոր երգեր և շարականներ, իսկ երկրորդ ամբիոնի ուսումնասիրության առարկաներն են՝ տեսական աստվածաբանությունը, Աստվածաշնչի ներածությունն ու մեկնությունը, ծիսագիտական աստվածաբանությունը, Հայ Եկեղեցու պատմությունը, հայ հին մատենագրությունը, հայրաբանությունը, քրիստոնեական բարոյագիտությունը, ինչպես նաև Հայ Եկեղեցու կանոնագիտությունը:

Ուսման տևողությունը չորս տարի է, որի ընթացքում ուսանողները մասնագիտանում են նաև մեկ օտար լեզվի իրենց իմացության մեջ, միաժամանակ խորապես սովորում մեկ մեռած լեզու, ասենք՝ հունարեն, եբրայերեն կամ լատիներեն:

Ուսումնառության առաջին իսկ տարուց, երկու ուստարվա տևողությամբ, ուսանողները սովորում են նաև գրաբար:

Ավելացնենք, որ նորաբաց Աստվածաբանական ֆակուլտետը պատրաստում է կրոնի ուսուցիչներ հանրակրթական դպրոցների համար: Ընդունվել ցանկացողները քննություն են հանձնում ընդհանուր հիմունքներով, ինչպես մյուս բուհերում՝ դիմումի մեջ նշելով ընտրած ֆակուլտետը:

Դեռևս առաջին քայլերն անող համալսարանի այդ բաժինը համապատասխան ժամեր է հատկացնում նաև ազատ ունկնդիրների համար, շաբաթական չորս երեկո՝ երկու դասաժամով:

Դե ինչ, մեզ մնում է միայն բարի երթ մաղթել երկար սպասված, սակայն ի վերջո իրականություն դարձած մեր երազի նորաբաց ֆակուլտետին և խնդրել Տիրոջը, որպեսզի ողղի նրանց ընթացքը խաղաղության ճամփաներում՝ գնալու դեպի արդարություն ու հավիտենական կյանք...

Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԽՆԿՈ ԱՊՈՐ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Մեր կենաց առաջնորդն ու խաղաղության պագնիչն Ինքը Իր երկրավոր կ՚անքի և քարոզչության ողջ ընթացքին ավանդեց ամենքին՝ լինել մանկան նման, որպեզի իրենց տեղն ունենան Երկնավոր Հոր մոտ, և երբեք չէր մոռանում հիշեցնել, որ ով որևէ մանկան է ընդունում, ընդունում է նաև Իրեն: Այդ սերն է իշխում Ավետարանում, այդ սիրո հետևորդներն են առ այսօր բոլոր ճշմարիտ հավատացյալները և բարի հետևորդները Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի:

Այդ նույն սերն էր նաև այս անգամ դեպի Խնկո Ապոր անվան մանկական գրադարան տարել Ամենայն Հայոց Հայրապետին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Առաջինին: Վեհափառ Հորն ուղեկցում էին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանը, «Էջմիածին» ամսագրի գլխավոր խմբագիր Գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Արիստակեսյանը, Հոգեշնորհ Տ. Միքայել ծայրագույն վարդապետ Աջապահյանը, Քրիստոնեական դաստիարակության ու քարոզչության կենտրոնի տնօրեն Հոգեշնորհ Տ. Վազգեն աբեղա Միրզախանյանը և Հոգեշնորհ Տ. Արտակ աբեղա Տիգրանյանը:

Ընթերցող փոքրիկներն իրենց սերն առ Նորին Սրբությունը արտահայտեցին ծաղիկներով պատելով Վեհափառի ողջ անցնելիք, թեև կարճ, բայց այնքան ցանկալի ու երկար սպասված ճանապարհը: Շքամուտքի առջև թանկագին հյուրերին դիմավորեցին բոլոր հերկաները՝ աշխատակիցները, ընթերցողները, ծնողները: Բարի գալստյան խոսք ասաց տնօրեն Հայկանուշ Դանիելյանը:

Այնուհետև ամենքը մեկտեղ հերս մտան, որ առաջին անգամ գրադարան եկած հյուրերին դիմավորեց հեքիաթի փերին՝ իր փոքրիկ ունկնդիրներով: Հեքիաթի սրահում ասես մի պահ Վեհափառն ինքն էլ մանկացավ, մոռացավ ժամանակ ու տարիք և նստեց նույն փոքրիկների նման, հետևից կողքին և կատակներով համեմված զրույցով փորձեց մի պահ, միմյանց խառնելով թիվ ու ժամանակ, կրկին երկտեղել դրանք, որպեզի արդյունքում մնա դարձյալ մանուկը և սերը դեպի նա, որպեզի ոչ մի ժամանակ և ոչ ոք չմոռանա Տիրոջ գերագույն պատգամներից մեկը՝ գուցե հենց գերագույնը:

Հեքիաթի սրահից դուրս գալով՝ հյուրերը մեկ առ մեկ եղան մյուս սրահներում, մոտիկից ծանոթացան համակարգչային և երաժշտական սրահներին, ընթերցասրահին, որից հետո դահլիճում նրանց դիմավորեցին մանկան

կական շուրթերից հնչող երգն ու արտասանությունը, «Տէր ողորմեա»-ի հոգեզմայլ հնչյունները:

Մոտավորապես մեկ և ավելի ժամ տևած հանդիպումն ավարտվեց իրաժեշտի երկուստեք ասված անմոռանալի խոսքերով: Այնուհանդերձ, գոնե մանուկների համար այդ հանդիպումը ոչ միայն եզակի էր իր բնույթով, այլև շատ դաստիարակիչ, քանզի վեհափառ Հայրն իր կենսափորձի և պարտականության վեհ բարձունքի ատիճաններից ժամանակավորապես վայր իջնելով՝ մեկ անգամ ևս շրջապատողներին հավաստիացրեց, որ ամեն ոք էլ մի քիչ մանուկ է ցանկացած տարիքում: Եվ մանկանը է՛լ ավելի լավ ճանաչելու, նրա մտերիմն ու բարեկամը դառնալու համար պետք է իջնես մինչև նա և հետո միայն նրա հետ մեկտեղ վեր բարձրանաս հոգու և սիրո անմեկնելի ատիճաններով:

Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԵԿՕՐՅԱ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Տարիներ առաջ էր, դեռևս երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսի հայրական օրհնությամբ հոգևոր ճեմարանի շրջանավարտ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի երիտասարդ միաբան վարդապետների ջանադիր աշխատանքի շնորհիվ մանկան նման առաջին անհաստատ քայլերով իր գործունեությունը սկսեց Մայր Աթոռին կից Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը: Նախաձեռնությունը ինքնաբուխ էր, նպատակը՝ սուրբ: Կյանքի կոչված Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը դարձավ կազմակերպված ուսումնական մի կառույց, ազնիվ ու բարի գործը գտավ իր նվիրյալներին, որոնց մեջ հայ մանկանը քրիստոնեաբար կրթելու, Ավետարանի շնչով սնուցանելու Ս. Սահակ Պարթև Հայրապետի և Ս. Մեսրոպ Մաշտոցի հոգեկան խոովքն ու հավատո հոգին խոսեց:

Սույն թվականի օգոստոսի 24-ին քրիստոնեական դաստիարակության գործը լավագույնս և արդյունավետ կազմակերպելու նպատակով, Վեհարանի հանդիսությունների դահլիճում, ուսումնական նոր տարեշրջանի բացման առիթով, տեղի ունեցավ Հայաստանի քրիստոնեական դաստիարակության դպրոցների ուսուցիչների մեկօրյա հանդիպումը: Հանդիպման բացումը կատարվեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ և մասնակցությամբ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ասողիկ եպս. Արիստակեսյանի, Տ. Անանիա եպս. Արաքաջյանի, Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանի և Տ. Վազգեն աբեղա Միրզախանյանի: Հանդիպմանը իրենց մասնակցությունն էին բերել Քրիստոնեական դպրոցի ուսուցիչ-ուսուցչուհիներ Երևանից, Էջմիածնից, Գորիսից, Դիլիջանից և Արտաշատից:

Առավոտյան ժամը 10.00-ն է, խմբովին արտասանված «Հայր մեր»-ից, «Էջմիածինն ի Հօրէ» և «Որք Զարդարեցին» շարականների կատարումից հետո, բացման խոսքով հանդես է գալիս Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն հոգեշնորհ Տ. Վազգեն աբեղա Միրզախանյանը: Իր խոսքում Հոգեշնորհ Հայր Սուրբը, անդրադառնալով Քրիստոնեական դաստիակության կարևորությանն ու ծրագրյալ կերպով այն կազմակերպելու խնդրին, նշում է. «Կենտրոնի գործունեության ծրագիրը հատուկ է՝ քրոջով ու Աստվածապաշտությամբ կրթված մի սերունդ դաստիարակել՝ արժանի Հիսուսի անվան, արժանի նրա մարդասիրության և Աստծու որդեգրության:

Ահա այս նպատակով Երևանում, Էջմիածնում, Արտաշատում և հանրապետության մի շարք շրջաններում Կենտրոնին անդամագրված 200-ից ավելի ուսուցիչներ իրենց ամիսական աոաքելություն են ծավալել 35 կիրակնօրյա և 25 քրիստոնեական դաստիարակության կենտրոններում»:

Գարեգին արքեպիսկոպոսի ողջույնի խոսքից հետո, «Քրիստոնեական դաստիարակության նկարագիրը և հիմնական մեթոդաբանությունը» թեմայով դասախոսությամբ հանդես է գալիս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Վեհափառ Հայրապետի հետաքրքիր և բովանդակալից դասախոսությունը կենդանի աշխույժով է լցնում լսարանը: Դասախոսության ընթացքին Վեհափառ Հայրապետը, անդրադառնալով մեթոդաբանության հարցերին, կենտրոնանում է մեթոդաբանության այն չորս եղանակների վրա, որոնց գործադրությունը կնպաստի կրոնի ուսուցմանը:

1. Կրոնի դասն սկսել աղոթքով:
2. Ճշտել տվյալ դասի ուսուցանվող հիմնական ճշմարտությունը:
3. Ուսուցանվող դասի՝ գիտելիքների հետ աղոթքի եղանակները սովորեցնելու հնարավորություն ստեղծել:
4. Յուրաքանչյուր դասի ընթացքում Եկեղեցու նշանավոր Հայրերից կամ Նոր Կտակարանից ընտրված մի խոսք սովորեցնել աշակերտներին:

Վեհափառ Հոր դասախոսությունն ավարտվում է ուսուցիչների կողմից մեթոդաբանական ամենատարբեր բնույթի հարցադրումներով:

«Եկեղեցին Հայկական» երգի կատարումից և մեկժամյա ընդմիջումից հետո «Աստվածաշնչի դերը մանկան նկարագրի ձևավորման գործում» թեմայով դասախոսություն է կարդում Մայր Աթոռի դիվանապետ Գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: Սրբազան Հայրն իր դասախոսությունը սկսում է Հին Կտակարանյան ժամանակաշրջանում տիրող բարքերի, մտայնության նկարագրով՝ այդ ամենի մեջ տալով անհրաժեշտությունը Հիսուսի Գալստյան՝ ամբողջացնելով իր խոսքը այն կարևոր իրողություններով, որոնք նպաստում են մանկան առողջ դաստիարակությանը:

Ներսես արքեպիսկոպոսի դասախոսության ավարտին հնչում է «Ուրախ լեր Սուրբ Եկեղեցի» շարականը:

Օրվա երկրորդ կեսին, ժամը 15.00-ին, սկսվում է հերթական դասախոսությունը՝ «Ընտանեկան դաստիարակության կարևորությունը մանկան քրիստոնեական նկարագրի ձևավորման գործում». դասախոս՝ Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյան: Հոգեշնորհ Հայր Սուրբը մանկավարժ-հոգեբանի բացառիկ հմտությամբ և նյութին լավագույնս տեղյակ խոր մասնագիտական

վերլուծումներով կարևորում է ընտանեկան դաստիարակության դերը մանկան քրիստոնեական նկարագրի ձևավորման գործում:

Այնուհետև «Համառոտ ակնարկ կրոնական դաստիարակության պատմության» թեմայով դասախոսում է Մաշտոցյան Մատենադարանի ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու պրն. Արտաշես Մաթևոսյանը:

Այնուհետև, ըստ նախատեսված ծրագրի, տեղի է ունենում հավաքական քննարկում արծարծված նյութերի և հարցերի շուրջ:

Վերջում Վեհափառ Հայրապետը եզրափակիչ օրհնության խոսքով մի քանի թելադրություններ է անում բոլորին. «Դաստիարակության գործը մշտական է եղել, է՛ ու կա՛, իսկ մեզ մնում է անցյալից սովորելով, անցյալի փորձին նայելով մեր սերունդների ներկան կերտենք բարոյական ամուր հիմքերի վրա՝ միշտ նոր ապասելիքներով ու նոր հույսերով»:

Համագումարն ավարտվում է «Պահպանիչ» աղոթքով և խմբովին երգված «Հայր մեր»-ով:

ՎԱՐՈՒԺԱՆ ՍՐԿ. ՏԵՐՏԵՐՅԱՆ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆՈՐ ԿԱԶՄԻ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Օգոստոսի 1—2-ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում չորս հիւսից բաղկացած իր առաջին նստաշրջանը գումարեց Գերագույն Հոգևոր Խորհրդի նոր կազմը, որ հաստատվել էր Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից՝ Վեհափառ Հայրապետի ընտրությունից հետո, ըստ անցյալ տարիների ավանդության և Ազգային-Եկեղեցական ժողովի որոշման: Նրկատի ունենալով, որ Գերագույն Հոգևոր Խորհրդի նոր կազմը, որպես Ամենայն Հայոց Կաթողիկոսի խորհրդատու մարմին, պիտի պաշտոնավարի մինչև առաջիկա Ազգային-Եկեղեցական ժողովը, որը նախատեսված է գումարել երկու տարի հետո, ինչպես նաև հաշվի առնելով, որ նախորդ շրջանից բազմաթիվ հարցեր դեռևս մնում են անլուծ, Վեհափառ Հայրապետը վերահաստատեց Խորհրդի նախկին կազմը՝ ատենապետությամբ Ամենապատիվ Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկյանի և Ամենապատիվ Տ. Գարեգին Պատրիարք Գազանճյանի և բաղկացյալ հետևյալ անդամներից. Վաչե արքեպս. Հովսեփյան, Արսեն արքեպս. Բերբերյան, Ներսես արքեպս. Պոզապալյան, Գրիգորիս արքեպս. Բունիաթյան, Խաժակ արքեպս. Պարսամյան, Գարեգին արքեպս. Ներսիսյան, Պարգև եպս. Մարտիրոսյան, Տիար Գրիգոր Խանջյան, Տիար Պիոն Հակոբյան, Տիար Հակոբ Փափազյան, Տիար Ռաֆայել Պապայան՝ սույն կազմին ավելացնելով հետևյալ անդամներին՝ Գևորգ արքեպս. Սերայդարյան, Տիրան արքեպս. Կյուրեղյան, Ասողիկ եպս. Արիստակեսյան, Աբրահամ վրդ. Մկրտչյան և պրոֆ. Վլադիմիր Բարխուդարյան:

Նորին Սրբությունը Խորհրդի լիազոր-անդամ նշանակեց արտասահմանյան չորս երկրամասերից հետևյալ թեմակալ առաջնորդներին՝ Զավեն արքեպս. Չինչինյան (Միջին Արևելք), Գյուտ արքեպս. Նագգաշյան (Եվրոպա), Գիսակ եպս. Մուրադյան (Հարավային Ամերիկա), Աղան արքեպս. Պալեոզյան (Ծայրագույն Արևելք):

Սույն ընդլայնված կազմը այսուհետև ժողով կգումարի տարին երկու անգամ: Առաջին նիստը նախատեսված է առաջիկա սեպտեմբերի վերջին;

Ներկա նստաշրջանը Վեհարանի դահլիճում բացեց Գարեգին Ա. Կաթողիկոսը՝ աղոթքից հետո տալով ընդարձակ զեկույց՝ իր ընտրությունից հետո կատարված աշխատանքների և ի հայտ եկած հարցերի մասին: Քննարկվեցին հոգևոր ճեմարանի զարգացման, ներքին թեմերի վարչական կազմակերպման, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ թեմերի հարաբերության, Քրիստոնեության ընդունման 1700-ամյակի տոնակատարության Կենտրոնական Հանձնախմբի նշանակման, Մայր Աթոռի ներքին վարչական, տնտեսական և հաշվական կացության, Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի հետ հարաբերության (զեկուցում Վեհափառ Հայրապետի կողմից), Քրիստոնեական դաստիարակության, ինչպես և որոշ թեմերից ներկայացված այլ հարցեր:

Սույն նստաշրջանը առիթ հանդիսացավ Գերագույն Հոգևոր Խորհրդի բոլոր անդամներին նախ մոտիկից տեղեկանալու Մայր Աթոռի գործունեության, հաղորդ դառնալու Վեհափառ Հայրապետի գաղափարներին և առաջիկա ծրագրերին, արտահայտելու իրենց տեսակետները՝ Մայր Աթոռի գործունեության զարգացման և Հայաստանյայց Եկեղեցու առավել ծաղկման վերաբերյալ:

ՆՈՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱՐԿԵՔ ՏԱՇԻՐ ՔԱՂԱՔՈՒՄ

Օգոստոսի 6-ին Տաշիր քաղաքում կատարվեց նոր կառուցվելիք եկեղեցու հիմնարկեքի արարողություն՝ օրհնությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Սրբազնագույն Կաթողիկոսի, մասնակցությամբ Շիրակի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանի:

Վեհափառ Հայրապետին ընկերակցում էին Միքայել ծ. վրդ. Աջապահյանը, Շիրակա թեմի հոգևոր դասը, Տաշիրի քաղաքային և շրջանային իշխանության ներկայացուցիչները:

Բազմահազար հավատացյալ տաշիրցիների ներկայությամբ Վեհափառ Հայրապետն իր մյուռոնաօծ աջով օրհնեց 16 անկոփ հիմնաքարերը, որոնք խորհրդանշում են 12 Առաքյալներին, 4 Ավետարանիչներին և մեր հավատքի հորը՝ Ս. Գրիգոր Լուսավորչին, որոնց անխախտ ու անշարժ հիմքերի վրա պիտի վեր բարձրանա Ս. Եկեղեցին՝ ի փառաբանություն սուրբ Երրորդ Աստուածության:

Այնուհետև տեղի ունեցավ քարերի օծման արբազան արարողությունը՝ ձեռամբ Վեհափառ Հայրապետի և Գրիգորիս արքեպիսկոպոսի, որից հետո եկեղեցի, ևս մեկ հոգևոր օջախ, որը տարիներ հետո կյանքի է կոչվելու Տաշիր քաղաքում ապրող Կարապետյան ընտանիքի բարերար ձեռնարկությամբ և հովանավորությամբ:

Արարողության վերջում Ամենայն Հայոց Հայրապետը շնորհավորանքի և օրհնության խոսք ուղղեց ներկաներին՝ մեկ անգամ ևս հիշեցնելով, որ այս հիմնարկեքը կարևոր ու նշանակալից քայլ է Ամենակարող Աստծու հետ հաղորդակցության համար դեպի սեր ու փրկություն տանող դժվարին, սակայն ցանկալի ճանապարհին:

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԿԱՎԱԳ ԲՈՅԱՋՅԱՆ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ

Սիրելի թեմական առաջնորդ Սրբազան, հարգարժան անդամներ շրջանային և քաղաքային պետական իշխանությանց, հարգարժան անդամներ Շիրակա թեմական խորհրդի, քահանա հայրեր, հոգևոր եղբայրներ, հարազատ և հավատարիմ զավակներ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և բնակիչներ Տաշիր գավառի և Տաշիր քաղաքի մեր հյուսիսային կողմն աշխարհի,

Այսօր փառք և գոհություն եմ ընծայում Աստծուն, որ ինձ շնորհեց այս գեղեցիկ օրը, այս պատմական օրը, որ երբեք ջնջվելու չէ իմ կյանքից, իմ հիշողությունից և վստահաբար կազմելու է մի ոսկեղեն էջը ոչ միայն Տաշիր շրջանի, գավառի բնակչության պատմության, այլ նաև ամբողջ Շիրակա թեմի և հյուսիսային Հայաստանի:

Ինչու եմ հուզված այս պահուն, հարց եմ տալիս ես ինձ, որովհետև առաջին անգամն է իմ կյանքում, որ ես քար եմ օրհնում և հայոց հողի մեջ քար եմ զետեղում, որպես հիմնաքար նոր կառուցվելիք և դեպի երկինք պանալիք մի եկեղեցու, որպես խնկարկություն Աստծուն, քարեղեն փառաբանություն Աստծուն և որպես վերանորոգման շունչ մեր հավատքին և մեր ազատ-անկախ Հայաստանի վերանորոգյալ այս նոր ու պայծառ շրջանին:

Սիրելիներ, ես առիթը ունեցել եմ բազում եկեղեցիների հիմքերը օրհնելու աշխարհի չորս ծագերին: Օտար աշխարհից պոկված և օտար հողի մեջ քար եմ զետեղել Սիրիայի անապատում, Տեր Զորում: Այնտեղ, ուր մեկ միլիոն հայորդիք ավազի հետ են խառնվել, որպես ցեղասպանության զոհերը՝ մեր ապրիլյան նահատակները: Քար եմ զետեղել հողի մեջ Ամերիկայի Հյուսիսային տարածքում, Լիբանանում, Պարսկաստանում և ուրիշ երկրներում: Բայց փառք Քեզ, Աստված, փառք Քեզ, Աստված, որ տվիր ինձ շնորհքը, որ իմ Հայաստան աշխարհի հայ քարը զետեղեմ հայ հողի մեջ հայ ժողովրդի հավատքի համար: Ապրեք, ապրեք, հայ մարդիկ: Դուք ասում եք այսօր Տաշիրում, որ հայը միայն անցյալի մեջ շինված եկեղեցին չէ, որ հարգում է, հայը նոր եկեղեցի է կանգնեցնում, հայի հավատքը անցյալից եկած հիշատակ չէ միայն, հավատքը կենդանի է, գործուն է, ստեղծագործ է, և անդադար վաղը երևակայում եմ ես այս երկինքը, որին ընծայված պիտի լինի արարատանման գմբեթը հայոց եկեղեցու: Ի՜նչ գեղեցիկ է տեսնել, որ քարը Հայաստանի, հողը Հայաստանի մի անգամ ևս թրծվում է, ներթափանցվում հայու հոգուց բխած քրիստոնեական հավատքով: Ես այսօրը պատմական օր եմ կոչում, որովհետև այս տպրածաշրջանում, որքան հիշում եմ, առաջին անգամն է, որ այսպիսի մի շքեղ, մի փառապանծ վկայություն է տրվում, թե հայի հավատքը միշտ կենդանի է, նույնիսկ յոթանասուն տարիների մերժումից հետո, ոչնչացումից հետո էլի հավատքը, իր կենդանի հավատքն է արտահայտում այս եկեղեցու և գալիք ուրիշ եկեղեցիների վերականգնումով:

Ես այսօր իմ գնահատանքն եմ հայտնում ձեզ բոլորիդ և այն պատճառով, որ դուք փաստ եք տալիս, շոշափելի ապացույց եք տալիս, թե հայաստանցի ժողովուրդը իր ձեռքերով իր եկեղեցին է կանգնում, որովհետև վերջերս, հատկապես Գյումրիի՝ Լենինականի աղետից հետո մի այնպիսի գաղափար տարածվեց, որ կարծեք թե հայաստանցի ժողովուրդը միայն սպացող է դրսից եկած օգնության: Ո՛չ, մենք հազար անգամ գնահատում

ենք եկող ողջ օժանդակությունը մեր եղբայրների, բայց էլի մենք մեր ձեռքերով ենք կյանքը հաստել մեր հողից, Հայաստանից:

Այսօր այս եկեղեցու կառուցումը հայաստանցի և սուշիրցի զավակների կողմից աքանչելի մի վկայություն է, թե ա՛ս ժողովուրդը գիտակից է, պատասխանատու կզգա ինքզինքը և հավատարիմ է իր հայրերի հավատքին և նաև իր պարտականություններ է կատարում գալիք սերնդի, այս մատղաշ սերնդի, ա՛ս հայ մանկտվույն ապագայի հոգևոր պաճառության համար:

Ես այս պահուն հատուկ կերպով գնահատում եմ այն ընտանիքը՝ Կապրապետյան, որ իր ճակտի քրտինքն է խառնում իր ազգի կյանքի հետ, իր եկեղեցու կյանքի հետ: Ապրե՛ք, ով Աստծուն բաժին կհանի Աստծու տված ժամանակից, կարողությունից և կամ լիությունից, նա է արժանի Աստծուն: Դու քեզ համար միայն ապրես, ոչինչ ապրած կլինես, բայց դու քեզ համար ապրելով, քեզնից անդին և վեր Աստծուն, եկեղեցուն, հայրենիքին, պետությանը և ազգիդ համար զոհվելուդ մեջ արժեք ունես: Այո, մի տեսակ հերոսություն է այս զոհողությունն էլ: Հերոս չեն միայն նրանք, ովքեր իրենց արյունը կտան: Նրանք փառքի արժանի հերոսներ են: Լինեն հայրենիքում, լինեն Արցախում, բայց նա, ով իր քրտինքը կխառնի հայ հողին, նա էլ հերոս է: Նա, ով զոհողություն կանի իր սեփական անձից անդին, մեր հավաքական մեծ անձին, հայրենիքին ու Հայաստանին, եկեղեցուն, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նա էլ հերոս է, այն իմաստով, որ զոհվել գիտե, զոհել գիտե, իրենից զեղջել գիտե ու ազգին ընծայել գիտե: Նա, ով կամավորապես իրենից կտա ազգին, կմեծանա ազգով: Այն արժեքին, որ կտաք, այն արժեքով էլ կչափվեք: Եթե կերուխումի կտաք, կերուխումի արժեքով կչափվեք: Եթե հագուստին ու կապուտին կտաք, հագուստի ու կապուտի արժեք ունեք: Բայց նրանց բաժինը տալով, եթե հոգեկան արժեքների, անանց արժեքների, հավիտենական արժեքների համար կզոհվեք, հավիտենական կդառնաք, ինչպես մեր սրբերը, ինչպես մեր հերոսները:

Անցյալ օրը ես գնացի մինչև Գուգարաց աշխարհ, տեսել էի, իբրև առաջին թեմ, Շիրակա թեմը, տեսել էի մեր վանքերը և մեր վանքերը՝ Հառիճա վանքից սկսյալ, մինչև Յոթ վերք եկեղեցին, մինչև Մարմաշեն և մինչև այն գյուղերի եկեղեցիները, որ ա՛ցելեցի: Կենդանի բարբառն է մեր հավատքին, Աստծուն ուղղված և մեր աշխարհի հայությանն ուղղված: Գնացի Գուգարաց աշխարհ, տեսա Հաղարծինը, տեսա Գոշավանքը, տեսա Սանահինը, Հաղբատը, Օձունը: Հավատք են այդ քարերը:

Ես հարց էի տալիս ինքս ինձ, եթե մեր հայրերը տասներորդ դարին, սրանից հազար տարի առաջ, կարող էին այսպիսի վանքեր կառուցել, հապա ինչն է պակասում մեզ այսօր, որ այս տաճարները վերանորոգենք: Ազգին պատիվ բերող հուշարձանների չվերածենք միայն, այլ կենդանի եկեղեցիների, Ավետարանի քարոզության, մեր Եկեղեցու հայրերի հոգեկան ճառագայթումի վերածենք դրանք: Ինչ է պակասում մեզ: Աստված նույն կարողությունն է տվել մեզ, Աստված նույն հողն է տվել, և մեր հայրերը չունեին այն տեխնիկական բոլոր միջոցները, որ մենք այսօր ունենք: Անտարբերությունն է մեր մեծագույն մեղքը: Հայտարարում եմ մեկ անգամ ևս և ասում. — Անտարբերությունը մահացու մեղք է: Ով ինքն իրեն անտարբեր է զգում, կնշանակե, որ զգացում չունի ո՛չ Աստծու, ո՛չ հայրենի-

քի, ո՛չ Եկեղեցու, ո՛չ ազգի: Բա ինչու է ինքն իր համար ապրում, նրանից ավել ինչ արժեք ունի:

Մենք պետք է վերադառնանք քրիստոնեական մեր հավատքին, պետք է վերադառնանք այն վիճակին, որտեղից մեզ մարդիկ, որ ինքներս ազգային ոտնացրել, օտարացրել. բայց պետք չունենք յոթանասուն տարիների մասին խոսելու միայն: Ահ կբավե: Նայենք դեպի գալիք յոթանասուն տարիները: Նայենք, թե ինչ պիտի անենք մենք այսօ՛ր: Դրա համար ես ապրում, սիրելի երեխաներ, ուշադիր եղեք ինձ իբրև ձեր հայրիկը, եկել եմ Սուրբ Էջմիածնից, մեր Սրբության Սրբոցից, եկել եմ Մայր Աթոռից, եկել եմ ձեզ համար, եկել եմ ասելու ձեզ. — Երեխեք, Քրիստոսի հավատքով, մեր հայրերի շնչով, մեր նախնյաց լեզվով ու հայրենիքի սիրո գիտակցությամբ մեծանանք: Թումանյանն ասել է. «Ապրեք, երեխեք, բայց մեզ պես չապրեք»: Ես պիտի ավելացնեմ. «Ապրե՛ք, երեխեք, մեզնից ավել ապրեք: Մեզնից փառավոր ապրե՛ք»: Բայց աշխատանքով է, որ պիտի ապրեք: Եթե ուզում եք լավ ապրել, եթե ուզում եք մեզնից ավել ապրել, լծվեցեք ձեր ազգային աշխատանքներին, Ամեն:

ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՈՒՄ ՍԱՄԱՐՂԱՆԴՈՒՄ

Գեղեցիկ և գոտեպնդիչ մի պահ ստեղծվեց Ուզբեկստանի Սամարղանդ քաղաքում Հայկական Առաքելական Ս. Աստվածածին եկեղեցու օծման հանդիսավոր արարողությամբ: Պատմական եղան այն երկու օրերը, որոնց ընթացքում վերահոգման մի հոսանք անցավ հազարավոր հայերի հոգիների միջից:

Եկեղեցու օծման առթիվ առաքելությունով, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ, Սամարղանդ էր մեկնել Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես Սրբեպս. Պոզապալյանը՝ ՀՀ Նախարարների խորհրդին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահի պաշտոնակատար Լազար Սուջյանի, Տ. Տիրայր քհն. Գըլըճյանի, Բարեշնորհ Անդրանիկ Արկ. Ժամկոչյանի ուղեկցությամբ:

Ս. Աստվածածին եկեղեցու վերաբացման և օծման հանդիսավոր արարողություններին մասնակցելու նպատակով Սամարղանդ էր մեկնել նաև Հայաստանի պաշտոնական պատվիրակությունը, որի կազմում էին՝ ՀՀ արտաքին գործերի փոխնախարար Վարդան Օսկանյանը, ՀՀ մշակույթի փոխնախարար Միքայել Ստամբոլցյանը, ՀՀ փոխնախագահի օգնական Էդվարդ Ղազարյանը, մշակութային և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Ս. Աստվածածին եկեղեցին, կառուցված 1903 թվականին, տարիներ շարունակ անուշադրության մատնվելով, գտնվում էր լիովին ավերված վիճակում:

Օգոստոսի 19-ի երեկոյան հանդիսավոր պայմաններում տեղի ունեցավ Ս. Աստվածածին եկեղեցու դռնբացեքի արարողությունը՝ ձեռամբ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի: Արարողությունից հետո Սրբազան Հայրը կատարեց երեկոյան ժամերգություն: Եկեղեցու կամարների ներքո երկար տարիների ընդմիջումից հետո վերստին հնչեց հայ հոգևոր երաժշտությունը՝ նոր շունչ հաղորդելով նրա սուրբ քարերին:

Հաջորդ օրը, կիրակի առավոտյան, բազմահազար հայ հավատացյալների, պաշտոնական այրերի, մշակութային, հասարակական և այլ կազմակերպությունների անդամների ներկայությամբ Սրբազան Հոր ձեռքով կատարվեց Ս. Աստվածածին եկեղեցու օծումը:

Օծման ս. արարողությունից հետո եկեղեցու բակում տեղի ունեցավ մեծ հանդիսություն, որին մասնակցում էին և ողջույնի խոսք ասացին Սամարղանդի մարզխորհրդի նախագահ Բուլաթ Աբդուռահմանովը, Ուզբեկստանի Հանրապետության արտաքին գործերի փոխնախարար Շաֆգադի Խարտգուլովը, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի փոխնախարար Վարդան Օսկանյանը, հայ համայնքի անդամներ: Հանդիսավոր արարողության ժամանակ Ուզբեկստանի Հանրապետության նախագահի պրն. Քարիմովի հատուկ ներկայացուցիչը ընթերցեց նախագահի ուղերձ-նամակը:

Այնուհետև նորաօծ եկեղեցում Գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը մատուցեց ս. պատարագ և քարոզ խոսեց: Սրբազան Հայրը նախ փոխանցեց Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Ա Հայրապետի օրհնությունն ու պատգամը, ապա շնորհակալություն և գնահատանքի խոսք ասաց Ուզբեկստանի նախագահին, մարզի և քաղաքի ղեկավարներին՝ հայ համայնքի նկատմամբ ցուցաբերած հարգալից և ուշադիր վերաբերմունքի համար: Դրվատանքի խոսք ասաց եկեղեցու բարերար, սամարղանդցի գործարար Արթուր Մարտիրոսյանին, որի անմիջական հովանավորությամբ և աջակցությամբ էր իրականացվել եկեղեցու երկրորդ ծնունդը, հայ համայնքի անդամներին՝ իրենց հպարտանալի և աստվածահաճո ձեռնարկումի համար:

Սրբազան Հայրն ընդգծեց, որ Ս. Աստվածածին եկեղեցու վերածնունդը կարևորվում է նախ և առաջ նրանով, որ այն հանդիսանում է միակ հայկական գործող եկեղեցին Միջին Ասիայի ողջ տարածքում: «Թող նոր շուքով ու շնչով հատնի Աստծո այս նորաբաց օջախը և լույս տա ձեր բոլորի հոգիներին». այս մաղթանքով ավարտեց իր խոսքը Սրբազան Հայրը:

Այսպիսով մի նոր էջ բացվեց Միջին Ասիայի հայ ժողովրդի պատմության մեջ:



ԳԵՐԱԾՆՈՐՀ Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂՈՍՊԱԼՃԱՆԻ ՔԱՐՈԶԸ ՍԱՄԱՐՂԱՆԴԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՄԱՆ ԱՌԹԻՎ
(20 օգոստոսի 1995 թ.)

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

«Տեղափոխեալ զքեզ ի վերնական ի կաոս, քեռովբէականաս Աստուածամայր, սպասաւորեալդ ի սերովբէից և երկրպագեալդ յանմարմնական զօրաց» (Շարական):

«Տեղափոխելով քեզ քերովբեական վերնական կառույցները, ով Աստվածամայր, քե՛զ են սպասարկում սերովբեները և քեզ երկրպագում անմարմինների զորքերը»:

Սիրելի հավատացյալ քույրեր և եղբայրնե՛ր,

Շնորհակալ եմ բարձրյալն Աստծուց, որ այսօր իմ ոտքերն առաջնորդեց դեպի Սամարղանդի հայոց նորակառույց այս շքեղ եկեղեցին, որպեսզի իմ տկար ձեռքերով և աղոթքով կատարեի հավակատիքը երեկ երեկոյան, իսկ այս առավոտյան էլ՝ օծումը Ս. Աստվածածնին եկեղեցու:

Փառք Աստծուն, որ բոլորիս արժանացրեց մասնակցելու այս փառավոր հանդիսությանը, որն իր տեսակի մեջ բացառիկ է:

Անհավասիկ այսօր Կենտրոնական Ասիայում, Սամարղանդ քաղաքում, Ուզբեկստանի հայկական առաջին եկեղեցին ենք բացում: Սա սովորական երևույթ չէ մեզ համար, այլ հատուկ ու քաջալերական: Ս. Աստվածածին եկեղեցու կառուցումն ու բացումը մեկ անգամ ևս գալիս են հաստատելու և ամրացնելու մեր վաղեմի կապերը ուզբեկ ժողովրդի հետ: Հավանաբար այս է պատճառը, որ Հայաստանից պատկառելի մի ներկայացուցչական խմբով եկել ենք Սամարղանդ՝ այս օրը փառաբանելու, հանդեսներով փառավորելու և այն ճշելու մեր կյանքի տարեգրության մեջ:

Այս առթիվ, հանուն Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Գարեգին Ա Կաթողիկոսի և Հայաստանյաց Եկեղեցու ողջ միփրապետության, մեր երախտագիտությունն ենք հայտնում Ուզբեկստանի վեհմաշուք նախագահ Քարիմովին և երկրի ղեկավարությանը, որոնք հնարավոր դարձրին 1903

թվականին կառուցված և ապա քանդված հայկական եկեղեցու վայրում կառուցելու այս փառավոր եկեղեցին:

Այս հանդիսավոր պահին ունեմ ևս մեկ այլ սրտագին պարտականություն: Դա, ազգիս Սրբազնագույն Հայրապետ Գարեգին Ա. Կաթողիկոսի անունից շնորհակալանքի և երախտագիտության խոսքերն են՝ ուղղված Սամարղանդի Ս. Աստվածածին եկեղեցու բարեբար մեծահարգ տիար Արթուր Մարտիրոսյանին, որն ա՛ս եկեղեցու շինության ամենադժվարին մեկ պահին, երբ նախօրոք հավատացյալ ժողովրդից հավաքված գումարները արժեզրկման հետևանքով անարժեք էին դարձել, հանդես եկավ իշխանավայել կերպով՝ հանձն առնելով եկեղեցու և նրա շրջափակի կառուցման և բարեկարգման բոլոր ծախսերը: Թող ամենաբարին Աստված պրճ. Մարտիրոսյանին և նրա ընտանիքի բոլոր անդամներին պարգևի բաջառողջություն, գործոց հաջողություն և աստվածային հովանավորություն, որպեսզի նա կարող լինի ապագայում ևս Կենտրոնական Ասիայի երկրներում ծավալել իր աստվածահաճո գործունեությունը՝ ի փառս և ի պատիվ իր ազգին ու եկեղեցուն:

Հանուն Վեհափառ Հայրապետի, Ս. Էջմիածնից բերում եմ Ձեզ բոլորիդ, սիրելի հավատացյալ, հավատարիմ հոտ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու, սրտագին շնորհավորանքներ ու օրհնություններ՝ մաղթելով, որ հավատարիմ մնաք ձեր հայրերի սրբազան հավատքին, սիրեք ձեր Ս. Եկեղեցին և միշտ կենդանի, ապրող և հարազատ որդիները լինեք մեր Ս. Եկեղեցու՝ ձեզանով նոր կյանք տալով ձեր նորաօծ Ս. Աստվածածին եկեղեցուն:

Տակավին Ս. Աստվածածնի վերափոխման շնորհաց ինը օրերի շրջանում ենք ապրում, և պատահական չէ, որ եկել ենք այսօր Սամարղանդի Ս. Աստվածածնի անունը կրող եկեղեցու օծումն ու բացումը կատարելու: Այս տոնի առթիվ մեկ անգամ ևս վեր ենք հանում Ս. Կույսի դերը Հիսուսի կյանքում, իբրև մա՛յր ու դաստիարակ և իբրև օրինակելի մայր բոլոր կանանց համար: Մայրը ընտանիքի հիմքն է: Եթե մոր անտարբերությամբ և մեղքով ընտանիքի հիմքը խախտվի, այդ ընտանիքը կքայքայվի: Որևէ ազգի բաղադրիչ մասերը ընտանիքներն են: Որքան ամուր են ընտանիքները, այնքան ամուր և առաջադեմ է ազգը:

Հոգևոր իմաստով ևս նույնն է պարագան: Մա՛յր Աթոռ Ս. Էջմիածինը, որ Ս. Աստվածածնի անվամբ է կոչվում, մայրն է, դաստիարակն ու ևնուցիչը Հայաստանյայց բոլոր եկեղեցիների ի սիյոնս աշխարհի: Այսօր այնքան ավելի հպարտ ու գոհավոր է զգում իրեն, որովհետև այս օրհնյալ քաղաքում ունեցավ իր հարազատ նոր դստերը, որը լինելու է ևնուցիչը ձեր բոլորի հոգևոր կարիքների և դաստիարակը՝ նեղկա ու գալիք սերունդների: Թող ձեր կապը ամուր ու հաստատ մնա Ս. Էջմիածնի Մայր Աթոռի հետ, ու նրա հոգևոր հովանին անպակաս լինի ձեզանից:

Մարդկության պատմության մեջ ստեղծված առաջին կինը՝ Եվան, մեղքն ու դատապարտությունը բերեց աշխարհ, իսկ Մարիամը Աստվածմեղքն ու դատապարտությունը բերեց աշխարհ, իսկ Մարիամը Աստվածորդու ծննդյամբ փշրեց մեղքի կապանքները: Նրա միջոցով Աստված մարդացավ, հողեղենի կերպարանք ստացավ, ապրեց մեր մեջ, հրաշքներ գործեց, մարդկությանը ցույց տվեց փրկության ճանապարհը, ապա խաչի վրա իր արյունը թափեց, որպեսզի իր արյամբ փրկի կորուսյալին՝ մարդկությանը:

Հիսուի Համբարձումից հետո, ըստ առաքելական ավանդության, Ս. Կույսն ապրեց Հիսուի աշակերտներից Ս. Հովհաննեսի խնամքի տակ ևս 15 տարի, իր շրջապատում դարձավ սիրո և գութգործության առարկա:

Երբ հասավ ժամը, Աստվածամայրը փակեց աչքերը՝ փոխադրվելու համար այս աշխարհի կյանքից մի նոր կյանք: Հիսուի աշակերտները պատվով թաղեցին նրան Գեթսեմանիի ձորակում գտնվող ընտանեկան վիմափոր գերեզմանում: Ավանդությունն ասում է, որ Տիրամոր գերեզմանի վրա երեք օր ու երեք գիշեր լսվել են հրեշտակների քաղցրագեղ երգեր: Հիսուի աշակերտներից Ս. Բարթուղիմեոսը, որը հետո դարձավ Հայաստանի լուսավորիչ և նահատակ առաքյալը, Աստվածամոր թաղման ժամանակ հետու մի վայրում էր գտնվում: Երբ ճանապարհորդությունից նա Երուսաղեմ վերադարձավ՝ շատ ցավիրված լինելով Տիրամորը, ցանկացավ անպայման այցելել Գեթսեմանի ու տեսնել նրա դեմքը վերջին անգամ: Բարթուղիմեոսի ցանկությանը ընդառաջելով, եղբայրները նրա հետ գնացին դեպի գերեզման և զարմանքով տեսան, որ Տիրամոր մարմինը դամբարանում չէր: Տիրամայրը մարմնով փոխադրվել էր երկինք:

Աստվածամոր մահը եկեղեցին կոչում է ննջում, որովհետև նա իր անապական մարմնով փոխադրվեց երկինք՝ իր Որդու աստվածային փառքի մեջ ապրելու: Եվ որպես համայն մարդկության գութգործող և հոգատար մայրը, նա դառնալու էր բարեխոս տևապես մեր մեղքերի քավության համար: Մեր Եկեղեցին Աստվածածնի այս տոնը կոչել է «Տօն Վերափոխման Սուրբ Կույսի», և իրավամբ այս տոնը Հայ Եկեղեցու հինգ գլխավոր տոնակատարներից մեկն է համարվում:

Սրտագին շնորհավորում եմ հայ և ուզբեկ ժողովուրդներին, հատկապես կանանց, ազօրվա շնորհաբաշխության՝ Ս. Աստվածածին եկեղեցու օծման առթիվ: Թող Ս. Մեռոնի հեղումով այս եկեղեցու խորանում օրհնվեն մեր երկու եղբայրացած ժողովուրդների զավակները, և սերն ու խաղաղությունը տիրեն մեր երկրների վրա:

Սամարղանդում մեր առաջին ս. պատարագի այս սրբազան պահին, երբ Ս. Կույսի վերափոխման հիշատակով ևս մեր իմացական և հոգեկան աշխարհը հոգևոր խնդությամբ եռք լցնում և վեր հառնում ու պաճուճացնում ճշմարիտ կնոջ, մոր, քրոջ կերպարը, ես շնորհավորում եմ բոլորիդ և մաղթում, որ ձեր ուսերի վրա դրված ծառայության և եկեղեցասիրության լուծը համբերությամբ տանեք, և ձեզանով մենք ապագայում ուրախանանք:

Եղեք գիտակից ձեր սրբազան դերին և պարտականությանը, եղեք դաստիարակ նոր սերնդին՝ ամուր պահելով հայ մշակույթը, պատմությունն ու ավանդությունը, նաև պաճուճ պահեցեք ձեր Ս. Եկեղեցին և սիրով լեցուն ձեր աստվածասեր ընտանիքները:

«Ով երկնավոր թագավոր, անսասան պահիր քո Եկեղեցին և քո անվան երկրպագուներիս՝ պահի՛ր խաղաղության մեջ», ամեն:



ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՀԻՍՆԱՄՅԱԿԸ ԵՎ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ

Կրթությունը և դաստիարակությունը մեր Եկեղեցու գործունեության կարևորագույն մարզերից մեկն է: Դպրոցներն ու վարժարանները հայոց պատմության ողջ միջնադարյան իրականության մեջ գործել են մեր Եկեղեցու հովանու ներքո, և դեռևս Սահակ-Մեսրոպյան շրջանից սկսյալ Եկեղեցին դարձել է այն դարբնոցը, ուր իրենց հոգևոր-կրթական ծարավն են հագեցրել և թրծվել ուսումնատենչ հայ պարմանիները:

Այսպիսի զգացումներով և արժանապատվություն ու պատասխանատվություն ներշնչող գիտակցությամբ էին լցված այն բոլոր անձինք, ովքեր սեպտեմբերի 12-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի հանդիսության դահլիճում մասնակցեցին հոգևոր ճեմարանի խորհրդանշական հիսուներորդ ուսումնական տարեշրջանի բացմանը: Հանդիսությունը, որը կայացավ Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, սկսվեց «Տերունական աղոթք»-ով: Երգչախումբը, ղեկավարությամբ Բագրատ արեղա Գալստյանի և խմբավարությամբ Ռուբիկ Շարբաթյանի, նախանձախնդիր կերպով պատրաստվելով այս հանդիսությանը, ոգևորությամբ հնչեցրեց Հայաստանի Հանրապետության և Հոգևոր ճեմարանի հիմները: Այնուհետև ձայնը տրվեց հոգևոր ճեմարանի տեսչի պաշտոնը վերջերս ստանձնած Հայկազուն ծ. վրդ. Նազարյանին: Հայր Սուրբը, դիմելով ներկաներին, ասաց.

«Վեհափառ Տեր, արբազան հայրեր, հոգեշնորհ և արժանապատիվ հայրեր և եղբայրներ, սիրելի դասախոսներ, ուսանողներ, հյուրեր,

Քիչ առաջ, երբ անցնում էի Մայր տաճարի կողքով, ակամա կանգնեցի Գևորգ Դ Կաթողիկոսի շիրմի առաջ, իսկ հետո նաև Գևորգ Զ և Վազգեն Ա Կաթողիկոսների շիրիմների առջև, հոգվոց ասացի և խնդրեցի, որ Աստված մեզ ուժ և եռանդ տա՝ շարունակելու հրանց սկսած գործը այստեղ՝ հոգևոր ճեմարանի պատերից ներս: Ս. Էջմիածինը, որպես հոգևոր կրթա-

կան օջախ, սկիզբ է առել մեր առաջին Հայրապետ Ս. Գրիգոր Լուսավորիչի օրերից, ազգային խորք ու թռիչք առացել Ս. Սահակի և Ս. Մեսրոպի ջանքերով: Դարերի ընթացքում, երբ Կաթողիկոսական Աթոռը տեղափոխվել է վայրից վայր, Էջմիածնի կրթական օջախը թեև նուսրացել, սակայն չի խամրել:

1441 թ. Կաթողիկոսական Աթոռի տեղափոխությունից հետո, այս հոգևոր ուսումնական կենտրոնը կամաց-կամաց նոր շունչ և ավյուն է առացել:

1870 թ. Գևորգյան ճեմարանի հիմնադրումով այն հասնում է մեր միջնադարյան վանքերի՝ Գլաձորի, Տաթևի, Հաղբատի և Սանահինի մակարդակին: Այսօրվա մեր հոգևոր ճեմարանը 50 տարեկան է, ժառանգորդը Գևորգյան ճեմարանի, սակայն տարբեր շեշտադրումով: Երբ այն ժամանակ ուսուցչապետների մտահոգությունը աշակերտներին ընդհանուր բարձր կրթություն տալն էր, ապա այսօր այդ մտահոգությունը վերցված է մեր ուսերից: Այսօր հոգևոր ճեմարանի հիմնական մտահոգությունն է պատրաստել առողջ երիտասարդներ՝ թրծված մեր հայրերի հավատքով: 6 տարիների ընթացքում մենք այստեղ աշխատում ենք կերտել մարդուն, հայ քրիստոնյային և հայ հոգևորականին:

Մեր մաղթանքն է, Վեհափառ Տեր, որ Ձեր գլխավորությամբ և մեր դասախոսների համատեղ ջանքերով կարողանանք իրագործել այս ծրագիրը: Սիրելի տղաներ, մենք այսօր հետ ենք մնացել առնվազն 70 տարով, հետևաբար ձեր համառ աշխատանքով պիտի վերականգնենք շատ բան: Ձեր և մեր պարտքն է ճեմարանը հասցնել ոչ միայն Գևորգյան ճեմարանի մակարդակին, այլև այն դարձնել բարձրագույն կրոնական հաստատություն, որին հետևելով մեր ուսանողները այլևս կարիք չունենան մեկնելու օտար ափեր ուսում և լույս մուրալու:

Ես վստահ եմ, որ Վեհափառ Հայրապետը ձեզանից ոմանց պիտի ուղարկի զանազան ուսումնական կենտրոններ, որպեսզի ամբարած գիտությամբ վերադառնաք այս հարկը, և այստեղի ուժերի հետ միասին կարողանանք իրագործել մեր Սուրբ երազը: Հայաստանի ազատ ու անկախ այս մթնոլորտը մեզ տալիս է ամեն հնարավորություն, որից մենք պիտի լավագույնս օգտվենք մեր ժողովրդի հոգևոր կարիքներին ծառայելու համար, ապա թե ոչ՝ գայլեր միշտ կան գրավելու մեր հոտը:

Սիրելի սաներ, ձեզ նայում են ոչ միայն անցած 50 տարիները, այլ նաև մեր բոլոր հայրերը, սուրբերն ու մարտիրոսները, մեզ նայում է մեր ամբողջ քրիստոնյա անցյալը, թե մենք մեր այս հնարավորություններով ու կարողությամբ ինչ ենք անելու: Մեր դատավորը լինելու է մեր կյանքը, ընթացքը, աշխատանքը:

Վեհափառ Տեր, օրհնեցեք 1995—96 ուսումնշրջանի այս առաջին օրը, թող Աստված տա, որ սերմնացանի մեր այս սերմերը տան ընդ միո երեսուն, վաթսուն և հարյուր՝ ի փառս Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցվո և Ձեր ու մեր բոլորի ուրախության»:

Հայր Սուրբի խոսքին հաջորդեց «Զանճառելի լուսոյ մայր» շարականը, որը թնածող կոմիտասյան ոգու խաղաղությունը պարգևեց ներկաների հոգիներին, որն ամբողջացավ ու օղակվեց Տերունական խոսքով: Ավետարանից «Սերմնացանի առակը» ընթերցեց Կարապետ արեղա Հարությունյանը: Այնուհետև Զ լսարանի սան Գեղամ Մարտիրոսյանի ասմունքով հանդիսականների մոտապատկերում ուրվագծվեց և Դանիել Վարուժանի «Վան» բա-

ճաստեղծության հանգս, հաղթանդամ և մայրամուտի շողերով ողողված սերմանողը: Ապագայապաշտ և զարկված հայրենիքի Արարատյան լանջերը կենսաժպիտ շողերով ցողված տեսնելու տեսիլքը իր հոգու մեջ անուցող բանաստեղծի՝ Թումանյանի «Հայրենիքիս հետո» բանաստեղծության երաժըշտական կատարումը նախ թախիծ, ապա՝ հաղթականություն դրոշմեց ներկաների հայացքներում: Երգչախումբը արձագանքը դառնալով ունկնդիրների հույզերի՝ հետց այդ պահին հոգեթով մրմունջով հնչեցրեց «Ով Հայոց Աստված» երգը, որը մշտապես պիտի մնա հայ մարդու՝ Աստծուն հղած ամենահիրաշնալի աղոթք-կոթողներից մեկը:

Հավարտ և ի լրումն ամենայնի ներկաներին իր հայրական օրհնությունը բաշխեց Վեհափառ Հայրապետը.

«Սիրելի հոգևոր եղբայրներ՝ միաբաններ Մայր Աթոռի, թեմական առաջնորդներ, սիրելի տեսուչ հոգևոր ճեմարանի և դասախոսական կազմի անդամներ և շատ սիրելի ուսանողներ հոգևոր ճեմարանի,

Այս առավոտը անպայման պիտի արձանագրվի ճեմարանի պատմության մեջ ոչ թե պարզապես գրագրական պարտ մը կատարելու համար և էջ մը գետեղելու համար հիսունմեկերորդ նոր տարեշրջան բառերը, այլ պիտի արձանագրվի անոր համար, որ մենք ավարտեն եղբը քառասունհինգին վերաբացված ճեմարանի հիսունամյակը, նոր հիսունամյակի էջն է, որ բացած կըլլանք: Այս գիտակցությունը, թե նոր երկրի մեջը մեր հայրենիքին, նոր դարաշրջանի մը այս սկզբին և նաև թույլ տվեք ըսելու, որ իմ ալ կաթողիկոսության առաջին այս տարին և առաջին բացումը կկատարվի հոգևոր ճեմարանի՝ ինձ համար և բոլորի համար նոր ոգևորության աւիքի մը սկիզբը պիտի դառնա այս օրը՝ 12-ը սեպտեմբերի:

Պատմության անդրադառնալը անհրաժեշտ չէ: Բոլորդ ալ գիտեք Գևորգյան ճեմարանի փառքը: Սուրբ Էջմիածինը, Մայր Աթոռը առանց Գևորգյան ճեմարանի պիտ մնար գեղեցիկ, հանկուցիչ, գրավիչ անուն մը, բայց ոչ այնպիսի ներգործություն մը, որ մնայուն և անջնջելի հետք թողած ըլլար մեր արդի պատմության մեջ, այնքան խորունկ, յուրահատուկ հետք մը, առանց որու մեր նոր շրջանի պատմությունը չէր կրնար գրվիլ այնպես, ինչպես գրվեցավ:

Դժվարին օրերից հետո, ճեմարանի քառհինգ տարիներ փակվելուց հետո, քառասունհինգին Գևորգ Զ Հայրապետի օրոք վերաբացվեց: Նոր առաքելության մեջ մտնելու գաղափարով ճամփա ելավ երանելի Հայրապետը, բայց երկրի պայմանները, քաղաքական դրությունը թույլ չէին տալիս, որ ազատ լինի հոգևոր ճախրանքը ճեմարանի: Բայց այսօր մենք ունենք բոլոր տվյալները, լինելու և անելու այն, ինչ որ կհավատանք, որ Աստված կուզե և եթե կհավատանք, որ մեր ուզածն էլ Աստուծո ուզածն է, այն ժամանակ միայն ու միայն պայծառ ապագա կա մեզ համար:

Այսօրվա հանդեսը իր այսքան կոկիկ, ամփոփ բովանդակությամբ ես կնկատեմ խոստում գալիք օրերի առավել պայծառության համար: Նախքան իմ պատգամը տալը ես մեկ անգամ ևս կողջունեմ հոգևոր ճեմարանի նոր տեսուչին: Երբ իր մասին խոսեցի փակման հանդիսությանը, ինքը այստեղ ներկա չէր: Ահավասիկ հուլիս 14-ից այս կողմ ոգի ի բոին լծված է հոգևոր ճեմարանի այս նոր տարեշրջանի աշխատանքներին և հառաջիկային էլ՝ այս տարվա ընթացքում բնականորեն պիտի կատարվեն նոր ծրագրումներ ապագային որակային տեսակետով առավել ևս բարձրացնելու և ուժեղաց-

ձելու ուսուցման կազմավորման ընթացքը մեր այս ձվիրակաձագույն հաստատության, որ հոգևոր ճեմարանն է:

Անգամ մը ևս, Հայր Սուրբ, կշնորհավորեմ քեզ: Այս ճեմարանի սան ես, այս ճեմարանի հսկիչ եղած ես, գացիր արտասահման, նոր հորիզոններու բացվեցար, ուրիշ եկեղեցիներու, ուրիշ դպրեվանքերու, ուրիշ երկրներու մշակույթեն նոր ներդրումներ քու մեջդ խառնեցիր և այսօր սիրահոժար կամքով ընդառաջեցիր մեր հրավերին: Եկար և ամբողջ կյանքդ խառնիր անվերապահ և ամբողջական ինքնատվչությամբ, ինքնըննճայումով այս հաստատության և արձանագրիր անունդ այնտեղ, որպես հիշատակելի անուն այն մեծ դեմքերուն, որոնք այս ճեմարանին տվին այն, ինչ որ հպարտության առիթ եղավ և է մեր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և ամբողջ Հայ Եկեղեցու համար: Ուժ և կարողություն քեզ, համբերություն և աջակցություն ձեր բոլոր գործակիցներին, ուսուցչական կազմի հոգևորական և աշխարհական անդամներին և մեր սաներին:

Ես երեկ վերադարձա վեցերորդ այն Հովվապետական այցելությունից, որ ինձ մեկ անգամ ևս մի նոր առիթ տվեց ավելի մոտից հաղորդվելու համար ժողովուրդ կոչված հարստության հետ, որ մեր ազգի գերագույն հարստությունն է: Եթե Աստվածաշունչի մեջ կասվի՝ մարդն է լծակը տիեզերքին, «Մարդ է, որ գործէ զերկիր և երկիր էր աներեւոյթ եւ անպատրաստ», որովհետև դեռ մարդը չկար, մարդ չէր, «որ գործէր զերկիր»: Ես այս առավոտ ինձ թույլ եմ տալիս ասելու, որ հայն է մեր երկրի գերագույն հարստությունը. մարդը՝ հայ մարդը, իր ներքին հոգեկան խառնվածքով, իր ունեցած տաղանդների անվերապահ, ամբողջանվեր ընծայումով, անսակարկ, աննահանջ և անշահախնդիր:

Ազգի գործը բիզնես չէ, ազգի գործը ապրուստ շահելու գործ չէ, ազգի գործը, Եկեղեցու գործը, մտքի գործը վայելք է առաջին հերթին և բարիք է՝ վայելքի իբրև բնական արտահայտություն: Եվ այսօր, երբ այդ ժողովըրդին ես ճանաչեցի, ինչպես երեկ ասացի Վրաստանում, երանի մեր բոլոր հոգևորական և աշխարհական ծառայողները առիթ ունենան շարունակ ժողովրդի հետ հաղորդվելու: Ժողովրդից ստացած ներշնչումը ո՛չ գրքերի տված ներշնչումին է նմանվում և ո՛չ էլ հուշարձաններից եկող մեր ստացած պատմական ծանոթությանը կնմանի: Ինչպե՞ս աչքերիս առջևից հեռանա պատկերը այն երեխաների, ինչպե՞ս ականջիս մեջ մարեն ձայները հայ ժողովրդի այդ մատղաշ զավակների ձայների և, մանավանդ, ինչպե՞ս ես արձագանք չլինեմ ձեր այն սպասումների, ակնկալությունների և կարիքների, որոնք ժողովրդի հետ հաղորդության ընդմեջեն միայն կզգաս:

Հետևաբար, մենք այսօր եթե կապրենք մի նոր դարաշրջան մեր Հայրենիքի պատմության մեջ և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պատմության մեջ, եկեք արժեցնենք այդ պահը, որովհետև ապագա սերունդը մեզ երբեք չպիտի հարցնի, թե դուք ի՞նչ եք ստացել ձեր հայրերից, այլ ապագա սերունդները մեզ պիտի հարցնեն մեկ բան. «Դուք ի՞նչ տվիք մեզի»: Դուք ուսանողներդ, ամեն մարդ, որ այս հաստատության մեջ կապրի, իր օրը ամբողջապես պիտի ապրի հետևյալ գաղափարով. երբ ես այս հաստատությունից դուրս ելնեմ, ժողովուրդը ինձնից ի՞նչ պիտի քաղե, ի՞նչ պիտի լիներ եկին և Աստված ու Հայրենիքն են պահանջում:

Եթե վերք կա ազգին մեջը, ո՞ւր է ձեր բժշկության դեղը, եթե երբեք կարիք կա, ո՞ւր է ուղղվելու ձեր ուժը: Պիտի ըմպեք այն այս հաստատու-

թյունից՝ հոգևոր ճեմարանից: Մի օր, երբ Եգիպտոս էի գնացել դասախոսության, այնտեղ այցելեցի Կահիրեի ամերիկյան համալսարան: Համալսարանի ճակատին գրված էր մի տող. «Ներս մտեք սովորելու համար, դուրս ելեք ծառայելու համար»: Սքանչելի նշանաբան, որ ամեն մեկը պետք է իր սրտի մեջ արձանագրի: Կերպարանափոխության մեկ հսկայական հոսանք և հոգեկան ջրտուք է այս հոգևոր ճեմարանը: Եվ դուք երբ քիչ առաջ երգեցիք, չգիտեմ ինչու, իմ միտքը եկան այն բառերը, որ Երուսաղեմի Պատրիարք Թորգոմ Գուշակյանը գրեց, և որպես հոգևոր ճեմարանների հիմն՝ Երուսաղեմի Ժառանգավորացին, Անթիլիասի Դպրեվանքին և կարծեմ թե կրնանք մենք հոգևոր ճեմարանին համար զայն նկատի ունենալ.

Կրոնի հուրն և ազգին սեր,
Ջուգյակ իղձեր սերտ և սեղմ,
Ներշնչումին մեր հոգվոց,
Թող լինին մեր սրտից բոց:
Երկուքն լինին անբաժան,
Մեր սրտերուն արբառն,
Մայր մեր դու ճվիրական
Եկեղեցի Հայկական,
Ընդունե մեր սրտին գոհը,
Զոր քեզ բերենք հոգվով գոհ,
Ճեմարանին հարկին տակ,
Մենք՝ սաներս հայկական:

Ինչ որ պիտի տաք, դուք զձեզ պիտի տաք, սիրելի եղբայրներս, մենք զմեզ պիտի տանք, բայց զմեզ տանք այնպես, որ տալիքը տրվելիք դառնա: Դատարկ սափորից և անհոսանք աղբյուրից ի՞նչ կապասես, անպտուղ ծառից և դատարկ մարդուց ի՞նչ կապասես: Լինենք, որ անենք, գիտենանք, որ սովորեցնենք, մեկ խոսքով մեր ներքին էությունները պետք է, որ Թաբոր լեռան նման կերպափոխի մեզ, լույսը իջեցնի մեր մեջ և այդ լույսը մեզնից տարածի, ինչպես երբ Հիսուս և երեք առաքյալները իջան և ժողովուրդի մեջ այդ լույսը տարածեցին:

Ես այսօր ողջունում եմ մեր հոգևոր ճեմարանի այս նոր շրջանը: Ուրախությամբ տեղեկացա, որ մեր աշակերտության թիվը 97-ի է հասել, բայց ինչ էլ լինի թիվը, ես առավել կհավատամ որակին: Թիվը կարևոր է: Չեմ ուրանում ու թերագնահատում, բայց թիվը մեծ ուժ չէ, եթե ինքը չլիցքավորվի հոգեկանությամբ ու մտավորականությամբ և, մանավանդ, առաքելությամբ: Գիտության նպատակը գիտությունը չէ, գիտության նպատակը կյանքն է: Եվ եթե երբեք մենք ամբողջ մեր ուսումը կառնենք պարզապես ապրելու համար, այդ ինձ համար ուսում չէ: Ուսումը կառնենք մարդ լինելու, հոգևորական դառնալու և կյանքի այնպիսի քարոզիչներ լինելու մեր կյանքով, մեր գործով, որ Աստված իր կողմից մեզ տրված կյանքը արժևորված զգա, ինչպես քիչ առաջ Ավետարանը կարդացվեց այստեղ, սերմի նման, որ կցանվի: Մենք ի՞նչ տեսակ ընդունարան պիտի լինենք սերմին. փո՞ւշը պիտի լինենք, ժա՞յռը պիտի լինենք, կոխված ճամփա՞ն պիտի լինենք, թե՞ պարարտ հողը:

Մարդու և բնության տարբերությունը այն է, որ բնությունը չի կարող ընտրել իր ըլլալիքը, իսկ մարդկությունը կարող է ընտրել իր ըլլալիքը: Եթե

անջրդի հող ես, ջրարիի հողի վերածվիր, եթե փշոտ անտառ կամ մացառ ես, փուշը հեռացրու՝ մեկ խոսքով, դու հող չես անշունչ, դու կամք ես, հոգի ես, միտք ես, եղիր ընդունարան այդ գիտության և ճշմարտության:

Ահավասիկ, թե ի՞նչ զգացումներով և ի՞նչ հեռանկարներով ես կողջունեմ այս տարին և նաև ինքզինքս կամավորապես կընծայեմ մեր հոգևոր ճեմարանին, որպես մեկը դասախոսներից: Հակառակ բոլոր իմ բազմատեսակ և բազմաճյուղ ծանրության աշխատանքների, ինչ որ ազատ ժամանակ գտնեմ, այն տեսուչի հետ միասին պիտի անցնեմ ճեմարանի մեջ: Գեթ մեկ օր գամ, մեկ առավոտ, որպեսզի լինեմ ձեզ հետ և ձեզ հետ լինելով՝ ես նախ առավել ևս թարմանամ, ավելի ևս հոգեկան, մտավորական աշխարհի հետ շաղախվեմ, և կարենանք այս գործը առաջ տանել: Երբ մեր ժողովուրդը նայի Էջմիածնին, այլևս միայն Իջման Սեղանը չտեսնի, միայն Վեհարանը չտեսնի, միայն գմբեթը չտեսնի, միայն Տրդատա դուռը չտեսնի, այլ մարդը տեսնի, ձեզ տեսնի, շնչավորում և շունչ տվող, և երբ որ ձեզ տեսնի, այն ժամանակ տեսած լինի Էջմիածինը իբրև առաքելություն:

Ահա թե ի՞նչ զգացումներով ես ողջունում եմ նաև մեր Հայաստան աշխարհի մեջ նոր հոգևորականության և կրոնական դաստիարակության շարժումի ծավալումը: Ահավասիկ հինգ տարիներից ի վեր ունենք Սևանի դպրանոցը, Շիրակա թեմի դպրանոցը, կբացվի նաև Երևանի պետական համալսարանի մեջ աստվածաբանության հատուկ բաժինը: Այս բոլորը ես կնկատեմ կրոնական վերարթնության գեղեցիկ երևույթ և կողջունեմ բոլորը հայրական քաղցր սիրով և Մայր Աթոռի հոգևոր ճեմարանը կդիտեմ այս բոլորի մի տեսակ մագնիսը, որպեսզի Մայր Աթոռի ճեմարանը դառնա մեր բոլոր դպրանոցների մի տեսակ ներդաշնակող ուժը, և մենք գիտությունը Եկեղեցուն ծառայեցնելու արվեստը սովորենք այս բոլոր դպրանոցներով և, մանավանդ, կարենանք մեր նորացյալ Հայրենիքի անկախացյալ պետականության բերել մեր Եկեղեցու ներդրումը Աստուծո փառքին, մեր Հայրենիքի ծաղկումին և մեր Եկեղեցու պայծառության համար:

Ողջ լինեք, գիտակցությունը այսօրվան խմորի պես թող ներգործի ձեր ինն ամիսների այն աշխատանքի մեջ, որ դուք պիտի տանեք հոգևոր ճեմարանի այս կամարների տակ: Աստված օրհնի ձեր գործը, և նաև արտասահմանի հայ ժողովրդի մեր բոլոր գավակները հպարտանան, երբ տեսնեն, թե ճեմարանը այսպես կծաղկի: Այսպես եմ ասում, որովհետև մենք ունենք ներկայացուցիչներ կամ անձեր Ամերիկայից, Ֆրանսիայից, Զվիցերիայից և ուրիշ տեղերից, և թող իրենք տեսնեն, որ ճեմարանը օրեօր աճող հաստատություն է և թող իրենք տեսնեն, որ կարողանան գնալ և ճեմարանի մեջ այն, ինչ որ տեսան, իբրև հոգի անոր խոսնակը լինեն իրենց գործունեության բոլոր դաշտերի մեջ, որոնց մեջ կգտնվին իրենց ապրած երկիրներու մեջ:

Թող Աստված օրհնի այս նվիրական և սուրբ գործը»:

Հոգևոր ճեմարանի 1995—96 թթ. ուսումնական տարվա բացման հանդիսությունն ավարտվեց «Տերունական աղոթքի» և «Հայրապետական մաղթանքի» երգեցողությամբ:

ՍԱՄՎԵԼ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Զ լսարանի ուսանող

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑ�վՈ ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՄԻՋԹԵՄԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ՔԵՍԱՊՈՒՄ

«Երթայք յաշխարհ ամենայն
եւ քարոզեցէք զաւետարանն
ամենայն արարածոց»
(ՄԱՐԿ. ԺԶ, 15)

1. Երկու խոսք

Սույն թվականի օգոստոսի 28-ից սեպտեմբերի 4-ը Սիրիայի գեղատեսիլ անկյուններից մեկում՝ Քեսապում, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Արամ Առաջինի հովանավորությամբ և Բեյրութի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Սուրեն արքեպիսկոպոս Գաթարոյանի նախագահությամբ, տեղի ունեցավ Հայաստանյայց Եկեղեցվո կիրակնօրյա դպրոցների ամենամյա միջթեմական խորհրդակցական հանդիպումը՝ «Եկեղեցին և ընկերությունը» թեմայով:

Համագումարի աշխատանքներին, կիրակնօրյա դպրոցների վարիչ-ուսուցիչների նախաձեռնությամբ, այս անգամ իրենց մասնակցություն էին բերել նաև Հայաստանի աշխարհի կիրակնօրյա դպրոցների տասնմեկ ուսուցչուհիներ:

2. Յղագս ամենայնի փառք քեզ...

Հայոց հինավուրց հողն ինքնաթիռի պատուհանից առավել է փոքրացել, դարձել ափաչափ: Սիրտս էլ է փոքրանում, ցավից կուչ գալիս: Կրկին անգամ եմ համոզվում, որ աշխարհում ոչինչ այդքան քաղցր չէ, որքան նրա

մաքրամաքուր և լոկրթ երկինքը, ծիծառների ծիծղուն ճովողյունը, հեռուներից դեպ հայրենիք դարձող հայոց կռունկի մոխրոտ թևերի հոգնությունը... Հազիվ եմ լռեցնում սրտիս ձայնը, որ ի լուր ամենքի չձայնի երկրիս ու ազգիս անցյալի դժվարին, սակայն ապագայի լուսապսակով կերտվող մաքրամաքուր ու սրբալույս պատմությունը: Այս ամենը միայն խոհեր են: Իսկ ինքնաթիռը համառորեն հաղթահարում է տարածության ու ժամանակի անհամատեղելի երկվությունը՝ ի տար աշխարհ տանելով Հայաստանի կիրակնօրյա դպրոցների տասնմեկ ուսուցիչների: Նրանց, ովքեր հայոց սրտի յուրքում մեկ առ մեկ թևրթատելու են հարազատ պատմության յոթանասնամյա տարիների ճերմակ էջերը, վեր են հանելու սեփական հավատքի վերազարթոնք ապրող ժողովրդի հոգու խանդավառությունը, մտքի վեհաթռիչ սլացքը, պայծառատեսությունը:

Սրտիս օվկիանոսում այլևս ալեբախություն չկա: Համատարած հանդարտություն է, քանզի հեռավոր Հալեպի օդանավակայանը խիստ անհրապույր է և սառը: Օտարալեզու մարդկանց բազմության մեջ, ընկերներիս հետ մեկտեղ, որոնում եմ հարազատ ու արտամոտ հնչյուններ, մտերմիկ ժպիտներ: Եվս մի քանի դժվարանցանելի վայրկյաններ, և տեղիս հայկական համայնքի ներկայացուցիչների ջերմ ժպիտներից, ասես, հոգս է ցնդում օտարության զգացումը: Ուրախությունից ցնծացող սիրտս իր աղոթքն է հղում առ Բարձրյալն Աստված՝ անընդմեջ կրկնելով. «Փառք Քեզ Աստված, փառք Քեզ, յաղագս ամենայնի Տէր փառք Քեզ...»:

3. Ի տեղի հայտագրի

Ընդառաջող ճանապարհը Հայաստանի պատվիրակության, Հալեպի կիրակնօրյա դպրոցների ուսուցիչ-ուսուցչուհիների հետ համատեղ, տանում է դեպի անհամար անակնկալներով աղեցուն Քեսապ, որի գողտրիկ բնաշխարհը հարազատ ելևէջներ է անթեղել ամեն մի հայաստանցու համար: Ավելի շուտ այն մի փոքրիկ Հայաստան է՝ բնապատկերների նմանողությամբ: Թվում է, թե Հայոց երկրից մի պատառ հրաշքով պոկվել, եկել ու մոլորվել է այս կողմերում:

Ահա և Քեսապը, որ մեզ ջերմորեն և սիրով են դիմավորում Բեյրութից եկած ուսուցիչ-ուսուցչուհիները:

Օգոստոսի 28-ն է, երկուշաբթի: Համագումարի պաշտոնական բացումը տեղի է ունենում ժամը 18-ին, Սուրբ Աստվածածին եկեղեցում: Տերունական աղոթքից հետո հնչում են Հանրապետական և Կիրակնօրյայի մաղթերգերը: Այնուհետև բացման խոսք է ասում կիրակնօրյա դպրոցների վարիչ-տնօրեն Հոգեշնորհ Տ. Սեպուհ ծայրագույն վարդապետ Սարգսյանը:

Ողջույնի խոսք է ասում Բեյրութ հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Սուրեն արքեպիսկոպոս Գաթարոյանը: Ընթերցվում են Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Արամ Առաջին Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի՝ համագումարին ուղղված ողջույնի խոսքերը:

Այս և հետագա օրերին մասնակից ուսուցիչների համար Քեսապի Քրիստոնեից ջանից ամառային կենտրոնում, ուր հյուրընկալվել էին նրանք, դասախոսություններ են կարդում Հոգեշնորհ Տ. Սեպուհ ծայրագույն վարդապետ Սարգսյանը, Հոգեշնորհ Տ. Մեղրիկ վարդապետ Բարիկյանը, Հոգեշնորհ Տ. Մաշտոց աբեղա Չոպանյանը, Արժանապատիվ Տ. Արամ

քահանա Գըլըճյանը, Բարեշնորհ Նուպար սարկավագ Պերպերյանը, կիրակնօրյաների փոխվարիչ-տնօրենուհի տիկին Սատոիկ Մ. Թաշճյանը: Բոլոր այս դասախոսությունները, փոխկապակցված լինելով միմյանց, կազմում էին մեկ ամբողջություն և, ի վերջո, հանգեցնում մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի ճշմարտագույն պատասխանին. «Ես եմ ճանապարհն եւ ճշմարտութիւն եւ կեանք»:

Համաժողովի նախավերջին օրն առավել խորին խորհուրդ ունի, զի հավաքական խորհրդածություն ու խոստովանանքը դեպի բարեգութ Աստծո դուռը տանող դժվարին, սակայն բաղձալի այն ճանապարհն է, որին ձգտում է յուրաքանչյուր ճշմարիտ քրիստոնյա:

Սեպտեմբերյան երրորդ օրն անմեկնելի է: Սուրբ Աստվածածին եկեղեցում մատուցվում է սուրբ և անմահ պատարագ, հիշեցնելով մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի մարմնի և արյան հաղորդակիցներն են դառնում Կիրակնօրյայի մեծ ընտանիքի ներկա ուսուցիչները:

Հավարտ սուրբ պատարագի կատարվում է հոգեհանգստյան արարողություն՝ կիրակնօրյաների հիմնադիր հանգուցյալ Հայրապետների և վարիչ-տնօրենների հոգիների խաղաղության համար:

Օրը վերջակետվում է խարույկահանդեսով:

Սեպտեմբերյան չորրորդ օրվա առավոտը ամենքի հիշողության մեջ այդպես էլ պիտի մնա որպես բարեկամության ու հրաժեշտի այգաբաց: Սրտաբուխ խոսքերից հետո համաժողովի մասնակիցները, սեփական հուշերին ապավինած, մեկնում են այն հաստատ համոզումով, որ այս կերպ ոչ թե բաժանվում, այլ ընդհակառակը, է՛լ ավելի են մտերմանում բարեկամները, առավել ևս ազգիս զավակները, քանզի երկիր մոլորակի որ ծայրում էլ լինեն, միևնույնն է, յուրաքանչյուրի հոգու խորքում անպայման անթեղվելու է սիրո կրակը՝ փյունիկ թռչնի նման կրկին վերընձյուղվելու հաստատ համոզումով...

4. Մի՛ երկնչիք յայնցանէ, որ սպանանեն զմարմին
եւ զոգի ոչ կարեն սպանանել...

Հրաժեշտը Հայոց հինավուրդ հողից ժամանած պատվիրակության համար դեռևս համաժողովի ավարտ չէ:

Հեռավոր ուղին նրանց տանում է դեպի պատմական Լավոդիկիե կամ Լաթաքիա:

Մեզանից ամեն մեկը յուրովի է նայում շրջապատին: Թվում է, թե ամենուր հայն իր հետքն է թողել, ավելի շուտ այն խարսխվել է աշխարհի սրտին, որպեսզի մի օր մոխիրներից կրկին վեր հառնի հայի ոգին, մեկնի ձեռքը առ Ամենակարող Տերը՝ հայցելու միության և հավերժության հավիտական ցանկության իրականացումը:

Ահա և Լաթաքիայի Սուրբ Աստվածածին Եկեղեցին՝ հիմնված 1254 թվականին: Մեզ դիմավորում են հայկական գաղութի ներկայացուցիչները՝ Դանիել ավագ քահանա Գևորգյանի ղեկավարությամբ: Այստեղ, Առաջնորդարանի բակում, ինչպես Սիյուռքի բոլոր եկեղեցիներում, Հայոց Մեծ Եղեռնի խորհրդանիշ-հուշակոթողն է: Սրբոց Նահատակաց վարժարանի պատմությունը ևս նույնքան գեղեցիկ է ու ավանդական, որքան տեղի ամեն մի հայ ընտանիքինը: Այո, 400 ընտանիք ունեցող համայնքի ճակա-

տագիրը հար և նման է ժողովրդիս ճակատագրին՝ աշխարհի ո՛ր ծայրում էլ ապրելիս լինի:

Կրկին ճանապարհն է մեզ ուղեկցողը, որ Հալեպ է տանում: Սպասվող անակնկալների մասին առայժմ խորհել չենք կարող:

* * *

Այսպես, աստղանիշերով եմ կամենում առանձնացնել հետագա ասելիքս: Ավելի շուտ, ա՛ն արտի խոսք է, հոգու մրմունջ, ժամանակի հնքն ուսած հողվորի «Հորովել»-ն է և պանդուխտի «Կռունկ»-ը: Այն մի ողջ ժողովրդի քայլող բողոքն է ու անպարագրելի ցասումը:

Ես, որ ժողովրդիս պատմության փոքրիկ պատառիկն եմ ուսել, Հայոց Մեծ Եղեռն ասելիս դասագրքիս պատմություններն ու Ծիծեռնակաբերդի վեհ բարձունքին վեհորեն թիկնած հուշարձան-կոթողն եմ հիշել: Այն նաև Վեհափառ Հոր շուրթերից հնչող աղոթք-մրմունջն էր ինձ համար: Այսօր արդեն իմ հեքիաթը իրականության զգեստն է հագել: Անապատով ձգվող մայրուղին անհրապույր բնակավայրերով գնում է, գնում: Վաղուց սկիզբը չի երևում, իսկ վախճան կարծես թե չկա: Մղձավանջ հիշեցնող արթմնի մի երազ է այն: Սա էլ Տեր Զոր բնակավայրն է: Ահա և Սրբոց Նահատակաց եկեղեցահամալիրը: Մեզ դիմավորում են սիրով, ասես մի փոքր էլ զարմացած: Առաջին հայացքից ուշադրություն են գրավում շրջապատի խորհրդավորությունը, դեռևս մուտքից սկսվող, պատերին փորագրված, ավետարանական արբալույս տողերը, ամենուր ծվարած անմեկնելի լռությունը..., որ մեջընդմեջ խախտում են այցելուները: Մեզ հյուրընկալում է այդտեղ գտնվող Հալեպ քաղաքի Սուրբ Գևորգ եկեղեցու հոգևոր հովիվ Արժանապատիվ Տ. Նարեկ քահանա Զերենցյանը:

Մեր փոքրիկ խումբը խորին ակնածանքով ու երկյուղով է մտնում եկեղեցի: Տեր Աստված, ներիր տողերիս անարժան ու ճվաստ հեղինակին, որ այսօր, անմեկնելի ու անթաքույց մի զգացում հոգում անթեղած, ընկերներիս հետ վար եմ իջնում այս ոլորապտույտ աստիճաններով: Այս ի՞նչ է, Տե՛ր: Գուցե դեռ չեմ արթնացել: Ավելի ճիշտ այս երազը տեսնում եմ բաց աչքերով: Ա՜խ, աստ ի տես ողջ աշխարհի հանգչող այս ոսկորները, Ավետարանի թերթերից քաղված և պատերին խաղաղ ճիրհող այս տողերը, այս լուսանկարներն ու գաղտնի փաստաթղթերը, համառորեն մեզ չեզթարկվող արցունքի այս բարակ վտակները... չէ՛, բառերս աղքատ-աղքատ են, հոգիս՝ քարացած մի ժայռաբեկոր: Միայն «Տեր ողորմյա»-ի հոգեպարար հնչյուններն ու Պահպանիչի խոսքերն են դույզն-ինչ սթափեցնում մեզ:

Հոգեցունց ապրումները շարունակաբար ուղեկցում են ինձ: Հոգուս աչքերով կարծես տեսնում եմ ճերկի մեջ հաստիկի փոխարեն ընկնող հողվորին, որդու եղերական մահվանն ականատես մոր խելակորույս շարժումները, հոգու ցավից դեպ Աստված ձեռքերը վեր կարկառած մամիկին...

Ամենացնցողը դեռ չենք վերապրել: Ահա և Մարգադեի ճոր-ճոր կառուցվող Սուրբ Հարություն մատուռը: Քիչ այն կողմ բլրալանջի հողը ինչ-որ մեկի ձեռքով ճեղքվել է, բաժանվել երկու մասի, ինչպես ժամանակին իմ ժողովրդի սիրտը ճեղքեցին անողոքաբար: Մեզանից յուրաքանչյուրը հայացքով ինչ-որ բան է որոնում: Խոնարհվում ենք մի փոքր: Ո՜վ զարմանք... (բայց գուցե ամենևին էլ զարմանք չի կարելի կոչել այն զգացու-

մը, որ մենք ունեցանք): Այս պահը երբեք-երբեք չեմ պատկերացրել: Սիա, հողաշերտի տակ, աչքերիս առջև ոսկորներ են, ազգիս ամեն զոհերի, ավելի շատ մանկանց ոսկորներ: Գոնե ես ալևս ոչ մի բան չեմ գտնում՝ արտահայտելու կամ թե նկարագրելու տեսածս: Ակամա աչքերս դեպի Տեր-ը դարձնելով և ափիս մեջ ամոր սեղմելով հողախառը ոսկորները՝ ակամա մրմնջում եմ իմ նորօրյա աղոթքը. «Տե՛ր, եթե աշխարհն ահագամ համրացել է, ապա ոչ թե դժկամությունից, այլ նրա սիրտը ևս քարացել է անպատմելի դաժանությունից, լեզուն քիմքին կպել: Իմ ժողովրդին միայն Բարձրյալիդ բարեհաճությունն է անհրաժեշտ: Այնպես արա, որ փյունիկի նման մոխիրներից կրկին վեր հառնած ազգիս համար փառահեղ պատմությունների նոր էջեր գրվեն, դարձրու նրան Քո ընտրյալ ժողովուրդը, զի նրանցից ոչ ոք չերկնչեց, երբ սպանում էին իրենց մարմնապես, սակայն անկարող էին մեռցնել հոգին...»:

5. Եղիցին կամք քո...

Մեր փոքրիկ խմբի ճամփորդությունը դեռ շարունակվում է: Հիմա արդեն պատմական Գամիշլիում ենք, որը պատմական Մծբինի մի մասն է: Մեզ ջերմորեն են ողջունում Ճեզիրեի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Օհանյանը, հայկական համայնքի ներկայացուցիչները: Ազգային Եփրատ վարժարանում ևս մեզ դիմավորում են ջերմորեն:

Օրը կիրակի է: Մեր վերջին օրը Հալեպում: Սուրբ Աստվածածին եկեղեցում մատուցվող սուրբ և անմահ պատարագից հետո, մենք այդեն Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցում ենք: Առաջնորդարանում մեզ դիմավորում է Բերիո թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Սուրեն արքեպիսկոպոս Գաթարոյանը, փոխանցում իր հայրական պատգամները:

Օրը հուշիկ երեկոյանում է: Վաղը մենք տուն կվերադառնանք: Իսկ մինչ այդ, մեզանից ամեն մեկը հատուստ համոզված եմ, որ մտովի իր սրտի ձայնն է ուղղելու ատ Աստված՝ այս անկրկնելի հնարավորության համար: Ես էլ, նրանց նման, փորձում եմ մեկնելուց առաջ ի մի բերել տեսածս ու ապրածս: Թերևս վաղն առանց հրաժեշտի արցունքների չենք բաժանվի: Հոգ չէ: Այս հրաժեշտը ավելի խորհրդավոր է՝ նման անմեկնելի երազի, որ թերևս պիտի շարունակվի երկար, մինչ հաջորդ համագումար, երբ կրկին միմյանց կգտնենք հետևյալ բարեկամները, թե Տերը կամենա: Ուստի, ո՛վ Աստված, այնպես արա, որ մեզանից յուրաքանչյուրը կարողանա իր աստվածատեր վարքով և անաստան հավատով քայլել այն նեղ ու անձուկ ճանապարհով, որ դեպի փրկություն է տանում: Թող մեզանից յուրաքանչյուրի հոգում ընկած Քո սիրո հատիկը ծլարձակի և պտղաբերի մեկին հիսուն, մեկին՝ վաթսուն, և մեկին՝ հարյուր, և մշտատև ու ամենուր եղիցին կամք Քո, ամեն...:

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ս. Գրիգոր Լուսավորիչ
կիրակնօրյա դպրոցի ուսուցչուհի

ԳԵՐԱԾՆՈՐՀ Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂՋԱՊԱԼՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(27 օգոստոսի 1995 թ.)

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

«Հրաշափառ Աստուած և միշտ բարեխնամող, որ յառաջ գիտութեամբ զփրկութիւն Հայաստանեայց սկզբնաւորեալ ի պարթևական մեղապարտ ազգէն լուսաւորիչ մեզ շնորհեցեր, վասն որոյ բարեխօսութեամբ սորա Փրկիչ կեցո զմեզ այժմ և ի քո յաճառոր գալստեանն»:

«Աստված հրաշափառ և միշտ բարեխնամող, որ կանխագիտությամբ Հայաստանցիներիս փրկությունը սկզբնավորեցիր, մեզ շնորհելով լուսավորիչը պարթևական մեղապարտ տոհմից. ո՛վ փրկիչ մեր, նրա բարեխոսությամբ մեզ կյանք պարգևիր այժմ և քո ահավոր գալստյան ժամանակ»:

Սրբազան շարականագիրը, Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու հիմնադրության առիթով, վերոհիշյալ տողերով է գովաբանում Ս. Գրիգոր Լուսավորչի աստվածային նախախնամության կողմից նախատեսված դերը հայ ժողովրդի կյանքում: Այնտեղ ընդգծվում է, որ նա մեղապարտ ընտանիքից էր սերվել, սակայն, հակառակ դրան, նրա դերը մեծ եղավ մեր Եկեղեցու կյանքում: Աստված նախատեսել էր, որ նա փրկիչը լիներ հայաստանցիներիս իր մշտական աղոթքներով այժմ և մեր Տիրոջ ահավոր երկրորդ գալստյան ժամանակ:

Սուրբ Գրիգոր Լուսավորիչը, Ս. Թադեոս և Ս. Բարթողիմեոս առաքյալներից հետո, եղավ երկրորդ լուսավորիչը Հայաստանյայց Եկեղեցու և քրիստոնեության պետական կրոն ընդունման մեծագույն աստարն ու ջատագովը: Նա իր իսկ զոհողությամբ և չարչարանքներով կարողացավ աստվածային շնորհը ստանալ: Երկար տարիներ մնաց Խոր Վիրապի արգելարանում և աստվածային հրաշքով այնտեղից ազատվեց, բուժեց հայոց Տրդատ Գ արքային և նրա պալատականներին և այսպա քրիստոնեությունը կարողացավ Հայաստանում դարձնել պետական կրոն: Այսօր 1700 տարիների պատմություն է, որ մեր աչքերի առաջ պատկերվում է:

Սուրբ Գրիգորը անհոգնաբեկ աղոթող էր, նա անդադար իր հայցերով դիմում էր Տիրոջը: Ինչպես Ագաթանգեղոս պատմիչն է նկարագրում, գիշերները նա դուրս էր գալիս Վաղարշապատ քաղաքի պարիսպներից, մղում ապուների մեջ, հնձանների մոտ ամբողջ գիշերներ էր լուսացնում հրեշտակով, աղոթքով և սաղմոսաացությամբ, ձգտում էր աստվածային լույսի տեսությանը: Եվ այդ լույսը իսկապես իջավ Հայաստան աշխարհ: Աստված պատասխանեց Սուրբ Գրիգոր Լուսավորչին: Մի գիշեր Աստվածորդին երկնքից իր լուսեղեն կերպարանքով, հրեշտակների փառաբանությամբ իջավ Հայոց աշխարհ, հենց այս արբուավայրը, ուր այս Էջմիած տեղանն է: Նա իր ոսկե մուրճով երեք անգամ հարվածեց գետնին, ուր հեթանոսական աստրուշանն էր գետեղված, և այդ վայրում հիմնեց իր սուրբ եկեղեցին: Ահավասիկ այս փառավոր հրաշքը սկիզբն եղավ Հայաստանյայց Եկեղեցու ոգեղեն և նյութական շենքի կառուցմանը: Այդ օրվանից մինչև այսօր այս կենտրոնը ունեցել է 131 Հայրապետների հրաշալի մի փաղանգ:

Սիրելի՛ հավատացյալներ, այսօր մենք բոլորս երջանիկ ենք, որովհետև այսօր, օգոստոսի 27-ին, տոնում ենք մեր նորընտիր Վեհափառ Հայրապետի ծննդյան տարեդարձը: Նա այսօր դառնում է 63 տարեկան: Որքա՜ն ուրախալի է նախ, որ այսօր մեզ հետ են Վեհափառի մայրը, եղբայրը և հարազատները: Թող Աստված Վեհափառին պարգևի ուժ և կարողություն՝ առաջնորդելու համար Հայաստանյայց Եկեղեցու նավը դեպի խաղաղ ափեր:

Ո՞վ է Ս. Գրիգոր Լուսավորչի գահի ժառանգորդը այսօր:

Վեհափառը ծնվել է 1932 թվականին Քեսաբում: Նա համեստ ընտանիքի զավակ էր: Թեև Օսմանյան իշխանությունը քայքայվել էր, սակայն Քեսաբը և Սանջաքը վիճելի հողաբաժին էին երկու երկրների՝ Սիրիայի և Թուրքիայի միջև: Քիչ ժամանակ հետո Քեսաբի հյուսիսում գտնվող տարածքը՝ Սանջաքը, տրվեց Թուրքիային, Քեսաբն անջատվելով իբրև Սիրիայի մաս, իսկ Մուսա լեռն անցավ Թուրքիայի կողմը, նման ամբողջ Սանջաքին, իր 30 հազար հայ բնակչությամբ: Ահա այս քաղաքական դրժվարին պայմաններում է ապրել ու մեծացել Վեհափառը:

Իր ուսումն է ստացել ծննդավայրի Ուսումնասիրաց վարժարանում և, ավարտելով այն, 1946 թվականին ընդունվել է Մեծի Տանն Կիլիկիո Աթթիլիասի Կաթողիկոսարանի դպրեվանքը՝ որպես այդ ուսումնական հաստատության սան: 1951 թվականին ձեռնադրվել է սարկավագ, 1952 թվականին, ավարտելով դպրեվանքի երեսունյա ուսման շրջանը, կուսակրոն քահանա՝ աբեղա, և ընկերակցել կրոնական գործին, աշխատելով դպրեվանքում որպես հսկիչ և դասախոս: Հետագայում դարձել է դպրեվանքի տեր: Այնուհետև սովորել է Անգլիայում, Օքսֆորդի համալսարանում, և 1962 թվականին ավարտելով ուսման շրջանը՝ վերադարձել Անթիլիաս: 1964 թվականին Վեհափառը ընտրվել է եպիսկոպոս, իսկ 1966-ին՝ արքեպիսկոպոս: 1971 թվականին Վեհափառը ընտրվել է Նոր Ջուղայի թեմի առաջնորդ:

1973 թվականին նա փոխադրվել է Միացյալ Նահանգներ՝ ընտրված լինելով առաջնորդ Միացյալ Նահանգների Արևելյան թեմի:

1977 թվականին, Մեծի Տանն Կիլիկիո Խորեն Կաթողիկոսի հիվանդության պատճառով, որոշվում է ընտրել Աթոռակից Կաթողիկոս: Գարեգին արքեպիսկոպոսը 1977 թվականի մայիսի 22-ին ընտրվում և օծվում է Աթոռակից Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո: Այդ ընտրությանը և ապա օծման արարողությանը ներկա են լինում Մայր Աթոռի կողմից երկու պատ-

գամավորներ: Նրանցից առաջինն էր հանգուցյալ Սերովբե արքեպիսկոպոսը: Երկրորդ ներկայացուցիչը լինելու պատիվը ինձ էր վիճակված:

18 երկար տարիներ Գարեգին Երկրորդը վարում է կաթողիկոսությունը Մեծի Տանն Կիլիկիո: 1983 թվականից, Խորեն Կաթողիկոսի վախճանից հետո, նա դառնում է լիիրավ Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո: Եվ ահա 1995 թվականին Ս. Էջմիածնի Մայր տաճարում գումարված Ազգային Եկեղեցական պատգամավորական ժողովը ընտրում է նրան Ամենայն Հայոց Կաթողիկոս՝ Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ Հայրապետին վերակոչելով Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետ:

Այս կենսագրական հակիրճ տողերը բավարար չեն ներկայացնելու Ամենայն Հայոց Հայրապետի դիմագիծը, եթե մենք չփորձենք ներկայացնել նրա հոգևոր, մշակութային, ազգային, կրթական բազում ծառայությունները: Այժմ ես կփորձեմ չորս կետերի մեջ ամփոփել նրա կերպարը:

Առաջին և ամենակարևոր հանգամանքն այն է, որ Աստված առատորեն պարգևել է մեր Հայրապետին իր շնորհները մշակույթի բոլոր ասպարեզներում: Դրանք հատկապես դրսևորվում են գրի ու գրականության մեջ: Վեհափառը հեղինակ է բազմաթիվ գրքերի ու հոդվածների՝ թե՛ աստվածաբանական, թե՛ պատմական և թե՛ ուսուցողական ու դավանաբանական:

Սրանով արդեն Վեհափառ Հայրապետի անձը ի հայտ է գալիս որպես գրի, մշակույթի և գրականության մարդ:

Վեհափառի երկրորդ կարևոր հատկանիշը նրա կոչումով դաստիարակ և ուսուցիչ լինելն է: Աբեղա ձեռնադրվելու առաջին օրվանից նա ներքաշվել է կրթական գործին ոչ միայն դպրեվանքում, այլ նաև Բեյրութի ազգային վարժարաններում՝ դասավանդելով կրոն և քրիստոնեական գիտելիքներ: Նա իր գիտակցական կյանքի ամբողջ ընթացքում դասավանդել ու սովորեցրել է, ատտարել նոր սերնդի հոգևոր ու բարոյական կրթությանը: Վրաստան եղբ, որ Ս. Էջմիածնում նա կշարունակի սերունդների դաստիարակության գործը մասնավորապես հոգևոր ճեմարանում՝ իր իմացական լույսը տալով սերունդներին, ինչպես Աստված առատորեն պարգևել էր իրեն:

Նրա երրորդ հատկանիշը բնութագրվում է էկումենիկ և միջազգային հարաբերությունների ասպարեզում ցուցաբերած անգնահատելի ծառայությամբ: Վեհափառը երկար տարիներ ներքաշվել է Եկեղեցիների միության գործին՝ լինելով գործուն և հավատավոր մեկ մասնակիցը Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի: ԵՀԽ-ում նա ծառայել է իբրև Կենտրոնական Կոմիտեի, Գործադիր Կոմիտեի և ապա նրա ղեկավար մարմնի անդամ: Վեհափառը այդ ասպարեզում ի սպաս է դրել իր բոլոր շնորհները և միջազգային բարձրագույն առյուծներում ևս փորձել է միշտ հայ ժողովրդի իրավունքները պաշտպանել, լսելի դարձնել հայոց պահանջն ու իրավունքները աշխարհին:

Վեհափառ Հայրապետի չորրորդ կարևոր հատկանիշը նրա ներքին, հեռատես և հայրենասեր հոգևոր առաջնորդ լինելն է: Նրա հայրենասիրության սահմանները շատ ընդարձակ են: Իր միջազգային լայն կապերի շնորհիվ նա կարողացել է մարդասիրական մեծ գործունեություն ծավալել աշխարհով մեկ՝ զանազան միջոցներով:

Արդեն իսկ լինելով Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս, Վեհափառ Հայրապետը, որպես իր ծառայասիրական, հայրենասիրական ոգու արտահայտություն, խոնարհաբար հանձն առնելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գա-

հակալությունը, դարձավ հայ ժողովրդին առաջնորդող հոգևոր առաջին դեմքը հայրենիքում: Հայրենիքում, վստահ ենք, որ նա նորաևկախ մեր երկրում մեծ չափով իր ծառայությամբ և ելիրումով օգտակար կլինի իր ժողովրդի վերելքին և մեծապես կնպաստի մեր ներկայի կյանքը անորոշություններից ու դժվարություններից դուրս բերելու դեպի բարօրություն և երջանկություն:

Ինձ համար դժվար է այս պահին ամփոփ խոսքերով ներկայացնել Ամենայն Հայոց Հայրապետի կերպարը որպես մարդ ու որպես մշակույթի գործիչ, որպես հոգևորական և որպես հայ: Ես պարզապես այս մի քանի տող գծերով փորձեցի բնութագրել Վեհափառին այսօր՝ իր տարեդարձի տոնակատարության առթիվ: Մայր Աթոռի միաբանության և հավատացյալների սրտաբուխ մաղթանքն է, որ Աստված ուժ, կարողություն պարգևի Վեհափառին, որպեսզի Մովսեսի առաջնորդող տեսիլքով, Հարության ճաղկյալ գավազանով, Սողոմոնի իմաստությամբ, Դավիթ մարգարեի հոգևոր թռիչքով նա առաջնորդի մեր Եկեղեցու նավը ներկա կյանքի շփոթ ժամանակներում դեպի խաղաղ նավահանգիստ: Այս առթիվ տեղին ենք համարում հիշել շարականագրի հետևյալ տողերը, որոնք այնքան պատշաճում են մեր այսօրվա քահանայապետին:

«Այսօր քահանայապետ ճշմարիտ աստուածային օրինօքն պատուեալ կանգնէ զքառանկիւն սեղան խաչին, արժանապէս պատարագեալ բաշխէ զմարմին և զարիւնն Տեառն. մաքրապէս մերձեցարուք փրկեալք նոր ժողովուրդք և հաւցեցէք ի Քրիստոսէ զի շնորհեացէ զսա մեզ ընդ երկայն աւուրս»:

«Այսօր քահանայապետը աստվածային ճշմարիտ օրենքով պատվված՝ կանգնեցնում է քառանկյուն սեղանը խաչի, արժանավոր կերպով պատարագվելով՝ բաշխում է մարմինն ու արյունը Տիրոջ. մաքրությա՛մբ մոտեցեք, ո՛վ փրկված նոր ժողովուրդ, և խնդրեցե՛ք Քրիստոսից, որ սրան շնորհի երկար օրեր մեզ համար»:

Աստված երկար կյանք պարգևի Հայոց Հայրապետին, Ամեն:

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՏԱՐԵԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

Սույն թվականի սեպտեմբերի 14--22-ը Շվեյցարիայի Ժնև քաղաքում, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Կենտրոնում, տեղի ունեցավ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Կենտրոնական Կոմիտեի տարեկան հերթական նստաշրջանը:

Նստաշրջանին մասնակցում էին, բացի Կենտրոնական Կոմիտեի անդամներից և ԵՀԽ-ի պաշտոնեությունից, բազմաթիվ դիտորդներ, խորհրդատուներ և երիտասարդության ներկայացուցիչներ՝ շուրջ 320 հոգի:

Նստաշրջանում լսվեց ԵՀԽ-ի գլխավոր քարտուղար դր. Կոնրադ Ռայզերի և Կենտրոնական Կոմիտեի ատենապետ Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Կաթողիկոսի հաշվետու զեկուցումները՝ նախորդ ժողովից մինչև ներկա նստաշրջանն ընկած ժամանակաշրջանում ԵՀԽ-ի և նրա առաջին բաժանմունքների գործունեության, ինչպես նաև 1998 թվականի ամռանը տեղի ունենալիք հանդիպումների ծրագրման մասնրամասների մասին:

Նստաշրջանում առանձին զեկուցումներ լսվեցին ցեղային խտրականության նոր երևույթների՝ ի մասնավորի ԱՄՆ-ի սևամորթների նկատմամբ, վերջերս Պեկինում տեղի ունեցած կանանց միջազգային համագումարի, Միացյալ Ազգերի Կազմակերպության հիմնադրման 50-ամյակի, Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու և ԵՀԽ-ի միջև զարգացող հարաբերությունների, կանանց իրավունքների պաշտպանությանը նվիրված տասնամյակի ներկա փուլում կատարված աշխատանքների, միջուկային նոր փորձարկումների կանխարգելման և ԵՀԽ-ի անդամ Եկեղեցիներին մտահոգող այլ բազմապիսի քաղաքական, ընկերային, ցեղային և տնտեսական հարցերի մասին:

Նստաշրջանի մասնակիցները հետագա օրերին հինգ խմբերի բաժանվելով՝ քննարկեցին իրենց բաժանմունքներին վերաբերվող հարցեր, ինչպիսիք են՝ Ս. հաղորդության, եկեղեցական միության, աստվածաբանական կրթության, կանանց և երիտասարդների դաստիարակության, առաքելու-

թյան և ավետարանչության, հաստատակության և արդարության, ցեղային խտրականության և աշխարհի մարդկության առողջապահության հետ առնչվող, տեղահանված ժողովուրդների, ԵՀԽ-ի տնտեսական վիճակի և բնությունների դեմ պայքարի հարցերը:

Նստաշրջանի օրերին տեղի ունեցան հատուկ հանդիպումներ Կենտրոնական Կոմիտեի անդամ Օրթոդոքս Եկեղեցիների ներկայացուցիչների միջև, որոնց ընթացքում շեշտվեց Օրթոդոքսների ԵՀԽ-ի կազմում գործուն մասնակցության անհրաժեշտությունը: Հանդիպումներ ունեցան նաև Եվրոպայի և այլ աշխարհամասերի Եկեղեցիների ներկայացուցիչները, որոնք իրենց երկրներում կրոնական, քաղաքական, տնտեսական, ընկերային կյանքի վիճակի մասին տեղեկություններ հաղորդեցին:

Նստաշրջանի վերջընթեր օրը, կեսօրին, հատուկ քայլերթ տեղի ունեցավ դեպի Միացյալ Ազգերի Կազմակերպության ժնևյան կենտրոն, որ Ֆրանսիայի իշխանության կողմից գործադրվող միջուկային փորձարկումների դեմ բողոքի ցույց կատարվեց Կենտրոնական Կոմիտեի անդամների և նստաշրջանի բոլոր մասնակիցների կողմից:

Սեպտեմբերի 22-ի երեկոյան, նստաշրջանի ավարտին, ԵՀԽ-ի կենտրոնում գտնվող մատրան մեջ տեղի ունեցավ նստաշրջանի փակման արարողությունը:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կողմից սույն ժողովի նստաշրջաններին մասնակցում էին երկու պատգամավորներ՝ Ներսես արքեպիսկոպոսը և օր. Սիլվա Ղազելյանը:

Նստաշրջանի ընթացքում, առավոտյան արարողությունների ժամանակ, այլ հոգևոր երգերի շարքում երգվեցին նաև Հայ Եկեղեցու հոգևոր շարականներ:

Կենտրոնական Կոմիտեի սույն նստաշրջանում ԵՀԽ-ի իրրև նոր անդամներ ընդունվեցին հինգ Աֆրիկյան Եկեղեցիներ:

Նստաշրջանի ավարտին Կենտրոնական Կոմիտեի անդամները որոշեցին, որ հաջորդ տարի նստաշրջանը վերստին տեղի ունենա Ժնևի կենտրոնատեղում՝ սեպտեմբերի 12—20-ը:

ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂԱՊԱՆՅԱՆ
ԱՆԴԱՄ ԵՀԽ-Ի ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՐԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Սույն թվականի հուլիսի 27—29-ը Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում տեղի ունեցավ «Հայաստանի օրերը Վրաստանում» բարեկամական միջոցառումը, որը կազմակերպվել էր երկու երկրների մշակույթի նախարարությունների ջանքերով:

Հայաստանից մեկնող պատվիրակության կազմում էին ՀՀ արտաքին գործոց նախարարը, արդյունաբերության, մշակույթի, տրանսպորտի, ֆինանսների և այլ նախարարությունների, գործարար մարդկանց, մամլո և հեռուստառադիոպետկոմի, ինչպես նաև այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Հայ Առաքելական Եկեղեցին, Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Առաջինի օրհնությամբ, ներկայացնում էր Ս. Էջմիածնի միաբան Հոգեշնորհ Տ. Սեպուհ վարդապետ Չուլջյանը: Եռօրյա ծրագիրը խիտ հագեցած էր բազմազան հանդիպումներով ու մշակութային ծրագրերով:

Հայաստանի պատվիրակությունը հուլիսի 28-ին, Սեպուհ վարդապետի նախագահությամբ, նախ ուխտավորաբար այցելեց Հավլաբարի Ս. Գևորգ եկեղեցի, ուր ծաղկեպսակներ զետեղվեցին Սայաթ-Նովայի շիրմին, կատարվեց հոգեհանգստյան արարողություն: Ծաղկեպսակներ դրվեցին նաև Խոջիվանքի նշանավոր պանթեոնում կողք-կողքի հանգչող հայ ժողովրդի արժանավոր զավակների շիրիմներին:

Նույն օրը հանդիսավոր արարողությամբ Ազգային օպերայի և բալետի թատրոնի շենքում կատարվեց «Հայաստանի օրերը Վրաստանում» միջոցառման բացումը:

Հուլիսի 29-ին պատվիրակությանն ընդունեց Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Նորին Սրբություն Իլիա Երկրորդը: Արտաքին գործոց նախարար Վահան Փափազյանը Պատրիարքին պատմեց Հայաստանի ներկա վիճակի, հոգսերի ու հաջողությունների մասին: Սեպուհ վարդապետը փոխանցեց Ամենայն Հայոց Հայրապետի ողջույնները Իլիա Երկրորդին,

սերն ու աղոթքները՝ վրաց ժողովրդին, և հայտնեց Ամենայն Հայոց Հայրիկի ցանկությունը՝ եղբայր ժողովրդին այցելելու վերաբերյալ, որպեսզի միասնաբար աղոթեն երկու ժողովուրդների առավել սիրո, միասնության ու խաղաղության համար:

Նույն օրը, կեսօրին, պատվիրակությունը հանդիպեց Վրաստանի վարչապետ Պացացիայի և կառավարության կազմի (կաբինետ) հետ, որ շոշափվեցին առևտրական, ճանապարհային ու տնտեսական մի շարք հարցեր: Հանդիպումներն անցան երկուստեք բարի կամեցողության ջերմ մթնոլորտում:

Հանդիպումներն իրենց լրումը գտան Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում Հայաստանի Հանրապետության դեսպանատան բացումով: Օրհնված դրոշի բարձրացման ու դեսպանատան բացման հանդիսավոր արարողությանը մասնակցում էին բազմաթիվ այլ երկրների դեսպաններ ու ներկայացուցիչներ: Մասնավոր ընդունելության արարողությանը ներկա էին Վրաստանի նախագահ Էդուարդ Շևարդնաձեն և վարչապետ Պացացիան:



ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ԽՈՋԱԲԵԿ ԳՅՈՒՂՈՒՄ

Չնայած հետխորհրդային շրջանի ցնցումներին և առաջացող բարդություններին, հոգևոր վերազարթոնք է ապրում նաև Ջավախքը, որի գեղեցիկ վկայություններից մեկին էլ Խոջաբեկ գյուղի հիմնադրման 165 և Ս. Սարգիս եկեղեցու կառուցման 110-ամյակներին նվիրված հանդիսություն էր, որը տեղի ունեցավ օգոստոսի 13-ին: Այն կազմակերպվել էր՝ գործակցությամբ Ս. Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Եղիա քահանա Թազայանի և տեղական իշխանությունների, որին իր մասնակցությունը բերից՝ խոջաբեկցիների հրավերով այնտեղ գտնվող և Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Կաթողիկոսի հայրապետական օրհնություններն ու ողջույնները խոջաբեկցիներին փոխանցելու կոչված Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Տ. Սեպուհ վարդապետ Չուլջյանը, ում էլ ընկերակցում էին հոգևոր ճեմարանի 6-րդ լսարանի սաներ Հայկ Գամսաղելյան և Տիգրան Սանոսյան դպիրները:

Տեղի եկեղեցու կառուցումը ավարտվել է 1884 թ.: 1895 թ. Վիրահայոց թեմում հովվական այցելությամբ գտնվող Մկրտիչ Խրիմյան Կաթողիկոսն այցելել է նաև Խոջաբեկի Ս. Սարգիս եկեղեցի: Խորհրդային տարիներին եկեղեցին վերածվել է պահեստի ու չի ծառայել իր նպատակին մինչև 1993 թ. նոյեմբերի 13-ը, երբ Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Գևորգ եպս. Սերայդարյանը կատարեց վերաբացման և օծման արարողությունը: Եկեղեցին այժմ բարեկարգ վիճակում է, որին իրենց նպաստն են բերել տեղական իշխանությունները:

Ս. Սարգիս եկեղեցում գոհաբանական աղոթք մատուցելուց հետո, Սեպուհ վարդապետն այցելեց նաև շրջկենտրոնից 5 կմ հեռավորության վրա գտնվող Սաթխա գյուղի Ս. Մեծն Ներսես եկեղեցի, որը 19-րդ դարի կառույց է և այժմ վերանորոգվում է գյուղացիների կողմից:

Օգոստոսի 13-ին, կիրակի առավոտյան ժ. 10.30-ին, Խոջաբեկի Ս. Սարգիս եկեղեցում սկսվեց ս. պատարագը: Պատարագիչն էր Սեպուհ վարդապետը, վերաբերում կատարողը՝ Եղիա քահանան:

Մեծաթիվ խոջաբեկցիներ էին հավաքվել եկեղեցում: Նրանք երկյուղածությամբ էին հետևում ս. պատարագի սրբազան արարողությանն ու իրենց աղոթքներով մասնակից դառնում Ս. Խորհրդի կատարմանը: Պատարագի ընթացքում քարոզեց Հայր Սուրբը: Հայտնելով իր առաքելության նպատակի մասին, մասնավորապես ասաց, որ եկել է գյուղի հիմնադրման 165 և Ս. Սարգիս եկեղեցու կառուցման 110-ամյակների կապակցությամբ Վեհափառ Հայրապետի առաքելական օրհնություններն ու ջերմ ողջույնները փոխանցելու հայ ժողովրդի մի մասնիկին՝ Ջավախք աշխարհին, և

մասնակցելու այդ առթիվ տեղի ունեցելիք հանդիսությանը: Սեպուհ վարդապետը հորդորեց խոջաբեկցիներին՝ անսասան մնալ իրենց հավատքի մեջ, հետու մնալ և զգուշանալ գառան մորթով հանդես եկող գայլերից, արթուն մնալ և զոհանալ ի Քրիստոս հավատքով, պատրաստ լինել՝ արժանիորեն հակազդելու իրենց հոգու անդորրությունը խանգարել ցանկացողներին, թույլ չտալ օտարածին և հայ առաքելականությանը խորթ տարրերին գբաղվել մանուկների միտքը խմորելով:

Հավարտ արբո պատարագի, պատարագիչ Հայր Սուրբը կատարեց հոգեհանգիստ՝ Խոջաբեկ գյուղը կառուցողների և գյուղի բարգավաճմանը նպաստած անձանց, եկեղեցին կառուցողների ու եկեղեցում Տիրոջ սպասավորությունը իրենց ուսերին տարած հոգևորականների հոգիների խաղաղության և երկնքի արքայությանը արժանանալու համար:

Պատարագից հետո գյուղացիների հետ շարժվեցինք դեպի Ղարաչա կոչվող ուխտատեղին, որտեղ կար մատուռ՝ գյուղացիների ջանքերով վերանորոգված 1985-ին:

Գյուղական իշխանությունները այստեղ կազմակերպել էին հանդիսություն բաց երկնքի տակ: Եվ թեև ամպամած եղանակ էր, հուզարավոր ուխտավորներ էին հավաքվել: Այստեղ ելույթ ունեցան կոլտնտեսության նախագահ պրն. Ա. Արզումանյանը, բանաստեղծ Ռ. Ղարսլյանը, «Արշալույս» թերթի խմբագիր պրն. Մ. Կարախանյանը և ուրիշներ: Բանախոսները, շնորհավորելով համագյուղացիներին, տեղեկություններ էին հաղորդում գյուղի պատմության վերաբերյալ և ընդհանուր ուրվագծերն էին ներկայացնում նրա անցյալի, ներկայի և ապագա անելիքների ու հոգսերի:

Մեծաթիվ խոջաբեկցիներին ու հյուրերին կրկին ողջունեց Սեպուհ վարդապետը: Հայր Սուրբը կոչ արեց ջավախքցիներին վրաց ժողովրդի հետ համատեղ պաքարել՝ երկիրը տնտեսական ծանր վիճակից դուրս բերելու, ժողովրդավարական կարգեր հաստատելու համար: Ասելով, թե այնժամ Աստված կօրհնի ջավախքցիներին ու իրենց հողը:

Օգոստոսի 13-ը տոն էր խոջաբեկցիների համար, և այդ օրվա քաղցր տպավորությունները թափանցեցին մեր հոգու խորքերը՝ երջանիկ հուշեր պարգևելով մեզ:

ՏԻԳՐԱՆ ՍԱՆՈՍՅԱՆ
Հոգևոր ճեմարանի 6-րդ լսարանի ուսանող

ՀՈԳԵԼԻՑ ՊԱՀԵՐ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

23 հուլիս 1995:

Տօն Պայծառակերպութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Վարդավառ...

Եկեղեցական օրացոյցում գրանցված տոնացուցային այս պարզ ու անպաճույճ բառերը Տիրոջ աստվածային փառքի հայտնության վեհապանծ դրվագի պանծացումից բացի հոգեւորոգության ու վերածննդի խորհուրդ հագան **Մայր Աթոռի ճեմարանավարտ չորս սարկավագների** համար, որոնք այդ օրը ծնկի եկան Ս. Սեղանի առջև և ուխտեցին անսայթաք ավիրումով ծառայել Ս. Էջմիածնին ու Հայ Եկեղեցուն:

Այդ օրը վերալիցքավորման ու ներշնչանքի անսպառ աղբյուր դարձավ նաև այն բազմահարյուր հավատացյալ հայորդիների համար, որոնք խառնիերամ բազմությամբ լցրել էին Մայր տաճարը, և որոնցից շատերի համար անակնկալ էր չորս երիտասարդների հիրավի պայծառակերպությունն ու այլակերպությունը՝ ճմանողությամբ իրենց Երկնավոր Վարդապետի:

Այդ օրը նաև հավերժորեն գրանցում ստացավ Մայր Աթոռի հազարամյա պատմության մեջ, քանզի նորընտիր Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Հայրապետը անձամբ կատարեց քահանայական ձեռնադրություն ու օծումը չորս նվիրյալ ընծայացուների՝ որպես առաջին գրված էջերից մեկը իր գահակալության:

* * *

Քահանայական ձեռնադրության և օծման հոգեպարար արարողություն սկսվեց քահանայական կոչման հանդիսավոր կարգով, որը տեղի ունեցավ շաբաթ երեկոյան, 22 հուլիսին, Իջման Ս. Սեղանի առջև, որտեղ **Գեղամ սարկավագ Տիգրանյանը, Վազգեն սարկավագ Գալստյանը, Վարդան սարկավագ Հարությունյանը և Գարեգին սարկավագ Աղաբաբյանը,** ի ներկայության միաբանության և հավատացյալ ժողովրդի, միահամուռ հաստատվեցին ու վկայվեցին Հայ Եկեղեցու ուղղափառ դավանանքի մեջ և իրենց պատրաստակամությունը հայտնեցին ընդունելու քահանայական պաշտոնի ու պարտականության ծանր լուծը:

Հաջորդ օրը, կիրակի, 23 հուլիսին, հրնթացս ս. պատարագի, տեղի ունեցավ վկայյալ և ի քահանայություն կոչեցյալ սարկավագների քահանա-

յական ձեռնադրության և օծման արբազան արարողությունը: Պատարագիչն էր Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը, խարտավիլակը՝ Տ. Հուսիկ արքեպիսկոպոս Սանթուրյանը: Ձեռնադրությունն ու օծումը կատարեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Հայրապետը:

Ընծայյալները ծնկաչոք բարձրացան Ս. Խորան և, ձեռքերը բարձրացնելով, հրաժարվեցին աշխարհից և նրա սին ու դատարկ հրապույրներից: **«Ես ձեռս դնեմ ի վերայ սոցա եւ դուք ամենեքեան աղօթս արարէք»՝** ձեռնադրության արբազան պահն է, և Վեհափառ Հայրապետի ձեռքերով Հայ Եկեղեցու բոլոր հայրապետներն են, որ ձեռնադրում են նվիրյալներին:

Ապա ս. պատարագը շարունակվում է մինչև «Ողջոյն»: Սկսվում է օծման կարգը: Վեհափառ Հայրապետը արբալույս մյուռոնով օծում է նորընծաների ճակատներն ու ձեռքերը և նրանց վերանվանում նոր անուններով: Գեղամ սարկավագը վերանվանվում է Տ. ԱՐՏԱԿ քահանա, Վազգեն սարկավագը՝ Տ. ԲԱԳՐԱՏ քահանա, Վարդան սարկավագը՝ Տ. ԿԱՐԱՊԵՏ քահանա, և Գարեգին սարկավագը՝ Տ. ԳՈՒՐԳԵՆ քահանա: Հին մարդու մահն ու նոր մարդու ծնունդը խորհրդանշող այս գեղեցիկ արարողությունն ավարտվում է նորընծա քահանա Հայրերի տված անդրանիկ օրհնությամբ՝ «խաղաղութիւն ամենեցուն»...: Ի՜նչ թարմ ու քաղցր են հնչում այս բառերը, որոնք առաջին անգամ արտաբերվում են նորաօծ քահանաների շրթներից...:

Օծումից հետո Վեհափառ Հայրապետը իր պատգամն է տալիս նորընծաներին. «Այսօր Ս. Էջմիածինը վերածնվեց ձեր մեջ, և ձեր միջից պետք է ճառագի ու թափանցի բոլոր հայու զավակների մեջ», ասում է նա:

Ս. պատարագից հետո հսկայածավալ բազմությունը մեկ առ մեկ մոտենում և համբուրում է ձեռնադրյալ և օծյալ Հայրերի մյուռոնաբույր սուրբ աջերը:

* * *

Երեկոյան ժամերգությունից հետո, Վեհափառ Հայրապետը կատարում է **վեղարի տվչության կարգը:** Հոգենորոգ աղոթքների ընթերցումից հետո Տ. Արտակ, Տ. Բագրատ, Տ. Կարապետ և Տ. Գուրգեն սրբազանների գլուխները ծածկվում են կուսակրոնության խորհրդանիշ արարատանման վեղարներով:

Թող Աստված իրենց ուխտի մեջ հաստատուն պահի Մայր Աթոռի նորընծա չորս միաբաններին, որպեսզի նրանք լինեն «մշակք առանց ամօթոյ» և ծաղկուն պահեն Աստուծո կողմից իրենց վստահված անդաստանը: Թող այսպես ալիք առ ալիք Ս. Աթոռից երիտասարդ «աննձիկք նուիրեալք» ընծայվեն մեր ժողովրդի կյանքի ագեստաների հոգևոր մշակության սուրբ սրբազնությանը, մանավանդ Մայր Հայրենիքի և վերանկախացյալ Հայաստանի Հանրապետության այս լուսավոր շրջանում:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐԸՆԾԱՆԵՐԻՆ

Հաճութեամբ ընդունիր, Տէր, ուխտը այս չորս երիտասարդներիս, **Վազգէն, Վարդան, Գարեգին** եւ **Գեղամ** բարեշնորհ սարկաւագներիդ՝ որոնք իրենց անձերն ու կեանքերն են ընծայում Քեզ, Քո սուրբ Եկեղեցուն եւ Քո Աւետարանի արբարար ճշմարտութիւնների քարոզութեանը:

Քահանայական ձեռնադրութեան ու օծման եւ աբեղայական կարգի ստացման այս շնորհալի օրուայ մէջ, երբ մեր Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին վերապրեցնում եւ պանծացնում է մեր Տիրոջ եւ Փրկչին՝ Յիսուսի Քրիստոսի կեանքի պայծառակերպութեան լուսեղէն դրուագը, պարգեւիր այս երիտասարդներիդ Ս. Հոգու շնորհները եւ ափոիր նրանց եւ մեր՝ հաւատացեալներիս մէջ Քո Լոյսը ամենացոյց եւ կենսաշաւիղ:

Պայծառ պահիր Մայր Աթոռ Ս. Էջմիածինը եւ օրհնիր նրա ուխտաւոր Միաբանութիւնը, ըստ բանի Քում. **«Հունձք բազում են եւ մշակք՝ սակաւ. աղաչեցէք զՏէր հնձոց, զի հանցէ մշակս ի հունձս իւր»** (ՄԱՏԹ. Թ 37—38):

Տ. ՅՐՏԱԿ ԱԲԵՂԱ ՏԻԳՐԱՆՅԱՆ

Ծնվել է 1971 թ. ապրիլի 12-ին Արտաշատ քաղաքում:
1978—1988 թթ. սովորել է տեղի ռուսական միջնակարգ դպրոցում:
1988 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:
1993 թ. դեկտեմբերի 25-ին, ձեռամբ Տ. Անանիա եպս. Արաբաջյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1994 թ. մայիսի 26-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Խաչվերացի տոնի ավանդությունները» թեմայով, և արժանացել ԼԱՎ գնահատականի:

1994—1995 թթ. աշխատել է Ալեք և Մարի Մանուկյան «Գանձատուն» թանգարանում որպես պատասխանատու տնօրեն:

Ա՛ժմ աշխատում է Վեհարանում որպես Ամենայն Հայոց Կաթողիկոսի անձական քարտուղար և գավազանակիր:



Տ. ԲԱԳՐԱՏ ԱՔԵՂԱ ԳԱԼՍՏՅԱՆ

Տ. Բագրատ աբեղա Գալստյանը (ավազանի անունով՝ Վազգեն), ծնվել է 1971 թ. մայիսի 20-ին Գյումրիում:

1978—88 թթ. սովորել է Երևանի հմր. 156 դպրոցում:

1988 թ. ընդունվել է Սուրբ Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1993 թ. դեկտեմբերի 25-ին, Սուրբ Ստեփանոս Նախավկայի տոնին, ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Գերաշնորհ Տ. Անանիա եպիսկոպոս Արաբաջյանի:

1994 թ. մայիսին ԳԵՐԱԶԱՆՑ գնահատականով ավարտել է հոգևոր ճեմարանը՝ ավարտաճառի թեմա ունենալով «Խոսրով եպիսկոպոս Անձևացի» (կենսագրական գծեր) և «Բացատրություն Կարգաց Եկեղեցւոյ» (բնագիրն ու աստվածաբանությունը):

1995 թ. հուլիսի 23-ին, Պայծառակերպության տոնին, ձեռամբ Վեհափառ Հայրապետի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

Այժմ Եկեղեցական երաժշտություն և Սուրբ պատարագի մեկնություն է դասավանդում հոգևոր ճեմարանում, աշխատակցում է Քրիստոնեական Դաստիարակության և Քարոզչության Կենտրոնին և «Էջմիածին» ամսագրի խմբագրությանը:

Տ. ԿԱՐԱՊԵՏ ԱԲԵՂԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ծնվել է 1971 թ. հունվարի 23-ին Էջմիածին քաղաքում:

1978—88 թթ. սովորել է Էջմիածին քաղաքի հմր. 2 միջնակարգ դպրոցում:

1979—85 թթ. սովորել է Մակար Եկմալյանի անվան հմր. 1 երաժշտական դպրոցում:

1988 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1993 թ. ավարտել է ճեմարանի հնգամյա դասընթացը, մայիս ամսին պաշտպանել ավարտաճառ՝ «Ներսես Լամբրոնացին՝ շարականագիր» վերնագրով:

1993 թ. Ս. Ստեփանոսի տոնին, ձեռամբ Անանիա հպս. Արաբաջյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1995 թ. հուլիսի 23-ին, Պայծառակերպության տոնին, ձեռամբ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ձեռնադրվել և օծվել է կուսակրոն քահանա:

Այժմ պաշտոնավարում է հոգևոր ճեմարանում որպես ավագ վերակացու և Նոր Կտակարանի դասախոս:

Տ. ԳՈՒՐԳԵՆ ԱԲԵՂԱ ԱՂԱԲԱԲՅԱՆ

Ծնվել է 1963 թվականի օգոստոսի 5-ին Ախալցխայի շրջանի Փոքր Պամաճ գյուղում:

Նախնական կրթությունը ստացել է տեղի միջնակարգ դպրոցում:

1982—84 թթ. ծառայել է Խորհրդային բանակում:

1988—94 թթ. սովորել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանում:

Պաշտպանել է ավարտաճառ՝ «Ախալցխայի շրջանի պատմա-մշակութային մասունքները» թեմայով:

1995 թվականի հուլիսի 23-ին, ձեռամբ Նորին Սուրբ Օծության Տ. Տ. Գարեգին Ա-ի, ձեռնադրվել է կուսակրոն հոգևորականի:

ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ԱՐՏԱԿ ԱԲԵՂԱ ՏԻԳՐԱՆՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՐՈԶԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Ամէն»:

«Միսիթարեցէք, միսիթարեցէք զժողովուրդ իմ,... Քահանայքդ խոսեցարուք ի սիրտ Երուսաղեմի՝ և միսիթարեցէք զդա, զի լի եղեւ տառապանօք» (ԵՍԱՅԻ Խ 1):

«Միսիթարեցեք, միսիթարեցեք իմ ժողովրդին,... դուք Քահանաներդ, Երուսաղեմի սրտով խոսեցեք և միսիթարեցեք նրան. որովհետև նա լի է տառապանքով»:

Սիրելիներ ի Քրիստոս,

Այն օրվանից, երբ երկնքի և երկրի արարիչն ու Ամենակարող Տերը, Ամովսի որդի Եսայի մարգարեի բերանով մեզ՝ Իր Եկեղեցու սպասավորներին ուղեց հետևյալ պատգամը, անցել են արդեն շուրջ 2600 երկար տարիներ:

Իսկ այսօր ես, որ ունեմ մեծ պատիվը Թադեոս և Բարդուղիմեոս սրբազան առաքյալների քարոզությամբ և Սբ. Գրիգոր Լուսավորչի և նրա արժանավոր հաջորդների արյամբ և տառապանքով հաստատված Քրիստոսի Սբ. Եկեղեցու պաշտոնյան և քահանայական դասի հետնորդը լինելու, ուրախ սրտով ասում եմ. Փա՜ռք Քեզ, Տեր, Փա՜ռք Քեզ՝ այս բոլոր երանությունների համար, Տե՜ր, եղիր օգնական քո սպասավորին:

Գիտե՛մ, որ Տեր Աստված Եսայի մարգարեի այս խոսքերով ինձ և իմ եղբայրներին ի Քրիստոս ևս պատվիրում է միսիթարիչ և ծառա լինելու ձեզ՝ ժողովրդիդ. միսիթարիչ լինելու մեր մեջ եղած «այն շնորհով, որ տրվեց մեզ մարգարեությամբ և երեցների ձեռնադրությամբ» (Ա Տիմ. Դ 14):

Այո, Ավետարանական սկզբունքով հոգևոր պաշտոնը անձնական դիրք և փառք ապահովելու համար չէ, այլ պաշտոն է որիշներին ծառայելու, ինչպես և Մատթեոս ավետարանիչն է վկայում մեր երկնավոր նախատիպի և

Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի համար՝ ասելով. «Մարդու հրդին չեկավ ծառայություն ընդունելու, այլ ծառայելու և իր անձը տալու որպես փրկանք շատերի փոխարեն (Մտթ. Ի 28): Քանզի այն պաշտոն է ուրիշներին լուսավորելու մեր իսկ անձնական լույսով, որպեսզի նրանք տեսնեն պաշտոնյայի բարի գործերը և փառավորեն Հորը, որ երկնքում է, մեջբերելով ավետարանական այն ճշմարտությունը, որն ասում է. «Թող փայլի ձեր լույսը մարդկանց առաջ, որպեսզի տեսնեն ձեր բարի գործերն ու փառավորեն ձեր Հորը, որ երկնքում է» (Մտթ. Ե 16):

Հիսուս Քրիստոսի կապանքներով այսօր կապված եմ և ես, սիրելիներ, ինչպես Պողոս առաքյալն է ասում. «Ես՝ Պողոս կապեալ Յիսուսի Քրիստոսի» (Եփես. Գ 1): Այո՛, կապված են եկեղեցականները իրենց պաշտոնին, և իրենց երկնավոր նախատիպը ինչ ճանապարհով որ քայլեց, նույն ճանապարհով պետք է քայլենք և մենք: Եվ այս խոսքը հաստատելու համար օգնության է գալիս մեծ Հայրապետ Սուրբ Գրիգոր Լուսավորիչը և ասում. «Կապեալք ընդ Աստուածոթեան և ոչ ի վայր բերեալք յերկնայնոյ յուսոյն, պատրաւօք բանսարկուին»: Այսինքն, «կապված ենք Աստվածության հետ և բանսարկուի պատրանքով կորված չենք երկնային հույսից»:

Այն եկեղեցականը կամ կրոնավորը, որ չունի կապվածության այս ընկվիրվածությունը, չի ընդունի կամ մերժած կլինի իր մեղավոր լինելը, կմոռանա իր պաշտոնն ու պարտականությունը և, չկարողանալով ազատվել չարի կապանքներից, ինքն իրեն կդատապարտի մահվան:

Այս կպվածությունը կվերացնի բոլոր չարիքները և աշխարհի հետ եղած կապը, մահկանացու մարդուն կմերձեցնի անմահության էական հատկություններին: Ուստի ինչ բանի որ կանչվեց մեկը, թող հավատարիմ մնա այդ կոչումին:

Տե՛ր իմ և Աստված ի՛մ, փառք Քեզ հաղագս ամենայնի, օրհնյալ է Քո անունը:

Սակայն, Տեր, ինչպե՞ս առաջնորդվեմ մարգարեի խոսքերով և ինչպե՞ս մխիթարեմ իմ ժողովրդին, կամ նախ՝ ինչպե՞ս ես ինքս մխիթարվեմ, երբ այդ նույն ժողովուրդը բարին փոխանակում է չարի հետ, հոգևորականների կատարած բարերարությունները՝ չարության հետ, նրանց ուսումնասիրությունը՝ ուսումնասիրության հետ, նրանց անձնազոհությունը՝ անձնազոհության հետ: Որտե՞ղ կամ ինչպե՞ս կարող ենք ծածկել ու թաքցնել այն անմահ բարերարների և երանության արժանի ու տոնելի անունները՝ Գրիգորներ, Ներսեսներ և այլն:

Սակայն ցավով պետք է հիշենք նաև, որ ինչպես հնում, այնպես էլ մեր օրերին եղել են և կան իրենց ուխտին դավաճան, ազգակործան և չարասիրտ անձինք: Սակայն եկեք այս խնդրին խոհեմությամբ և ողջախոհությամբ մոտենանք և կտեսնենք, որ ոչ թե ազգի կործանման և վնասների համար են ծառայել և ծառայում մեր հոգևորականները, այլ նրա կատարյալ բարօրության և լուսավորության համար ծառայել և ծառայում են այսօր:

Սիրելիներ, մի պահ անկեղծ եղեք Աստծու և ձեր խղճի առջև և ասացեք.

— Ովքե՞ր էին արդյոք գիշեր ու ցերեկ անքուն, անհանգիստ տքնում ազգի և Եկեղեցու համար, եթե ոչ մեր հոգևոր հայրերը, միշտ մենք ուտելիք և խմելիք ու սրա հետ մեկտեղ սպառնալով հոգևորականությանը մատնացույց էինք անում դեպի օտարների փարախը, աղաղակ բարձրացնում լրագրերի միջոցով առ այն, թե ժողովրդի հեռանալու պատճառը իր

հայրենի Եկեղեցու ծոցում մի քանի հոգևորականների ոգեղություն է: Ի՞նչ սարսափելի դատողություն: Ուրեմն ես պետք է ուրանամ իմ բարեկամներին, ես պետք է ապերախտաբար հրաժարվեմ ինձ ծնող մոր ծոցից, մոռանամ իմ հանդեպ ունեցած նրա սերը, թշնամաբար աւեմ իմ ծնողին և մտնեմ օտարների փարախը՝ վրնժխնդիր լինելու համար մի քանի անարգ հոգևորականների: Ինչի՞ համար խնկելի և տոնելի ներսեսներին չենք օրինակում՝ մեջ բերելով նրանց անձնազոհությունը, նրանց հրեշտակային վարքը, նրանց ազգասիրությունը, այլ ամեն անգամ վատին մատնանշելով, պատճառ ենք դառնում մեր մոլորության: Եթե մեկի ոգեղ վարքը պատճառ է մոլորության, ուրեմն մեկ ուրիշի փառքի սրբությունը պիտի լինի պատճառ ուղղության:

Ո՛չ, այս չէ պատճառը մեր կործանման, այլ մեր տգիտությունը, որից բխում է հպարտություն, հպարտությունից՝ ամբարտավանություն, ամբարտավանությունից՝ ատելություն, ատելությունից՝ մահ:

Այո, եթե ունենայինք ուսումնասիրություն և մեր ձեռքը վերցնեինք մեր հին հեղինակների հրաշալի և մարգարտաշաղ գրությունները, նրանց փայլուն և չքնաղ գործերը, այն ժամանակ կտեսնեինք և լավ կհասկանայինք մեր հոգևորականների ընթացքը, կճանաչեինք մեր Մայր Եկեղեցին, նրա ունեցած սերը մեր հանդեպ: Կճանաչեինք մեր անձնազոհ և բազմերախտ հայրերին, կտեսնեինք մեր փրկության համար նրանց հեղած արյունը: Քանզի մեր տոնելի հոգևորականությունը սկզբից մինչև այսօր նույնն է: Նա սովոր է անձնազոհությամբ հալածվել ազգի ու Եկեղեցու պայծառության և առաջադիմության համար, նա չի կարող վրդովվել և իր մի քանի որդիների անփորձ խոսքերից վիրավորվել, այլ ներելով և սիրելով ձեզ ու ձեր որդիներին, առաջնորդվում է իր նախորդների օրինակով: Ուստի «լսեցեք ձեր առաջնորդներին և հնազանդվեցեք նրանց, որովհետև նրանք տքնում են ձեր հոգիների համար, քանի որ հաշիվ են տալու ձեր փոխարեն» (Եբր. ԺԳ 17): Նա, ով կընդունի քահանային Տիրոջ խոսքի համաձայն, ընդունած կլինի նաև Աստծուն. «Ով ձեզ է ընդունում, Ինձ է ընդունում» (Մտթ. Ժ 40) և «Ով մարգարեին ընդունում է իբրև մարգարե, մարգարեի վարձ կստանա» (Մտթ. Ժ 41):

Մինչդեռ «աճիւն և դողութեամբ» կանգնած Աստուծո առջև խորհում էի, թե ինչպե՞ս կատարեմ Տիրոջ հրամանգը և միխթարեմ իմ ժողովրդին: Ահա այդ պահին օգնության եկավ Եսայի մարգարեն Աստվածային իր պատգամով և ասաց. «Ե՛լ այդ բարձր լերան վրա, ո՛վ ավետաբերդ Սիոնի, ո՛ւժ տուր քո ձայնին, ո՛վ ավետաբերդ Երուսաղեմի, ո՛ւժ տուր, մի՛ վախեցիր և հայտնի՛ր Հուդայի երկրի այդ քաղաքներին. Ահավասիկ ձեր Աստվածը. ահա Տերը, որ գալիս է զորությամբ. ահավասիկ իր վարձն իր հետ է, ու գործերն էլ իր աչքի առաջ են» (Եսայի Խ 9—10):

Եվ երբ մեկ անգամ ևս վերհիշեցինք մեր բարերարներին և անձնազոհ հոգևորականներին, ես պարտավորվում եմ ոչ միայն խոնարհվել նրանց անմահ հիշատակին, այլև որդիական ջերմ սիրով, շնորհակալությամբ և անկեղծ հնազանդությամբ համբուրել մյուռոնաբույր այն սրբը, որով առաջնակեղծ քահանայի պատվական սուրբ օծումը և Հայոց Սրբազան Հայրապետների ու բանիբուն վարդապետների օրհնությունը, որոնց հովանավորության ու բարեխոսության ներքո է գտնվում և պահպանվում մեր սուրբ Եկեղեցին: Նրանց հիշատակի և ձեր ներկայության առջև, Վեհափառ Տեր, Կամոքն Աստուծո և ունեցածս կարողությունների սահմաններում խոստանում եմ՝ ազ-

նիվ աշխատանքով օգտակար լինել Հայաստանյայց Եկեղեցու շահերին և ազգաշինության գործին՝ իրականացնելով այն երբեմն գործնական աշխատանքով, երբեմն էլ՝ ունեցած քանքարներով:

Շնորհակալության և երախտիքի խոսք եմ ուղղում նաև նվիրական այն հաստատության տեսչական կազմին, որի բարեխնամ հսկողության ներքո կրթվել և հոգևոր սնունդ եմ ստացել վեց անմոռանալի տարիներ: Մաղթում եմ նրան «նոր կյանք, նոր վերելք, նոր իրագործումներ, ի փառս և ի պայծառություն մեր Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի և Հայաստանյայց Առաքելական Մայր Եկեղեցու» (Վազգեն Ա):

Այս մտածումներով և խոհերով, իբրև վերջաբան, կրկնում եմ Պետրոս առաքյալին՝ ասելով. «Դուք, որեմն, սիրելիներ, իբրև նախապես տեղյակ դարձած մարդիկ, զգուշացեք, որ անառակ մոլորությամբ տարված չհեռանաք ձեր հաստատամտությունից» (Բ Պետրոս Գ 17—18):

Այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. Ամեն:

ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ԲԱԳՐԱՏ ԱՐԵՂԱ ԳԱԼՍՏՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՐՈԶԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

«Յաւուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ»:

«Մի երկնչիր, յայսմհետէ զմարդիկ որսայցես ի կեանս»:

«Մի երկնչիր, այսուհետև մարդիկ պիտի որսաս կյանքի համար»:

Սիրելի քույրեր և եղբայրներ,

Աստուծո տնտեսության մեջ, Արարիչ Աստված և մարդ հարաբերության ժամանակ, երբ մարդ, ուղեկից ունենալով ինքնաճանաչողության և ինքնաքննության լույսը, իջնում է իր հոգու խորքերը՝ աչառեղից առավել փառավորությամբ տեսնելով Աստծուն ամբողջ մեծավայելչությամբ, պարզապես թելադրված իր հոգուց, ստիպված է լինում կանգնելու Նրա առջև և կրկնելով Պետրոս առաքյալին ասելու. «Ի բաց գնա յինէն, Տէր, զի այր մեղաւոր եմ ես»:

Այդպես եղավ նաև մեր ողջ ուսանողության շրջանը, երբ մուտք գործեցինք Մայր Աթոռի դարպասից ներս, որպես անփորձ և որոնող երիտասարդներ ցանկացանք գնալ Աստուծո լույսի ետևից: Եվ այդ ճանապարհին, մեր խոկումների ու աղոթքների պահին, ի դիմաց կանգնելով Մայրավանքիս Սուրբ Խորանի, միայն մեկ նախադասությամբ արտահայտեցինք մեր ողջ զգացումներն ու ապրումները. «Ի բաց գնա յինէն, Տէր, զի այր մեղաւոր եմ ես»:

Սակայն հազար Փառք Աստուծո, որ Իր Եկեղեցու կանչի և կոչի միջից հնչեցրեց Իր քաղցրահունչ ձայնը, թե «Մի՛ երկնչիր, յայսմհետէ զմարդիկ որսայցես ի կեանս», որի համար կրկին ու կրկին խոնարհվելով Նրա փառքի առջև, ասում ենք. «Օրհնեալ ես Դու Տէր եւ օրհնեալ են փառք մեծութեան Քո», որ մեզ բարձրացրեցիր և կարգեցիր առաքյալներիդ առաքելական, հրեշտակներիդ պաշտոնակից ու հավասարակից այս աներեր խորհուրդին:

Վեհափառ Տեր, Աստուծո հայացքի առջև, ի դիմաց մեր հոգևորական դասի և հավատացյալ ժողովրդի, նախ ցանկանում եմ գլուխ խոնարհել երդասարդներ ցանկացանք գնալ Աստուծո լույսի ետևից: Եվ այդ ճանապարհին, մեր խոկումների ու աղոթքների պահին, ի դիմաց կանգնելով Մայրավանքիս Սուրբ Խորանի, միայն մեկ նախադասությամբ արտահայտեցինք մեր ողջ զգացումներն ու ապրումները. «Ի բաց գնա յինէն, Տէր, զի այր մեղաւոր եմ ես»:

Սակայն հազար Փառք Աստուծո, որ Իր Եկեղեցու կանչի և կոչի միջից հնչեցրեց Իր քաղցրահունչ ձայնը, թե «Մի՛ երկնչիր, յայսմհետէ զմարդիկ որսայցես ի կեանս», որի համար կրկին ու կրկին խոնարհվելով Նրա փառքի առջև, ասում ենք. «Օրհնեալ ես Դու Տէր եւ օրհնեալ են փառք մեծութեան Քո», որ մեզ բարձրացրեցիր և կարգեցիր առաքյալներիդ առաքելական, հրեշտակներիդ պաշտոնակից ու հավասարակից այս աներեր խորհուրդին:

Վեհափառ Տեր, Աստուծո հայացքի առջև, ի դիմաց մեր հոգևորական դասի և հավատացյալ ժողովրդի, նախ ցանկանում եմ գլուխ խոնարհել երջանկահիշատակ Վազգեն Վեհափառի շիրմին և հարգանքի տուրք մատուցել նրա անմահ հոգուն, ու այս զգացումով, ապշմոսանվագի համաձայն, իմ սրտի խորություններից շնորհակալություն ու երախտագիտություն հայտնել Քեզ, որ արժանի համարեցիր մեզ դառնալու ապաստանվորը Աստուծո Սուրբ Սեղանի: Վազգեն Վեհափառը եղավ մեր առաջին քայլերն ուղղողը դեպի

Աստված տանող հավերժագնաց ընթացքում, իսկ Դուք՝ դրանք ամբողջացնող ու Աստծուն ընծայողը: Նա մեզ համար մի տեսակ մարմնավոր ծնող եղավ հոգևոր դաշտի մեջ՝ ցույց տալով դեպի Մայր տաճարի դուռը տանող ճանապարհը, իսկ Դուք եղաք մեր հոգևոր ծնողը Սուրբ Խորանից պտղաբերմամբ: Նա մեզ ընկղմեց Բեթղեհեմի Սուրբ Ծննդյան այրի մեջ, իսկ Դուք բարձրացրեցիք Գողգոթայի ամենավսեմ բարձունքը. առանց առաջինի երբեք ու երբեք չէր կարող լինել երկրորդը, բայց առանց երկրորդի՝ անորոշության և անիմաստության մեջ կմնար առաջինի տարողությունը:

Վեհափառ Տեր, կրկին ու կրկին անգամ շնորհակալություն ենք հայտնում Ձեզ, որ Ձեր Աստվածադիր Աջի դրոշմումով և կնիքով մեզ միաձուլեցիք այդ Բարձունքին՝ դարձնելով ուղեգործ մահվանից դեպի կյանք ճանապարհի, մի փոշեհատիկ՝ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու այս հսկայական Աստվածակառույց հոգեշենքի մեջ: Եվ այս իսկ պահին խոստանում և ուխտում եմ լինել հավատարիմ զավակը, անտրտունջ սպասավորը և որդի-ծառան Մայր Եկեղեցու և նրա Գահույքալի, որ է հնազանդվել և ծառայել Աստծուն, Ընդհանրական ու Տիեզերական Եկեղեցուն, նրա անցյալի ժառանգությանը և ներկայի միջոցով՝ ապագայի առաքելությանը:

Աղոթեցեք և օրհնեցեք մեզ նաև դուք, սիրելի հոգևոր եղբայրներ, որ որոշակի ժամանակ առաջ խրատատու և կրթիչ հայրեր էիք, իսկ այժմ՝ խորհրդատու եղբայրներ: Մենք մեկ առաքելության ենք կոչվել՝ մարդկանց «ի խաւարէ ի լոյս, յանգիտութենէ ի գիտութիւն ճշմարտութեան» բերելու, և վստահ եմ, որ յուրաքանչյուրիս էլ տարբեր հոգեվիճակներում լսել է Տիրոջ ձայնը, թե «Մի՛ երկնչիր, յայսմհետէ զմարդիկ որսայցես ի կենդանս»: Մեզ համար այդ կյանքը ամբողջանում ու իմաստ է գտնում Սուրբ Էջմիածնի շրջագծի ու ճառագայթման մեջ, որը անհուն ու անպարփակ մի տարածություն է, կյանք ու ապրելու եղանակ: Եթե մեր կյանքի որևէ հատվածում բացակայի այս աստվածային դրվածքը, ապա իզուր ենք ապրել մենք, և անիմաստ է ընթանում մեր կյանքի անիվը:

Սիրելիներս, մեզանից յուրաքանչյուրը, որպես իր հոգու կանչի ուրույնություն, բազում անգամներ է մուտք գործել Սուրբ Էջմիածնի պատերից ներս: Բայց պարտավոր ենք մուտք գործել **մտնելով** այնտեղ, ոչ թե շոշափել-անցնելով, այլ միախառնվելով ու ներծծվելով այս սրբացած քարերին, որոնք հիմնադրվել են Սուրբ Կուսածնից արյան ողոգումով, մեր Սրբաւոր՝ Գրիգոր Լուսավորչի արցունքի ու տառապանքի շաղախով և Տիրոջ կողմից այս ամենի երկնային շողերով գմբեթավորմամբ: Մեր առջև տևական հարցադրում և կյանքի խնդիր պիտի լինի, թե որքանո՞վ ենք արժանի այս ճշմարտությանը, որքանո՞վ ենք իսկապես ծառան այս հաստատության: Արդյո՞ք ամեն անգամ կարողանում ենք մեր երջանկությունը գտնել այնտեղ, արդյո՞ք մեր կյանքը իսկապես խարսխել ենք Հիսուսի ճշմարիտ Եկեղեցու վրա և այդ Եկեղեցու միջի՞ց ենք տեսնում մեր հետագա գործունեությունը կամ մեր հետագա կյանքը, որ է՝ հասնել մի երանելական վիճակի՝ անդադար փառավորելով Աստծուն Իր ամբողջության և կատարելության մեջ: Այս տաճարից մուտք գործելիս, ցանկացած մարմնական գործ մոռացությամբ մեկ կողմ թողնենք՝ մտքի ալաքը ուղղելով դեպի երկինք: Իզուր և թափուր է մեր մուտքը այստեղ, եթե չկա հոգու խրախճանքը, եթե այն սոսկ մարմնական և արտաքին ձևապաշտություն է: Աստուծո փառաբանվող և օրհներգվող անունը ոչ թե լոկ շրթնային ու կոկորդային բար-

բաջանք է, այլ հոգու հրայրք, բոցկլտում, այլապես այն կնմանվի պղնձից արձակված դատարկ հնչյունի: Մեր հոգու հրճվանքը արտահայտենք ոչ միայն աղաղակ բարձրացնելով, այլ լուսավառված սրտերով, կյանքի մաքրությամբ և ողորմածությամբ: Եկեղեցին հանդիսավայր ու լսելության տեղիք չէ միայն: Այստեղից անհրաժեշտ է դուրս գալ միշտ օգուտ քաղած և աստվածային պատգամներով լցված: Եկեղեցուց հեռանալիս ձեր այտոնդ արթնացած մտքերն ու զգացմունքները ձեզ հետ տարեք տուն ձեր ընտանիքներին ու երեխաներին, բարեկամներին ու հարևաններին որպես բումնավետ ծաղիկներ և անուշահամ մրգեր: Եվ այդ ժամանակ ձեր բնակարանները կդառնան աստվածային գեղեցկագույն պարտեզներ, իսկ կյանքը՝ աստվածային հրաշալի խնջույք:

Մենք, կոչվելով այս սրբազան ծառայության ու առաքելության, ամբողջական գիտակցությամբ ու ընկալումով խոսք ենք հղում ձեզ, սիրելի քույրեր և եղբայրներ, լինենք Տիրոջ հավատարիմ ծառաները՝ մշտապես մեր ուղեղների մեջ դրոշմելով, որ այս երկրի վրա գոյություն ունի Աստուծո իրավահաջորդը՝ Եկեղեցին, ոչ միայն մեր սրտին հարազատ Հայաստանյայց Եկեղեցին, այլ նաև նրա լույսերի միջից երևացող Ընդհանրական Եկեղեցին, որ միայն այսօրվա Եկեղեցին չէ, այլ անցյալի և ապագայի: Այս հրաշին, որ վերն է ուղղում մեզ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ մարգարեի բերանով, թե դարձեք դեպի Ինձ, և Ես պիտի դառնամ դեպի ձեզ: Եվ այս ճանապարհով՝ հոգու ճանապարհով կկարողանանք տեսնել Աստուծո լուսավոր դեմքը, քանզի արտաքին ճանապարհը մշտապես խցանված ու փակ է:

Այս իսկ խոհերով և պատգամով, «հաստատուն մնացեք, միխթարվեցե՛ք, միաբա՛ն եղեք, խաղաղությո՛ւն արեք, և խաղաղության ու սիրո Աստված թող լինի ձեզ հետ: Ողջո՛ւյն տվեք միմյանց սուրբ համբույրով» Մայր Եկեղեցու տաճարացման հովանու ներքո:

«Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհը, Աստուծո սերը և Սուրբ Հոգու հաղորդությունը լինեն ձեզ հետ» հավիտյանս. ամեն:



ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ԿԱՐԱՊԵՏ ԱԲԵՂԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՐՈԶԸ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ

Նվիրական և միաժամանակ հուզական պահ է այսօր ինձ համար, սիրելի քրիստոսասեր ժողովուրդ:

Տարիներ առաջ, երբ ուսանող էի, տղայական գիտակցությամբ էի պատկերացնում հոգևորականի այն վիճակը, որ Քրիստոսի խորհրդական մարմինն էր բաշխում Սուրբ Սեղանից:

Այսօր այդ դիրքում կանգնած եմ ես: Ինձ է ընծայված կատարել «աճեղ խորհուրդը» սուրբ պատարագի: Եվ ավելին՝ այս սուրբ պատարագով պիտի սկզբնավորեմ իմ ծառայությունը որպես բարձրյալն Աստծո Եկեղեցու քահանա: Դժվար է: Բայց չէ՞ որ Աստված է առաջնորդող: Իսկ ինչ որ անկարելի է մարդկանց, այդ հնարավոր է Աստծո միջոցով: Արդ՝ հոգիս, թեև անկախ ինձանից, լռելյայն աղաղակում է Աբբա հայր՝ խնդրելով զորություն և ուժ, հակառակն առաքելով գոհություն և փառաբանություն:

Սիրելի հավատացյալներ, հոգուս աղոթքին զուգահեռ անհրաժեշտ եմ զգում արտահայտել սրտիս երախտագիտությունը և շնորհակալությունը ազգընտիր Վեհափառին, հոգևոր ծնողիս, որ հորդորեց և ոգևորեց ինձ քահանայական այս պաշտոնին լծվելու գործում: Հոգուս գոհունակության երախտիքն եմ հայտնում Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի տեսչությանը, այդ թվում՝ Եզնիկ ծայրագույն Վարդապետ Պետրոսյանին, որի ընդունելությամբ առաջին քայլը կատարեցի ճեմարան: Շնորհակալություն վերատեսուչ Ներսես արքեպս. Պոզապալյանին, որի հայրախնամ ընկերակցության ջերմությունը երբեք չզիջեց իր արքեպիսկոպոսական և տեսչական բարձր տիտղոսին: Նաև հոգուս պարտքն եմ համարում աղոթել առ Աստված երջանկահիշատակ Վազգեն Վեհափառի և հայ ժողովրդի հաճատակների հոգեր խաղաղության համար, քանզի «բարոյապես մենք ուժեղ ենք, որքան ջերմ է պաշտամունքը դեպի մեր մեծ անցեցյալները»: Խոնարհություն և շնորհակալություն ձեզ, սիրելի հավատացյալ քույրեր և եղբայրներ: Հավա-

տացած եմ, որ ձեզանից շատերն աղոթքներով զորավիգ եղան ինձ բանաձօրյա հետաձեռնադրության ընթացքը քիչ սխալներով անցկացնելու համար:

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

«... Մեզ, ինչպես ոմանց, պետք չեն հանձնարարական թղթեր՝ ներկայացնելու ձեզ և կամ պահանջելու ձեզանից, այլ մեր թղթերը դուք եք՝ գրված մեր սրտերում, ճանաչված և կարդացված բոլոր մարդկանցից, հայտնի որպես Քրիստոսի թղթեր՝ մեզանից հոգացված և գրված ոչ թե քարեղեն տախտակների վրա, այլ սրտի մարմնեղեն տախտակների վրա:

Սիրելի հավատացյալներ, Պողոս առաքյալի այս խոսքերը հատուկ կերպով պարզաբանում են մի կարևոր հասկացություն. դա է՝ Եկեղեցին: Սակայն ո՛չ այն եկեղեցին, որն այսօր տեսնում ենք կամ շոշափում, ո՛չ այն տաճարը, որ պատրաստված է քարերից, ո՛չ այն ճիվիրապետությունը, որ կազմված է հոգևորականներից, ո՛չ այն ծեսը, ո՛չ այն իրավական կանոնները: Թեպետև այս բոլորը ներմուծված են Եկեղեցու լինելության, պատմական մարմնավորման և ձևավորման մեջ: Քանի որ Եկեղեցին ունի և՛ ֆիզիկական, և՛ հոգեբանական, և՛ սոցիալական կողմեր: Սակայն այս կողմերի միջոցով էլ անկարելի է իրապես ճանաչել Եկեղեցու բնությունը: Որովհետև Եկեղեցին միայն տեսանելի իրողություն չէ, այն չի պատկանում միայն տեսանելի իրերի աշխարհին: Այն չունի արտաքին հատկանշաններ և սահման:

Արդ, սիրելի հավատացյալներ, որն է իրական և ճշմարիտ Եկեղեցին: Ինչպե՞ս պետք է ճանաչել կենդանի և հոգևոր գործող Եկեղեցու բնությունը: Ճշմարիտ Եկեղեցին քահանայի առաջնորդությամբ՝ հավատացյալների ժողովն է: Դուք եք, որ կրում եք ձեր մեջ իրական բնությունը Եկեղեցու: Իսկ այդ եկեղեցին անտեսանելի գոյություն է, այն պատկանում է անտեսանելի բաների աշխարհին՝ դրսևորված հավատքով, և հավատացյալների ամենաճարպազան հոգևոր իրականություններն է: Այն յուրաքանչյուր հավատացյալին հատու է դառնում եկեղեցական փորձառության մեջ: Այդ փորձը կարիք չունի հանձնարարական թղթերի և օրինական սահմանումների, որոնք պիտի փորձեն ներկայացնել այս կամ այն հավատացյալի և կամ էլ հոգևորականի հոգևոր փորձառության խորությունը: Արտաքին նշանները շատ հաճախ վրիպում են: Մեկը, որ սրբակյաց և հավատացյալ է ներկայանում, կարող է իր մեջ ամբարած լինի սարերը շարժելու զորության չափ գոռոզություն և չարացածություն, իսկ այնպիսի մեկը, որ արտաքին նշաններով հասարակության աչքի առջև գնահատվում է խաբեբա և անօրինական, կարող է ունենալ Աստծուն հաճո հավատք և խոնարհություն և բարություն: Այս խոսքերից բոլորիս աչքի առջև գծագրվում է Ավետարանի լավագույն առակներից մեկը՝ անկեղծ մաքսավորի և մեծահարուստ փարիսեցու մասին, երբ փարիսեցին Աստծուն էր պատմում իր օրինապահություններն, այնինչ մաքսավորը տաճարի մի անկյունում՝ գաղտնի իր կուրծքն էր ծեծում՝ ասելով. «Տէր. քաւեա զիս զմեղաւորս»:

Սիրելի հավատացյալներ, թեպետև ա՛յս երևույթը նկատի ունի առաքյալը, երբ վկայում է իր մասին՝ ասելով. մեզ պետք չեն հանձնարարական թղթեր՝ ներկայացնելու ձեզ կամ պահանջելու ձեզանից, այլ մեր թղթերը դուք եք՝ գրված մեր սրտերում:

Ինչպես տեսնում եք, Պողոս առաքյալը դեռևս առաջին դարում խուսափել է ձևապաշտության հասնող հանձնարարական թղթերից և խոսքով շեշտադրում է հոգևոր և կենդանի Եկեղեցին, որի ճանաչման փորձը հոգևոր է՝ դրոշմված մեր սրտերում: Իսկ այս փորձը իրականանում է, երբ մեզանից յուրաքանչյուրը հաղթահարում է իր հոգևոր անձկությունը, անվածությունը և ստեղծում հոգու հաղորդություն: Ինչպես առաքյալը մեկ ուրիշ տեղ էլ նշում է. «Եթե կա հոգու հաղորդություն, ուրեմն կատարյալ դարձրեք իմ ուրախությունը, նույն բանը խորհեցեք, նույն սերն ունեցեք ձեր մեջ, եղեք միաշունչ, միախորհուրդ»: Եվ այսպիսի հոգևոր հաղորդակցությամբ՝ կրոնական ձեր փորձառությունը ձերբազատելու է ձեզ առաջնային դասվող այս աշխարհից: Դուք պիտի հաղթեք աշխարհը, պիտի հաղթահարեք տկար մարդն իր անազնիվ կողմերով և առաջնորդվելու եք իրական, ոչ թվացյալ ճշմարտության աշխարհը՝ ա՛յս աշխարհի մեջ: Դուք, սիրելի եղբայրներ և քույրեր ի Քրիստոս, լինելով թղթեր՝ գրված մեր սրտում, պիտի լինեք հաղորդակից մեր ներկություններին, ցավակից՝ միմյանց չարչարանքներին: Իսկ ձեր և հոգևորականի միասնությունը հավասարական զորավոր աղոթք պիտի առաքի առ Աստված: Եվ կլինի մեկ հոտ, մեկ հովիվ, զինվորյալ ամբողջական Եկեղեցի:

Սակայն, սիրելի հավատացյալներ, Եկեղեցին չի սահմանափակվում միայն մաքառող զինվորներով: Այն ունի նաև իր հաղթական դասը: Իսկ առավել գործուն և մշտակենդան՝ Աստված և մարդ հարաբերության ոլորտը: Այս շեշտվեց քարոզիս բնաբանի երկրորդ մասում. «Հայտնի եք որպես Քրիստոսի թղթեր՝ մեզնից հոգացված և գրված ոչ թե թանաքով, այլ կենդանի Աստուծո հոգով, ոչ թե քարեղեն տախտակների վրա, այլ սրտի մարմնեղեն տախտակների վրա»:

Հավատացյալների հոգևոր միասնությունը, հոգևոր Եկեղեցին ընդգրկվում է Քրիստոսի մեջ՝ գրված կենդանի Աստուծո հոգով: Կանգնելով աղոթքի՝ մենք միասին ենք ոչ միայն ի Քրիստոս ապրող մեր եղբայրների հետ, այլև ամենաէականը՝ մենք կանգնում ենք դեմ-դիմաց Քրիստոսին, որպես Քրիստոս Գեթսեմանիի ա՛գում հանդիպեց Իր հորը՝ Աստծուն:

Այսպիսով, սիրելի հավատացյալներ, մարդ և մարդ, մարդ և Աստված, Աստված և Եկեղեցի իրական հաղորդակցությունը դառնում է էական հատկանիշը Եկեղեցու, որտեղ՝ հավաքական հոգում կատարվում է միակ սրտի բաբախյուն: Այս եկեղեցում ընթանում է միասնական ճանաչումը Քրիստոսի, բոլորի հանդիպումը Քրիստոսի հետ, եզակի և միավորող ուժի ստացումը Քրիստոսից, մի խոսքով՝ Քրիստոս մեր մեջ և մենք՝ Նրա մեջ:

Արդ այս դեպքում է, որ ճանաչվում ենք որպես Քրիստոսի թղթեր՝ գրված ոչ թե թանաքով, այլ կենդանի Աստծո հոգով: Արդ, միգուցե սա է ընկատառում Հովհաննես առաքյալը, երբ գրում է ընդհանրական թղթում, թե՝ «Օծում ունեք Սրբից, Օծյալից, իսկ այդ Օծումը ուսուցանում է ձեզ այն ամենը, ինչ ճշմարիտ է և ոչ սուտ»: Իսկ Քրիստոսից սրված այդ մտքի միջոցով իմանում ենք այն ամենն, ինչ չէինք կարող իմանալ մեր մտքով: Եվ այսպես է, որ պիտի հաւտնի լինենք որպես Քրիստոսի թղթեր, որ և նշանակում է՝ լինել անդամ Քրիստոսի մարմնի մեջ, որի դեպքում կլինի միտքը Քրիստոսի, սերը Քրիստոսի և ազատությունը Քրիստոսի հավատյանս, ամեն:

ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ԳՈՒՐԳԵՆ ԱՐԵՂԱ ԱՂԱԲԱԲՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Սիրելի հավատացյալ ժողովուրդ, սիրելի եղբայրներ և քույրեր.

Հոգևոր դաստիարակության և ուսումնառության շրջանից հետո, կամոքն Աստուծո և հայրական խնամակալությամբն ազգիս Հայրապետի, ուղիղ 40 օր առաջ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արքազան խորանի վրա, ստացա քահանայական ձեռնադրություն իմ օծակից եղբայրների հետ՝ սրբազոծ ձեռամբ տիեզերական Եկեղեցվույս Քահանայապետի՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա-ի:

Աստծո շնորհներով լցված, զորավորված կենդանի Փրկչի ավետարանական լույսով, մեր տառապած ու փրկության քառուղիներով ընթացող ազգային Եկեղեցին իր բազմադարյան, նույնքան տառապած թևերը փռեց նաև մեր՝ նորընծաներիս ուսերին՝ հավատքի սիրո այն ջերմությամբ, որ դարեր ի վեր, մեր արքազան անտրտունջ աղոթքով ու խոկմամբ, բարձրյալի՝ բարի նավապետի առաջնորդությամբ, մեր հավատքի նավն են առաջնորդել փոթորկաճույզ, մրրկաբաշ օվկիանի բովից դեպի խաղաղ նավահանգիստ:

Սիրելի Քրիստոսասեր ժողովուրդ,

Իմ անդրանիկ պատարագով և անդրանիկ քարոզով ու հոգու հուզմունքով, Տիրոջ Սուրբ Սեղանի առաջ կանգնած, գոհության իմ աղոթքն եմ առաքում առ Աստված, Անդրանիկին Անդրանիկներից, որ հայրական տրնօրինությամբ այսուհետ մեր ավետարանված Սուրբ Եկեղեցու վարդապետությունն եմ քարոզելու և ուսուցանելու:

Իմ հոգու աղոթքն եմ առաքում առ Աստված ազգիս հանգուցյալ Հայրապետի՝ Վազգեն Ա-ի հոգու փրկության համար, որի հայրական օրհնությամբ թևակոխեցինք ճեմարանի հարկից ներս: Նաև ճեմարանի դասախոսական կազմին՝ վերատեսչությամբ Ներսես արքեպս. Պոզապալյանի, որի հայրական հոգատարության շնորհիվ իմ օծակից եղբայրների հետ գիտվորյալ ծառաներն ենք մեր Մայր Եկեղեցու:

Աղոթում եմ անդադար նաև ազգիս Հայրապետի՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա-ի համար: Իմ օծակից եղբայրների հետ բախտ ունեցա դառնալու հոգևորդին Հայոց Հայրապետի, որի հայրական հոգատարության և օրհնության ներքո անցկացնելով քառասնօրյա փորձության շրջան, մկրտվեցինք հոգևոր փորձառության շնչով ի Տեր և ի Հայրապետս Հայոց:

Գոհություն ու փառաբանություն Ամենազորին, ճշմարտին ու միակ Աստծուն, Նա, որ աշխարհի մարդկության մեղքը գամեց խաչափայտին և փրկեց մարդկային հոտը կորստյան ճանապարհից:

Փառք և երկրպագություն, Ամենագութ Տեր, որ արժանի արեցիր մեզ՝ չորս օծակից եղբայրներիս, քահանայության մշտարթուն սիրո ու ևվիրումի, մարտնչող մեր Եկեղեցու զինվորյալները դառնալու... և հիմա, այս պահին, Հայաստանի տարբեր եկեղեցիներից ներս, մեր ցնծության աղոթքն ենք մատուցում Քեզ՝ շաղախված միևնույն ևվիրումով ու զգացումով առ Տեր, առ Եկեղեցիս Հայաստանյայց և ի Հայրապետս Ամենայն Հայոց:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ,

Մեր անդրանիկ պատարագով և անդրանիկ քարոզով անդրանիկ հոգևոր փորձառության մկրտություն ստացանք ևսև այսօր, ձեր հոգու և ձեր հավատքի առջև, զորավոր հավատքի հյուլեները մեր սրտերի ու մեր հոգու մեջ բոցավառեցին մի նոր հորիզոն, մի նոր կյանքի ճանապարհ, ճանապարհ առաքելական կոչումից ծնված ևվիրում ու ծառայության ձեզ, ճանապարհը դեպի ձեզ է բերում ինձ ու իմ օծակից եղբայրներին, ճանապարհ, որ Եսայի մարգարեին տարավ, որ Հռվնան մարգարեին տարավ, տարավ շատ մարգարեների ու Աստծու ծառաների, և ըստ առաջինի օրինակի, թե՝ «Ում ուղարկեմ դեպի ժողովուրդը» և ըստ պատասխանի՝ «Թե ինձ ուղարկի դեպի ժողովուրդը, Տեր»:

Մենք նույնպես՝ օծակից եղբայրներս, Տիրոջ կամքով և ազգիս Հայրապետի հայրական օրհնությամբ ու խնամակալությամբ, գալիս ենք դեպի ձեզ, գալիս ենք ավետարանական լույսի ու հույսի շողերը մեր սրտերի մեջ, գալիս ենք, որ սերմանենք ձեր մեջ Տերունական ուրախություն անանձնական, ուրախություն, որ է փրկության ճանապարհը, Տեր Հիսուս Քրիստոսի խոսքով հաստատված և կնքված Սուրբ արյունով ու օծված, ճանապարհ, որ է ճշմարիտ կյանքի ճանապարհը, Բարձրյալի օրհնությամբ ու ողորմությամբ տրված այժմ և միշտ և հավիտյանս: Ամեն:

ՀԱԻԱՏՔ

«Մի՛ երկնչիր, միայն հաւատա՛»:
(ՂԿՍ. Ը. 50)

Երկիւղիս ոսկադրուած հաւատքը արտայայտուած է շեշտուած կերպով Ղուկասի Աւետարանի ութերորդ գլուխի վերջին համարներուն մէջ: Ան կը տանի մեզ դէպի հին հարց մը, որ, սակայն, կը շարունակէ մնալ այսօրուան աշխարհի մտահոգութիւններու կարեւորագոյններէն մին. ՈՐՆ Է ԻՐԱԿԱՆ ՀԱՒԱՏՔԸ, այն հաւատքը, զոր Քրիստոս պահանջեց այն բոլոր հիւանդներէն, որոնք դիմեցին անոր աստուածային զօրութեան:

Պարզ անհանգստութիւններու, ծանր հիւանդութիւններու, մինչեւ իսկ մահուան պարագաներու, մարդոց երկիւղին, յուսահատութեան կամ արցունքին դիմաց, մեր Տէրը կրկնեց շարունակ. ՄԻ ՎԱԽՆԱՐ, ՄԻ ՅՈՒՍԱՀԱՏԻՐ, ՄԻ ԵՐԿՄՏԻՐ, ԲՆԱՒ ՄԻ ԿԱՍԿԱԾԻՐ, ԱՅԼ ՄԻԱՅՆ ՀԱՒԱՏԱ, հաւատա, հոգ չէ՛ թէ մանաւանդ հաւատքդ չափ ըլլաչ հաւատքդ. ան բաւական է լեռներն անգամ տեղափոխելու: Նոյնը ըսաւ մեր Տէրը այն ժողովրդապետին, որ եկած էր Անոր մօտ՝ հիւանդ իր աղջկան բժշկութիւնը խնդրելու, ճիշտ այն պահին, երբ լուր հասաւ թէ աղջիկը աւանդած է արդէն իր հոգին: Քրիստոս ըսաւ ժողովրդապետին. «Մի՛ վախնար, միայն հաւատա՛»: Ապա ընկերացաւ ժողովրդապետին և կեանք տուաւ անոր անշունչ աղջկան:

Օտար չէ՛ մեզմէ շատերուն համար այն պահը, երբ, յուսահատած գիտութեան կարողութիւններէն, բժիշկներու միջամտութիւններէն, մեր աչքերը կը դարձնենք դէպի աւելի բարձր զօրութիւն մը, անոր գերբնական միջամտութիւնը հայցելու: Այդպէս ըրաւ ժողովրդապետը, այդպէս ըրին ու կ'ընեն բազմաթիւ հայրեր ու մայրեր, երբ կը զգան թէ իրենց ձեռքերէն դուրս կը սահի, կաթիլ առ կաթիլ, իրենց զաւակին կեանքը: Իրարանցումի, վախի և յուսահատութեան ընդմէջէն, կ'արթնանայ անոնց մէջ հին աղօթք մը, մոռցուած հաւատք մը ու անոնք կը փութան Եկեղեցի, մոմ կը վառեն, կ'ուխտեն, կը պաղատին, արցունք կը թափեն, վերստանալու յոյսով իրենց զաւակը Աստուծոյ ողորմութենէն:

Թմրած պիտի մնար անոնց հաւատքը, դիմած պիտի չըլլար Աստուծոյ միջամտութեան, եթէ գտնուած չըլլային անձեր մը առջև, ինչպէս ժողովըրդապետը պիտի չերթար Յիսուսի մօտ, եթէ իր սովորական բժիշկը ապառած չըլլար գիտութեան բոլոր կարելիութիւնները:

Հաւատքը կը սկսի խօսիլ, երբ կը լռէ գիտութիւնը: Ան վստահութեան մը արտայայտութիւնն է գերբնական ոյժի մը հանդէպ, որ կրնայ հրաշքներ գործել, ինչպէս էր ժողովրդապետին հաւատքը Յիսուսի նկատմամբ: Այս չէ՛ իրական հաւատքը: Իրական հաւատքը չի՛ լռեցներ գիտութիւնը կամ փոխարիներ զայն, այլ, ընդհակառակը՝ կը սնուի միտքի իւր համոզումներով, որոնք գիտութեան ապնդումներով կը բարձրանան դէպի աստուածային ճշմարտութիւնը, դէպի աստուածայայտնութիւն:

Հաւատքն է յայտնուած ճշմարտութիւնները: Անոր ուղին է ուղղափառութիւնը, իսկ գերագոյն նպատակը՝ սէրը, ամբողջ սիրտով, ան Աստված և սէր ան ընկերը:

Ահա թէ ինչու, երբ մարդս կը վստահի մեր Տիրոջ ու Անոր ուսուցումին մէջ կը գտնէ գերագոյն բացատրութիւնը գիտական բոլոր ուսուցումներուն, ան կրնայ ապրիլ հաւատքի այն կեանքով, որ իսկական քրիստոնեայի կեանքն է, մարդկայինը, շաղախուած աստուածայինին:

Հաւատալու համար բաւարար չէ՛ ընդունիլ հաւատամքի մը վարդապետական բանաձևումները, այլ անհրաժեշտ է խոր ապրումի վերածել զանոնք, որովհետև հաւատքը վեր է աստուածաբանական գիտելիքներէն և վարդապետական բանաձևումներէ, այլ նոր կեանք մըն է ան, ծաղկած այդ բոլորի լայն դաշտին մէջ:

Գիտութեան ճամբով կրնանք տարուիլ եզրակացնելու թէ Աստուած գոյութիւն ունի, բայց հաւատքով, այսինքն կրօնական ապրումով միայն կրնանք զգալ և գիտակցիլ Աստուծոյ ներկայութեանը՝ մեր ամբողջ էութեան մէջ:

Հակադրութիւնը հաւատքին և գիտութեան, զոր մարդիկ կը ջանան ստեղծել, կեղծ հակադրութիւն մըն է, որովհետև առանց կանխակալ կարծիքի և ճշմարտութեան սիրոյն աշխատող գիտնականին համար, հաւատքը լոյս մըն է, որ չի՛ ժխտեր գիտութիւնը, այլ կ'ամբողջացնէ զայն:

Ոևէ ատեն, մեր Եկեղեցին չէ՛ ժխտած գիտութեան նպաստը հաւատքին, որովհետև անոր մէջ գտած է կարելի բացատրութիւններ՝ յայտնուած կրօնական ճշմարտութիւններուն: Ան տուած է մարդկային միտքին անոր արժանաւոր տեղը կրօնական հայեցողութեան մէջ, ո՛չ թէ անոր վրայ միայն հիմնելու համար հաւատքը, այլ բերելու համար զայն իբրև օժանդակ մեր հաւատքին:

Եկեղեցիի զաւակները նախ հաստատացած են Աստուծոյ և անկէ ետք միայն մարդկային գիտելիքներուն մէջ փնտռած են իրենց հաւատքը ամ-

բապնդող փաստեր, քանի որ հաւատքը, ամէն բանէ առաջ, վստահութեան և ներքին վկայութեան հարց է:

Նոյնն է և այսօր: Ամէն դար գիտական նոր վարկածներ և ըմբռնումներ կը բերէ: Անոնք բոլորը չե՛ն կրնար ապացնել սահմանը ճիգերու, զորս մարդկային միտքը ըրած է միշտ, հասնելու համար ճշմարտութեան: Բայց անոնք կուգան ու կ'ապացնին, մինչդեռ կրօնական ըմբռնումները կը մնան նոյն, բոլոր այն մարդոց մէջ, որոնք մտիկ կ'ընեն իրենց ներքին աշխարհէն եկող ձայնին՝ իրենց մէջ բնակող կենդանի Աստուծոյն:

Մարդուս գիտակցութեան մէջ, հաւատքի կեանքին զարգացումը ունի իր հանգրուանները: Յաճախ, ան կը սկսի հոն ուր կանգ կ'առնէ գիտութիւնը: Հիւանդութեան մասնաւոր պարագան, յուսալքուած մարդուն մէջ, պերճախօս օրինակն է հաւատքի սկզբնաւորութեան:

Սակայն, երբ հաւատքը սկզբնաւորութիւն մըն է միայն, որ մարդկային գիտութենէն ձեռնթափ՝ կը դիմէ Աստուծոյ գթութեան, անկէ սպասելով ինչ որ մարդիկ անկարող են տալու, այդպիսի հաւատքը չի՛ կրնար ըլլալ ամբողջական, ան ծնունդ է մասնաւոր պարագայի մը, ուր վախն ու երկիւղը աւելի տեղ ունին քան գիտակից համոզումը:

Վստահիլ Աստուծոյ, յանձնուիլ Անոր մարդասիրութեան, Անկէ սպասել ամէն օգնութիւն, անշուշտ որ առաջին քայլերն են, բայց առաջին քայլեր միայն, որոնց անհրաժեշտօրէն պէտք է յաջորդեն ուրիշներ:

Բազմաթիւ քրիստոնեաներու հաւատքը եւս չի՛ գերազանցեր ժողովրդապետին հաւատքը. ան վստահութեան մղումն է դէպի Աստուած, ինչպէս պիտի մղուէիք մեր բժիշկէն աւելի կարող բժշկի մը միջամտութեան, երբ մեր յոյսը կտրէիք մեր բժիշկէն:

Բայց ո՞րն է կատարեալ հաւատքը, որո՞նք են վստահութեան միւս քայլերը դէպի կենդանի հաւատք:

Հաւատալ բառը կը գործածենք երկու տարբեր առումներով. հաւատալ անձի մը և հաւատալ բանի մը: Առաջին առումով, հաւատքը վստահութիւն մըն է անձի մը գերբնական կարողութեան և զօրութեան: Երկրորդ առումով՝ խոր համոզումներու ամբողջութիւն մը, համոզումներ, սակայն, որոնք կը բղխին ներքին ապրումէ մը, ներքին վկայութենէ մը թէ հաղորդութեան մէջ ենք ճշմարտութեան հետ, ճշմարտութիւն մը, որուն աղբիւրն է Աստուած: Եկեղեցին հաւատքի առարկայ ճշմարտութիւնը կը կոչէ «յայտնութիւն»:

Այսօրուան իրականութեան մէջ կան մարդիկ, որոնք կը մերժեն հաւատալ ոևէ անձի կամ ուսուցումի: Անոնք իրենց վստահութիւնն ու ուսուցումը կը կեդրոնացնեն իրենց անձին վրայ, հակադրելով իրենց գիտութիւնը յայտնուած հաւատքին: Այդպիսիները չե՛ն մերժեր հաւատքի մը անհրաժեշտութիւնը, այլ կրօնական հաւատքին կը հակադրեն այլ հաւատք մը, այն է հաւատք՝ մարդկային միտքի կարողութիւններուն, որոնցմէ կը սպա-

սեն ճշմարտութեան յայտնութիւնը: Այդպիսիները գիտեն թէ մարդկային միտքը հետու է թափանցած ըլլալէ տիեզերքի և մարդու խորհուրդներուն, թէ՝ գիտութեան նոր գիւտերու յայտնութիւնը եթէ կը փաստէ ոեւէ բան, կը փաստէ թէ նորը կը հերքէ հինը և, հետեւաբար, ինչ որ միամտութիւնը պիփաստէ թէ նորը կը հերքէ հինը և, հետեւաբար, ինչ որ միամտութիւնը պիտի նկատուի վաղը, շնորհիւ աւելի նոր նուաճումներու, չի՛ կրնար բացարձակ ճշմարտութիւն ըլլալ այսօր: Անոնք գիտեն գիտական աշխարհի անպարագրելի այս օրէնքը, սակայն իրենց վստահութիւնը կ'ուզեն կապուած պահել միայն ու միայն իրենց գիտութեան, պնդելով թէ պիտի գայ օր մը, երբ գիտութիւնը պիտի բացատրէ ամէն բան և պէտք պիտի չմնայ դիմելու կրօնքի բերած բացատրութիւններուն:

Այսպիսիներուն տրուած պատասխանը շատ պարզ է. առանց մտնելու վէճին մէջ, որ կասկածի տակ կ'առնէ մարդկային միտքին անսահմանութիւնը, եթէ ենթադրենք պահ մը, թէ պիտի գայ օր, երբ մարդկային հայեցողութեան առջեւ դրուած բոլոր հարցերը՝ բնութեան և մարդու, երկրաւոր կեանքի և յաւիտենականութեան, մահուան և անմահութեան մասին պիտի գտնեն անվիճելի պատասխաններ, անվիճելի անշուշտ մարդկային միտքին և գիտեութեան անունով հաւատքը ժխտող գիտուններուն, այլ անոնց, որոնք գիտնական ըլլալով հանդերձ, գիտեն թէ իրենց գիտութենէն աւելի կատարեալ գիտութեան դաշտ մը կայ մարդու ոգիէն վերս, հաւատքով լուսաւորուած գիտութիւնը, որ կը կոչուի լոյս աստուածգիտութեան: Հո՛ն է ճշմարիտը, գեղեցիկը և բարին, հոն՝ իրական մարդը:

ԾԱՀԷ ԱՐՔԵՊ. ԱՃԷՄԵԱՆ



ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՊԱՏԵՐԻ ՏԱԿ*

«Էջ Միածին ի Հօրէ
Եւ լոյս փառաց ընդ նմա»:

Գաղթականների տանջահար, ուժասպառ և խիտ նոսրացած խումբը երկար շաբաթներից հետո, վերջապես, հասավ այնքա՜ն երանելի և բաղձալի Վաղարշապատ:

Փրկվա՜ծ էին արդեն...

Բայց, մտնելով Վաղարշապատ, տառապահար գաղթականների առջև բացվեց մի անասելի, ահավոր և սահմռկեցուցիչ տեսարան: Քաղաքը լիքն էր գաղթականների ստվարախիտ բազմություններով՝ եկած Արևմտյան Հայաստանի, ինչպես իրենք կասեին՝ Տաճկահայաստանի տարբեր գավառներից: Նրանց տեսքն այնքա՜ն խղճահարույց էր, նրանք այնքա՜ն հյուծված էին և կմախքացած, որ դիտողը կասեր, թե սրանք եկել են անդրաշխարհից: Նրանց մարմինները պատսպարվել էին ոչ թե հագուստներում, այլ բացառապես կծկտվել ցնցոտիների մեջ: Իսկ պատերի տակ ծվարած հիվանդ և ուժասպառ մարմիններն էլ թվում էին դիակներ:

Այս կիսամեռ փախստականներն արդեն մի քանի շաբաթ էր, ինչ հաղթվանել էին այստեղ՝ Սուրբ Էջմիածնի պատերի տակ:

Սով էր ու համաճարակ:

Ամեն առավոտ հատուկ նշանակված մարդիկ սայլերով դիակներ էին դուրս բերում քաղաքից:

Ո՛ր ընտանիքը որ կարողացել էր, տեղավորվել էր քիչ թե շատ հյուրընկալ տներում, իսկ մնացածները՝ որտեղ պատահի. վանքի պարիսպներից դուրս և դուրս, պատերի տակ, փողոցներում, հյուրընկալ տների փարախներում: Ո՛ր ընտանիքները որ կարողացել էին իրենց անկողինները տեղ հասցնել, շրջապատի համար համարվում էին «բարեկեցիկներ»:

---

* Առաջին մասը տես № 6, էջ 168:

Սովյալների և հիվանդների թիվն արդեն հասել էր անասելի չափերի՝ վանքի պարիսպներից ներս և դուրս, ողջ Վաղարշապատում:

Այս անասելի և անպատմելի տեսարանին ականատես լինելուց հետո, գաղթականների նոր խումբը, որի մեջ էին նաև Գրիգորի և Վարդանի արհավրաբեկ ընտանիքները, ուզեր թե չուզեր, ստիպված էր միանալու նրանց և կրելու ճակատագրի այն զարհուրելի հեգնանքը, որ դեռևս մոտ ապագայում սպասվում էր նրանց:

Քանի որ օրն արդեն տարաժամել էր, Գրիգորի և Վարդանի ընտանիքները ստիպված էին վանքի պատերի տակ մի անկյուն ճարել և, այսպես ասած, տեղավորվել այնտեղ:

— Տե՛ր Աստված, էս ինչ օրի խաղանք,—տեղավորվելուց հետո հուսահատորեն արտաբերեց Սաթենիկը:

— Աստված մեծ ի, Սաթեն, մի հուսահատվի: Աստված փրկության մի տուռ կպանա:

Սուրբ Էջմիածնի պատերի տակ տեղավորվելուց հետո, ճանապարհից հոգնած և ընդարմացած Վազգենի մարմինը հանգիստ քուն մտավ: Կարծես նրան թվում էր, թե ամեն արհավիրք արդեն ի չիք դարձավ: Իսկ Գրիգորը, Սաթենիկը, Վարդանը և իր կինը՝ Զարուհին, որին Զարեր էին կոչում, ամբողջ գիշեր համարյա անքուն անցկացրին:

Շրջապատը չափազանց անհանգիստ էր. ամեն կողմ լաց, կոծ, վայնասուն...

Գաղթականներն այս տրամադրության և վիճակի մեջ էին, երբ հետևից կրկին լսվեց «Դլե յաման» երգը, որը հնչում էր, ճիշտ է, հզոր, բայց իր էությամբ՝ ողբախառն ու հուսահատական: Այս երգը կարծես հատկապես ստեղծվել էր վան-վասպուրականցու համար՝ նրա ճակատագրի՝ ծնընդյան իսկ պահից:

Այս անհավոր, ծանր գիշերից հետո, վերջապես, լույսը բացվեց: Օրը պայծառ էր, արևոտ և հմայիչ: Բայց արի-տես, որ ոչ մեկին չէր հետաքրքրում օրվա պայծառությունն ու հմայչությունը: Յուրաքանչյուր ընտանիք ուներ իրեն բաժին հասած զարհուրելի հոգսերը:

Լույսը դեռ չբացված, դիակներ տեղափոխող սայլերն արդեն լծվեցին իրենց չարաբաստիկ պարտականությանն կատարմանը: Ամեն օր տասնյակներով դիակներ էին դուրս բերվում քաղաքից և մի քանանոցի կողմից թաղման կարգ կատարվելով ամփոփվում մեկ ընդհանուր փոսի մեջ՝ այսպիսով կարծես նորոգ արբացված նահատակների հոգիներին հնարավորություն տալով միասին վերառաքվելու առ Աստված:

Կրկին շրջապատում հնչեց անման ծեր քահանայի ձայնը, որ երգում էր «Գթա, Տէր» շարականը՝ այսպիսով խաղաղություն մաղթելով հանգուցյալների հոգիներին և աստվածաշնորհ համբերություն՝ ողջերին: Այդպես թվաց շրջապատին, քանի որ նույն ծեր քահանան քիչ հետո երգեց «Առաւօտ լուսոյ, Արեգակն արդար, առ իս լոյս ծագեա» հոգևոր երգը:

Արեգակը պայծառորեն շարունակում էր շողշողալ:

Փոքրիկ Վազգենը դեռևս քնած էր: Երկար շաբաթների ճանապարհին կրած հոգնությունից հետո նրա հոգնած մարմինը հավանաբար խիստ պահանջ էր զգում ուժերի վերականգնման:

Լույսը բացվելուն պես Վարդանը մոտեցավ Գրիգորին և ասաց.

— Տղա Քիրիք,որ, էս շրջապատ գնինեն ի, սանդարամետ:

— Խա, ես էլ կտիանամ: Էսա Աստուծո պատիժն ի,—հոգոց հանելով պատասխանեց Գրիգորը:

— Մի՞թե մեր ազգ իսոր էր պժռանի,—շարունակեց Վարդանը: — Մեր ազգ կապրեր խաղաղ, հանքիստ, ո՞վ էլավ էսա պապելական կրակի պատճառ:

— Կերևա մեր մեղքեր շա՜տ են,—մեջ մտավ Սաթենիկը:

— Էս անմեղ լա՞ճ ինչ մեղք ունի,—մատնացույց անելով Վազգենին, ասաց Վարդանը: — Էնի՞ ինչ մեղք ի կործե... Էնի սուրբ ի:

— Աշխարհ շուռ ի իկե, մկա արդար-մեղավոր չկա,—վրա բերեց Գրիգորը:

— Մենք մեր էրկու լաճերուն թողիցինք ճանապարհին, դուք էլ ձե՛ր էրկու քյորփեքին,—մոտենալով նրանց, լացակումած մեջ մտավ Զարուհին:

— Ես իմ կյանք կուտամ, միայն թե փրկվի իմ լաճ,—գրկելով քնած Վազգենին պատանավախատն աչքերով ասաց Սաթենիկը:

Իսկ փոքրիկ Վազգենը մո՜ւշ-մո՜ւշ քնած էր:

— Էսա տեղ մեր տեղ չի,—ասաց Վարդանը:

— Սաթենն էլ էտ ի կասի,—նայելով խուճապահար խոսակիցներին, ասաց Գրիգորը:

— Քյանի շուտ ի հետանանք էստեղեն, ես վատ պան կգուշակեմ,—ասաց Սաթենիկը:

Այդ պահին արթնացավ Վազգենը:

— Հայրիկ, տես՝ Արևը: Ի՞նչ պայծատ ի: Իսկ ո՞ւր էր մինչև մկա:

— Սև ամպեր պատեր էին ինոր:

— Ի՞նչ պան ի Արև,—կրկին հորը դիմեց Վազգենը:

— Հրև... Արև Աստուծո լուսն ի և ջերմություն:

— Իսկ ի՞նչ պան ի ամպ:

— Ամպ... Ամպ էտա չար խորհուրդ ի՝ երբ կտիակի Արևու էրես, պարի խորհուրդ ի՝ երբ անձրև կպիրի և կարթնացնի ողջ փնություն: Երբ անձրև կուկյա՝ կարթնանա ողջ փնություն, իսկ երբ անձրևից հետո Արև ուր լուս ու ջերմություն կհատորդի ինոր՝ էնի կյանք կառնի և հավերժություն: Արև ու լուս կտիանաս, իսկ ջերմություն՝ կզգաս: Արև ուր ջերմություն կուտա ամեն ինչի: Այ, էսա ծառ կտիանա՞ս, էնի Արևու ջերմություն կհավաքի ուր մեջ: Իսկ երբ կտրենք ծառ և վառենք, էնի ուր հավաքած ջերմություն կհատորդի մեզ:

— Մարդ ծառ կանա կտրի, իսկ անտա՞ռ:

— Անտառ կտրել անհնար ի, անտառ հավերժական ի...

Վարդանը, նկատելով մի քանի քայլի վրա նստած կնոջը արտասվախառն վիճակում, մոտեցավ նրան:

— Ա՞խ իմ բալեք,—հեկեկալով արտաբերեց Զարուհին:

— Ինչ ի, կկարծես ինձ համար ցավ չի՞, ես մարդ չե՞մ, ես հայր չե՞մ: Մենք մեղավո՞ր ենք, որ գնդակ մեզ չկպավ: Աստված մեզ է՞ն տեսակ պատժեց...

Մոտենալով, խոսքին միջամտեց Գրիգորը:

—Ցավ մեծ ի, Զարեր, մենք էլ մեր բալեքին կորսնցուցինք: Ի՞նչ անենք, ստենք-լա՞նք: Տու հարազատներ ունես, մենք հարազատներ ունենք, Սաթենն էլ ունի: Մենք պիտի գտնենք իրենց: Լսիր ես, որ իրենք Երևան կգտնվեն: Մենք պիտի գտնենք մեր հարազատներուն: Ինչ ի, նրա-

տեսնք-լա՞նք: Հեռ ի, Սաթենն էլ ի քյո նման, էրկու էրեխա էլ ձա ի կորսըցուցե: Կասեմ, կհամոզեմ, բայց...

— Իմ ախպեր,—Գրիգորին դիմեց Վարդանը,—քյանի շուտ ի, էսա տեղեն հեռանանք:

Բայց նրանք այդքան շուտ չկարողացան հեռանալ Վաղարշապատից, քանի որ նրանք ուժասպառ էին: Պետք էր վերականգնել ուժերը, չէ՞ որ շուրջ 20 կիլոմետր պետք էր քայլել, մինչև հասնեին Երևան:

Այդ մեկ շաբաթվա ընթացքում, ի թիվս այլ զրույցների, հիշեցին Վանը, իրենց ապրած օրերը, երեխաներին, իրենց տունը...

Երկիր: Վան: Մոտ անցյալ: Երանելի՜, անմոռանալի՜ ու անդա՜րձ օրեր:

Ո՞ր վան-վասպուրականցին կմոռանար իր արդար քրտինքով կառուցած տունը, իր այգին, նրա բերքն ու բարիքը, որին միահյուսված էր իր ճակատի վաստակաշատ արդար քրտինքը:

Ո՞ր վան-վասպուրականցին կմոռանար իր՝ երբեմնի ողջ, իսկ այժմ նահատակության պսակով գլխերիզված հարազատին՝ հորը, մորը, եղբորը, քրոջը, իր իսկ մարմնից գոյություն առած երեխային... որոնք ընդմիշտ և անդառնալիորեն մնացին ճանապարհին կամ անապատի ավազուտներում:

Ո՞ր վան-վասպուրականցին կմոռանար քրիստոնեական իր հավատի տունը՝ եկեղեցին, որի առաքելությամբ և անուրանալի դերով ինքը հոգու անաղարտությամբ գոյատևեց դարեր շարունակ, որի կամարների ներքո ինքը ամեն օր անհուն երանությամբ մասնակից էր լինում առավոտյան և երեկոյան կենսահաղորդ ժամերգություններին, իսկ կիրակի օրերին արդեն՝ աստվածատուր սուրբ պատարագի հոգեպարար արարողություններին, որի ավարտին հոգու անկեղծ մղումով եկեղեցու հոգևոր դասի և երգչախմբի հետ միատեղ բարձրաձայն կատարում էր հոգեզմայլ «Հայրապետական մաղթերգ»-ը:

Վանում աղքատներ չկային, կային միայն բազմազավակ ընտանիքներ, որոնք ապրուստի ոչ մի եղանակ չէին կրում, որովհետև գտնվում էին տեղի մեծահարուստների և քաղաքի երևելիների ուշադրության կենտրոնում:

Անցյալի այս խաղաղ գոյատևման ընթացքում թուրքը երբեմն-երբեմն խաթարում էր նրանց անդորրը՝ հարձակվելով Վանի շրջակայքի գյուղերի վրա և մեծաքանակ ավար տանելով:

Թուրքը մնում է թուրք: Եվ իզուր չի ասել Վիկտոր Հյուգոն՝ «Այստեղով թուրքն է անցել»:

Վասպուրականցու համար առանձնահատուկ հիշատակելի և երանելի օրեր էին Վարագա Սուրբ Խաչի տոնի նշումը, որը տեղի էր ունենում աշնանամուտին: Վանի և շրջակա գյուղերի ու ավանների, ողջ Վասպուրական աշխարհի հայությունը խիստ ջերմեռանդությամբ էր նախապատրաստվում այդ տոնակատարությանը. նախօրոք մատաղացու էր գնում, լավաշ թխում, ունևորները նոր շորեր էին գնում և այլ նախապատրաստություններ տեսնում, որպեսզի այդ չքնաղ տոնը ըստ արժանվույն կատարվի: Վարագա Սուրբ Խաչ վանք էին մեկնում մեկ օր առաջ, ոտքով, այն էլ՝ ոտաբոբիկ: Գնում էին ուխտի և խոստովանության, գնում էին՝ հաղորդակից լինելու Աստուծո գոյությանը, Աստուծո օրհնությունը և գթությունը հայցելու, մեղքերի թողություն ստանալու և մաքրագործվելու:

Տեղ հասնելով, վասպուրականցին, խաչակնքելով երեսը, ամոթխածորեն մտնում էր եկեղեցի, մասնակից լինում երեկոյան ժամերգությանը, մոմ վառում, աղոթում՝ աղերսելով Տիրոջ գութը՝ իրենց մեղավոր հոգիների փրկության համար:

Այնուհետև սկսվում էր նախապատրաստությունը առավոտյան տոնակատարության: Նրանք գիշերը հատարտյա չէին քնում: Քնում էին միայն երեխաները՝ ճանապարհի հոգնությունից և վանքի շրջապատում աշխուժից խաղերից ուժասպառ եղած լինելու պատճառով:

Լույսը բացվելուն պես, ուխտավորները անհամբերությամբ սպասում էին Աստուծո տան՝ եկեղեցու դուների բացվելուն: Եկեղեցու դուները բացվում էին որևէ ուխտավորի կողմից եկեղեցուն արված դրամական նվիրատվությունից հետո, նվիրատվություն, որն ամբողջությամբ ծառայում էր եկեղեցու կարիքներին:

Երբ սկսվում էր սուրբ պատարագի արարողությունը, ուխտավորների ցնծությունը հասնում էր իր գագաթնակետին: Տիրում էր խո՜ր լռություն, որի ժամանակ ավելի տպավորիչ էր լինում և ընկալելի պատարագչի խոսքըն ու ընթերցումները Սուրբ Գրքից և երգչախմբի հոգեպարար կատարումքը, որի դյութիչ մեղեդիները կարծես երկնաթռիչ ուժ էին հաղորդում ուխտավորների հոգիներին: Առավել հոգեզմայլ էր պատարագի այն հատվածը, երբ երգվում էր «ՋՏէր աղաչեսցուք»-ը:

Վարագա Սուրբ Խաչի տոնի օրը պատարագում էր հիմնականում թեմի առաջնորդը, որը և սուրբ պատարագի ավարտին աքանչելի մի քարոզ էր խոսում՝ իր խոսքը կառուցելով ազգային-եկեղեցական հրատապ և խիստ այժմեական խնդիրների վրա:

Սուրբ պատարագի ավարտին, «Հայր մեր»-ի և «Հաւատոյ մաղթերգ»-ի կատարումից հետո, հավատացյալ ժողովուրդը, մեծից փոքր, առանում էր Հաղորդություն և հոգով ու մարմնով արբված և մաքրված դուրս գալիս եկեղեցուց:

Այդ պահին դրսում, կրակների վրա, կաթսաների մեջ, բլբլթում էին մատաղները՝ իրենց ախորժաբեր բուրմունքը տարածելով ողջ շրջապատում և ավետելով ծոմապահության ավարտը:

Յուրաքանչյուր մատաղի տեր պարտավոր էր առաջին հերթին յոթ տեղ բաժանել իր մատաղից և նոր միայն իրավունք ուներ ճաշակվելու: Իսկ մատաղի յոթ տեղի բաժանումը խորհրդանշումն է Արարչագործության յոթ խորհուրդների:

Այնուհետև սկսվում էր կերուխումը, երգ, պար, ցնծություն...

Այս ամենի ավարտից հետո, վանի-վասպուրականցիներից կազմված ուխտավորների անհամար շարասյունը Վարագա վանքից ուղղվում էր դեպի Վանա լիճ՝ ամբողջացնելու և ավարտին հասցնելու իր օրվա ուխտը: Ուխտավորները մեկ առ մեկ մտնում էին լճի մեջ, լվացվում, ջուր քաշում իրենց մարմիններին, իսկ համարձակները, հաշվի չառնելով երեկոյի սառնությունը, հանվում և մտնում էին ջուրը՝ այսպիսով կարծես մեկ անգամ ևս մկրտվելով:

Վանա լիճը վասպուրականցու համար սուրբ է, իսկ օծվել այդ սուրբ լճի ջրով՝ ուխտավորի բարձրագույն նպատակի իրականացում: Ինչպես Հիսուս Քրիստոսը մկրտվեց Հորդանան գետում՝ առանալով Աստվածշնորհ ուժ, այնպես էլ յուրաքանչյուր վասպուրականցի իրեն պարտավորված էր զգում Վարագա Սուրբ Խաչի տոնի օրը օծվելու Վանա լճի անա-

ղարտ ու վճիտ ջրով՝ մաքրելու համար իր հոգին ու մարմինը աշխարհիկ մեղքերից:

Երանելի՜ օրեր, արտակեղե՜ք հիշողություններ...

Այս քաղցր ու անմոռանալի հուշերի մեջ էին Գրիգորն ու Սաթենիկը, երբ հանկարծ փոքրիկ Վազգենը սկսեց արտասվել:

— Լո՛ւսս, ի՞նչ կուզես,—որդուն դիմեց Սաթենիկը:

— Ես մեր տուն կուզեմ, իմ քույր, իմ ախպեր կուզեմ:

Քար լռություն տիրեց:

— Ո՞ւր են իմ ախպեր, իմ քույր:

— Նրանք գնացին Աստուծո մոտ,—որդու գլուխը շոյելով ասաց Գրիգորը:

— Իսկ ինչի՞ համար:

— Որպեսզի մեզ, աշխարքին խաղաղություն պիրեն:

— Կերևա մեր մեղքեր շա՜տ են, Աստված մեր վրա պարկացիր ի,— հառաչյա ինքնաբերաբար ասաց Սաթենիկը:

— Իսկ մենք ի՞նչ մեղք ենք կործե,—հարցը շարունակեց Վազգենը:

— Էն, որ մենք էլ չենք կիտի,—ասաց Գրիգորը:

Մինչ այդ Վարդանը լուռ լսում էր նրանց խոսակցությունը, բայց հանկարծ, կարծես բնազդորեն, վեր նայելով՝ ասաց.

— Մե՛նք պիտի էթինք Աստուծո մոտ, որպեսզի մեր էս դրություն հանգամանորեն պատմեինք Ինոր:

— Մեր տո՜ւն...,—ցավով արտաբերեց Սաթենիկը:

Գրիգորի և Վարդանի ընտանիքները ստիպված շուրջ մեկ շաբաթ անցկացրին Սուրբ Էջմիածին վանքի պատերի տակ: Ամեն առավոտ և երեկո Ամենայն Հայոց Կաթողիկոսը կամ Մայր տաճարի լուսարարապետը, շրջապատված միաբաններով, շրջում էր տվյալ և հիվանդ գաղթականների մեջ և կամացուկ խոսքեր ասում իրեն ուղեկցող միաբաններին: Թեև Կաթողիկոսարանի նյութական հնարավորություններն այնքան էլ մեծ չէին, բայց այնուամենայնիվ անում էր ամեն ինչ, որպեսզի գաղթականների կյանքերը ինչ-որ ձևով թեթևացնի. օրը մեկ կամ երկու անգամ ճաշ էր տալիս, հոգ տանում հիվանդների բուժման համար, կազմակերպում քաղաքից դիակների շուտափույթ դուրսբերումը և թաղումը...

Մի օր, վաղ առավոտյան, Սաթենիկը դիմեց Գրիգորին.

— Տղա, արդեն մեկ և կես ամիս ի, ինչ լուր չունենք ո՛չ իմ ախպորից՝ Մնոյից, ո՛չ էլ քյո քյուր Սրսուխից:

Այո, Սաթենիկի եղբոր և Գրիգորի քրոջ ընտանիքները վանից դուրս էին եկել մեկ-երկու օր հետո և միմյանց այդպես էլ չէին հանդիպել: Մնացականը Սաթենիկի կրտսեր եղբայրն էր, իսկ Սրբուհին՝ Գրիգորի ավագ քույրը: Առաջինն ուներ երկու երեխա, իսկ երկրորդը՝ երեք: Բոլորն էլ անչափահաս էին:

— Շատ կապսպրեմ, բայց արդյունքի չեմ խառնի: Միայն շշուկներ են խոսե ականջիս, թե ինոնք մկա Երևան կգտնվեն:

— Էս մեր վիճակնե սիրտս լավ պան չի գուշակի, արի առնենք մեր լաճուն և հետանանք էսա տեղեն, ուր պատահի,—արտահեղած ասաց Սաթենիկը:

Բայց նրանք ստիպված էին ևս մի քանի օր մնալ Վաղարշապատում, Սուրբ Էջմիածնի պատերի տակ: Սովը և համաճարակը ևս ամպերի պես

կուտակվել էին նրանց գլխավերևում, և նրանք ոչ մի կերպ չէին կարողանում ձերբազատվել այդ չարաղետ ուրվականից: Ծնողներն ի վիճակի չէին իրենց ուժերը քիչ թե շատ վերականգնել, իսկ փոքրիկ Վազգենի առողջական վիճակն էլ սկսել էր անհանգստացնել նրանց: Այդ իսկ պատճառով էլ նրանց հեռանալը Վաղարշապատից ձգձգվում էր:

Մի օր, առավոտ վաղ, Գրիգորն ու Վարդանը գնացին ուսելիք ճարելու: Երբ նրանք բարեհաջող վերադարձան, Գրիգորն ուղղակի մոտեցավ Սաթենիկին և ասաց.

— Ախչի, շուտ հավաքի մեր շորեր, էթանք:

— Ո՞ւր,—զարմացավ Սաթենիկը:

— Երևան: Ես լավ խոտ չեմ առնե էս տեղեն: Էսա տեղ մահ կգուժե:

— Էս վիճակով մենք չենք կանա տեղ խասնե,—պատճառաբանում էր Սաթենիկը:

— Պերանդ խերով պաց, այ կնիկ: Մենք պիտի շուտ հեռանանք, որպեզի փրկենք մեր լաճուն: Եվ հենց մկա, էս րոպեիս: Վարդանենք էլ կպատրաստվեն: Շուտ արա,—անդրդվելի տոնով ասաց Գրիգորը:

— Ախր քյորփեն խիվանդ ի, ի՞նչ անենք:

— Ես կառնեմ իմ շալակ:

Քիչ հետո երկու ընտանիքները թողեցին Վաղարշապատը, Սուրբ Էջմիածինը և ճանապարհ ընկան դեպի Երևան: Երեկոն մոտենում էր, երբ նրանք տեղ հասան: Քաղաքը շատ անհրապույր տեսք ուներ: Անձրև էր եկել և փողոցները ցեխի մեջ կորած էին:

Քաղաք մտնելով, առաջինը, որ նրանց տեսադաշտում հայտնվեց, Սուրբ Սարգիս եկեղեցին էր, նրա հրապուրիչ տեսքը, որը, սակայն, շրջապատված էր քարաշեն կամ աղյուսաշեն մեկ-երկու հարկանի անհրապույր տներով: Նրանք մտան եկեղեցի: Արդեն սկսվել էր երեկոյան ժամերգությունը: Այդ պահին երկու քահանա հայրեր Ժամագրքից հատվածներ էին կարդում: Բայց հաճախ էին լսվում «Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա» բառերը:

Ժամերգության ընթացքից հուզված, կանայք չկարողացան զսպել իրենց արտասուքը, իսկ տղամարդիկ մի կերպ տոկացին և կարողացան պահպանել իրենց հավասարակշռությունը, սակայն գիտակցելով իրենց վիճակի անհավորությունը: Այնուհետև բոլորը միասին մոմ վառեցին՝ թախանձագին աղերսելով Տիրոջից՝ փրկություն:

Երեկոյան ժամերգության ավարտին Գրիգորը մոտեցավ սպիտակամորուք քահանային, համբուրեց նրա աջը և հուզմունքից խեղդվող ձայնով ասաց.

— Տեր Հայր, մենք գաղթականներ ենք: Հենց մկա ենք էկե Սուրբ Էջմիածնա վանքեն: Վաղարշապատի մեջ, գաղթականների շրջանում, սով ի և համաճարակ: Մեր վիճակ շատ վատ ի: Տու մեզի փրկության մի ճամբախ ցույց տուր, քյո ոտներուդ մատաղ:

— Քո բարբառից երևում է, որ դուք վանեցիներ եք: Այժմ հասատարած երկրի՛ վիճակն է շատ վատ: Որպես օգնություն ես ձեզ ոչինչ տալ չեմ կարող: Ցավում եմ դրա համար: Բայց ես ձեզ բարի մի խորհուրդ կտամ: Գնացեք Ջառաբի-Խան: Այստեղ, մոտիկ է, Ղանթարի շուկային համարյա կից: Հարցրեք, ձեզ կասեն: Այնտեղ են տեղավորվել Վանից գաղթած շատ ու շատ ընտանիքներ: Գնացեք այնտեղ:

— Շնորհակալ եմ, Տեր Հայր,—կուանալով և կրկին աւգամ համբուրելով նրա աջը, ասաց Գրիգորը:

— Գնացեք, Աստված ձեզ հետ,—խաչակնքելով նրանց, դեպի դուրս ուղեկցեց նրանց խմբին սպիտակամորուք քահանան:

Հուսադրված եկեղեցու սպասավորի խոսքերից, նրանք քայլերն ուղղեցին դեպի Զառաբի-Խան:

Երբ եկեղեցուց դուրս եկան, ծնողներին թվաց, թե փոքրիկ Վազգենի առողջական վիճակը դեպի բարվոքում է գնում:

ՎՈԼՈԴՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

1700-ԱՄՅԱԿԻ ԹԵԼԱԴՐԱՆՔՈՎ

Սրբախոսական գրականությունը նշանակալից դեր է խաղացել հայ միջնադարյան մատենագրության սկզբնավորման, զարգացման, հետագա ընթացքի և նրա ընդերքում նոր գրականության մի շարք ժանրերի՝ ծովել, պատմվածք և այլն, ձևավորման գործում:

Սրբախոսական գրականության ընդհանուր քրիստոնեական ագիոգրաֆիա անվանումը բխում է հունարեն ագիոս (սուրբ) և գրաֆո (գրել) բառերից: Սրբերի կյանքին՝ վարքին և նահատակությանը նվիրված այս գործերը բազմահազար ընդօրինակություններով տարածվելով միջնադարում, մեծ ուշադրության են արժանացել նաև նոր շրջանում:

1810—15 թթ. Մկրտիչ Ավգերյանը 12 հատորով հրատարակում է «Վիճակատար վարք և վկայաբանութիւնք սրբոց, որք կան ի հին Տօնացուցի Եկեղեցւոյ Հայաստանեայց» շարքը, որում վերաշարադրմամբ բերված են հայկական ինքնուրույն և թարգմանական վարքագրական այն գործերը, որոնք ստեղծվել են մինչև ԺԲ դարը: Ավգերյանի այս աշխատանքը կարևորվում է հատկապես նրանով, որ ներկայացվող յուրաքանչյուր պատմություն ենթարկվում է պատմա-բանասիրական և բնագրա-աղբյուրագիտական քննության: Ճշտվում են ստեղծման ժամանակը և համեմատական քննությամբ վեր հանվում համաքրիստոնեական գրականության հետ ունեցած աղերսները: Նման աշխատանքը, հատկապես երբ վերաբերվում է ընդհանրական Եկեղեցու սրբերին, ձեռք է բերում համաքրիստոնեական կարևորություն:

1854—62 թթ. «Սոփերք հայկականք» շարքի 22 հատորներում հայ վարքագրության գեղեցիկ մի փունջ է հրատարակել Ղևոնդ Ալիշանը: Միխիթարյանները երկուական հատորներով լույս են ընծայել նաև «Վարք սրբոց հարանց և քաղաքավարութիւնք նոցին» (1855 թ.) և Վարք և վկայաբանութիւնք սրբոց» (1874 թ.) գործերը:

Միխիթարյան այս մատենաշարերին, որոնք ընդգրկում էին մինչև ԺԲ դարը ստեղծված գործերը, հաջորդում են հայագիտական նոր ուսումնասիրություններ՝ նվիրված թե՛ բնագրերի քննությանը և թե՛ հրատարակմանը:

Այսպես, հայագիտության երախտավորներ Հակոբ Մանանդյանի և Հրաչյա Աճառյանի աշխատասիրությամբ տպագրվում է «Հայոց նոր վկաներ» (1155—1843 թթ.) գիրքը՝ ընդգրկելով արդեն հայ վկայաբանության երկրորդ շրջանի նահատակներին: 1853—1882 թթ. գիրքեր

հանդեսներում լույս են տեսնում Մկրտիչ Էմինի հայկական վկա՛սաբանությունների և հնագույն պարականոններին նվիրված ռուսերեն ուսումնասիրություններն ու թարգմանությունները, որոնք, մեկ հատորում ամփոփելով, 1897 թ. հրատարակում է Գրիգոր Խալաթյանցը:

Հիշյալ թե՛ այս և թե՛ մնացյալ ուսումնասիրություններում և հրատարակություններում սրբախոսական գրականությանը պատկանող գործերի լույս ընծայումը հետապնդում էր մի քանի նպատակ, որոնցից առաջինը նախորդ դարերի հետևողությամբ քրիստոնեական կենդանակեցույց գաղափարների գրավոր տարածումն էր: Այս գործերը կարևորվում էին և որպես հայ ժողովրդի պատմության սկզբնաղբյուր, իսկ ավցյալ դարավերջից նաև վարքագրության միջոցով հայ մատենագրության սկզբնավորման և մասնավորապես Ագաթանգեղոսի, Բուզանդի, Կորյունի և Խորենացու հետ կապված մի շարք պատմա-բանասիրական հարցերի ճշմտան համար:

Վերջերս «Նաիրի» հրատարակչությունը լույս է ընծայել Քնարիկ Տեր-Դավթյանի «Հայկական վարքեր և վկայաբանություններ. 5—17-րդ դարեր» ռուսերեն գիրքը, որը նվիրված է Հայաստանում քրիստոնեության հաստատման 1700-ամյակին: Այն առավել ընդգրկուն լինելով նախորդ թարգմանություններից, միաժամանակ առաջաբանի և յուրաքանչյուր բնագրին կցված նախաբանի շնորհիվ կարելի է համարել Մանուկ Աբեղյանի «Հայ հին գրականության պատմության» համապատասխան հատվածներից հետո հայ վարքագրության և վկայաբանության ժանրային բնույթյանը և գեղարվեստական առանձնահատկություններին նվիրված առավել ամբողջական աշխատանքը, որն ամփոփումն ու շարունակումն է հեղինակի նախորդ ուսումնասիրությունների:

Վարքերն ու վկայաբանությունները սրբերի կյանքին ո նահատակությանը նվիրված և միջնադարյան յուրահատկություններով պայմանավորված կենսագրական բնույթի ստեղծագործություններ են՝ կոչված ընթերցողին քրիստոնեական աշխարհայացքով և բարոյականությամբ դաստիարակելուն: Վարքերն ու վկայաբանությունները միմյանցից տարբերվում են հետևյալ առանձնահատկությամբ. վարքի հերոսը բարեպաշտ կյանքով ապրած այն հոգևորականը կամ աշխարհականն էր, որը դեռևս կենդանության օրոք կամ էլ մահից հետո դասվում էր սրբերի կարգը: Նաև եթե վկայաբանության հերոսը դիմագրավում է այլադավանին, ապա վարքում ներքին պայքար է մղում ինքն իր դեմ՝ խեղդելու իր ներսում բարձրացող ալիքը աշխարհային վայելքների և հաճույքների: Այն ևս յուրօրինակ մի մարտ էր համարվում և կոչվել է ավարյուն զոհաբերություն: Վկայաբանության հերոսն էլ նույն բարեպաշտ այն նվիրյալն է, որը, փորձության պահին չուրանալով քրիստոնեությունը, նահատակվում էր հանուն հավատի:

Գրքի առաջաբանում ներկայացվում և վերլուծվում է այս ժանրի ծագումը ընդհանուր քրիստոնեական գրականության շրջանակում և նրա հետագա ընթացքը մեր մատենագրության մեջ: Հայտնատեսը ոչ միայն քրիստոնեությունը պետականորեն ընդունած առաջին երկիրն էր, այլև առաջինը այն երկրներից, որտեղ քրիստոնեությունը քարոզվեց առաջին իսկ դարերում: Այս հանգամանքը հայ վարքագրությանը հնարավորել է քրիստոնեական առաջին դարերի առաքելական շունչը:

Գրքում, սակայն, նշվում է, որ հայ սրբախոսական գրականությունը իր մեջ ներառնելով վաղ շրջանի բյուզանդական և ասորական վարքագրությունը, որը գեղարվեստական և թեմատիկ-կառուցվածքային առումով

մեծ ճանապարհ էր անցել քրիստոնեության առաջին ճանապարհներին ընծայված դատական ակտերից մինչև 4-րդ դարի մեծ կարգադրվկիացիների գործերը, շատով, սակայն, զարգացման ինքնուրույն ընթացք և ազգային գունավորում է ստանում:

Քնարիկ Տեր-Դավթյանը շեշտում է հատկապես երկու առանձնահատկություն: Առաջին, որ հայ վարքագրությունը, ի տարբերություն բյուզանդականի, ունի առավել ընդգծված պատմական բնույթ: Հայկական վարքերի հերոսները հազվադեպ են լոկ ճգնակյացներ և անապատականներ լինում: Եթե նրանք անապատականներ և միայնակյացներ էլ են, ապա միաժամանակ եղել են հոգևոր-մշակութային նշանավոր գործիչներ: Երկրորդ առանձնահատկությունը հայ վկայաբանության՝ ընդգծված ազգային-ազատագրական բնույթն է: Եթե բյուզանդական գրականության մեջ քրիստոնեության պետականորեն ընդունումից հետո այլևս նոր վկայաբանություններ չեն ստեղծվում, ապա հայկականում մինչև 18—19-րդ դդ. շարունակվում են գրվել նորերը, քանի որ արբանյական գրականությունը, լինելով նաև գեղարվեստական յուրօրինակ արտացոլումը երկրի ներքին կյանքի, պատմական իրադարձությունների և դավանաբանական վեճերի, իր մեջ նախ ցոլացնում էր հայ նահատակների թափված արյունը: Ահա այս պատճառով էլ մեզ հասած հագկական հայտնի վարքերի թիվը մոտավորապես երեսուն է, իսկ վկայաբանություններինը՝ երկու հարյուր:

Գրքի առաջաբանում մանրամասնաբար ներկայացվում է վկայաբանության զարգացման ընթացքը: Ընդհանուր գրականագիտական անդրադարձությամբ նշվում է, որ վկայաբանության նահատակների նախատիպերը հին հունական հերոսների կերպարներն են եղել: Քրիստոնեությունը, սակայն, բերեց հերոսականի իր ընկալումը, համաձայն որի իսկական հերոսությունը ինքնատիրապետմամբ մարդկային կրքերը զսպելը և հոգևոր խաղաղության հասնելն է: Նույն ա՛ս համաբանությամբ էլ վարքի հերոսի համար կարևորվում է անսահման համբերատարությամբ և աներեր հավատով տանջանքներին դիմանալը և չընկրկելը այդ տանջանքների առջև:

Վկայաբանության ժանրի ձևավորումը կապվում է նաև նահատակության գաղափարի հետ, ըստ որի՝ ճշմարիտ քրիստոնյան հավատում է, որ վկայաբանական մահը դեպ հավիտենական կյանք տանող ճանապարհն է, և այս պատճառով նա մահից սարսափելու ոչինչ չունի:

Վկայաբանության հիմքում ընկած է՝ կոնֆլիկտը հավատացյալ քրիստոնյայի և ուրացության պահանջող հետանոսի, անհավատի միջև: Ներկայացվող գրքում հայ վարքագրության ընթացքը դիտվում է հենց այս կոնֆլիկտի տեսանկյունից, թե ինչպես դարերի հոլովույթում թեև նույնն են մնում նահատակողն ու նահատակվողը՝ սակայն պայմանավորված մեր ժողովրդին վիճակված ճակատագրով, փոխվում է ողջ ստեղծագործության և մասնավորապես հերոսների սոցիալական, դասային կազմը: Նման դասակարգմամբ ասվում է, որ այս ժանրի առաջին գործերի հերոսները Հայաստան եկած օտարազգի քարոզիչներն էին, որոնց նահատակում են հեթանոս նոսները: Հաջորդ խումբը կազմում են Հայոց Դարձի և մասնավորապես Լուսավորչի տոհմի նահատակները:

Մեկ դար անց, Ավարայրից հետո արդեն, քրիստոնեությունը, լինելով պետականորեն ընդունված կրոն, դառնում է նաև հոգևոր զենք՝ հանուն ազգային ինքնության մղվող պայքարում, և քրիստոնյաներին հալածող հեթանոսներին փոխարինում են օտար նվաճողները, իսկ վկայաբանություն-

ների հերոսներ են դառնում նաև զորականներն ու իշխանները, որոնք նահատակվելուց հետո էլ սրբացվում են Եկեղեցու կողմից:

Սկսած ԺԲ դարից, երբ առավել մեծ թափ է առնում հայ նախարարական տների բնաջնջումը և դեպ երկրի ներսը կատարվող ասպատակություններն ու սրածությունները, փոխվում է թե՛ հերոսների սոցիալ-դասային կազմը և թե՛ կոնֆլիկտի բնույթը: Վկայաբանության հերոս է դառնում անգամ հարկը վճարել չկարողացող շինականը, իսկ կոնֆլիկտն էլ հանգում պարտքի դիմաց հավատափոխ լինելու պահանջին:

Ներկայացվող գրքում ռուսերեն թարգմանությամբ բերված են 21 վարք և 24 վկայաբանություն, որոնցից 21-ը՝ 8 վարք և 13 վկայաբանություն, ռուսերեն հրատարակվում են առաջին անգամ:

Հայ վարքագրության մեջ արտացոլվել է երկրի ներքին կյանքը, պատմական իրադարձությունները, դավանաբանական հարցերը, հոգևոր-մշակութային կյանքը, շնորհիվ որի հայ վարքագրության պահպանված հուշարձանների միջոցով կարելի է վերականգնել մեր ժողովրդի անցած պատմական ուղին և մշակույթի ընթացքը: Այս պատճառով էլ գրքում զետեղված գործերն ընտրելիս Քնարիկ Տեր-Դավթյանը առաջնորդվել է երեք սկզբունքով. բարձր գեղարվեստականություն, թեմատիկ բազմազանություն և ժանրական առավել մեծ ընդգրկում՝ ԺԵ—ԺԷ դդ.: Թե՛ վարքերի և թե՛ վկայաբանությունների պարագայում լավագույնս պահպանել է այս սկզբունքը:

Այսպես Սահակ Պարթևին ու Մեսրոպ Մաշտոցին, Ստեփանոս Սյունեցուն, Մաշտոց Եղիվարդեցուն, Գրիգոր Նարեկացուն, Հովհաննես Սարկավագին նվիրված վարքերը միաժամանակ Ե—ԺԲ դարերը ձգվող հայ գրականության և մշակույթի ու հոգևոր-եկեղեցական պատմության միմի էջն են ներկայացնում: Առանձին խումբ են կազմում կիլիկյան գրական դպրոցի և միջնադարյան Հայաստանի ուսումնական կենտրոնների նշանավոր գործիչների մասին պատմող վարքերը:

Նույն կերպ են ընտրված և վկայաբանությունները, որոնք սկսվում են Հայաստան քրիստոնեության մուտքի շրջանին վերաբերող Ռսկյանց, Սուքիասյանց և Աստմյանց նահատակություններով: Ոչ միայն սրբախոսական, այլև ընդհանրապես հայ միջնադարյան գրականության գեղեցիկ էջերից են Շուշանիկի և Վահան Գողթնեցու նահատակության պատմությունները: Դրանցից առաջինը գրված է Ավարայրի տաք շնչով, իսկ երկրորդում պատկերված է ազնվականության և զինական ուժի արդեն ծավալվող գլխատումը և վերացումը:

Ամփոփելով ասենք, որ շնորհիվ ժամանակագրական ընթացքով զետեղված վարքերի ու վկայաբանությունների բնագրերի և նրանց կցված ներածականների ու գրքի վերջում յուրաքանչյուր բնագրին նվիրված ծանոթագրությունների, ռուսալեզու ընթերցողը ծանոթանում է հայ ժողովրդի պատմության հոգևոր-մշակութային առավել նշանակալից էջերին և Հայաստանում քրիստոնեության տարածումից մինչև ԺԷ դարն ընկած շրջանում մղած պայքարին, այդ ճանապարհին կրած չարչարանքներին և տառապանքներին՝ մեկ անգամ ևս համոզվելով, թե պատմական ինչ առաքելություն է կատարել մեր ժողովրդի կյանքում Հայ Եկեղեցին:

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

ԴԱՐՁՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՎԵՐՍՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Օգոստոսի 2-ին Նորին Սուրբ Օծութ.ուն Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մեծ Բրիտանիայի Լոռդերի պալատի փոխխոսնակ բարոնուհի Քեթրլայն Քոքսին և «Համաշխարհային քրիստոնեական համերաշխություն» կազմակերպության նախագահ պատվելի Հանս Շտուկելբերգերին: Մեծահարգ հյուրերին ուղեկցում էր գրող և հրապարակախոս Զորի Բալայանը:

Տիկին Քոքսը և պատվելի Շտուկելբերգերը օրերս են վերադարձել Լեռնային Ղարաբաղից, որտեղ այցելել են Շուշի, Գանձասար, Ամարաս: Ստեփանակերտում հանդիսավոր պայմաններում կատարվել է բացումը վերականգնողական կենտրոնի, որը կառավարության որոշմամբ կրում է Հանս Շտուկելբերգերի անունը:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ողջունելով Վեհափառ Հայրապետին, ինչպես նաև շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, հյուրերը տեղեկություններ հաղորդեցին վերոհիշյալ ձեռնարկումների մասին՝ ծանոթացնելով նաև իրենց հետագա ծրագրերին:

Պատասխան խոսքում Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց բոլոր այս ձեռնարկումների համար, որոնք նպատակ ունեն բարելավել Ղարաբաղի ժողովրդի ներկա կացությունը:

Մենք ողջունում ենք երկխոսության քայլերը, ասաց Վեհափառ Հայրապետը, որոնք բանալին են Ղարաբաղի խնդրի քաղաքական կարգավորման: Պատմելով Մոսկվայում Համայն Ռուսիո Ալեքսեյ Բ Պատրիարքի և Կովկասի մուսուլմանների հոգևոր պետ Շեյխ Ուլ Իսլամ Փաշազադեի հետ իր հանդիպման մասին, Վեհափառ Հայրապետը ներկայացրեց մոսկովյան եռակողմ համաձայնագրի ուղղվածությունը և ընդունված համատեղ կոմյունիկեն: Խաղաղարար ձեռնարկումներին իր մասնակցությունը կբերի Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, որը մշտապես գործուն դեր է ունեցել պատմության ընթացքի մեջ՝ ազգային, պետական և մշակութային բոլոր ոլորտներում:

Հաջողություններ մաղթելով մեծահարգ հյուրերին՝ իրենց մարդասիրական գործունեության մեջ, Վեհափառ Հայրապետը հանդիպման վերջում նրանց ընծայեց իր հեղինակած գրքերից:

ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Օգոստոսի 10-ին Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը Վեհարանում ընդունեց օրերս ՀՀ փոխնախագահին իր հավատարմագիրը հանձնած, Հայաստանի Հանրապետությունում Ֆինլանդիայի արտակարգ և լիազոր դեսպան պրն. Սևոի Կոյստինենին, որին ուղեկցում էր ՀՀ Արտգործնախարարության աշխատակից Ֆելիքս Սայադյանը:

Երկուստեք իրար շնորհավորելով՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընդունվելու և Հայաստանում արտակարգ և լիազոր դեսպան նշանակվելու կապակցությամբ, Նորին Սրբության և պրն. Կոյստինենի միջև սկսվեց ջերմ և անմիջական զրույց: Մեծահարգ հյուրի խնդրանքով Վեհափառ Հայրապետը պատմեց Հայ Առաքելական Եկեղեցու դերի մասին՝ հատկապես ներկա պետականության պայմաններում:

Նորին Սրբությունն այդ առումով նախ և առաջ շեշտեց ազգին և նվիրյալ հոգևորականներ պատրաստելու կարևորությունը, ապա ընդգծեց եկեղեցաշինության ասպարեզում Հայաստանյայց Եկեղեցու ունեցած դերը՝ նշելով, որ այսօր շատ գործեր կան անելու՝ ինչպես հին, կիսավեր եկեղեցիների վերաշինությունը, այնպես էլ նորերի կառուցումը:

Վեհափառ Հայրապետը որպես Հայ Առաքելական Եկեղեցու դերի հաջորդ կարևոր գործոն մատնանշեց հրատարակչական, ուսուցողական, ապա նաև սոցիալական բնագավառներում նրա ծավալած գործունեությունը:

Այնուհետև զրույցն ընթացավ Ղարաբաղյան հակամարտության շուրջ: Վեհափառ Հայրապետը պատմեց Արցախ և Մոսկվա կատարած իր այցելությունների մասին՝ կարևորելով, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծման գործում պետք է ցուցաբերել միմիայն դիվանագիտական մոտեցում:

Զրույցի մաս կազմեց նաև երկու երկրների՝ Հայաստանի և Ֆինլանդիայի փոխհարաբերությունների և համագործակցության թեման՝ ինչպես տնտեսական, այնպես էլ հոգևոր բնագավառներում: Նորին Սրբությունը վերհիշեց տարիներ առաջ Ֆինլանդիա կատարած իր այցելությունը, որի ընթացքում մասնակցել էր այնտեղ հրավիրված Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Կոնֆերանսին՝ որպես Խորհրդի փոխատենապետ:

Վերջում Վեհափառ Հայրապետը և պրն. Կոյստինենը գրքեր փոխանակեցին:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԻՆ

Օգոստոսի 16-ին Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը Վեհարանում ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Մեծ Բրիտանիայի արտակարգ և լիազոր դեսպան պրն. Դեյվիդ Միլլերին և Մեծ Բրիտանիայի դեսպանատան աշխատակից տիկ. Կարին Ինգլին:

Ջերմ շնորհավորանքներ հղելով Վեհափառ Հայրապետին՝ գահակալության առթիվ, մեծահարգ հյուրերը պատմեցին Հայաստանից ստացած

իրենց տպավորությունների, ներաբաց դեպպանատան առաջիկա ծրագրերի և խնդիրների մասին:

Այնուհետև զրույցն ընթացավ Ղարաբաղյան հակամարտության շուրջ: Նորին Սրբությունը պատմեց Լեռնային Ղարաբաղ կատարած իր այցելության մասին: Իր ուրախությունն արտահայտելով տարածաշրջանում հաստատված խաղաղության առթիվ, Ամենայն Հայոց Հովվապետը նշեց, որ Հայ Առաքելական Եկեղեցին արել է և անում է առավելագույնը՝ այնտեղ տիրող խաղաղությունը պահպանելու և ամրապնդելու ուղղությամբ: Մոսկվայի եռակողմ համաձայնագիրը դրա դրսևորումներից մեկն է, ընդգծեց նա: Եվ այժմ Արցախի ժողովուրդը, օգտվելով ստեղծված իրավիճակից, լծվել է պատերազմի հետևանքով ավերված շինությունների վերակառուցման և դրանց կողքին նորերի կառուցման սուրբ գործին, քանի որ խորն է գիտակցում, որ մարդկության գոյության նախապայմանը ստեղծարար աշխատանքն է:

Զրույցի ընթացքում խոսվեցին նաև Մեծ Բրիտանիայի և Հայաստանի միջև տնտեսական, մշակութային, հոգևոր, միջեկեղեցական փոխհարաբերությունների, ինչպես նաև դրանց զարգացման գործում Անգլիկան և Հայ Առաքելական Եկեղեցիների ունեցած դերի շուրջ: Վեհափառ Հայրապետն իր անհանգստություն արտահայտեց գլոբալ բարձրացրած աղանդների կապակցությամբ և կարևորեց դրանց դեմ պայքարելու նպատակով միասնական ծրագրի կազմումը՝ նշելով, որ Անգլիկան Եկեղեցին մեծ փորձ ունի այդ ասպարեզում: Պայմանավորվածություն ձեռք բերվեց առաջիկայում կազմակերպել երկու Եկեղեցիների ներկայացուցիչների հանդիպում, որի ընթացքում կմշակվեն համատեղ գործակցելու ծրագրեր:

Վերջում Վեհափառ Հայրապետը հյուրերին նվիրեց «Էջմիածնի գանձերը», Արցախի պատմական հուշարձանները ներկայացնող, ինչպես նաև իր հեղինակած գրքերից:

Հյուրերին ուղեկցում էին Մեծ Բրիտանիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արմեն Սարգսյանը և ՀՀ Արտգործնախարարության աշխատակից Արմեն Հակոբյանը:

ԻՐԱՆԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Օգոստոսի 21-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Իրանի Իսլամական Հանրապետության պատվիրակությանը՝ ԻԻՀ Մեջլիսի փոխխոսնակ և ԻԻՀ անվտանգության խորհրդի քարտուղար Ռուհանիի գլխավորությամբ:

Զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետը և դոկտ. Ռուհանին կարծիքներ փոխանակեցին հայ-իրանական փոխհարաբերությունների հետագա զարգացման ուղիների շուրջ՝ մասնավորապես հոգևոր ասպարեզում: Հյուրերի խնդրանքով Նորին Սրբությունը հանգամանորեն ներկայացրեց Մայր Աթոռի ներքին թեմերում և Սիյուռքի բոլոր գաղթօջախներում ծավալված գործունեությունը, ինչպես նաև ծանոթացրեց հոգևորականներ պատրաստող մեր գլխավոր կրթօջախի՝ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի կառուցվածքին: Հանդիպումն անցավ ջերմ մթնոլորտում: Պատվիրակության կազմում էին ԻԻՀ Մեջլիսի արտաքին կապերի փոխնախագահ Լարիջանին, դոկտորներ Էնգիջին և Աֆրազիդեն, բարձրաստիճան այլ պաշտոնյաներ: Հյու-

րերին ուղեկցում էր Հայաստանի Հանրապետությունում Իր արտակարգ և լիազոր դեսպան պրն. Էսֆահանին:

ԵՐԵՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Օգոստոսի 28-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռում հաջորդաբար ընդունեց միջազգային, եկեղեցական և ազգային երեք կազմակերպությունների, որոնք ժամանել էին Ավստրիայից, Շվեյցարիայից և Ֆրանսիայից:

«Ավստրիա-Հայաստան» ընկերության ներկայացուցիչների հետ, գլխավորությամբ փիլիսոփայական գիտությունների դոկտոր, տիկ. Գաբրիելե Բոհեյմի, ջերմ զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց ընկերության օգտաշատ ծառայությունները անկախ Հայաստանի հետ բարեկամական կապերի զարգացման և ամրապնդման գործում:

Այնուհետև Վեհափառ Հայրապետի հյուրը եղան Շվեյցարիայի Եկեղեցիների միջազգային օգնության կազմակերպության ներկայացուցիչները՝ արտաքին հարաբերությունների ղեկավար տիկ. Ինգե Շեդլերի գլխավորությամբ: Զրույցի ընթացքում Նորին Սրբությունը և տիկ. Շեդլերը կարծիքներ փոխանակեցին Շվեյցարիայի եկեղեցիների և Մայր Աթոռի փոխհարաբերությունների զարգացման շուրջ:

Երրորդ պատվիրակությունը Ֆրանսիայի քրիստոնեական «Սոլիդարիտե» («Համերաշխություն») կազմակերպության ներկայացուցիչներն էին, 40 մարդ՝ գլխավորությամբ վերապատվելի Սամվել Սահակյանի: Նրանց մի զգալի մասը համալսարանական ուսանողներ էին և ներկայացնում էին Ֆրանսիայի բողոքական եկեղեցիների դաշնակցային մարմինը: Վեհափառ Հայրապետը նրանց ներկայացրեց Հայ Առաքելական Եկեղեցու դերը ներկա ժամանակներում՝ Հայաստանի Հանրապետության տարածքում և արտերկրում:

Հանդիպումների ընթացքում Գարեգին Ա Կաթողիկոսը սպառիչ պատասխաններ տվեց հյուրերին հետաքրքրող բոլոր հարցերին:

ԱՐՎԵՍՏԸ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐ ՉԻ ՃԱՆԱՉՈՒՄ

«Հայաստանը 7000 տարվա քաղաքակրթության պատմություն ունի: Այն սկզբնաղբյուր է հանդիսացել բոլոր քաղաքակրթությունների համար, իսկ ճերմակագագաթ Սուրբ Արարատը՝ սկզբնական բոլոր կրոնների համար: Թերևս սա էր գլխավոր պատճառը, որ իմ աշխատանքների ցուցադրությունը, Ճապոնիայից դուրս առաջին անգամ Հայաստանում կազմակերպվեց: Դա մեկ տարի առաջ էր: Թեպետ Ճապոնիան և Հայաստանը աշխարհագրորեն շատ հեռու են իրարից, բայց ես հավատացած եմ, որ մեր երկիրը կրել է Ձեր քաղաքակրթության ազդեցությունը: Այս համոզվածությունն է, որ ինձ բերել է ձեր երկիր: Իսկ Արարատ լեռը տեսնելուց հետո ես զգացի, որ արդեն կապվեցի Հայաստանին: Իմ գլխավոր պարտականությունն եմ համարում իմ հայրենակիցներին ծանոթացնել Ձեր հինավուրց և հարուստ մշակույթ ունեցող երկրին»,—այս խոսքերով ճապոնացի նկարիչ, Ճապոնիայի Գիտությունների ակադեմիայի պատվավոր դոկտոր Թա-

դաշի Կոիմոն դիմեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին սեպտեմբերի 22-ին Վեհարանում տեղի ունեցած հանդիպման ժամանակ:

«Հայաստանը,—շարունակեց պրն. Կոիմոն,—նաև առաջինը եղավ, որ պետականորեն ընդունեց Քրիստոնեությունը: Շատ շնորհակալ եմ, Վեհափառ Տեր, որ ինձ և իմ աշակերտներին ընդունեցիք Ս. Էջմիածնի կամարների ներքո: Այս հանդիպումը Է՛լ ավելի կկապի ինձ Ձեր սուրբ հողին»:

Ավարտելով իր խոսքը, պրն. Կոիմոն Վեհափառ Հայրապետին հանձնեց իր վրձնին պատկանող «Ս. Գրիգոր Լուսավորիչ» մեծադիր նկարը, իր ղեկավարած «Ուտագավա» արվեստի դպրոցում պատրաստված ոսկե իրեր և հուշանվերներ, դպրոցի սաների և իր աշխատանքների կատալոգներ, և հուշագրքեր: Այս բոլորից զատ պատվավոր դոկտորը Մայր Աթոռին նվիրաբերեց նաև 20 հազար ամերիկյան դոլլար:

Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսը հուզմունքով և շնորհակալությամբ ընդունեց նվիրատվությունները՝ պատասխան խոսքում բարձր գնահատելով ճապոնացի նկարչի ազնիվ և անգնահատելի արարքը:

«Շատ ուրախ եմ,— ասաց Վեհափառ Հայրապետը,—որ Ս. Էջմիածնի 1700-ամյա պատմության մեջ այսպիսի հեռավոր և նվիրյալ բարեկամներ կայցելեն մեզի: Եթե երբեք գրելու ըլլամ իմ օրագիրը, այս օրը պիտի վերագրեմ՝ Ճապոնիայի օրը Էջմիածնում: Արվեստը, իրոք, ազգային և աշխարհագրական սահմաններ չի ճանչնա: Հուզված եմ Ձեր խոսքերից, ուրախ եմ, որ մեր Սուրբ Արարատը Ձեր սրտի մեջ է: Ծանոթ եմ Ձեր կրոնքին և գտնում եմ, որ քրիստոնեական և բուդդայական կրոնքներու մեջ շատ ընդհանրություններ կան, որոնցից ամենագլխավորը խաղաղության գաղափարն է»:

Վեհափառ Հայրապետն իր հերթին հյուրերին հանձնեց գրքեր և հուշանվերներ:

Հանդիպումից հետո նրանց ծանոթացրեցին Վեհարանի և Գանձատան արժեքներին:

Հանդիպմանը ներկա էին ԱՄՆ-ի Արևմտյան և Ծայրագույն Արևելքի հայոց թեմերի հոգևոր առաջնորդներ Վաչե արքեպս. Հովսեփյանը և Սղաո արքեպս. Պալիոզյանը: Հյուրերին ուղեկցում էին ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանը և Հայ-Ճապոնական ընկերության նախագահ պրոֆ. Ռաֆայել Մելիք-Օհանջանյանը:

«ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՄՔՆ Է ԱՌԱՋԸՆԹԱՑԻ»

ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՐԳԵՆՏԻՆԱՑԻ ԵՎ ՈՒՐՈՒԳՎԱՅԻ ԴԵՍՊԱՆՆԵՐԻՆ

Սեպտեմբերի 26-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Արգենտինայի և Ուրուգվայի արտակարգ և լիազոր դեսպաններ Արնոլդո Մանուել Լիստրեին և Պեդրո Դոնդոյին:

Ողջունելով մեծահարգ հյուրերին Մայր Աթոռում, Վեհափառը ներկայացրեց Հայաստանի ներկա կացությունը, առկա տնտեսական և քաղաքա-

կան խնդիրները: Ջերմ խոսակցության ընթացքում շոշափվեցին Լեռնային Ղարաբաղի խնդրի խաղաղ կարգավորմանն, Հայաստանի շրջափակման հետևանքով ծագած դժվարություններին, ինչպես նաև միջպետական և եկեղեցական հարաբերություններին առնչվող հարցեր:

Վեհափառ Հայրապետը կարևորեց քաղաքական կայունությունը՝ այն համարելով հիմք տնտեսական և հոգևոր առաջընթացի: «Ճշմարտությունը Ղարաբաղի խնդրի վերաբերյալ,—ասաց նա,—շատերին չէ, որ հայտնի է: Այդ խնդիրը ծագել է ստալինյան բռնապետության տարիներին: Այսօր Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը երազում է միայն խաղաղություն և իր հողի վրա ապրելու իրավունք»:

Ներկա դժվարին կացությունից դուրս գալու հարցում Գարեգին Ա. Կաթողիկոսը շեշտեց հատկապես Եկեղեցու դերակատարությունը և տեղեկություններ հաղորդեց հյուրերին Հայաստանյայց Եկեղեցու ձեռնարկումների և գործունեության վերաբերյալ: Այսօր խոսում են տարբերությունների մասին, մինչդեռ պետք շեշտել այն ընդհանրությունները, որ միավորում են տարբեր Եկեղեցիներին: Հայաստանը կարող է հաղթահարել ներկա դժվարությունները՝ արտորեն համագործակցելով բարեկամ պետությունների հետ:

Հյուրերը շնորհակալություն հայտնեցին Վեհափառ Հայրապետին ջերմ ընդունելության համար, որի վերջում տեղի ունեցավ նվերների փոխանակում:

Հանդիպմանը ներկա էր Արգենտինայի հայոց հոգևոր հովիվ Տ. Գիսակ եպս. Մուրադյանը:



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Օգոստոսի 6-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Գերմանիայի հայոց հոգևոր հովիվ Տ. Կոմիտաս վրդ. Հովհաննյանը և «Հայր մեր»-ից առաջ հանգամանալից քարոզ խոսեց:

* * *

Օգոստոսի 12-ին շաբաթ.—Տօն Ծողակաթի Ս. Էջմիածնի ըստ տեսլեան Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբդ. Միրզախանյանը և «Մայր մեր»-ից առաջ հանդիսաւոր պատշաճի քարոզ խոսեց:

* * *

Օգոստոսի 13-ին, կիրակի.—ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Սերսեհ արքեպս. Պոզապալյանը:

«Հայր մեր»-ից առաջ հանդիսաւոր պատշաճի քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը:

* * *

Օգոստոսի 14-ին, երկուշաբթի.—ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՅ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Եղիշե ավ. քհն. Բաղրամյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

* * *

Օգոստոսի 20-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Անանիա եպս. Արաբաջյանը:

«Հայր մեր»-ից առաջ Գարեգին Վեհափառը հանգամանալից քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն՝ ի հիշատակ Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի մահվան առաջին տարելիցի:

* * *

Օգոստոսի 27-ին, կիրակի.—Տօն Գիւտի գոտւոյ Սրբուհւոյ Աստուածածնի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Տիրայր քհն. Գըլըճյանը: «Հայր մեր»-ից առաջ Ներսես սրբազանը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Սեպտեմբերի 3-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, իր անդրանիկ ս. պատարագը մատուցեց Տ. Արտակ աբեղա Տիգրանյանը և հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Սեպտեմբերի 10-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Տիրայր քհն. Գըլըճյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Սեպտեմբերի 17-ին, կիրակի.—ԽԱՉՎԵՐԱՑ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Վրաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Գևորգ արքեպս. Սերեյդարյանը:

«Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը:

* * *

Սեպտեմբերի 18-ին, կիրակի.—Յիշատակ մեռելոց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Խաչատուր քհն. Ֆրանկյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

* * *

Սեպտեմբերի 24-ին, կիրակի:—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Խորեն քհն. Մարուքյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

ՅՈՒՅԱԿ
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

№ 697
ԿՈՆԴԱԿ

Թերթերը՝ 1:— **Մեծությունը՝** 33.2×21.8 սմ.:— **Նյութը՝** դեղնած բարակ թուղթ:— **Կազմ՝** չունի:— **Պահպանակներ՝** չկան:— **Վիճակը՝** բավարար:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 1բ:— **Տողերը՝** 30:— **Գծումներ՝** չունի:— **Գիրը՝** նոտրգիր:— **Զարդագրություն՝** կոնդակում կան գեղեցիկ երկու մեծ թռչնագրեր (ՅԻ), յուրաքանչյուրը շուրջ 5.5×3 սմ. չափերով, վրան էլ հապավման նշանով, բացի այդ կա նաև խաչով մի գմբեթ (7×3 սմ.), որ գետեղված է կոնդակի վերևի աջակողմյան մասում, «Կաթողիկոս» բառի վրա: Գմբեթը ներկայացնում է Ս. Էջմիածնի Մայր Տաճարը, որով ուզում է ասել «Էջմիածնի կաթողիկոս»:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** Սիմէոն Ա. կաթողիկոս Երևանցի (1763—1780 թթ.):— **Ծաղկողը՝** անհայտ:— **Ժամանակը՝** 1766 թ.:— **Վայրը՝** Ս. Էջմիածնի մայրավանք:— **Ծանոթագրություն՝** կոնդակը պատկանել է հանգուցյալ Տիրայր արքեպիսկոպոս Մելիք-Մուշկամպարյանին (Նյու Յորք), որի գրքերի հետ, հետ մահու, ուղարկված է Մայր Աթոռ: Այն ստացված է Վեհափառ Հայրապետից 4 նոյեմբերի 1983 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.— Է

,, Յի Քի Ծառայ Տր Սիմէօն Կթուղս ամ Հայոց. և Պատրիարք Առաքելկնի Եկեղեցույս Քի. և Մեծի Աթոռոյս սբյ Էջմիածնի:

Յորմէ ժամանեցի Ածային օրհնուի և նախախնամական գթուի ի վր սիրելի և հոգևոր որդւոյդ մերոյ, և հարազատ զաւակիդ Սբյ Աթոյս բարեպաշտօն և Քաասէր Պրն Ալէքսանիդ և համայն զարմից քոց և զաւակաց և ընդ յարկաւ քով եղելոցն ի Տր խնդալ: Ամէն:

Շնորհք, սէր և խաղաղուի Ամենասբյ Երրորդուեն իջեալ հանգիցէ ի վր քոյ և քոյայնոցն և ընդ ձեզ բնակեցի և լցուսցէ ամ բարուք միշտ: Ամէն:

Եւ ընդ Ածային օրհնուես գիտասջէք սիրելի որդի մեր ի Տր և հոգեծին զաւակ սբյ Աթոյս Էջմիածնի: Զի յառաջ քան զայս ի գալն յայդր Յօհան վրդպին մերոյ նուիրակ. այր ումն Յօհաննէս յանուն բռնութ և ոպ և իցէ պտճռնօք զՅօհան վրդպ նուիրակն մեր բռնեալ է և ի յարդեանցն Սբյ Աթոյս զԼԷ (37) թումն առեալ ի զուր և ի մեռանել առն այնմիկ ի խղճմտանս իրւ է եկեալ և յայտնապս խոստովանեալ թէ՝ այն ստակն ի զուր առի ի սբյ Աթոյ արդեանցն. վայ բզմց վկայութն Վարդազար անուամբ մարդոյ միոյ կտակէ արարել

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1995 թվականի № Բ—Գ-ից:

թէ ԼԷ (37) թումն փողն այն և մէկ ջորի տայցէ աբյ Աթոյս. և դու սիրելիդ մեր ոպ և իցէ դիտաւորութ և թէ բարի մտօք և թէ այլինչ դիտմամբ ի մարդոյն յայնմանէ զայն ԼԷ (37) թումն ստակն և զմէկ ջորին առել ես ոպ և դու զայս ասացելս զայս ասացելս լաւապս գիտես և ոչ կարես բաց ասել. վայ ահա այժմ սիրելւոյդ իմոյ հարկ և պտւիրեմ. պարտիս բարց զմեզ զայրացուցանելոյ և առանց խաբէուե զայդ ԼԷ (37) թուման ստակդ և մէկ ջորին յանձնել այս գրաբեր Դաւիթ Վրդպ որդեկիդ մերոյ. և ի դմանէ զղապզ առնուլ և մեզ գրել. և յայնժմ մեք զթուղթ օրինուե առ քեզ գրեացուք. ի միամտուի քեզ. զի ոչ է վայել օրինել անուան քում և քեզապիսւոյ հարազատ որդւոյ այդպս առնելն և ի բամբասանս անկանիլն և կատարօղդ հրամանաց մերոյ եղիցիս օրինել. զգոյշ լեր զի մի զանց առնիցես:

Գրցւ ի 1215 (—1766 թ.—Ն. Մ.) թուին. ի յուլիսի 25-ին և ի լուսանկար Աթոռոյս Սբ Էջմիածին: u

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա.—(Կոնդակի վերևի կենտրոնի մասում կա Սիմեոն կաթողիկոսի հայրապետական կարմիր փոքրիկ կնիքը, 3.3 սմ, տրամագծով):

Թ. 1բ.— 1766:

Օրինկ.:

Պրն. Ալէքսանս:

№ 698

ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ ՀԱՃԿԱՏԱՐԻ ՎԱՆՔԻ ՄԱՏԵԱՆԻՑ

Թերթերը՝ 9:— **Մեծությունը՝** 29.8×20.8×0.1 սմ.:— **Նյութը՝** մաքուր սպիտակ թուղթ:— **Կազմ՝** չունի:— **Պահպանակներ՝** չկան:— **Վիճակը** լավ:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** բոլոր թերթերի կոնակը դատարկ է:— **Տողերը՝** անհամաչափ՝ 5—29:— **Գծումներ՝** չունի:— **Գիրը՝** շեղագիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** Բուխարեստի հայոց առաջնորդարան:— **Ժամանակը՝** 20-րդ դար:— **Վայրը՝** Սուչավայի Հաճկատար Ս. Աստվածածին վանք (Ռումինիա):— **Ծանոթագրություն՝** Բուխարեստից այն ուղարկված է Մայր Աթոռ Ս. Էջմիածին: Ձեռագիրն ստացվեց Վեհափառ Հայրապետից 1983 թ. նոյեմբերի 10-ին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Ձեռագիրը պարունակում է Ռումինիայի Հաճկատար Ս. Աստվածածին հայոց պատմական վանքի հիշատակությանց մատյանից առնված մի շարք արձանագրություններ:

Թ. 2ա.— **26 Նոյեմբեր 1943, ի Ս. Հաճկատար (Սուչավա):**

Ռումանահայ Թեմական Խորհուրդի որոշումով, Աթէնքի մէջ, Յունահայ Սրբազան Առաջնորդ Տէր Կարապետ Արք. Մազլումեանի կողմէ Սեպտ. 29—30ին Վարդապետ ձեռնադրուելէ վերջ, Ս. Հաճկատար եկայ՝ կանոնական քառասունքը կատարելու համար: Այստեղ մնացի 16 Հոկտ.էն մինչև 26 Նոյ. 1943: Նոյ. 25-ին Պուքրէշէն, Թեմական Խորհուրդի կողմէ, գիս առնելու եկան պր. Յ. Ճ. Սիրունի և պր. Արտաշէս Սարգիսեան, իրենց տիկիններով, ինչպէս նաև ընկերակցութեամբ Տիկ. Վ. Տուտեանի ու Տէր Վարժապետեանի (Եաշէն):

Ուրբաթ, 26 Նոյ. 1943, իմ առաջին Ս. Պատարագս մատուցի Ս. Հաճկատարի մէջ ի յիշատակ Մոլտավահայ թեմի Առաջին Առաջնորդ Յովհաննէս Եպիսկոպոսի, որ 1401-ին Հայաստանեայց Եկեղեցւոյ աթոռը հիմնեց ու երկրին իշխան Ալեքսանտրու չել Պունի կողմէ պաշտօնապէս ճանչցուեցաւ: Ս. Պատարագին մասնակցեցան Սուչավայի քահանայ Տէր Գնել Մանտալեան և Եաշի քահանայ Տէր Արսէն Վարժապետեան: Ս. Պատարագէն յետոյ, երեկոյեան, բոլոր հիւրերով միասին վերադարձանք դէպի Պուքրէշ, ուր 28 Նոյ.-ին պիտի մատուցեմ իմ երկրորդ Պատարագս:

Այսօրուընէ ինձի համար կ'ակսի նոր կեանք մը, կեանք մը որ նուիրուած պիտի ըլլայ մեր եկեղեցւոյն ու մեր համայնքին: Աստուած հետս ըլլայ:

26 Նոյ. 1943 Վազգէն Վրդ. Պալճեան

թ. 3ա.— **Հետևեալ արձանագրութիւնը, ըստ ոճին՝ հաւանաբար Յ. ճ. Սիրունիի կողմէ շարադրուած, ստորագրած են բոլոր ներկաները:**

Պատմական այս վանքին մէջ, ուր դարերը իրենց մոայլ խորհուրդը կը ծրարեն և ուր սերունդներ եկան իրենց ցաւը պատմելու հայ Աստուածամօր ու մեկնեցան սփոփուած, նուիրական այս բլուրի վրայ՝ ուր մեր պապերը Աստուծոյ աղօթեցին, ու դարէ դար սերունդները իրարու փոխանցեցին արբազան աւանդութիւնները աստուածային մասունքի մը պէս, այսօր, նորընծայ հայ վարդապետ մը իր ուխտը կ'ընէ Աստուծոյ ու մարդոց առջև, իր ուխտը կ'ընէ դարերուն առջև:

Սակաւ են հաւատացեալները որ եկեր են վկայ ըլլալու հանդիսաւոր այս ուխտին, բայց հոգւոյն Աստուածը վկայ է վերէն ու վկայ են ոգիները անթիւ պապերուն: Եկեր են անոնք դարերուն խորէն: Անոնք Անիէն կուգան, կուգան գերեզմաններէն: Անոնք կուգան շշնջալու հէքեաթը զոր հայ ժողովուրդը գրկած կը վազէ դարերուն մէջէն, խորհուրդը մեծ գողգոթային ու մարտիրոսութեան որուն խաչը շալկած կը քալէ հայ ժողովուրդը խոնարհ ու վսեմ, աղկաղկ ու հզօր, ու մրմնջելու անուշ ու մոայլ մեղեդիի մը պէս՝

— Ուխտդ ընդունական, վարդապետ ու Աստուած ընդունի թող պատարագդ՝ յանուն այս ժողովուրդին որ կը զոհուի դարէ դար, ինչպէս Աստուծոյ որդին:

26 Նոյ. 1943:

թ. 4ա.— **13 Օգոստոս 1947**

Մօտ չորս տարի վերջ, ահա կրկին Հաճկատար կը գտնուիմ Ս. Աստուածածնոյ առթիւ Սուրբ Պատարագ մատուցանելու համար: Մօրս հետ եկայ քանի մը օր վանքին մէջ բնակելու ուխտով: Եկեղեցին և շրջաբակը գտայ աւելի անհնամ վիճակի մէջ քան 1943-ին: Անշուշտ ասոնց պատերազմի հետքերը հոս ալ նկատելի են: Աղօթենք Աստուծոյ, որ մեզ ուժ և կարողութիւն տայ, որպէսզի աւելի լրջօրէն կարենանք այս սրբավայրին մասին խորհիլ և միջոցներ ձեռք առնել, զայն աւելի պայծառ վիճակի մը հասցնելու համար:

Առաջն. տեղապահ
Վազգէն վարդապետ:

թ. 7ա — **17 Օգոստոս 1952**

Նախահայրց մերոց հաւատատուած հոգևոր և ազգային աւանդութեան մը իբրև ջահակիրներ, հաւատացեալներու փոքրաթիւ խումբով մը եկած ենք այս տարի ուխտի մեր խնդրուածքը ու ջերմ աղօթքը մատուցանելու միշտ բարեխօս ու հաճկատար Սուրբ Աստուածածնոյ մօր, վասն խաղաղութեան ամենայն աշխարհի, վասն անսասանութեան և պայծառութեան Հայաստանեայց Աստուածակառոյց Սուրբ Եկեղեցւոյ և վասն բարօրութեան ու երջանիկ կենաց ազգիս հայոց ու վերածնուած հայրենեաց:

Սուրբ Հաճկատար Մայր ողորմած
Լեր օգնական ուխտաւորաց
Ի լուսանալ առաւօտեան
Ողորմութեան գդուռն մեզ բաց:

Առաջնորդ հայոց Ռումանիոյ՝
Վազգէն Եպիսկ. Պալճեան:

թ. 9ա.— **25 Յունիս 1965**

Հայրապետական ողջոյն և աստուածային օրհնութիւն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինէն Սուրբ Հաճկատարին:

Վազգէն Ա.
Կաթողիկոս Ամենայն Հայոց

Յաջորդ արձանագրութիւնը՝ նոյն առթիւ գրուած.

Անի քաղաք կը ժպտի այսօր:

Յ. ճ. Սիրունի:

25 Յունիս 1965:

ՀԻՕԱՑԱՍՊԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆ, Էա,— **Քաղաքներ**
Հանկարծ Ս. Աստուածածին
վանքի ուխտատուրքերու
միջատակութենեն մատեանէն։

ֆ, Յա—Ա.ի բառար կը ժպրի ապաթ։

Ճ. Ճ. Սիրուճի

№ 699

ՀԱՅԿԱԿԱՆ ՁՄՐԹԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Թերթերը՝ 46։— **Մեծութիւնը**՝ 24,5×31,7×2,3 սմ.։— **Նիւթը**՝ փայլուն սպիտակ մանրահատ ճնշուած։— **Կազմը**՝ կաշեայ լիսեռիճով ծածկուած ատախտակ, որի վրա էլ թղթեայ մի շապիկ կայ։— **Պահպանակները**՝ սկզբում մի թերթ փայլուն սպիտակ մաքուր թուղթ։— **Վիճակը**՝ գերազանց։— **Գրութիւնը**՝ երկսիւն։— **Գատարկ թղթերը**՝ թղթերի կոճակը մեծ մասամբ գատարկ է, բացի մի քանիսից, որոնց գրված է վանքի անունը և փակցված է ճշտել վանքի կամ մի գիտակի փոքրիկ յուսամկարը։— **Ձոդերը**՝ ածխամաչյաի՝ 17—20։— **Ծոմերը**՝ մատիտով է բաշխած։— **Գիրը**՝ բեղադիր։— **Ձարդագրութիւնը**՝ կա երկու ճկար։ Ա. շապիկի առաջին երեսի վրա կայ մի բանդակի ճկարը՝ պեհլաւոր մի ածճ իր գլխի վրա ի երկու ձեռքով պահած է բրչանման մի փոքրիկ մատուռ։ Բ. (թ. ճա) երկսիւնակի մեջ գրված են այլ վանքերի ածուածները, որոնց մասին խոսվում է մատյանում։ Երեք պատճերի վրա ճկարված են հոսանկյունաձև երկու գմբեթ, երկու թռչուն և մի սովետարանիչ։ Ամբողջ պատկերը ճկարված է որպես մագաղաթյա մի թերթ, ֆոնն ուճեճապով մագաղաթի գույնի։— **Գրիչը**՝ Հրաչյա Քարտաշյան։— **Մատիտը**՝ Նարինե Ալեքսանյան։— **Ժամանակը**՝ 1982 թ.։— **Վայրը**՝ Երևան։— **Ժանրաբանութիւնը**՝ գեղեցիկ մատյանը ստացված է Ալեք և Մարի Մանուկյան Գանձասարան գրադարանից 1988 թ. նոյեմբերի 11-ին։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Սուրբ Ձեռագիրը յուսամկարների մի պրոմ է, որտեղ ճերկայացված են Լեռնային Գաբադովկիայի մի քարե վանքերի ու բերդերը, կառուցված 5—19 դարերում։ Այստեղ խոսվում է նաև յուրահատուկ պատմական ճուշարձանի մասին։ Ստորև տրվում է այդ ճուշարձանների ցուցակը, առաջարանը և յուսամկարների ամբողջական ցանկը)։

Ֆ, Յա,— Նախաբան

Սիմեոնյան վանք
Ամարասի վանք
Թարգմանչաց վանք
Օխտը (յոթ) դռնի վանք
Ջրաբերդ
Գեղարվանք
Բչնաձորում
Բոլի Եղցի
Սմեռնափրկիչ վանք
Երիչ առաքյալ վանք
Գաղի վանք
Փառիսոսի բերդ
Մաժոռա բերդ
Գանձասարի վանք
Երից Մանկանց վանք
Խամչի վանք
Ցարնբա աճապատ
Գազանճեցոց վանք
Ծանոթագրություններ։

Թ, ձա,— Հայ ժողովուրդը իր բազմադարյան պատմության ընթացքում ստեղծել է արվեստի անգնահատելի հուշարձաններ: Նրանք անջնջելի կնիքների պես դրոշմված լինելով մայոց կենսատարածքի, պատմում են աշխարհին իրեն ճանաչ տվող ժողովրդի յուրօրինակ ճանճարի մասին:

Հայը իր բնօրրանի բոլոր ճանճանգիստում էլ ստեղծել է կառուցողական արվեստի գլուխգործոցներ: Քրիստոնեության մուտքով պայմանավորված ենթեղքաշխության բուռն ընթացքի մեջ Հայաստանի տարբեր ճանճանգիստների շարքում Արցախը և Ուտիքը գրավել են առաջատար տեղերից մեկը: Իր ձեռքում ունենալով այնպիսի ճգոր գեղքեր, ինչպիսիք էին մայ գիրը և քրիստոնեական կրոնը, այդ ճայաշխարհի ժողովուրդը դարեր շարունակ առաջատով իր կյանքի համար անհրաժեշտ ճգեղոր սնունդը, կարողացավ պահպանել իր ազգային դեմքը: Դրա ապացույցն է այն բազմաթիվ կոթող և կիսավեր հուշարձանները, որոնք ճասել են մեզ և դեռ կգոյատևեն:

(Առորև տրվում է ճշված վանքերի, հուշարձանանների և լուսանկարների ցուցակը).

Թ, 4բ,— Ծիծեռնավանք V դ.:

Թ, 5ա,— Ընդհանուր տեսքը հարավ-արևելքից:

Ճաճարի ներքին հորինվածքը:

Թ, 5բ,— Սմարատի վանքը IV—XIX դդ.:

Թ, 6ա,— Եկեղեցու տեսքը հյուսիս-արևմուտքից:

Սմարատի բերդապարիսպներից մի հատված:

Թ, 6բ,— Թարգմանչաց վանք V—XIX դդ.:

Թ, 7ա,— Ընդհանուր տեսքը հարավ-արևմուտքից:

Խաչքարեր վանքի մոտակայքում XXI դդ. (ծոթ նորոգ գերեզման):

Թ, 7բ,—Օհանը (յոթ) դռնի վանք V—VI դդ.:

Թ, 8ա,— Եկեղեցու հյուսիսային հատվածը:

1, Եկեղեցու հատակագիծը:

2, Աբսոմոմետրիկ կտրվածք:

3, Խաչքար 1044 թ. (չափագրություն):

Թ, 9ա,— Եկեղեցու հյուսիս-արևելյան որմնախորշի վերճամասը:

Քանդակազարդ խոյակներից մեկը:

Թ, 9բ,— Ջրաբերդ VII դ.:

Թ, 10ա,— Բերդապարիսպներից մի հատված:

Նամուրք Ցրոում (Թարթառ) գետի վրա, միջնադար:

Թ, 10բ,— Գանձավանք IX—XII դդ.:

Թ, 11ա,— Ընդհանուր տեսքը հարավ-արևմուտքից:

Խաչքար XIII դ. (այժմ տեղում չէ)

Թ, 12ա,— Եկեղեցու տեսքը հարավից:

Եկեղեցու հարավային յուսամուտը:

Թ, 12բ,— Ղարդաբազարի իջևանատունը, միջնադար:

Թ, 13ա,— Տեսքը արևելքից:

Թ, 13բ,— Ռոի Եղցի XIII դ.:

Թ, 14ա,— Առանձին կանգնած եկեղեցի:

Եկեղեցու մուտքը:

Թ, 15ա,— Եկեղեցիներից մեկը:

Եկեղեցու մուտքը:

Թ, 16ա,— Որմնափակ խաչքարերից երկուսը:

Թ, 17ա,— Որմնափակ խաչքար:

Խաչքարերից մեկը:

Թ, 17բ,— Սմիճափիկի վանք XIII դ.:

Թ, 18ա,— Եկեղեցու տեսքը հյուսիս-արևելքից:

Թ, 18բ,— Եղիջ առաքյալ վանք XIII դ.:

Թ, 19ա,—Ընդհանուր տեսքը հյուսիս-արևելքից:

Հարթաքանդակ մատուռներից մեկի մուտքի վերճամասում:

Թ, 20ա,— Խաչքար XIII դ.:

Խաչքար XIII դ.:

Թ, 20բ,— Խուրանվանք կամ Գադի վանք I—XIII դդ.:

Թ, 21ա,— Ընդհանուր տեսքը արևմուտքից:

Հատիկի կենսոլոգիական հատվածը:

Թ. 22ա.— Կաթողիկե Եկեղեցին հարավ-արևմուտքից:
Հարավային պատի բարերաբական բարձրաքանդակը (Հսպան և Գրիգոր Իշխանները):
Թ. 23ա.— Ձախակողմյան խաչքարի վերնամասը:
Սթանճաի խաչքարերը 1283 թ.:
Թ. 24ա.— Ձախակողմյան խաչքարի թմբուկը:
Ձախակողմյան խաչքարից մանրամասն:
Թ. 24բ.— Փառիսոսի բերդ X դ.:
Թ. 25ա.— Բերդի բնդհանուր տեսքը հարավ-արևելքից:
Կամուրջ Ճամխոր գետի վրա:
Թ. 25բ.— Ձարեբա կամ Մամռուտ բերդ X դ.:
Թ. 26ա.— Ընդհանուր տեսքը արևելքից:
Տեսքը հարավ-արևմուտքից:
Թ. 27ա.— Բերդապարիսպների արևմտյան հատվածը:
Թ. 27բ.— Գանձասարի վանք XIII դ.:
Թ. 28ա.— Ընդհանուր տեսքը հարավից:
Թ. 29ա.— Գմբեթը հարավ-արևմուտքից:
Գմբեթի հարավային մասի քարձրաքանդակներից:
Թ. 30ա.— Գմբեթի հարավ-արևելյան ճիսուերից մեկը:
Թ. 31.— Տաճարի արևմտյան ճակատի խաչաքանդակը:
Խաչաքանդակի ստորին մասը:
Թ. 32ա.— Տաճարի արագաստը:
Բեմառաջի ձախակողմյան հատվածը:
Թ. 33ա.— Գավթի արևմտյան շքամուտքը:
Գավթի արևմտյան շքամուտքի քանդակազարդ հատվածը:
Թ. 33բ.— Երից Մանկանց վանք XVII դ.:
Թ. 34ա.— Ընդհանուր տեսքը հյուսիս-արևելքից:
Թ. 34բ.— Խամշի վանք XVII դ.:
Թ. 35ա.— Ընդհանուր տեսքը հարավ-արևելքից:
Գավթի ներքին հորինվածքը:
Թ. 36ա.— Ձանգակատունը:
Թ. 36բ.— Ձարեբա անապատ XVII դ.:
Թ. 37ա.— Ընդհանուր տեսքը հարավ-արևմուտքից:
Եկեղեցու արտաքին որմերի հարթաքանդակներ:
Թ. 37բ.— Ղազանչեցոց վանք XIX դ.:
Թ. 38ա.— Ընդհանուր տեսքը հարավ-արևմուտքից:
Եկեղեցու արտաքին որմերի հարթաքանդակներ:
Թ. 39ա.— Եկեղեցու ներքին հորինվածքը:
Թ. 40ա.— Ծանոթագրություններ (այստեղ տրված են համառոտ տեղեկություններ յուրաքանչյուր հուշարձանի մասին):
Ծիծեռնակավանք:
Ամարասի վանք:
Թ. 41ա.— Թարգմանչաց վանք:
Օխտը (յոթ) դռնի վանք:
Ջրաբերդ:
Թ. 42ա.— Գտչավանք:
Ղարղաբազարի իջևանատունը:
Բոի Եղցի:
Թ. 43ա.— Ամենափրկիչ վանք:
Եղիշ առաքյալ վանք:
Խութավանք կամ Դադի վանք:
Թ. 44ա.— Փառիսոսի բերդ:
Մամռուտ կամ Ձարեբա բերդ:
Գանձասարի վանք:
Թ. 45ա.— Երից Մանկանց վանք:
Խամշի վանք;

Չարեքա անապատ։
Թ. 46ա.— Ղազանչեցոց վանք։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 1ա.— Հայոց արևելից կողմանց գավառներ
Ճարտարապետություն
V—XIX դդ.։
Թ. 2ա.— Աշխատասիրությամբ՝ Ռաֆիկ Աբգարյանի
Ծաղկող՝ Կարլեն Ավետիսյան
Գրիչ՝ Հրաչյա Քարտաշյան
ՌՋՋԲ (1982—Ն. Մ.)։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Ծապիկի վրա գրված է)
Արցախ Ուտիք
Հայկական Ճարտարապետություն։
Թթ. 1ա և 5ա.— (Այստեղ կա Վեհափառ Հայրապետի կապույտ կնիքը, 3.5×2.2 սմ. երեք տեղ)։
Վազգէն Ա,
Կթողկս Ամ. Հայոց։

№ 700
ԱՐՋԱԿ ԵՒ ՉԱՓԱԾՈ ԷՋԵՐ

Թերթերը՝ 187։— **Պրակները**՝ 12։— **Մեծությունը**՝ 15.8×10.5×1,7 սմ.։— **Նյութը**՝ դեղնավուն հասարակ թուղթ։— **Կազմը**՝ բարակ ստվարաթուղթ, որի վրա թղթյա շապիկ է անցված։— **Պահպանակները**՝ սկզբում և վերջում մեկական հասարակ թուղթ։— **Վիճակը**՝ լավ։— **Գրությունը**՝ միասյուն։— **Դատարկ թղթերը**՝ 1բ. 87ա, 143բ, 155ա, 155բ և 182բ։— **Տողերը**՝ անհամաչափ՝ 2—28։— **Գծումներ**՝ չունի։— **Գիրը**՝ շեղագիր։— **Զարդագրություն**՝ չունի։— **Գրիչը**՝ Սաատուր Մնացականյան Ոսկեվազցի (1912—1983)։— **Ժամանակը**՝ **1943 թ.**։— **Վայրը**՝ Տիմաշորա (Ռումինիա), գրված ռազմագերիների ճամբարում։— **Մատենագրություն**՝ 1940-ական թթ. հեղինակը մատյանը ավիրել է Ռումինիայի հայոց առաջնորդ Տ. Վազգեն վարդապետ Պալճյանին։ Հետագայում՝ 1983 թ. նոյեմբերի 21-ին Ն. Ս. Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսն այն հանձնեց Մայր Աթոռի ձեռագրատանը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մատյանը գրված է 1943 թ. Տիմաշորայում (Ռումինիա) գտնվող ֆաշիստական ճամբարում, գրչի գերության ժամանակ։ Ձեռագրի մեծագույն մասը՝ արձակ ու չափածո էջերը գրված են այս ճամբարում, բայց մատյանի վերջում կան որոշ ոտանավորներ, որոնք գրված են Երևանում, Թբիլիսիում և այլ վայրերում, նախքան հեղինակի բանակ զորակոչվելը։ Տիմաշորայում դրանք ավելացրել է այս մատյանում, բոլորի ներքևում նշելով ստեղծման թվականն ու վայրը։

Ստորև տրվում է թվականն ու այն քաղաքների կամ վայրերի անունները, որտեղ գրված են այդ էջերը.—

Թ. 2ա.— 25—7—43, Տիմաշորա։
Թ. 96բ.— 25—VI—42, Բեսարաբիա (գնացքում)։
Թ. 97բ.— 14—VI—42, Խերսոն (բանտում)։
Թ. 98ա.— 13—IX—43, Սլաբաձիա (հիվանդանոցում)։
Թ. 98բ.—2—VI—42, Թեոդոսիա։
Թ. 99բ.— 9—VI—42, Ջանկոյի մոտ։
Թ. 102ա.—25—VI—42, Բեսարաբիայով անցնելիս։
Թ. 107ա.—30—VI—42, Ինդեպենդենցա։

Թ. 115բ.— 18—VIII—42. Ինդեպենդենցա (հիվանդանոց):
Թ. 118բ.— 20—III—43, Գալաֆատ:
Թ. 121ա.— 18—VI—42, Սովխոզ (20 կլմ. Խերսոնից):
Թ. 121բ.— 14—VI—42, Խերսոն:
Թ. 122ա.— 27—VI—42, (գնացքում):
Թ. 157ա.— 1935—6, Թիֆլիս:
Թ. 157բ.— 1939, Երևան:
Թ. 158բ.— 1935, գնացքում (Թիֆլիս-Երևան):
Թ. 162բ,— 1937. Թիֆլ. (դասարան):
Թ. 164ա.— 1935 ամառ, Կիրովական:
Թ. 165ա.— 1937, Թբիլիսի:
Թ. 167ա.— 1934, Ծալկա:
Թ. 173ա.— 1933—4, Ղզլ-Թամուր:
Թ. 175բ.— 1937, Ծղալտուբո:
(Սւորև տրվում է մատյանի զանազան բաժինների վերնագրերը.)
Թ. 1ա.— Արձակ էջեր:
Թ. 8ա.— Ոսկեվազ. Առաջին մաս «Ոսկեվազ»-ի:
Թ. 34ա.— Ոսկեվազցիներ. Երկրորդ մաս «Ոսկեվազ»-ի:
Թ. 62ա.— Ես և նրանք. Երրորդ մաս «Ոսկեվազ»-ի:
Թ. 85ա.— Ղզլ-Թամուրը մեռավ...
Ողջո՛ւյն քեզ, Ոսկեվազ. վերջաբան «Ոսկեվազ»-ի:
Թ. 88ա.— Բանաստեղծություններ. 1943:
Թ. 143ա.— Ժամանց:
Թ. 156ա.— Բեկորներ հին երգերից. (1939—1941 թթ.):
Թ. 182ա.— Ցանկ:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Սկզբի պահպանակի վրա գրված է)
Ասատուր Մնացականյան
Գիրք գրված
«Փշալարի ճանկերում»
(Արձակ և չափածո էջեր. 1942—43 թթ.)
Տիմա—1943—շորա:
Թ. 2ա.— Փոքրիկ փունջ:
Թ. 7բ.—Վերջ «Փոքրիկ փունջ»-ի:
Թ. 33բ.— Վերջ «Ոսկեվազ»-ի առաջին մասի:
Թ. 62բ.— Վերջ «Ոսկեվազ»-ի երկրորդ մասի:
Թ. 84բ.— Վերջ «Ոսկեվազ»-ի երրորդ մասի:
Թ. 86բ.— 2—8—43, Վերջ «Ոսկեվազ»-ի:
Թ. 87բ.— Վերջ արձակ էջերի:
Թ. 177բ.— Վերջ (այստեղ նկարված է երեք ծաղիկ):
Թ. 178ա.— Դիտողություններ:
Թ. 179ա.— Ոսկեվազ:
Թ. 180ա.— Ոսկեվազ. Առաջին մաս «Ոսկեվազ»-ի:
Թ. 182ա.— Ցանկ:
(Վերջի պահպանակի վրա գրված է)
Գլխավոր վախճան
Ա. Մնացականյան

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Կազմի շապիկի երեսին գրված է)
Աս. Մնացականյան
Գիրք գրված Փշալարի ճանկերում.
(Արձակ և չափածո)
1942—43:

(Շարունակելի)

„ЭЧМИАДЗИН"
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(АВГУСТ—СЕНТЯБРЬ 1995г.)

1. **РЕДАКЦИОННАЯ** (стр. 3—6).

2. КАТОЛИКОС ВСЕХ АРМЯН ГАРЕГИН I—Велиматеринства и святость традиции (стр. 7—9).

3. Годовщина кончины Католикоса всех армян Вазгена I и заупокойная литургия в первопрестольном Эчмиадзине, 20 августа 1995 г. (стр. 10).

4. Слово Католикоса всех армян Гарегина I в день годовщины смерти Католикоса всех армян Вазгена I, произнесенное над могилой покойного, 18 августа 1995 г. (стр. 11—12).

5. Проповедь Католикоса всех армян Гарегина I в Кафедральном соборе Святого Эчмиадзина по случаю годовщины кончины Католикоса всех армян Вазгена I, 20 августа 1995 г. (стр. 13—16).

6. ИЕРОМОНАХ ВАЗГЕН МИРЗАХАНЯН—ПОСЕЩЕНИЕ КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН ГАРЕГИНА I В АНТИЛЬЯС (Г. БЕЙРУТ) НА ИЗБРАНИЕ И ПОМОЗАНИЕ КАТОЛИКОСА КИЛИКИЙСКОГО ДОМНА, 27 июня—4 июля 1995 г. (стр. 17—56).

7. Сжато изложенная биография Католикоса Киликийского Домна Арама I (стр. 57—58).

8. ДИАКОН САРКИС БОЯДЖЯН—ПОСЕЩЕНИЕ СЕВАНСКОГО БАССЕЙНА КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН ГАРЕГИНА I, 22—25 августа 1995 г. (стр. 59—70).

9. ИЕРОМОНАХ БАГРАТ ГАЛСТЯН—ПОСЕЩЕНИЕ КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН ГАРЕГИНА I ПРАВОСЛАВНОЙ ГРУЗИНСКОЙ ЦЕРКВИ И АРМЯНСКОЙ ЕПАРХИИ ГРУЗИИ, 8—11 сентября 1995 г. (стр. 71—87).

10. Энциклика Католикоса всех армян Гарегина I о присуждении титула архиепископа предстоятелю армянской епархии Грузии епископу Геворку Серайдаряну, 4 сентября 1995 г. (стр. 88—89).

11. Поздравительная телеграмма Католикоса всех армян Гарегина I Патриарх-Католикосу всей Грузии Илие II, 12 сентября 1995 г. (стр. 90).

12. М. ВАРТАНЯН—Участие Католикоса всех армян Гарегина I в церемонии открытие Богословского факультета в Государственном Университете, 16 сентября 1995 г. (стр. 91—94).

13. М. ВАРТАНЯН—Посещение Католикоса всех армян Гарегина I детской библиотеки имени Хнко Апера (стр. 95—96).

14. ДИАКОН ВАРУЖАН ТЕРТЕРЯН—Семинар школьных учителей христианского воспитания Армении в первопрестольном Эчмиадзине, 24 августа 1995 г. (стр. 97—99).

15. Первая сессия нового состава Верховного Духовного Совета в первопрестольном Эчмиадзине, 1—2 августа 1995 г. (стр. 100—101).

16. ДИАКОН САРКИС БОЯДЖЯН—Закладка новой церкви в г. Ташире, 6 августа 1995 г. (стр. 102—105).

17. Освящение армянской церкви в г. Самарканде, 19—20 августа 1995 г. (стр. 106—107).

18. Проповедь архиепископа Нерсеса Позапаляна по случаю освящения церкви Св. Богородицы в г. Самарканде, 20 августа 1995 г. (стр. 108—110).

19. САМВЕЛ ХАЧАТУРЯН—Пятидесятилетие Духовной Академии Св. Эчмиадзина и начало учебного года, 12 сентября 1995 г. (стр. 111—116).

20. МАРИАМ ВАРТАНЯН—Межепархиальный съезд воскресных школ Армянской Апостольской Церкви в Кесапе, 29 августа—4 сентября 1995 г. (стр. 117—121).

21. Проповедь архиепископа Нерсеса Позапаляна в Кафедральном соборе Св. Эчмиадзина, 27 августа 1995 г. (стр. 122—125).

22. АРХИЕПИСКОП НЕРСЕС ПОЗАПАЛЯН—Годовая сессия Центрального Комитета Всемирного Совета Церквей, 14—22 сентября 1995 г. (стр. 126—127).

23. Дни Армении в Республике Грузия, 27—29 июля 1995 г. (стр. 128—129).

24. ТИГРАН САНОСЯН—Торжество в селе Ходжабеке, 13 августа 1995 г. (стр. 130—131).

25. Вдохновенные мгновения в первопрестольном Эчмиадзине, 22—23 июля 1995 г. (стр. 132—134).

26. Биографии иеромонаха Артака Тираняна, иеромонаха Багарата Галстяна, иеромонаха Карапета Арутюняна и иеромонаха Гургена Агабабяна (стр. 135—138).

27. Первая проповедь иеромонаха Артака Тираняна в Кафедральном соборе Св. Эчмиадзина (стр. 139—142).

28. Первая проповедь иеромонаха Багарата Галстяна в Кафедральном соборе Св. Эчмиадзина (стр. 143—145).

29. Первая проповедь иеромонаха Карапета Арутюняна в монастыре Св. Гаяне (стр. 146—148).

30. Первая проповедь иеромонаха Гургена Агабабяна в церкви Св. Богородицы (стр. 149—150).

31. АРХИЕПИСКОП ШАГЕ АЧЕМЯН—Верование (исследование)—(стр. 151—154).

32. ВОЛОДЯ АБРАМЯН—У стен первопрестольного Эчмиадзина (литературный)—(стр. 155—162).

33. ВАРТАН ДЕВРИКЯН—Под диктовкой 1700-летия крещения Армении (рецензия)—(стр. 163—166).

34. Приемы в первопрестольном Эчмиадзине, 2 августа—26 сентября 1995 г. (стр. 167—172).

В ПЕРВОПРЕСТОЛЬНОМ ЭЧМИАДЗИНЕ

35. Церковная хроника первопрестольного Эчмиадзина за август—сентябрь месяцы (стр. 173—174).

36. НУБАР МИКАЭЛЯН—Список недавно полученных рукописей в первопрестольном Эчмиадзине (№№ 697—700)—(стр. 175—182).

„ETCHMIADZIN"
OFFICIAL MONTHLY OF HOLY ETCHMIADZIN
(AUGUST—SEPTEMBER 1995)

1. **EDITORIAL** (pp. 3—6).

2. GUAREGUIN I CATHOLICOS OF ALL ARMENIANS—The greatness of motherhood and the nunciature of tradition (pp. 7—9).

3. Anniversary on the occasion of the death of Catholicos Vasken I and requiem mass in the Holy See of Etchmiadzin, 20-th August 1995 (p. 10).

4. The address of His Holiness on the day of the anniversary of Catholicos Vasken I, given before the tomb, 18-th August 1995 (pp. 11—12).

5. The sermon of Catholicos Guareguin I given in the Holy Cathedral, on the occasion of the anniversary of death of Catholicos Vasken I, 20-th August 1995 (pp. 13—16).

6. REV. FATHER VASKEN MIRZAKHANIAN—THE VISIT OF HIS HOLINESS AT ANTELIAS, THE ELECTION AND THE CONSECRATION OF THE CATHOLICOS OF THE GREAT SEE OF CILICIA, 27-th June—4-th July 1995 (pp. 17—56).

7. The short biography of His Holiness Aram Catholicos of the Great See of Cilicia (pp. 57—58).

8. DEACON SARGIS BOYADJIAN—THE FIRST VISIT OF HIS HOLINESS GUAREGUIN I CATHOLICOS TO THE REGION OF SEVAN, 22-nd—25-th AUGUST 1995 (pp. 59—70).

9. REV. FATHER BAGRAD GALESDIAN—THE VISIT OF HIS HOLINESS GUAREGUIN I TO THE GEORGIAN ORTHODOX SHURSH AND TO THE ARMENIAN DIOCESE OF GEORGIA, 8—11-th SEPTEMBER 1995 (pp. 71—87).

10. The encyclical of His Holiness to the prelate of the Armenian diocese of Georgia Bishop Gevorg Seraydarian about the granting of the title and honour of Archbishop, 4-th September 1994 (pp. 88—89).

11. The cable of thanks to His Holiness the Catholicos Ilia II, the Patriarch-Cathelicos of All Georgia, 12-th September 1995 (pp. 90).

12. M. VARDANIAN—The participation of His Holiness to the opening ceremony of the faculty of Theology of the university, 16-th September 1995 (pp. 91—94).

13. M. VARDANIAN—The visit of His Holiness to the childish library by the name of Khengo Abor (pp. 95—96).

14. DEACON VAROOJAN DERDERIAN—The one-day conference of the Christian education schools' teachers of Armenia which took place in the Mother See, 24-th August 1995 (pp. 97—99).

15. The first session of the new elected Supreme Spiritual Council in the Mother See of Holy Etchmiadzin, 1—2-nd August 1995 (pp. 100—101).

16. DEACON SARGIS BOYADJIAN—Foundation of a new Church in the city of Dashir, 5-th August 1995 (pp. 102—105).

17. Consecration of the Armenian Church in Samarghand, 19—20-th August 1995 (pp. 106—107).

18 The sermon of His Grace Archbishop Nerses Bozabalian on the ocassion of the consecration of Samarghand's Holy Virgin Church, 20-th August 1995 (pp. 108—110).

19. SAMVEL KHATCHADERIAN—The fifthieth jubilee of Spiritual Seminary and the reopening, 12-th September 1995 (pp. 111—116).

20. MARIAM VARDANAN—Inter-diocesan conference of the Armenian Church's Sunday schools in Kessab, 26-th August—4-th September 1995 (pp. 117—121).

21. The sermon of His Grace Archbishop Nerses Bozabalian in the Mother Cathedral, 27-th August 1995 (pp. 122—125).

22. ARCHBISHOP NERSES BOZABALIAN—The annual session of the Central Committee of the World Council of Churches, 14—22 September 1995 (pp. 126—127).

23. The Armenia's days in Georgian, 27—29-th July 1995 (pp. 128—129).

24. DIGRAN SANOSIAN—Feast in the vilage of Khodjabek, 15-th August 1995 (pp. 130—131).

25. Spiritual moments in the Holy Etchmiadzin, 22—23 July 1995 (pp. 132—134).

26. The biographies of Father Ardag Digranian, Father Bagrad Galesdian, Father Garabed Harootyunian and Father Goorgen Aghababian (pp. 135—138).

27. The first sermon of Father Ardag Tigranian in the Mother Cathedral (pp. 139—142).

28. The first sermon of Father Bagrad Galesdian in the Mother Cathedral (pp. 143—145).

29. The first sermon of Father Garabed Harootyunian in the Monastery of Gayaneh (pp. 146—148).

30. The first sermon of Father Goorgen Aghababian in the Holy Virgin Church (pp. 149—150).

31. ARCHBISHOP SHAHEH ADJEMIAN—Faith (study)—(pp. 151—154).

32. VOLODYA ABRAHAMIAN—Under the walls of Holy Etchmiadzin (litterary)—(pp. 155—162).

33. VARDAN DEVRIKIAN—By the suggestion of the 1700-th anniversary (pp. 163—166).

34. Receptions in the Mother See of Holy Etchmiadzin, 2-nd August—26-th September 1995 (pp. 167—172).

HOLY SEE

35. Divine liturgy services and sermons delivered in the Holy Cathedral and descriptions of Church festivities in the Holy See during the months August—September (pp. 173—174).

36. NUBAR DER MIKAELIAN—Index of the manuscripts which the Holy See of Etchmiadzin has received recently (Nos. 697—700)—(pp. 175—182).

„ETCHMIADZINE"
ORGANE OFFICIEL DU SAINT—SIEGE D'ETCHMIADZINE
(AOUT—SEPTEMBRE 1995)

1. **EDITORIAL** (pp. 3—6).

2. GAREGUINE I CATHOLICOS DE TOUS ARMENIENS—La grandeur de la maternité et la sainteté de la tradition (pp. 7—9).

3. Anniversaire à l'occasion du décès du Catholicos Vasken I et messe de requiem au Saint-Siege d'Etchmiadzine, le 20 Août 1995 (p. 10).

4. L'adresse de Sa Sainteté au jour de l'anniversaire, donnée devant le tombeau, le 18 Août 1995 (pp. 11—12).

5. Sermon du Catholicos Guaréguine I donné dans la Cathédrale, le 20 Août (pp. 13—16).

6. REV. PERE VASKEN MIRZAKHANIAN—VISITE DE SA SAINTETE DU CATHOLICOS GUAREGUINE I A ANTELIAS, ELECTION ET LA CONSECRATION DU CATHOLICOS DE LA GRANDE MAISON DE CILICIE, du 27 Juin au 4 Juillet 1995 (pp. 17—56).

7. Court biographie de Sa Sainteté Aram Catholicos de la Grande Maison de Cilicie (pp. 57—58).

8. DIACRE SARKIS BOYADJIAN—LA PREMIERE VISITE DE SA SAINTETE GUAREGUINE I AU BASSIN DU SEVAN, le 22—25 Août 1995 (pp. 59—70).

9. REV. PERE BAGRAD GALESDIAN—VISITE DE SA SAINTETE GUAREGUINE CATHOLICOS DE TOUS LES ARMENIENS A L'EGLISE ORTHODOXE DE LA GEORGIE ET A LA DIOCESE DES ARMENIENS DE LA GEORGIE, le 8—11 Septembre 1995 (pp. 71—87).

10. Bulle de Sa Sainteté donnée à Monseigneur Gevorg Séraydarian pour accorder le titre et l'honneur d'Archevêque, le 4 Septembre 1995 (pp. 88—89).

11. Cable de remerciement de Sa Sainteté au Patriarche-Catholicos Ilia II de Tous les Géorgiens, le 12 Septembre 1995 (p. 90).

12. M. VARDANIAN—La participation de Sa Sainteté à l'ouverture de la cérémonie du faculté Théologique de l'université, le 16 Septembre 1995 (pp. 91—94).

13. M. VARDANIAN—La visite de Sa Sainteté à la bibliotheque enfantine au nom de Khengo Abor (pp. 95—96).

14. DIACRE VAROUJAN DERDERIAN—La conférence d'un jour des professeurs des écoles de l'éducation Chrétien d'Arménie, le 24 Août 1995 (pp. 97—99).

15. La premiere session du nouveau élu Conseil Supreme Spirituel au monastère du St. Etchmiadzine, le 1—2 Août 1995 (pp. 100—101).

16. DIACRE SARKIS BOYADJIAN—La fondation de la nouvelle église dans la ville du Dachir, le 5 Août 1995 (pp. 102—105).

17. La consécration de l'église Arménienne du Samarcande, le 19—20 Août 1995 (pp. 106—107).

18. Le sermon de l'Archevêque Nerses Bozabalian à l'occasion de la consécration de l'église de la Saintete Vierge du Samarcande (pp. 108—110).

19. SAMVEL KHATCHADERIAN—Le cinquantième anniversaire du Séminatre Spirituel et la réouverture, le 12 Septembre 1995 (pp. 111—116).

20. MARIAM VARDANIAN—Conférence inter-diocésaine des écoles du Dimanche de l'Eglise Arméniènne à Kessab, le 28 Août au 4 Septembre 1995 (pp. 117—121).

21. Le sermon de l'Archevêque Nerses Bozabalian dans la Cathédrale du St. Etchmiadzine, le 27 Août 1995 (pp. 122—125).

22. ARCHEVEQUE NERSES BOZABALIAN—La session annuelle du Comité Central des Eglises Mondiales, le 14—22 Septembre 1995 (pp. 126—127).

23. Les jours d'Arménie à la Géorgie, le 27—29 Juillet 1995 (pp. 128—129).

24. DIKRAN SAOSIAN (Célébrité dans le village de Khodjabek, le 13 Août 1995 (pp. 130—131).

25. Des moments spirituels au St. Etchmiadzine, le 22—23 Juillet 1995 (pp. 132—134).

26. Les biographies du Rév. Père Ardag Digranian, Rév. Père Bagrad Galestian, Rév. Père Garabed Haroutyounian et Rév. Père Gourgen Aghababian (pp. 135—138).

27. Le premier sermon du Rév. Père Ardag Dikranian dans la Sainte Cathédrale (pp. 139—142).

28. Le premier sermon du Père Bagrad Galestian dans la Sainte Cathédrale (pp. 143—145).

29. Le premier sermon du Rév. Père Garabed Haroutyounian dans le monastère du St. Gayané (pp. 146—148).

30. Le premier sermon du Rév. Père Gourgen Aghababian dans l'église de la Sainte Vierge (pp. 149—150).

31. ARCHEVEQUE CHAHE ADJEMIAN—Foi (étude)—(pp. 151—154).

32. VOLODYA ABRAHAMIAN—Sous les murs du St. Etchmiadzine (Littéraire)—(pp. 155—162).

33. VARDAN DEVRIKIAN—Par la suggestion du 1700-ième anniversaire (bibliographie)—(pp. 163—166).

34. Réception au Saint-Siège du Saint Etchmiadzine, du 2 Août au 25 Septembre 1995 (pp. 167—172).

DU SAINT-SIEGE

35. Brèves informations concernant les célébrations des saintes messes, les sermons prononcés à cette occasion et d'autres cérémonies religieuses qui ont eu lieu dans la Cathédrale de Saint Etchmiadzine au cours des mois d'Août—Septembre 1995 (pp. 173—174).

36. NUBAR DER MIKAELIAN—Index des manuscrits reçus au Saint-Siège d'Etchmiadzine et placés sous les numéros (697—700)—(pp. 175—182).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ 3

ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ--Մայրութեան մեծութիւնը և աւանդութեան նուիրականութիւնը 7

Տարելից Վազգեն Ա Կաթողիկոսի վախճանման և հոգեհանգստի պատարագ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում 10

Վեհափառ Հայրապետի խոսքը Վազգեն Առաջինի մահվան տարելիցի օրը՝ արտասանված շիրմի առաջ 11

Գարեգին Ա Կաթողիկոսի քարոզը՝ խոսված Մայր տաճարում, Վազգեն Ա-ի մահվան տարելիցի առթիվ 13

ՎԱԶԳԵՆ ԱԲԵՂԱ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ—ԳԱՐԵԳԻՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԸ ԱՆԹԻԼԻԱՍ ԵՎ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՕԾՈՒՄԸ 17

Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի ամփոփ կենսագրությունը 57

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԿԱՎԱԳ ԲՈՅԱՋՅԱՆ—ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՌԱՋԻՆԻ ԱՅՑԸ ՍԵՎԱՆԻ ԱՎԱՋԱՆ 59

ԲԱԳՐԱՏ ԱԲԵՂԱ ԳԱԼՍՏՅԱՆ—ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա-Ի ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՑ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒՆ ԵՎ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ 71

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Գևորգ եպիսկոպոս Սերայդարյանին արքության տիտղոս և պատիվ շնորհելու մասին 88

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհակալական հեռագիրը հանայն Վրաստանի Պատրիարք-Կաթողիկոս Իլիա Բ-ին 90

Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ—Վեհափառ Հոր մասնակցությունը համալսարանի աստվածաբանական ֆակուլտետի բացման արարողությանը 91

Ամենայն Հայոց Հայրապետի այցելությունը Խնկո Ապոր անվան մանկական գրադարան 95

ՎԱՐՈՒԺԱՆ ՍՐԿ. ՏԵՐՏԵՐՅԱՆ—Հայաստանի Քրիստոնեական դաստիարակության դպրոցների ուսուցիչների մեկօրյա համագումար Մայր Աթոռում . . . 97

Գերագույն Հոգևոր Խորհրդի նոր կազմի առաջին նստաշրջանը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում 100

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԿԱՎԱԳ ԲՈՅԱՋՅԱՆ—Նոր եկեղեցու հիմնարկեք Տաշիր քաղաքում . 102

Հայկական եկեղեցու օծում Սամարղանդում 106

Գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի քարոզը Սամարղանդի Ս. Աստվածածին եկեղեցու օծման առթիվ 108

ՍԱՄՎԵԼ ԽԱՉԱՏՐՅԱՆ—Հոգևոր ճեմարանի հիմնադրությունը և վերաբացումը . . 111

ՄԱՐԻՆԷ ՎԱՐԴԱՆՅԱՆ—Հայաստանյայց Եկեղեցվո կիրակնօրյա դպրոցների միջ-
թեմական համագումարը Քեսապում 117
Գնթաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի քարոզը Մայր տաճարում . 122
ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՉԱՊԱԼՅԱՆ—Եկեղեցիների Համաշխարհային Խոր-
հրդի Կենտրոնական Կոմիտեի տարեկան նստաշրջանը 126
Հայաստանի օրերը Վրաստանում 128
ՏԻԳՐԱՆ ՍԱՆՈՍՅԱՆ—Հանդիսություն Խոջաբեկ գյուղում 130
Հոգելից պահեր Սուրբ Էջմիածնում 132
Տ. Արտակ աբեղա Տիգրանյան 135
Տ. Բագրատ աբեղա Գալստյան 136
Տ. Կարապետ աբեղա Հարությունյան 137
Տ. Գուրգեն աբեղա Աղաբաբյան 138
Հոգեշնորհ Տ. Արտակ աբեղա Տիգրանյանի անդրանիկ քարոզը Մայր տաճարում . 139
Հոգեշնորհ Տ. Բագրատ աբեղա Գալստյանի անդրանիկ քարոզը Մայր տաճարում . 143
Հոգեշնորհ Տ. Կարապետ աբեղա Հարությունյանի անդրանիկ քարոզը Ս. Գայանե
վանքում 146
Հոգեշնորհ Տ. Գուրգեն աբեղա Աղաբաբյանի անդրանիկ քարոզը՝ խոսված Ս. Աստ-
վածածին եկեղեցում 149
ՇԱՀԷ ԱՐՔԵՊ. ԱՃԷՄԵԱՆ—Հաւատք 151
ՎՈԼՈԴՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ—Սուրբ Էջմիածնի պատերի տակ 155
ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ—1700-ամյակի թելադրանքով 163
Ընդունելություններ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում 167

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Եկեղեցական բեմ. լուրեր 173
Ցուցակ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի 175
«Эчмиадзин» официальный журнал Эчмиадзинского Католикосата . . 183
«Etchmiadzin» official monthly of Holy Etchmiadzin 185
«Etchmiadzine» organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine 187

Խմբագիր՝ ԱՍՈՂԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie.

Հանձնված է արտադրության 03.11.1995 թ.: Ստորագրված է տպագրության 27.12.1995 թ.:
Տպագրական 11,9 մամուլ+21 գերդիր, թուղթ 70×108 1/16, պատվեր 285:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարան

ISSN 0134—5249